ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ

Հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ 2009

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ Հայաստան

Հաշվետվությունը պատրաստվել և հրատարակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և Բաց հասարակության ինստիտուտի առողջապահություն և իրավունք նախաձեռնության աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ:

Հասցե՝ ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43
Հեռ./Ֆաքս: + (37410) 55 96 34
e-mail: pmg.armenia@hra.am

ISBN - 978-92-9235-829-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

ԳԵՐԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ 8

ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ 9

ՍՆՈՒՆԴ 10

ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ 11

ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ 12

ԿԱՊ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ 15

ԱՆՁՆԱԿԱԶՄ 20

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ 22

«Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ 31

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկ 39

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ 47

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ 54

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ 63

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ 68

«Էրեբունի» քրեակատարողական հիմնարկ 77

«Սևան» քրեակատարողական հիմնարկ 86

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ 92

«Մեղրի» քրեակատարողական հիմնարկ 98

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկ 100

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ 106

Հավելվածներ 112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 125

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը պատրաստված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (հետագայում՝ Դիտորդների խումբ) կողմից 2008 թվականին անցկացված ուսումնասիրությունների արդյունքում:

Հաշվետվությունը բաղկացած է երեք մասից.

Ընդհանուր գլուխներ, որոնցում ներկայացված է վերլուծություն ամբողջ համակարգին առնչվող խնդիրների վերաբերյալ:

Առանձին հիմնարկներին նվիրված գլուխներ, որոնցում նկարագրվում է իրավիճակը յուրաքանչյուր հիմնարկում և մատնանշվում են կոնկրետ հիմնարկներին հատուկ խնդիրները:

Դիտորդների խմբի հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության մեկնաբանություններ:

Իրավիճակի բարելավման նպատակով Դիտորդների խմբի կողմից կատարվել է մոտ 350 առաջարկություն, որոնք ուղղված են ինչպես համակարգային, այնպես էլ կոնկրետ հիմնարկների խնդիրների լուծմանը:

Ներկայումս Հայաստանի քրեակատարողական համակարգը գտնվում է բարեփոխումների փուլում, որի ընթացքում նախատեսվում է խորհրդային գաղութային համակարգից անցում կատարել եվրոպական պրակտիկայում ընդունված համակարգի, ուր ազատազրկումն իրականացվում է ոչ թե ըստ ռեժիմի խստության, այլ ըստ ազատազրկման աստիճանի: ՀՀ քրեակատարեղական օրենսգիրքը նախատեսում է, որ ազատազրկվածները պետք է պահվեն 4-6 տեղանոց խցերում և իրավունք ունենան մաքուր օդի դուրս գալու 1-16 ժամ՝ կախված պահման տիպից: Հիմնարկների պայմանները օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կատարվում են վերակառուցման աշխատանքներ:

Դիտորդների խումբը ստեղծվել է 2004 թվականին և գործում է արդարադատության նախարարի ՔՀ-66-Ն հրամանով հաստատված Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգի հիման վրա, որը ստեղծվել է նախարարության, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունքում: Դիտորդների խմբի առաջին կազմը նշանակվել է արդարադատության նախարարի կողմից: Հետագայի համար Դիտորդների խմբի անկախությունն ապահովելու նպատակով Կարգը նախատեսում է, որ Դիտորդների խմբի գործունեության հետ կապված բոլոր որոշումները, այդ թվում կազմի փոփոխության հետ կապված, ընդունվում են Դիտորդների խմբի կողմից:

Դիտորդների խմբի կազմը. Արման Դանիելյան, նախագահ - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», Ավետիք Իշխանյան - «Հայաստանի հելսինկյան կոմիտե», Արթուր Սաքունց - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ», Գայանե Շահնազարյան - «Հուսո առագաստ» երիտասարդական ՀԿ, Էդմոն Մարուքյան - «Մեդիա գրուպ» լրատվական ՀԿ, Լուսինե Հարությունյան - «Ս.Սանդուխտ կույսի անվան տիկնանց միություն», Միքայել Արամյան - «Ընդեմ իրավական կամայականության», Միքայել Բաղդասարյան - «Համագործակցություն հանուն ժողովրդավարության», Թեմիկ Խալափյան - «Տրտու» մշակութային ՀԿ, Պուշկին Սերոբյան - «Օգոստոսի 23 ազգային դաշինք», Տիգրան Ներսիսյան - «Գ.Մագիստրոսի անվան բժիշկների միաբանություն»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում ուղղիչ հիմնարկները, ըստ մեկուսացվածության աստիճանի, լինում են.

- բաց ուղղիչ հիմնարկ
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ
- կիսափակ ուղղիչ հիմնարկ
- փակ ուղղիչ հիմնարկ
- բուժական ուղղիչ հիմնարկ:

Բաց ուղղիչ հիմնարկներում պահվում են հիմնականում անզգույշ հանցագործությունների համար դատապարտված անձինք: Այնտեղ, ըստ Քրեակատարողական օրենսգրքի[1], դատապարտյալները պետք է պահվեն մինչև տասը մարդու համար նախատեսված բնակելի կացարանում: Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգին համապատասխան՝ բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում, և ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս: Բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու՝ Քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված սկզբունքները չեն գործում, և դատապարտյալները պահվում են հասարակական համակեցության կանոններին համապատասխան:

Ներկայումս ՀՀ քրեակատարողական հիմնարկների մեծ մասն իրենց կազմում ունի բաց ուղղիչ հիմնարկներ: Այնտեղ ազատազրկվածները բնակվում են այլ դատապարտյալներից անջատ՝ դատապարտյալներին պահելու գոտուց դուրս հատկացված կացարաններում: «Մեղրի» ՔԿՀ-ն է միակ հիմնարկն է, ուր գործում է միայն բաց ուղղիչ հիմնարկ:

Ըստ ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի[2]՝ կիսաբաց և կիսափակ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալը պահվում է մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում: Կիսափակ և կիսաբաց հիմնարկներում պահելու ռեժիմների տարբերությունը պայմանավորված է դատապարտյալի՝ խցից դուրս գտնվելու հնարավորության ժամանակով (կիսափակը՝ օրական 3 ժամ, կիսաբացը՝ ցերեկային ժամերին): Դիտարկումները ցույց են տալիս, որ փաստացի կիսափակ ուղղիչ հիմնարկի պայմաններ քրեակատարողական համակարգում չեն ապահովվում: Այն դատապարտյալները, որոնք պետք է պատիժը կրեն կիսափակ ուղղիչ հիմնարկում, պահվում են կամ կիսաբաց, կամ փակ ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում:

Խցերում մինչև վեց հոգի պահելու կարգը ապահովված է միայն «Վարդաշեն» և, մասամբ, «Արթիկ» ՔԿՀ-ներում: Մյուս հիմնարկներում («Սևան», «Կոշ», «Էրեբունի», «Աբովյան»), որոնք դեռևս խորհրդային տարիներից մնացած և չվերակառուցված հիմնարկներ են, պահվում է այս ռեժիմով դատապարտյալների գերակշիռ մասը (ըստ լրակազմի՝ մինչև 1579 մարդ): Այս հիմնարկներում դատապարտյալները պահվում են «հանրակացարանային պայմաններում»:

1 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված103:
2 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդվածներ 104, 105:

Շինությունները հիմնականում երկ- կամ եռահարկ են, բաղկացած մի շարք հանրակացարանային տիպի սրահներից: Սրահների մակերեսը տատանվում է 30-200 քմ սահմաններում: Սրահներում պահվող դատապարտյալների թիվը հասնում է 60 հոգու («Կոշ»), 85 («Աբովյան» ՔԿՀ-ի դատապարտյալ կանանց մասնաշենք): Սրահները կահավորված են մահճակալներով, երբեմն՝ երկհարկանի, և անձնական իրերի համար փոքր պահարաններով, որոնց քանակը, որպես կանոն, չի համապատասխանում դատապարտյալների թվին: Սրահների վերջնամասերը մեծ մասամբ առանձնացված են հիմնական սրահից, տարբերվում են կահավորումով: Սրահի այդ մասում ապրում են արտոնյալ դատապարտյալները:

Ձմռան ամիսներին սրահները ջեռուցվում են էլեկտրական սալիկներով, որոնք հիմնականում չեն ապահովում բավարար ջերմաստիճան: Չնայած ձևական տեսակետից հիմնականում պահպանվում է մեկ դատապարտյալի համար նախատեսված 4 քմ տարածքը, այնուամենայնիվ, դատապարտյալների պահման հանրակացարանային պայմանները հակասում են ոչ միայն միջազգային չափանիշներին, այլև ՀՀ Քրեակատարողական օրենսգրքին[3]:

Տասնյակ մարդկանց գտնվելը մեկ սրահում կարող է առաջացնել բազմաթիվ խնդիրներ անձնական համակեցության տեսանկյունից: Այն նաև հիմնական նպաստավոր գործոններից է դատապարտյալների միջև ոչ կանոնադրական, հիերարխիկ հարաբերությունների ստեղծման համար:

Հանրակացարանների շինությունները (բացի «Աբովյան» ՔԿՀ-ից) ապահովված չեն ջրամատակարարումով, զուգարանով և բաղնիքով: Դրանք գտնվում են հանրակացարանային շենքերից դուրս գտնվող կառույցներում:

Այսպիսի պայմանները հակասանիտարական վիճակ են ստեղծում զուգարաններում, որոնցից օգտվում են ՔԿՀ-ի բոլոր դատապարտյալները, և սրահներում, քանի որ սահմանափակում են ջրից օգտվելու հնարավորությունը:

Փակ տիպի խցերում պահվում են կալանավորվածները, կալանք պատժատեսակ կրող դատապարտյալները և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալները: Փակ տիպի խցերում պահվող անձինք օրական մեկժամյա զբոսանքի իրավունք ունեն (կանայք և անչափահասները՝ երկժամյա) և մնացած ժամանակը գտնվում են խցերում: Ըստ ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի[4]՝ փակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է մինչև չորս մարդու համար նախատեսված մեկուսացված խցում: Այս նորմը պահպանվում է «Արթիկ», «Վանաձոր», «Հրազդան», «Աբովյան» ՔԿՀ-ներում, հիմնականում ապահովվում է «Վարդաշեն» և «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ներում և մասնակիորեն ապահովվում է «Գորիս» ՔԿՀ-ում: Ամենամեծ փակ տիպի հիմնարկը «Նուբարաշեն» ՔԿՀ-ն է, որտեղ, ըստ լրակազմի, կարող է պահվել մինչև 840 ազատազրկված: Հիմնարկում չի պահպանվում վերոնշյալ նորմը (բացի ցմահ ազատազրկման դատապարտյալների համար նախատեսված խցերից, որոնցում պահվում են մինչև չորս դատապարտյալ): Հիմնարկի խցերը հիմնականում ունեն 30 քմ մակերես, որոնք նախկինում նախատեսված էին 8 անձի համար:

Փակ տիպի հիմնարկների խցերում զուգարանները հիմնականում մեկուսացված են (բացի «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ից), հատակը հիմնականում փայտե է (բացի «Նուբարաշեն» ՔԿՀ-ից): Փակ տիպի հիմնարկներում պահվող ազատազրկվածների համար նախատեսված է ամենօրյա մեկժամյա զբոսանք, սակայն այս նորմը հիմնականում չի պահպանվում հատկապես հանգստյան օրերին:

Հաճախ չի պահպանվում նաև առնվազն շաբաթը մեկ անգամ ազատազրկվածների լոգանք ընդունելու իրավունքը[5]: Դեպքեր են գրանցվել, երբ ազատազրկվածները մինչև 15 օր զրկված

3 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդվածներ 104, 105:

4 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 106:

5 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական

են եղել լոգանք ընդունելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ ազատազրկվածները հաճախակի լոգանք են ընդունում խցային պայմաններում՝ տարբեր տարաներում ջեռուցիչներով ջուր են տաքացնում և լողանում խցի սանհանգույցում: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կարելի է խցերի սանհանգույցներում ստեղծել լոգանք ընդունելու հնարավորություն, ինչը հնարավորություն կտար մի կողմից ազատազրկվածներին լոգանք ընդունել իրենց նախընտրած հաճախականությամբ, մյուս կողմից՝ ազատել վարչակազմին լոգանքը կազմակերպելու պարտականությունից:

Արհեստական լուսավորությունը խցերում հիմնականում ապահովվում է խցի մեջտեղում առաստաղից կախված մեկ լամպով, որը միացված է թե՛ երեկոյան և թե՛, անվտանգության նկատառումներից ելնելով, գիշերային ժամերին: Գիշերային ժամերին խցում հզոր լամպի միացված լինելը խանգարում է ազատազրկվածներին քնել: Որոշ հիմնարկներում (օրինակ՝ «Վարդաշեն» ՔԿՀ) այս հարցի լուծումը տրվել է խցերում գիշերային լուսավորության լամպ տեղադրելով: Այն ավելի թույլ հզորություն ունի և տեղադրվում է խցի դռան վերևի մասում:

Բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պահվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում, բացառությամբ բուժական ուղղիչ հիմնարկի համար նախատեսված առանձնահատկությունների: Բուժական ուղղիչ հիմնարկում կարող է ստեղծվել առանձնացված ստորաբաժանում կամ կացարան կամ խուց՝ դատապարտյալներին տարբեր աստիճանի մեկուսացվածությամբ պահելու նպատակով: Բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է դատապարտյալներին անջատ պահելու սահմանված պահանջներին համապատասխան:

Առաջարկություններ

1) *«Սևան», «Կոշ», «Աբովյան և «Էրեբունի» ՔԿՀ-ները վերակառուցել՝ համապատասխանեցնելով կացարանների պայմանները օրենսդրությամբ սահմանված խցային պայմաններին:*
2) *«Նուբարաշեն», «Էրեբունի», «Վարդաշեն» և «Աբովյան» ՔԿՀ-ներում ապահովել մեկ անձի համար օրենսդրությամբ սահմանված 4 քմ տարածքը:*
3) *Ապահովել բոլոր ՔԿՀ-ներում կենտրոնացված ջեռուցման համակարգ:*
4) *Փակ տիպի հիմնարկներում պահվող ազատազրկվածների համար ապահովել օրական մեկժամյա զբոսանք:*
5) *Կիսափակ տիպի հիմնարկներում պահվող ազատազրկվածների համար ապահովել օրական երեքժամյա զբոսանք:*
6) *Բոլոր ՔԿՀ-ներում ազատազրկվածների համար ապահովել օրենսդրությամբ նախատեսված առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանք:*
7) *Բոլոր խցերում տեղադրել գիշերային լուսավորության լամպեր:*
8) *Վերանորոգման աշխատանքների ժամանակ նախատեսել խցերի սանհանգույցներում տաք ջրամատակարարման հնարավորություն, ինչը հնարավորություն կտար լոգանքը կազմակերպել խցային պայմաններում:*

ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 47:

ԳԵՐԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

2008 թվականի դիտարկումները ցույց տվեցին, որ «Նուբարաշեն», «Էրեբունի» և «Վարդաշեն» ՔԿՀ-ները գերբնակեցված են: Դեկտեմբերի վերջի դրությամբ պատկերն այսպիսին էր.

ՔԿՀ	Լրակազմ	Փաստացի
«Նուբարաշեն»	840	947
«Վարդաշեն»	154	192
«Էրեբունի»	391	591

«Վարդաշեն» ՔԿՀ-ում առկա էին գերբնակեցված խցեր, օրինակ՝ 18 քմ մակերես ունեցող 4-րդ խցում պահվում էր 6 ազատազրկված (մեկ անձին բաժին է հասնում 3 քմ): «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 8 հոգու համար նախատեսված խցերում պահվում էր 10-13 ազատազրկված: Ընդ որում, նրանց մի մասը չունի անհատական քնելու տեղ, և ազատազրկվածները քնում են հերթափոխով: «Էրեբունի» ՔԿՀ-ի հանրակացարանային տիպի բոլոր սրահները գերբնակեցված էին, օրինակ՝ 32 քմ մակերես ունեցող սրահում պահվում էր 17 դատապարտյալ (մեկ անձին՝ մոտ 2 քմ):

Գերբնակեցման վերաբերյալ խմբի ընթացիկ հաշվետվությանն ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարությունը տվեց դրանց առաջացման բացատրություններ (տե՛ս Հավելված 1): Կարծում ենք, որ բացի ԱՆ տված բացատրություններից, գերբնակեցվածության պատճառ են նաև.

- դատարանների կողմից որպես խափանման միջոց հիմնականում կալանքի կիրառումը.
- դատարանների կողմից կալանք պատժատեսակի հազվադեպ կիրառումը: Այդ պատժատեսակը իրականացնելու համար հատուկ կառուցված «Հրազդան» ՔԿՀ-ում, որը նախատեսված է 200 դատապարտյալի համար, հիմնականում պահվում են մեկ կամ երկու դատապապարտյալ, ընդ որում՝ ամբողջ 2008 թվականի ընթացքում պահվել է 19 դատապարտյալ.
- վաղաժամկետ ազատվող դատապարտյալների թվի նվազումը: 2006 թվականից ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեցին Վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովներ: Հանձնաժողովների անդամներից շատերը, այդ թվում՝ բոլոր հանձնաժողովների նախագահները, հանդիսանում են ուժային կառույցների ներկայացուցիչներ: Ի հետևանք՝ եթե մինչև հանձնաժողովների ստեղծումը վաղաժամկետ ազատման ցուցակները դատարան էր ներկայացնում հիմնարկի վարչակազմը, ապա ներկայումս ցուցակը ներկայացվում է հանձնաժողովին, և միայն այն անձինք, ովքեր ստանում են հանձնաժողովի դրական եզրակացությունը, ներկայացվում են դատարան: Արդյունքում՝ մոտ 10 անգամ նվազել է վաղաժամկետ ազատվողների թիվը (որոշ դեպքերում հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացված ցուցակի 90%-ը մերժվում է): Հանձնաժողովների որոշումները սուբյեկտիվ են, ընդունվում են քվեարկությամբ և որևէ կերպ չեն հիմնավորվում: Այս իրավիճակը, երբ դատապարտյալների համար անհասկանալի են դառնում «խաղի կանոնները» (լավ վարքի դրսևորում, խրախուսանքների արժանանալը, աշխատելը, քաղհայցը մարելը և այլն որևէ դրական ազդեցություն չեն ունենում վաղաժամկետ ազատման վրա), նրանց մեջ ստեղծում են բարոյահոգեբանական լարված վիճակ: Հանձնաժողովների գործունեությունը դժգոհություն է առաջացնում ոչ միայն դատապարտյալների, այլ նաև հիմնարկների վարչակազմի մոտ: Վերջիններս նշում են, որ դատապարտյալների համար այլևս չկա օրինապահ վարք դրսևորելու շահագրգռվածություն:

Ի դեպ, 2006 թվականի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոմիտեի կողմից (ԽԿԿ) Հայաստանի կառավարության համար կազմված զեկույցի (ԽԿԿ 2006-69) 35-րդ կետում նշված է. «Բանտային բնակչությունը նշանակալիորեն կրճատվել է ԽԿԿ-ի կողմից Հայաստան կատարած առաջին ընթացիկ այցելությունից հետո՝ 2997 դատապարտյալով 2006-ի ապրիլ ամսվա դրությամբ, համեմատած 2002 թվականին 5624 դատապարտյալի հետ: Պատվիրակության պաշտոնական զրուցակիցները նշեցին, որ որոշ հանցագործությունների համար համեմատաբար թեթև դատավճիռները և պայմանական վաղաժամկետ ազատվելու լայն կիրառումը հնարավոր են դարձրել բանտային բնակչության թվի կրճատումը: Սա դրական միտում է, որը պետք է խրախուսվի և շարունակվի»: Փաստորեն, այս ուղղությամբ կարելի է հետընթաց արձանագրել:

Առաջարկություններ

9) *Աշխատանքներ տանել դատարանների հետ՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ուղղությամբ:*

10) *Աշխատանքներ տանել դատարանների հետ՝ կալանք պատժատեսակի ավելի հաճախ կիրառման ուղղությամբ:*

11) *Վերանայել Վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը:*

ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկվածների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումները դժվար բացահայտելի են: Փորձը ցույց է տվել, որ Դիտորդների խմբի կողմից բացահայտված վատ վերաբերմունքի դեպքերում (2005 թ.՝ «Նուբարաշեն» ՔԿՀ, 2006 թ.՝ «Գորիս» ՔԿՀ) հիմնարկի կողմից չեն գրանցվում հատուկ միջոցների կիրառման դեպքերը (ձեռնաշղթաներ, մահակներ և այլն), իսկ բուժանձնակազմը չի գրանցում ազատազրկվածների ստացած վնասվածքները: Այս մտահոգությունները արտահայտված են նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) 2006 թվականի զեկույցում: Ազատազրկվածները, ըստ քրեակատարողական հիմնարկներում ձևավորված «ավանդույթի», հիմնականում դժվարությամբ են բողոքներ կամ տեղեկություններ տրամադրում իրենց կամ այլ անձանց նկատմամբ կիրառված բռնությունների վերաբերյալ: ԽԿԿ-ի 2006 թվականի զեկույցի 41-րդ կետում նշվում է. «2006 թվականի այցելության ընթացքում բացահայտվեց նաև, որ ֆիզիկական ուժի և «հատուկ միջոցների» կիրառման մասին դատախազությանը ընդհանուր առմամբ չի տեղեկացվել: Այս ենթատեքստում ԽԿԿ-ն որոշակիորեն անհանգստացած է որոշ բողոքներով, համաձայն որոնց՝ բանտի անձնակազմի կողմից ճնշում է գործադրվում այն բանտարկյալների նկատմամբ, որոնք պաշտոնապես բողոքում են արտաքին մարմիններին, որպեսզի հարկադրեն նրանց հետ վերցնել իրենց բողոքները»: Նման պրակտիկան դեռևս շարունակվում է (տե՛ս «Վարդաշեն» ՔԿՀ, «Վերաբերմունք» գլուխը):

2001 թվականից, երբ ՔԿՀ-ները տեղափոխվեցին արդարադատության համակարգ, վատ վերաբերմունքի դեպքերը նվազեցին, սակայն բռնությունները, որոնք երբեմն կարելի է գնահատել որպես խոշտանգում, շարունակում են կիրառվել որպես պատիժ կարգազանցության և, հատկապես, փախուստի փորձերի դեպքերում: Վատ վերաբերմունքի դրսևորումներ լինում են հատկապես ՔԿ վարչության արագ արձագանքման խմբի՝ հիմնարկներ այցելությունների ժամանակ: Ըստ ստացված տեղեկությունների՝ արագ արձագանքման խումբը խու-

զարկություն կատարելու նպատակով մտնում է խցեր, կոպիտ վերաբերմունք ցուցաբերում ազատազրկվածների նկատմամբ, իսկ վերջիններիս կողմից որևէ արձագանք դիտվում է որպես դիմադրություն, որին, որպես կանոն, հաջորդում են բռնություններ (ծեծ, երբեմն՝ խոշտանգումներ) հաճախ խցի բոլոր ազատազրկվածների նկատմամբ: Քանի որ արագ արձագանքման խմբի աշխատակիցները դիմակավորված են, հետագայում շատ դժվար է պարզել նրանց ինքնությունը: Նման դեպք Դիտորդների խումբն արձանագրել էր 2006 թվականին «Գորիս» ՔԿՀ-ում:

2008 թվականի դեկտեմբերի 23-ին Հասարակական դիտորդների խումբն այցելեց «Նուբարաշեն» ՔԿՀ և այնտեղ ՔԿ վարչության արագ արձագանքման խմբի մասնակցությամբ կատարված դեպքերի մի մասը գնահատելով որպես խոշտանգում՝ հրատապ հաշվետվություն ներկայացրեց արդարադատության նախարարին (տե՛ս Հավելվածներ 2): Այս դեպքում ևս Դիտորդների խմբի կողմից նկատված վնասվածքները պատշաճ կարգով չէին արձանագրվել հիմնարկի բուժանձնակազմի կողմից:

Առաջարկություններ

12) *Հատուկ միջոցների կիրառման դեպքում գրանցումներ կատարել համապատասխան մատյաններում:*
13) *Հատուկ միջոցների կիրառումից հետո բժշկական անձնակազմի կողմից արձանագրել ստացված բոլոր վնասվածքները:*
14) *Բացառել վարչակազմի կողմից բողոք ներկայացնող ազատազրկվածների նկատմամբ ճնշումները:*
15) *Բարձրացնել դատախազական վերահսկողության արդյունավետությունը վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ:*
16) *ՔԿ վարչության արագ արձագանքման խմբին չներգրավել խցերում անցկացվող խուզարկություններում:*

ՍՆՈՒՆԴ

Քրեակատարողական հիմնարկների սննդամթերքի մատակարարումը կատարվում է կենտրոնացված մատակարարման համակարգի միջոցով: ՔԿՀ-ների հացը հիմնականում թխում են «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամին պատկանող արտադրամասերում: Դիտորդների խմբի դիտարկումները ցույց են տալիս, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ին կից գործող հացաթխման արտադրամասի (մատակարարում է «Նուբարաշեն», «Էրեբունի», «Վարդաշեն» ՔԿՀ-ները) հացը ցածրորակ է, իսկ երբեմն՝ նաև թաց, ինչը հարուցում է ազատազրկվածների դժգոհությունը:

Քրեակատարողական հիմնարկների խոհանոցների մեծ մասը վերջին շրջանում նորոգվել է, և այնտեղ բարելավվել է սանիտարահիգիենիկ վիճակը:

ՔԿՀ-ների մեծ մասում խոհարարները դատապարտյալներ են, որոնք հատուկ խոհարարական դասընթացներ չեն անցել: Այս հիմնարկներում ազատազրկվածները հնարավորության դեպքում չեն օգտվում հիմնարկի կողմից տրամադրվող ճաշերից: Դիտարկումները ցույց են տալիս, որ այն հիմնարկներում, որտեղ խոհարարները քաղաքացիական աշխատողներ են («Գորիս», «Երևան Կենտրոն», «Հրազդան» ՔԿՀ-ներ), սննդի որակը անհամեմատ բարձր է մյուս հիմնարկներից:

Թե՛ խմբի դիտարկումներով, թե՛ ազատազրկվածներից ստացված տեղեկատվությամբ՝ ՔԿՀ-ների կողմից տրամադրվող սնունդը միատեսակ է, չի ապահովվում դրա բազմազա-

նությունը: Չնայած ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափաբաժինների ցանկում ընդգրկված է նաև միրգ, սակայն խումբն իր այցելությունների ժամանակ երբեք չի արձանագրել դրա առկայությունը: Հիմնարկների բուժմասերում գտնվող դատապարտյալներին բժշկի ցուցումով տրվում է հավելյալ սնունդ (լրացուցիչ բուսական յուղ, կաթ, կարագ, ձու): Սակայն կառավարության որոշմամբ նախատեսված չէ ՔԿՀ-ներում դիետիկ սննդի չափաբաժիններ քրոնիկական հիվանդություններ ունեցող ազատազրկվածների համար:

Խնդրահարույց է նաև կրոնական համոզմունքներով որոշակի սնունդ չընդունող ազատազրկվածների սնվելու հարցը (տե՛ս «Վարդաշեն» ՔԿՀ, «Սնունդ»):

Առաջարկություններ

17) *Բոլոր ՔԿՀ-ների համար նախատեսել քաղաքացիական խոհարարի հաստիք:*
18) *Բարձրացնել հացի որակը:*
19) *Ապահովել սննդի բազմազանությունը:*
20) *Նախատեսել դիետիկ սնունդ:*
21) *Կրոնական կամ այլ պատճառներով որոշակի սննդամթերք չօգտագործող դատապարտյալներին ապահովել համապատասխան սննդով:*

ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Անկողնային պարագաներ

Քրեակատարողական հիմնարկները, ըստ հաստատված չափաբաժինների, պարտավոր են ազատազրկվածներին ապահովել անկողնային պարագաներով: Այդ առումով Դիտորդների խումբը նկատել է, որ հիմնարկներում առկա ներքնակները և բարձերը բավական մաշված են և, հավանաբար, օգտագործվում են շատ ավելի երկար, քան երկու տարի, որը նախատեսված է ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ[6]:

Ինչ վերաբերում է սպիտակեղենին, ապա հիմնարկի կողմից տրամադրված սպիտակեղեն հազվադեպ է հնարավոր հանդիպել ազատազրկվածների մոտ: Նրանց մեծ մասը նշում է, որ իրենք գերադասում են տնից հանձնուքների միջոցով ստացված սպիտակեղենը:

Սանիտարահիգիենիկ պարագաներ

Սանիտարահիգիենիկ պարագաների ապահովումը համակարգում վերջին տարիներին որոշ չափով բարելավվել է: Ազատազրկվածները ստանում են օճառ, ատամի մածուկ, զուգարանի թուղթ և ածելի: Քանի որ նախատեսված պարագաների թե քանակը, թե որակը բավարար չեն, ազատազրկվածները նաև օգտվում են հարազատների բերած սանիտարահիգիենիկ պարագաներից: Մասնավորապես, տրամադրվող օճառի որակը չափազանց ցածր է, իսկ չափաբաժնով նախատեսված մեկ զուգարանի թուղթը մեկ ամսվա համար չի բավականացնում:

Առաջարկություններ

22) *Ապահովել ազատազրկվածներին նոր անկողնային պարագաներով:*

6 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում

23) *Վերանայել ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ հաստատված պարագաների չափաբաժինները:*

24) *Բարելավել տրամադրվող սանիտարահիգիենիկ պարագաների որակը:*

ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ազատազրկվածների բուժսպասարկումը կազմակերպելու նպատակով բոլոր քրեակատարողական հիմնարկներում ստեղծված են բուժմասեր: Բացի այդ, համակարգում գործում է նաև «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն, ուր տեղափոխվում են ազատազրկվածները՝ նրանց բուժումը բուժմասի պայմաններում կազմակերպելու անհնարինության դեպքում: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ ազատազրկվածին տեղափոխել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, կամ վերջինիս հնարավորությունները թույլ չեն տալիս կազմակերպել ազատազրկվածի բուժումը, օրենսդրությամբ[7] նախատեսվում է նաև ազատազրկվածի տեղափոխումը քաղաքացիական բուժական հաստատություն՝ ապահովելով այնտեղ անվտանգությունը:

Բուժանձնակազմ

Քրեակատարողական հիմնարկներում բուժանձնակազմի հաստիքները, կախված հիմնարկի մեծությունից, բավական տարբերվում են միմյանցից («Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում՝ 2 հաստիք, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ 26):

Գրեթե բոլոր հիմնարկներն ունեն հաստիքների համալրման խնդիր: Ըստ հիմնարկների ղեկավարության՝ ներկայիս աշխատավարձով բժիշկ մասնագետները դժվարությամբ են համաձայնում աշխատել համակարգում: Բացի այդ, շատ դեպքերում հաստատված հաստիքները թույլ չեն տալիս լիարժեք կազմակերպել բուժմասի աշխատանքները: Օրինակ՝ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում հնարավոր չէ կազմակերպել գիշերային հերթապահություն՝ հաստիքների անբավարար քանակի պատճառով:

Հիմնարկներում նաև լուրջ խնդիր է հաստիքների համալրումը անհրաժեշտ մասնագետներով: Օրինակ՝ բժիշկ թերապևտները, որոնք ամենապահանջվող մասնագետներն են հիմնարկներում, հանդիպում են խիստ հազվադեպ, փոխարենը հաճախակի հիմնարկներում աշխատում են բժիշկ անեսթեզիոլոգներ, որոնց նեղ մասնագիտական ունակությունները կիրառելի չեն հիմնարկների բուժմասերում: Այս իրավիճակի պատճառ է նաև հաստիքացուցակում բժիշկների կոնկրետ մասնագիտությունը չնշելը:

Քրեակատարողական համակարգում աշխատող բժիշկների մասնագիտական վերապատրաստումը չի կրում կանոնավոր և պարտադիր բնույթ: Բժիշկները պարբերաբար պարտադիր մասնագիտական որակավորում չեն անցնում:

Հաշվի առնելով, որ քրեակատարողական հիմնարկներում աշխատող բժիշկները հանդիսանում են քրեակատարողական հիմնարկի աշխատակազմի անդամներ և գտնվում են հիմնարկի ղեկավարության ենթակայության տակ, ուստի խնդիրներ են առաջանում նաև բուժանձնակազմի անկախության և օբյեկտիվության հետ կապված: Դա հատկապես ակնառու է դառնում այն ժամանակ, երբ հիմնարկում պահվող ազատազրկվածի նկատմամբ ուժ է կիրառվում աշխատակիցների կողմից: Դիտորդների խմբի փորձը ցույց է տալիս, որ այդպիսի դեպքերում բժիշկները կամ չեն գրանցում ազատազրկվածի ստացված վնասվածքները, կամ

7 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենք, հոդված 21:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 14:

անում են դա շատ մակերեսորեն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բուժանձնակազմի անկախության ապահովման անհրաժեշտ պայմանն է նրանց տեղափոխումը արդարադատության համակարգից առողջապահության համակարգ: Այս դեպքում բժշկի կախվածությունը հիմնարկի ղեկավարությունից էականորեն կնվազի և բավարար պայմանների ապահովման դեպքում նույնիսկ կվերանա: Որպես միջանկյալ քայլ այդ ուղղությամբ կարելի է դուրս բերել բուժծառայությունը Քրեակատարողական վարչությունից՝ տալով նրան առանձին վարչության կարգավիճակ:

Առաջարկություններ

25) *Հիմնարկների համար հաստատել այնպիսի հաստիքացուցակ, որի համալրման արդյունքում հնարավոր կլինի լիարժեք կազմակերպել բուժմասի աշխատանքները:*

26) *Հաստիքացուցակում հաստիքները նշել ըստ կոնկրետ բժշկական մասնագիտությունների:*

27) *Կազմակերպել բժիշկների պարբերական վերապատրաստում և մասնագիտական որակավորում:*

28) *Համապատասխան քայլեր ձեռնարկել թափուր հաստիքների համալրման համար:*

29) *Մշակել բուժծառայությունը առողջապահության համակարգ տեղափոխելու գործողությունների պլան:*

Դեղորայք

Դեղորայքը քրեակատարողական համակարգում ապահովվում է կենտրոնացված մատակարարման համակարգի միջոցով: Յուրաքանչյուր տարի կազմվում է անհրաժեշտ դեղորայքի ցանկ, որի հիման վրա Պետական գնումների գործակալության միջոցով կազմակերպվում է մրցույթ մատակարարների միջև: Այս համակարգը հնարավորություն է տալիս նվազեցնել գնումների վրա ծախսվող գումարը, սակայն բավական դժվարություններ է առաջացնում անհրաժեշտ դեղորայքի տեսականու և քանակի ապահովման հարցերում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ մեկ տարվա կտրվածքով կանխատեսել անհրաժեշտ դեղորայքը: Այդ պատճառով հիմնարկներում կազմվող ցուցակը հիմնված է լինում նախորդ տարիների փորձի վրա և բաղկացած հիմնականում ընդհանուր օգտագործման դեղամիջոցներից: Եթե տարվա ընթացքում պարզվում է, որ հիմնարկին անհրաժեշտ է որևէ դեղամիջոց, որ նախօրոք չի նշվել ցուցակում, ապա հիմնարկի բուժմասի պետը դիմում է Քրեակատարողական վարչություն և այնտեղ համապատասխան դեղամիջոցի առկայության դեպքում լրացուցիչ ստանում այն: Ակնհայտ է, որ հեռավոր հիմնարկների համար այդ մեխանիզմը չի գործում, քանի որ շատ ավելի արագ և մատչելի է անհրաժեշտ դեղամիջոցը գնել մոտակա դեղատնից, քան գալ Երևան դրա հետևից:

Բացի այդ, որոշ դեպքերում անհրաժեշտ են դեղամիջոցներ, որոնք ընդհանրապես չեն գնվել, օրինակ՝ հղի ազատազրկվածի համար կարող է անհրաժեշտ լինի ինչ-որ դեղամիջոց, որը նախօրոք հնարավոր չէր կանխատեսել: Լինում են դեպքեր, երբ հիվանդին անհրաժեշտ է լինում կոնկրետ դեղամիջոց, իսկ հիմնարկը կարող է առաջարկել միայն դրա փոխարինող դեղամիջոցը, որը տվյալ հիվանդի դեպքում արդյունավետ չէ: Այսպիսի դեպքերում անհրաժեշտ դեղամիջոցը հիմնականում հայթայթվում է ազատազրկվածի հարազատների, որոշ դեպքերում՝ նույնիսկ հիմնարկի բժշկի միջոցներով:

Մյուս կողմից՝ նախօրոք հստակ պլանավորման անհնարինության պատճառով որոշակի դեղամիջոցների գերմատակարարում է իրականացվում, ինչի արդյունքում Դիտորդների խումբն իր այցելած հիմնարկների մեծ մասում հայտնաբերել է ժամկետանց դեղորայք, որի օգտագործումն անթույլատրելի է և պետք է հատուկ ուշադրության առարկա դառնա:

Եթե նույնիսկ այդ ժամկետանց դեղորայքը համապատասխան ձևով դուրս էր գրված, միևնույն է՝ այն մնում էր քրեակատարողական հիմնարկում, քանի որ բուժմասերի պետերը չունեին համապատասխան կարգադրություն ժամկետանց դեղորայքի ոչնչացմանն ուղղված հետագա քայլերի վերաբերյալ:

Հասարակական դիտորդների խմբի կարծիքով՝ դեղորայքի մատակարարման մեխանիզմը որոշ դեպքերում անարդյունավետ է և կարիք ունի բարելավման: Իրավիճակի հնարավոր լուծումներից կարող է լինել, բացի կենտրոնացված մատակարարումից, հիմնարկներին որոշ անկանխիկ գումար տրամադրելը, որով նրանք անհրաժեշտության դեպքում կկարողանան դեղատներից գնել հրատապ անհրաժեշտություն ունեցող դեղորայքը:

Առաջարկություններ

30) *Սահմանել դեղորայքի մատակարարման ավելի ճկուն համակարգ, որը հնարավորություն կտար ազատազրկվածներին լիարժեք ապահովելու անհրաժեշտ դեղորայքով:*

31) *Սահմանել ժամկետանց դեղորայքի օգտագործումը բացառող հստակ ընթացակարգեր:*

32) *Սահմանել ժամկետանց դեղորայքի ոչնչացման հստակ ընթացակարգեր:*

Սարքավորումներ

Քրեակատարողական հիմնարկների ապահովվածությունը բուժսարքավորումներով մշտապես հանդիսացել է բուժծառայության ամենախոցելի կողմերից մեկը: Չնայած վերջին տարիներին այս ոլորտում նկատվում է զգալի առաջխաղացում, մասնավորապես՝ հիմնարկների մեծ մասը ստացել է ժամանակակից ատամնաբուժական աթոռներ, գնվել է էլեկտրոնային ֆլյուրոգրաֆիայի համար սարքավորված հատուկ մեքենա, ստացվում է նաև որոշ այլ տեխնիկա, այնուամենայնիվ, հիմնարկներն ունեն ամենատարրական բուժտեխնիկայի կարիք: Հիմնարկների բուժծառայությունների ղեկավարների մեծ մասը նշում էր, որ անհրաժեշտ են նոր էլեկտրասրտագրության սարքեր, փոքր լաբորատորիաներ, օտոլորինգոլոգիական և վիրաբուժական տարրական տեխնիկա: Այդ թվում նշվում էր նաև սոնոգրաֆիկ սարքերի անհրաժեշտությունը, չնայած հիմնարկներում գրեթե չկան բժիշկ սոնոգրաֆիստներ: Որոշ հիմնարկներ (օրինակ՝ «Սևան» ՔԿՀ-ն) տեխնիկական հագեցվածության առումով գտնվում են առավել անմխիթար վիճակում:

«Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ները անհրաժեշտ է ապահովել նոր ռենտգենոգրաֆիկ և ռենտգենոսկոպիկ սարքերով: Բոլոր հիմնարկները, ուր տեղադրվում են նոր ատամնաբուժական աթոռներ, անհրաժեշտ է ապահովել ատամնաբուժական ռենտգեն սարքերով:

Խնդիր է նաև հիվանդասենյակները համապատասխան մահճակալներով ապահովելը:

Առաջարկություններ

33) *Բարելավել հիմնարկների ապահովվածությունը բուժսարքավորումներով:*

Քաղաքացիական բուժհաստատություններ ազատազրկվածների տեղափոխումը

Որոշ դեպքերում նախատեսվում է ազատազրկվածների բուժման կազմակերպումը քաղաքացիական բժշկական հաստատություններում պետպատվերի շրջանակներում: Առաջին հերթին հարցը վերաբերում է կին ազատազրկվածներին, որոնց համար քրեակատարողական համակարգում հատուկ բուժհաստատություն ստեղծված չէ: Գործնականում ազատազրկվածին քաղաքացիական բուժհաստատություն տեղափոխելը և պետպատվերի շրջանակներում նրա բուժումը կազմակերպելը կապված են բյուրոկրատական քաշքշուկի հետ, որը հաղթահարելու

համար բավական ժամանակ է պահանջվում: Մասնավորապես, եթե հիմնարկի բժիշկը որոշում է, որ հիվանդի լիարժեք բուժումը հնարավոր է կազմակերպել միայն քաղաքացիական հիվանդանոցի պայմաններում, ապա պետպատվեր ստանալու համար նա պարտավոր է դիմել Քրեակատարողական վարչություն: Այնուհետև վարչությունը դիմում է առողջապահության նախարարություն, առողջապահության նախարարությունը հանձնարարում է համապատասխան բաժնին: Գործընթացը տևում է մոտ 15-20 օր: Պետպատվեր հատկացվելու դեպքում բժիշկը պետք է անձամբ գնա առողջապահության նախարարություն՝ ուղեգրի հետևից:

Առաջարկություններ

34) *Պարզեցնել հիվանդ ազատազրկվածներին քաղաքացիական բուժհաստատություն տեղափոխելու և նրա բուժումը կազմակերպելու գործընթացը:*

ԿԱՊ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների իրավունքը ամրագրված է «Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին» օրենքով և Քրեակատարողական օրենսգրքով.

- Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ (եթե չկա նախաքննությունը վարող մարմնի արգելանք)[8].

- Դատապարտվածին մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ: Այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն երեք կարճատև տեսակցություն[9]:

Կարճատև տեսակցությունների համար բոլոր հիմնարկներում ստեղծված են տեսակցության սենյակներ: Դրանք իրենց ձևով և կահավորանքով բավական տարբերվում են միմյանցից:

Հիմնարկներում կարճատև տեսակցությունները կազմակերպվում են ինչպես մեկ ընդհանուր սենյակում (օրինակ՝ «Էրեբունի», «Սևան», «Արթիկ»), այնպես էլ առանձին սենյակներում (օրինակ՝ «Երևան Կենտրոն», «Աբովյան»):

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում տեսակցության ժամանակ ազատազրկվածները և նրանց հարազատները միմյանցից անջատված են ապակե միջնորմով և շփվում են հեռախոսով: Մյուս բոլոր հիմնարկներում տեսակցությունների ընթացքում կա անմիջական շփման հնարավորություն:

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում տեսակցություններն անցնում են հսկիչի անմիջական ներկայությամբ (նստած է նույն սեղանի շուրջը), ինչը բավական անհարմարություններ է ստեղծում տեսակցողների համար:

Որոշ հիմնարկներ ունեն մանկահասակ երեխաների հետ տեսակցելու համար առանձին սենյակներ: Դրանք ունեն համապատասխան կահավորանք (փափուկ կահույք, խաղալիքներ), ինչի շնորհիվ երեխայի մոտ չի ստեղծվում բանտում լինելու տպավորություն:

Կարճատև տեսակցությունների տրամադրման հարցում հիմնականում խնդիրներ չեն առաջանում:

8 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 15:
9 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.2:

Ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի[10]՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար կամ ցմահ դատապարտված անձինք ունեն տարեկան երեք տեսակցության հնարավորություն, ինչը չորս անգամ քիչ է մյուս դատապարտյալներից: Հայտնի է, որ տեսակցությունները դրական ազդեցություն ունեն ազատազրկվածների բարոյահոգեբանական վիճակի վրա: Մյուս կողմից՝ ամուր կապն ընտանիքի հետ լրացուցիչ գործոն է ազատազրկվածին հետագայում զերծ պահելու հանցավոր կյանք վերադառնալուց: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դիտորդների խումբը գտնում է, որ պատժի խստության ապահովումը ընտանիքի հետ կապի սահմանափակման հաշվին նպատակահարմար չէ:

Առաջարկություններ

35) *Մշակել կարճատև տեսակցության սենյակների կահավորման ընդհանուր չափանիշներ՝ բացառելով տարբեր հիմնարկներում պահվող ազատազրկվածների համար միմյանցից տարբերվող տեսակցության պայմանները:*

36) *Մշակել կարճատև տեսակցությունների ժամանակ հսկողության այնպիսի կարգ, որը չի խանգարի տեսակցությունների բնականոն ընթացքը:*

37) *Բոլոր հիմնարկներում կահավորել մանկահասակ երեխաների հետ տեսակցության առանձին սենյակներ:*

38) *Ավելացնել հատկապես ծանր հանցագործությունների համար կամ ցմահ դատապարտված անձանց կարճատև տեսակցությունների քանակը՝ հասցնելով այլ դատապարտյալների տեսակցությունների քանակին:*

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների իրավունքը ամրագրված է Քրեակատարողական օրենսգրքով[11].

- Դատապարտյալներին համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն մեկ երկարատև տեսակցություն:

Բացի «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ից, բոլոր փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկներում ստեղծված են երկարատև տեսակցության սենյակներ: «Աբովյան» ՔԿՀ-ում երկարատև տեսակցության սենյակները կառուցվել են 2008 թվականին և մինչև տարեվերջ դեռ ոչ մի տեսակցություն այնտեղ չէր իրականացվել:

Երկարատև տեսակցությունների համար հիմնարկներում հատկացվում է առանձնացված հանրակացարանային տիպի տարածք: Այն հիմնականում բաղկացած է առանձին ննջարաններից և ընդհանուր խոհանոցից, զուգարանից ու լոգարանից: Երկարատև տեսակցության պայմաններն իրարից խիստ տարբեր են: Ընդ որում՝ տարբերություններ կան ինչպես տարբեր հիմնարկների սենյակների, այնպես էլ նույն հիմնարկի տարբեր սենյակների միջև: Տարբերությունները վերաբերում են ինչպես սանիտարական պայմաններին, այնպես էլ սենյակների չափերին, կահավորանքին և վերանորոգման աստիճանին: Այս տարբերությունները խտրական վերաբերմունքի և կոռուպցիոն ռիսկերի պայմաններ են ստեղծում:

10 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.2:
11 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

Երկարատև տեսակցության մասնակիցները ստիպված են նախատեսված երեք օրն անցկացնել իրենց ննջարաններում, քանի որ հանրակացարաններին կից չկա որևէ տարածք, ուր կարելի է դուրս գալ մաքուր օդ շնչելու: Հաշվի առնելով, որ երկարատև տեսակցություններին մասնակցում են նաև երեխաներ, նպատակահարմար կլիներ ստեղծել մաքուր օդ դուրս գալու և համատեղ զբոսնելու հնարավորություն:

Երկարատև տեսակցության սենյակների պայմանները հիմնականում (բացառությամբ «Նուբարաշեն» և «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ների) բավարարում են դատապարտյալներին Քրեակատարողական օրենսգրքով նախատեսված տեսակցությունների քանակը ապահովելու համար:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում լրակազմով նախատեսված 290 (իսկ 2008 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ փաստացի պահվող 384) դատապարտյալի համար հատկացված է ընդամենը մեկ երկարատև տեսակցության սենյակ: Արդյունքում՝ երկարատև տեսակցություններից օգտվում են միայն հիմնարկում պահվող ցմահ դատապարտյալները, այսինքն՝ հիմնարկում պահվող այլ դատապարտյալների (2008 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ մոտ 300 մարդ) երկարատև տեսակցություն ունենալու իրավունքը խախտվում է:

Ինչ վերաբերում է «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ին, ապա այնտեղ, ըստ լրակազմի, կարող է պահվել 15 դատապարտյալ (փաստացի պահվում են 2-3-ը, որից երկուսը՝ ցմահ), սակայն հիմնարկը չունի երկարատև տեսակցության սենյակ, ինչի հետևանքով այնտեղ պահվող դատապարտյալները նույնպես զրկված են երկարատև տեսակցության իրավունքից:

Ըստ Քրեակատարողական օրենսգրքի[12]՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար կամ ցմահ դատապարտված անձինք ունեն տարեկան մեկ երկարատև տեսակցության հնարավորություն, ինչը վեց անգամ քիչ է մյուս դատապարտյալներից: Դիտորդների խումբը գտնում է, որ ինչպես և կարճատև տեսակցությունների դեպքում պատժի խստության ապահովումը ընտանիքի հետ կապի սահմանափակման հաշվին նպատակահարմար չէ:

Առաջարկություններ

39) *Մշակել երկարատև տեսակցության սենյակների կահավորման ընդհանուր չափանիշներ՝ բացառելով տարբեր սենյակների պայմանների միջև զգալի տարբերությունները:*

40) *Երկարատև տեսակցության սենյակներում ապահովել մաքուր օդ դուրս գալու հնարավորություն:*

41) *Ավելացնել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի երկարատև տեսակցության սենյակների քանակը:*

42) *«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում ստեղծել երկարատև տեսակցությունների համար հնարավորություն կամ բացառել այդ հիմնարկում դատապարտյալներ պահելը:*

43) *Ավելացնել առանձնապես ծանր հանցագործությունների համար կամ ցմահ դատապարտված անձանց երկարատև տեսակցությունների քանակը՝ հասցնելով այն այլ դատապարտյալների տեսակցությունների քանակին:*

Հեռախոսակապ

Հեռախոսակապի իրավունքն ամրագրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով[13] և ՀՀ քրեակատարողական օրենսգրքով[14]: Հեռախոսակապից իրենց միջոցներով կարող են օգտվել բոլոր ազատազրկվածները, բացառությամբ այն կալանավորվածների, որոնց նկատմամբ նախաքննություն իրականացնող մարմինը կիրառել է արգելանք:

12 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.2:
13 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 17:
14 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.4:

Ազատազրկվածների հեռախոսակապն ապահովելու նպատակով բոլոր քրեակատարողական հիմնարկներում, բացառությամբ «Մեղրի» ՔԿՀ-ի, տեղադրված են քարտային հեռախոսներ:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկներում հեռախոսները հասանելի են բոլոր դատապարտյալներին առանց սահմանափակումների, իսկ փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պահվող դատապարտյալները և կալանավորված անձինք օգտվում են հեռախոսակապից ըստ հիմնարկի ղեկավարության կազմած ժամանակացույցի: Այդ ժամանակացույցները բավական տարբերվում են միմյանցից: Ամենամեծ հաճախականությամբ զանգահարելու հնարավորություն ունեն «Աբովյան» ՔԿՀ-ում պահվող կալանավորվածները (ամեն օր, բացի հանգստյան օրերից), իսկ ամենաքիչը՝ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ի ազատազրկվածները (10 օրը մեկ անգամ), ինչը, հաշվի առնելով վերջին հիմնարկի փոքր լինելը, բացարձակ արդարացված չէ: Ընդհանուր առմամբ այլ հիմնարկներում այդ հաճախականությունը կազմում է միջինը շաբաթական մեկ-երկու անգամ:

Հաշվի առնելով, որ, ըստ օրենսդրության[15], ազատազրկվածներն իրավունք ունեն օգտվելու հեռախոսակապից միայն իրենց միջոցների հաշվին, խնդիրներ են առաջանում անապահով ազատազրկվածների՝ հեռախոսակապից օգտվելու հարցում: Միջոցներ չունենալու պատճառով այդ ազատազրկվածները փաստորեն զրկվում են ընտանիքի հետ կապ պահպանելու իրավունքից:

Առաջարկություններ

44) *Սահմանել փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում ազատազրկվածների՝ հեռախոսակապից օգտվելու նվազագույն հաճախականություն:*

45) *Անապահով ազատազրկվածների համար ստեղծել որոշակի հաճախականությամբ հարազատներին զանգահարելու հնարավորություն:*

Նամակագրություն

Անձնական նամակագրությունը հիմնարկներում հազվադեպ է: Դա բացատրվում է հեռախոսակապի և տեսակցությունների առկայությամբ:

Լրատվություն

Լրատվություն ստանալու համար ազատազրկվածները, ըստ Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի, պետք է ապահովված լինեն ռադիոընդունիչներով: Այս հարցը որոշ դեպքերում դուրս է մնում հիմնարկների աշխատակազմի ուշադրությունից՝ հաշվի առնելով, որ ազատազրկվածները հիմնականում ունեն իրենց հարազատների բերած հեռուստացույցներ և ռադիոընդունիչներ: Այնուամենայնիվ, լրատվություն ստանալու անհնարինության հարցն առաջանում է հատկապես կարանտինային խցերում, ուր չկա լրատվության ստանալու որևէ հնարավորություն:

Քրեակատարողական հիմնարկները հիմնականում բաժանորդագրվում են օրաթերթերի (միջինը՝ երեք թերթ), որից ազատազրկվածները կարող են օգտվել գրադարանների միջոցով: Սակայն մամուլը հաճախակի լինում է հնացած, բացի այդ, ստացվող մամուլի քանակը բավարար չէ հատկապես մեծ հիմնարկների համար:

15 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 180:

Առաջարկություններ՝

46) *Բոլոր ազատազրկվածների համար ստեղծել ռադիոյի միջոցով լրատվություն ստանալու հնարավորություն (հատկապես՝ կարանտինային փուլում):*

47) *Հիմնարկներն ապահովել բազմազան և բավարար քանակությամբ օրվա մամուլով:*

Գրադարաններ

Բոլոր քրեակատարողական հիմնարկներն ապահովված են գրադարաններով: Դրանք հիմնականում գործում են դեռևս խորհրդային տարիներից, ինչի արդյունքում այնտեղ մեծ մաս է կազմում խորհրդային գաղափարախոսություն քարոզող գրականությունը: Անկախության տարիներին լուրջ խնդիր է դարձել գրադարանների համալրումը նոր գրականությամբ: Այդ ուղղությամբ որևէ պետական ծրագիր չի գործում: Համալրումը խիստ սահմանափակ ծավալներով կատարվում է տարբեր բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից:

Առկա գրադարանային ֆոնդը չի բավարարում ներկայիս պահանջարկը: Գրադարաններում առկա գրականության մեծ մասը ռուսերեն լեզվով է, չնայած ազատազրկվածները հիմնականում նախընտրում են հայալեզու գրականություն: Գրականության տեսականին նույնպես թարմացման կարիք ունի, և գրադարանավարները նշում են, որ ազատազրկվածներին հիմնականում հետաքրքրող արկածային և պատմական գեղարվեստական հայերեն գրականությունը չափազանց քիչ է: Ընդհանուր առմամբ գրադարանային ֆոնդը խիստ մաշված վիճակում է:

Ազատազրկվածները, կապված հիմնարկի տիպից, կամ այցելում են գրադարան (կիսաբաց ուղղիչ հիմնարկ) և այնտեղ ընտրում նախընտրած գիրքը, կամ պատվիրում և ստանում են գիրքը իրենց խցում (կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներ): Երկրորդ դեպքում կարևոր է, որ գրադարանավարն ունենա գրքերի ցանկը, որով ազատազրկվածը կկարողանա ընտրություն կատարել:

Առաջարկություններ

48) *Ստեղծել գրադարանները նոր գրականությամբ պարբերաբար համալրման համակարգ:*

49) *Բոլոր գրադարաններում (հատկապես կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներ) ունենալ գրքերի ցանկ, որով ազատազրկվածները կկարողանան ընտրություն կատարել:*

Հանձնուքներ

Ըստ օրենսդրության[16]՝ բոլոր ազատազրկվածներն իրավունք ունեն հանձնուք ստանալու: Քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածը նախատեսում է արգելված առարկաների և իրերի ցանկը, որը պետք է սահմանվի հիմնարկների ներքին կանոնակարգով: Սակայն ներքին կանոնակարգով հաստատված արգելված առարկաների և իրերի ցանկը 16-րդ կետի շնորհիվ վերափոխվել է թույլատրված իրերի ցանկի: Այդ կետը, ի թիվս նախորդ՝ 15-րդ կետով նշված առարկաների և իրերի, արգելում է «Ցանկացած տեսակի այլ առարկա, իր կամ սննդամթերք, բացառությամբ հետևյալ առարկաների, իրերի կամ սննդամթերքի, եթե վերջիններս գնվել են տվյալ կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում գործող խանութից կամ կրպակից» (դրան հաջորդում է թույլատրված իրերի ցանկը): Փաստորեն, եթե այս կետը լիարժեք գործեր, ապա հարազատները կկարողանային փոխանցել միայն հիմնարկի խանութից կամ կրպակից գնված իրերը: Այս կետը առավել անհասկանալի է՝ հաշվի առնելով, որ հիմնարկների մի մասում կրպակ կամ խանութ գոյություն չունի: Բացի այդ, դժվար է նաև պատկերացնել, որ հիմնարկի կրպակը կկարողանա ապահովել ներքին կանոնակարգով նա-

16 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.3:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 22:

խատեսված լայն տեսականին, որը նախատեսում է հարյուրից ավելի անուն ապրանք՝ սկսած լուցկուց և վերջացրած հեռուստացույցով ու սառնարանով:

Միևնույն ժամանակ այս կետը կարող է որոշ դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման պատճառ հանդիսանալ, քանի որ հիմնարկի անձնակազմը, ըստ այս կետի, իրավունք ունի արգելել ցանկացած հանձնուք: Ավելին՝ որոշ առարկաներ (օրինակ՝ համակարգիչները) ընդհանրապես դուրս են մնացել ցանկից և, փաստորեն, արգելված պիտի լինեն հիմնարկներում, ինչի հիմնավորումը դժվար է գտնել:

Այնուամենայնիվ, 2008 թվականի ընթացքում հիմնարկների հանձնուքի ընդունման կետերում սկսել են տեղադրվել ժամանակակից զննման սարքավորումներ, որոնք զգալիորեն բարձրացնում են հարազատների բերած հանձնուքների մեջ թաքցված արգելված իրերի հայտնաբերման աշխատանքի արդյունավետությունը:

Առաջարկություններ

50) *Վերանայել և համապատասխանեցնել Քրեակատարողական օրենսգրքին՝ ներքին կանոնակարգով հաստատված արգելված իրերի ցանկը:*

ԱՆՁՆԱԿԱԶՄ

Հիմնական խնդիրը, որ նշվում է հիմնարկների ղեկավարության կողմից՝ կապված աշխատակազմի հետ, ոչ համարժեք աշխատավարձն է: Այդ պատճառով հնարավոր չէ համալրել հաստիքները, իսկ նոր աշխատակիցներ ընդունելու դեպքում էլ չկա ընտրություն կատարելու հնարավորություն: Այնուամենայնիվ, վերջին տարիներին նկատվում է աշխատավարձերի բարձրացման միտում: 2009 թվականի հունվարի դրությամբ՝ միջին աշխատավարձը հասել էր 90000 դրամի: Դրա արդյունքում նկատելի է նաև թափուր հաստիքների առկայության նվազման միտում:

Ցածր աշխատավարձի դեպքում հասկանալի է նաև, որ թե հիմնարկների ղեկավարները և թե աշխատակիցները այլ խնդիրներ իրենց աշխատանքային պայմանների հետ կապված չեն կարևորում: Այնուամենայնիվ, Դիտորդների խումբը կարևորում է նաև աշխատանքի բարվոք ֆիզիկական պայմաններ ունենալու հարցը: Այդ առումով գրեթե բոլոր հիմնարկների պայմանները հեռու են բավարար լինելուց: Ընդ որում, նույնիսկ նոր վերանորոգված կամ վերակառուցված հիմնարկներում աշխատակազմի աշխատանքային պայմաններին ուշադրություն չի դարձվում: Այսպես «նոր» հիմնարկների բոլոր խցերում հատակը փայտից է, սակայն աշխատակիցների համար հատկացված տարածքներում՝ ոչ: Հիմնարկներում չկա աշխատակիցների համար ճաշարան, և նրանք իրենց ընդմիջման սնունդը բերում են տնից և ուտում հենց աշխատատեղում, որտեղ չկան տարրական պայմաններ: Աշխատանքային պայմանների առումով դրական բացառություն է «Հրազդան» ՔԿՀ-ն, որտեղ գործում է աշխատակիցների ճաշարան, ստեղծված են բարվոք պայմաններ աշխատակիցների հանգստի համար:

Հաջորդ խնդիրը, որ նկատելի է քրեակատարողական հիմնարկներում, աշխատակազմի անվտանգության ոչ բավարար ապահովման խնդիրն է: Առավել մտահոգիչ է վիճակը «Կոշ», «Սևան» և «Էրեբունի» ՔԿՀ-ներում, որոնք դեռևս խորհրդային տարիներից չեն վերակառուցվել և հանրակացարանային տիպի են: Այս հիմնարկներում աշխատակիցը կարող է հայտնվել մի քանի հարյուր դատապարտյալի հետ դեմ առ դեմ: Բացի այդ, չափազանց թույլ է հիմնարկների տեխնիկական հագեցվածությունը: Մասնավորապես, եթե հիմնարկում տեղադրված են տեսախցիկներ, ապա դրանց քանակը չի բավարարում հիմնարկում իրավիճակը վերահսկելու համար: Աշխատակիցներն ապահովված չեն ռադիոկապի միջոցներով, ինչը հնարավորություն կտար նրանց հետ մշտապես կապի մեջ լինել և արտակարգ իրավիճակի դեպքում արագ օգնության հասնել:

Աշխատակիցները, հատկապես բուժանձնակազմը, հաճախակի ստիպված են արտաժամյա աշխատանք կատարել, ինչի համար հավելավճար չեն ստանում:

Հիմնականում լուծված չեն նաև աշխատակիցների տրանսպորտային խնդիրները: Հաշվի առնելով, որ աշխատակիցների զգալի մասը բնակվում է հիմնարկներից բավական հեռավորության վրա (շատերը գալիս են շրջաններից, օրինակ՝ Երևանում գտնվող «էրեբունի» ՔԿՀ -ի աշխատակիցների զգալի մասը բնակվում է Կոշում և Թալինում), հիմնարկների սեփական տրանսպորտ ունենալը անհրաժեշտություն է:

Առաջարկություններ

51) *Պահպանել աշխատավարձերի բարձրացման միտումը:*
52) *Ապահովել աշխատակիցների համար բարվոք պայմաններ աշխատատեղերում:*
53) *Հիմնարկներում կառուցել ճաշարաններ աշխատակիցների համար:*
54) *Ապահովել աշխատակիցներին համապատասխան տեխնիկական միջոցներով:*
55) *Լուծել արտաժամյա աշխատանքի վճարման հարցը:*
56) *Աշխատակիցների տեղափոխման համար հիմնարկներին հատկացնել տրանսպորտային միջոցներ:*

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը ամենամեծ քրեակատարողական հիմնարկն է: Այն շահագործման է հանձնվել 1981 թվականին և իր կառուցվածքով չի համապատասխանում ներկայիս պահանջներին: Հիմնարկն ունի 6 մասնաշենք, որտեղ ազատազրկվածները պահվում են փակ խցերում: Հիմնարկում հիմնականում պահվում են կալանավորվածներ և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներ (այդ թվում՝ գրեթե բոլոր ցմահ դատապարտյալները):

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ	- 153
- կիսափակ ուղղիչ հիմնարկ	- 19
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ	- 29
- բաց ուղղիչ հիմնարկ	- 22
- կալանավորվածներին պահելու վայր	- 550

Ըստ լրակազմի՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կարող է պահվել 840 մարդ: Փաստացի ամբողջ 2008 թվականի ընթացքում հիմնարկում նկատվել է գերբնակեցում: Արդյունքում՝ խցերի մեծ մասում ազատազրկվածների թիվը զգալիորեն գերազանցում էր նախատեսվածը և նույնիսկ լրացուցիչ մահճակալների տեղադրման պայմաններում շատ ազատազրկվածներ չունեին անհատական քնելատեղեր և քնում էին հերթափոխով:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում բոլոր խցերը միանման են, ունեն 30 քմ մակերես: Վերջին տարիների վերանորոգման աշխատանքների արդյունքում խցերում զուգարանները մեկուսացվել են:

Հիմնարկի հիմնական խնդիրներից է կոյուղին, որը հաճախակի վնասվում է՝ ստեղծելով անտանելի վիճակ հատկապես առաջին մասնաշենքում: Կոյուղու խնդրի լուծման տարբերակ հիմնարկի ղեկավարությունը տարիներ շարունակ չի կարողանում գտնել՝ կապելով դա հիմնարկի սխալ նախագծման հետ:

Ջրամատակարարումը հիմնարկում սահմանափակ է՝ ըստ ժամանակացույցի առավոտյան և երեկոյան 2-3 ժամով: Այդ պատճառով ազատազրկվածները ստիպված են մշտապես ջրի պաշար ունենալ:

Հիմնարկում չի գործում նաև ջեռուցման համակարգը, ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերով:

Խցեր

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի բոլոր խցերը (բացի ցմահ դատապարտյալների խցերից) 8 տեղանի են: Չնայած խցերում ապահովվում է մեկ ազատազրկվածի համար նախատեսված 4 քմ տարածքը, սակայն մեկ խցում այդքան ազատազրկված պահելը հակասում է Քրեակատարո-

ղական օրենսգրքի[17] պահանջներին, որով նախատեսվում է, որ փակ ուղղիչ հիմնարկի խցերում պետք է պահվեն մինչև 4 դատապարտյալ: Բացի այդ, գերբնակեցման պատճառով խցերում տեղադրվել են լրացուցիչ 2-4 մահճակալներ և այնտեղ, ըստ Դիտորդների խմբի դիտարկումների, պահվում են մինչև 13, իսկ այլ տեղեկություններով՝ մինչև 18 ազատազրկված: Այս իրավիճակը աննախադեպ է Դիտորդների խմբի դիտարկումների ողջ ընթացքում (սկսած 2004 թվականից):

Խցերի հատակը բետոնից է, ինչը, հաշվի առնելով, որ ազատազրկվածները գտնվում են այնտեղ օրական 23 ժամ, բացասաբար կարող է անդրադառնալ նրանց առողջության վրա: Խցերը կահավորված են մահճակալներով, սեղանով և նստարաններով, որոնք ամրացված են հատակին: Գրեթե բոլոր խցերում կան նաև ազատազրկվածների անձնական հեռուստացույցներ, սառնարաններ, էլեկտրական այլ կենցաղային սարքեր:

Խցերի մի մասի բնական լուսավորությունը բավարար չէ, պատուհանները փոքր են և չեն ապահովում անհրաժեշտ լուսավորություն: Արհեստական լուսավորությունն ապահովվում է խցի մեջտեղում առաստաղից կախված մեկ լամպով, որը միացված է թե՛ երեկոյան, թե՛ գիշերային ժամերին, քանի որ չկա առանձին գիշերային լուսավորության լամպ: Գիշերային լուսավորության լամպի բացակայությունը ստիպում է գիշերվա ժամերին միացված պահել երեկոյան լուսավորության ավելի հզոր լամպը, ինչը խանգարում է ազատազրկվածներին քնել:

Խցերում չի գործում օդափոխության համակարգը, ինչի արդյունքում մաքուր օդի ներթափանցումը խցեր սահմանափակ է: Ազատազրկվածները նշում էին, որ դա բերում է առողջական խնդիրներ:

Որոշակի տարբերվում է իրավիճակը 6-րդ մասնաշենքում: Այդ մասնաշենքն աչքի է ընկնում ազատազրկվածների ավելի խիստ մեկուսացման պայմաններով և կարգուկանոնի ավելի բարձր մակարդակով: Այստեղ են պահվում նաև «պրոբլեմային» ազատազրկվածները: Չնայած հիմնարկի ընդհանուր գերբնակեցմանը՝ այս մասնաշենքի խցերում, որոնք իրենց չափսերով չեն տարբերվում մյուս մասնաշենքերի խցերից, պահվում են ավելի փոքր թվով ազատազրկվածներ (Դիտորդների խմբի այցելած խցերում պահվում էր 2-6 ազատազրկված):

Ցմահ դատապարտյալները պահվում են հիմնարկի 5-րդ և, մասամբ, 4-րդ մասնաշենքերում: Խցային պայմանները այստեղ համեմատաբար ավելի բարվոք են: Այնտեղ պահվում է մինչև չորս դատապարտյալ: Որոշ խցերում փայտե հատակ է: Խցերի մեծ մասում ազատազրկվածները ստեղծել են խցի սանհանգույցում լոգանք ընդունելու հնարավորություն:

Առաջարկություններ

57) *Միջոցներ ձեռնարկել հիմնարկի գերբնակեցումը վերացնելու համար, իսկ մինչ այդ տեղադրել լրացուցիչ մահճակալներ՝ բոլոր ազատազրկվածներին անհատական քնելատեղերով ապահովելու նպատակով:*

58) *Հետագա վերանորոգումների ընթացքում նախատեսել խցերում փայտե հատակ:*

59) *Ապահովել խցերում գիշերային լուսավորության լամպեր:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գործում է 2 տեսակցության սենյակ: Սենյակների մակերեսները տարբեր են՝ 45 քմ և 18 քմ: Առաջին սենյակը նախատեսված է միաժամանակ 7 տեսակցության համար: Սա քրեակատարողական համակար-

17 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 106:

գում միակ տեսակցության սենյակն է, որտեղ տեսակցությունները տեղի են ունենում առանց ազատազրկվածի և նրա հարազատների միջև անմիջական շփման հնարավորության՝ նրանք բաժանված են ապակե միջնորմով, խոսում են միմյանց հետ հեռախոսով: Տեսակցության այս պայմանները ստեղծում են խտրական պայմաններ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալների նկատմամբ: Այս պայմանների ստեղծումը նաև անհասկանալի է՝ հաշվի առնելով, որ օրենսդրությամբ չի նախատեսվում տեսակցության սենյակների այսպիսի սարքավորման պահանջ:

Հիմնարկում տեսակցությունները տեղի են ունենում հսկիչի ներկայությամբ: Սենյակում չկան բնական լուսավորություն և ջեռուցում:

Մյուս սենյակը նախատեսված է մեկ տեսակցության համար: Այստեղ տեղադրված են սեղան և աթոռներ: Այս սենյակում տեսակցություններն անմիջական են:

Առաջարկություններ

60) *Վերափոխել կարճատև տեսակցության սենյակը՝ ապահովելով այնտեղ տեսակցողների միջև անմիջական շփման հնարավորություն:*

61) *Ապահովել կարճատև տեսակցության սենյակների ջեռուցումը:*

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար «Նուբարաշեն» ՔԿՀ-ում նախատեսված է մեկ սենյակ: Սենյակը բաղկացած է 3 մասից՝ ննջարանից, խոհանոցից և միջանցքից: Կա առանձին սանհանգույց: Խոհանոցում կան լվացարան, սեղան, աթոռներ: Երկարատև սեսակցության սենյակում կան նաև մահճակալ, պահարան, սառնարան: Լուսավորությունը և՛ արհեստական է, և՛ բնական՝ կա փոքր պատուհան: Օդափոխությունը կատարվում է պատուհանով և օդորակիչով:

Սենյակի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է:

Հաշվի առնելով, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվում են մեծ թվով դատապարտյալներ, այստեղ միայն մեկ երկարատև տեսակցությունների սենյակի առկայությունը ակնհայտորեն բավարար չէ: Այդ իսկ պատճառով դատապարտյալների մեծ մասը չի կարողանում օգտվել երկարատև տեսակցության իրավունքից: Սենյակի հնարավորությունները բավարարում են միայն ցմահ դատապարտյալների տեսակցություններն ապահովելու համար, որոնց և տրվում է նախապատվությունը այս հարցում:

Առաջարկություններ

62) *Ավելացնել երկարատև տեսակցությունների սենյակների քանակը:*

Հեռախոսակապ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի բոլոր մասնաշենքերում տեղադրված են քարտային հեռախոսներ, որից ազատազրկվածները կարող են օգտվել համաձայն ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ: Լուրջ խնդիրներ, կապված հեռախոսակապից օգտվելու հետ, խումբը չի արձանագրել:

Առաջարկություններ

63) *Միջոցներ ձեռնարկել հեռախոսակապից օգտվելու հաճախականությունը ավելացնելու համար:*

Հանձնուքներ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում հանձնուքի ընդունման կետը 18 քմ մակերեսով սենյակ է: Դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են այդ սենյակից, որտեղ կան 2 նստարան, սեղան: Սենյակին կից գտնվում է կրպակ, որտեղից կարելի է գնումներ կատարել: Սենյակին կից կա նաև զուգարան: Սենյակի պատին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի ու իրերի ցանկը և կարգը:

Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Հանձնուքի ընդունման կետի աշխատակցի խոսքով՝ հերթեր գոյանում են միայն նախատոնական օրերին:

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների լոգանքի կազմակերպման նպատակով գործում է 5 բաղնիք, որոնք ունեն 12-15 քմ մակերես: Բոլոր բաղնիքներն ունեն հանդերձարան, որտեղ տեղադրված են նստարաններ և կախիչներ: Տաք ջրամատակարարումը ապահովելու համար տեղադրված են տարբեր չափսերի բաքեր, որոնցում ջուրը տաքացվում է էլեկտրականությամբ: Օդափոխության համակարգ լոգարաններում չկա. այն ապահովվում է պատուհաններով: Հիմնարկի լոգարաններում ապահովված չէ նաև ջեռուցումը:

Չնայած վերը նշվածին՝ լոգանքի կազմակերպումը հիմնարկում չունի կանոնավոր բնույթ, և ազատազրկվածները լոգանք են ընդունում հիմնականում խցերի սանհանգույցներում, թեև այնտեղ չկան համապատասխան պայմաններ: Լոգանքը կանոնավոր կերպով կազմակերպվում է միայն 6-րդ մասնաշենքում:

Առաջարկություններ

64) *Ապահովել ազատազրկվածների լոգանքը հիմնարկի բաղնիքների պայմաններում՝ օրենսդրությամբ նախատեսված հաճախականությամբ:*

65) *Ապահովել լոգարանները օդափոխության համակարգով:*

66) *Ապահովել լոգարանների ջեռուցումը:*

Բուժսպասարկում

Բուժմաս, ընդհանուր վիճակ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժմասը ամենամեծն է քրեակատարողական համակարգում: Այն առանձին երկհարկանի մասնաշենք է: Բուժմասն ունի խորխի հետազոտության լաբորատորիա, ռենտգեն, ատամնաբուժական, միջամտությունների կաբինետներ և 12 հիվանդախուց: Տուբերկուլյոզի բաժնում հատկացված է առանձին սենյակ, ուր հիվանդները դեղերն ընդունում են բժշկի հսկողությամբ:

Բուժմասի հիվանդախցերի սանհանգույցներում տեղադրվել են ցնցուղներ և ջրատաքացուցիչներ, ինչի արդյունքում ազատազրկվածները հնարավորություն ունեն լոգանք ընդունելու իրենց հարմար ժամերին և իրենց նախընտրած հաճախականությամբ:

Բուժմասն ունի նաև իր առանձին զբոսահրապարակ, ընդ որում՝ դա հիմնարկի միակ զբոսահրապարակն է, որտեղ ստեղծված են մարզվելու հնարավորություններ (ինքնաշեն պտտաձող և մարզասարք):

Բուժմասի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է:

Համալրվածություն

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժմասն ունի 26 հաստիք, որոնցից թափուր էին երեքը: Թափուր էին բաժնի պետի տեղակալի, գլխավոր մասնագետի, առաջատար մասնագետի հաստիքները:

Չնայած այլ ՔԿՀ-ների համեմատությամբ հիմնարկի բուժանձնակազմի մեծ քանակին և մասնագիտական լայն ներկայացվածությանը (աշխատում են հոգեբույժ, ատամնաբույժ, ինֆեկցիոնիստ, թոքախտաբաններ, թերապևտ, վիրաբույժ, նեյրովիրաբույժ, վերակենդանացման բժիշկ), բուժմասի պետի կարծիքով՝ լիարժեք համալրված լինելու համար անհրաժեշտ է ունենալ նաև սրտաբան, ուրոլոգ և էխոսկոպիստ-ռենտգենոլոգ:

Առաջարկություններ

67) *Համալրել հիմնարկի բուժմասը անհրաժեշտ մասնագետներով:*

Դեղորայք

Ըստ «Նուբարաշեն» ՔԿՀ բուժմասի պետի՝ հիմնարկը լիովին ապահովված է դեղորայքով, ժամկետանց դեղեր չունեն: Եթե առաջանում է որևէ դեղի անհրաժեշտություն, որն այդ պահին հիմնարկը չունի, այն լրացուցիչ բերվում է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից: Այդուամենայնիվ, ազատազրկվածները, ընդհանուր առմամբ բավարար գնահատելով բժիշկների աշխատանքը, բավարար չէին գնահատում դեղորայքի տեսականին:

Սարքավորումներ

«Նուբարաշեն» ՔԿՀ բուժմասի ապահովվածությունը բժշկական սարքավորումներով վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է: 2008 թվականին տեղադրվել է նոր թվային ֆլյուրոգրաֆիկ սարք՝ «Պրո Սկան-2000», սակայն, ցանցում լարման որոշակի անկման դեպքում սարքը չի աշխատում: Դա բացառելու, ինչպես նաև հոսանքի տատանումների պատճառով թանկարժեք սարքը փչանալուց զերծ պահելու համար անհրաժեշտ է տեղադրել հոսանքի կարգավորիչ:

Վերջին տարվա ընթացքում բուժմասը ստացել է նոր ժամանակակից ատամնաբուժական աթոռ: Սակայն լիարժեք բուժում կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ատամնաբուժական ռենտգեն սարք: Ընդ որում՝ այդ սարքը կկարողանար սպասարկել նաև մոտակա հիմնարկները («Էրեբունի», «Վարդաշեն»):

Հիմնարկն ունի նաև ռենտգեն սարք, որը թեև գտնվում է աշխատանքային վիճակում, սակայն բարոյապես մաշված է:

Առաջարկություններ

68) *Ֆլյուրոգրաֆիկ սարքի աշխատանքն ապահովելու համար տեղադրել հոսանքի կարգավորիչ:*

69) *Հիմնարկին հատկացնել նոր ռենտգենոգրաֆիկ սարք:*

70) *Հիմնարկին հատկացնել ատամնաբուժական ռենտգեն սարք:*

Զբաղվածությունը

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունը ապահովվում է զբոսանքի և գրադարանից օգտվելու միջոցով: Խցերում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ և այլ տեխնիկա: Դատապարտյալների համար աշխատանք հիմնարկն ապահովում է միայն տնտեսական աշխատանքներին ներգրավման միջոցով:

Զբոսանք

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում գործում է 29 զբոսահրապարակ, որոնցից 20-ը գտնվում են գլխավոր մասնաշենքի տանիքում, վեց զբոսահրապարակ գտնվում է այդ շենքի բակում, երկուսը գտնվում են 6-րդ մասնաշենքում, և մեկը՝ բուժմասում:

Զբոսահրապարակները հիմնականում միատեսակ են, ունեն մոտ 30 քմ մակերես: Ստեղծված չեն սպորտով զբաղվելու, մարզվելու հնարավորություններ:

6-րդ մասնաշենքի զբոսահրապարակների մակերեսը 18 քմ է: Այնտեղ տեղադրված են նստարաններ, որոնք ջարդված են և օգտագործման համար ոչ պիտանի: Այս երկու զբոսահրապարակների ծածկերը տեղադրված են այնպես, որ տեղումների ժամանակ չեն ծածկում նստարանները: Սպորտով զբաղվելու հնարավորություն զբոսահրապարակներում չկա:

Բուժմասի զբոսահրապարակը ավելի բարվոք վիճակում է, մակերեսը՝ 18 քմ: Կա նստարան, որը պաշտպանված է տեղումներից: Սպորտով զբաղվելու համար կա 2 պտտաձող և մեկ ինքնաշեն սարք՝ մարզվելու համար:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ն ունի ամենաշատ զբոսահրապարակները, սակայն զբոսանքը հիմնարկում անկանոն է կազմակերպվում: Զբոսանքի հաճախականությունը, ըստ մասնաշենքերի, տարբեր է: Ամենալավ վիճակը այդ առումով 6-րդ մասնաշենքում է՝ ամեն օր, բացի հանգստյան օրերից, ինչը կրկին հակասում է օրենսդրությանը[18], որը պահանջում է ամենօրյա զբոսանք ազատազրկվածների համար: Ամենավատ վիճակը 3-րդ մասնաշենքում է, որտեղ զբոսանքի կազմակերպումը ավելի շուտ բացառություն է, քան օրինաչափություն: Զբոսանքի կազմակերպման հետ կապված խնդիրները բացատրվում են անձնակազմի ոչ բավարար թվով: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ երբեմն, այդ հարցի նկատմամբ հիմնարկի ղեկավարության կողմից հատուկ ուշադրության պայմաններում, իրավիճակը զբոսանքի կազմակերպման հարցում զգալիորեն բարելավվում է, այսինքն՝ նշվող պատճառները ցանկության դեպքում հեշտությամբ հաղթահարվում են:

Առաջարկություններ

71) *Ապահովել օրենսդրությամբ նախատեսված ամենօրյա զբոսանք:*

72) *Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն:*

Գրադարան

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում գործում է գրադարան, որի մակերեսը 56 քմ է: Գրքերի քանակը կազմում է 6170 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են: Մեր դիտարկումների համաձայն՝ գրքերի պահպանման համար նախատեսված պահարանները բավարար էին, սակայն գրադարանը չի ջեռուցվում: Ռուսերեն գրքերի քանակն ավելի շատ է, քան հայերեն: Կա նոր գրքերի կարիք: Գրքերի ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում: Նոր գրքեր երկար տարիներ չեն ստացվել: Վերջին շրջանում գրադարանը ստացել է միայն հոգևոր գրականություն: Գրադարանավարի խոսքով՝ դատապարտյալները գեղարվեստական, դասական, ուսումնական գրքերի կարիք ունեն: Գրադարանը մամուլ չի ստանում:

Առաջարկություններ

73) *Համալրել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

74) *Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:*

18 Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 78:

Սնունդ

Սնունդը «Նուբարաշեն» ՔԿՀ-ում մշտապես եղել է ազատազրկվածների դժգոհության առարկա: Դա կապված է եղել թե սննդամթերքի, հատկապես յուղի, որակի, թե ճաշերի պատրաստման հետ: Կարևոր խնդիրներից է այս հարցում խոհարարների մասնագիտական պատրաստվածությունը: «Նուբարաշեն» ՔԿՀ-ն չունի քաղաքացիական մասնագետ խոհարարի հաստիք (ինչպես «Երևան Կենտրոն» կամ «Գորիս» ՔԿՀ-ներում է): Արդյունքում՝ խոհարար է նշանակվում տնտեսմասի դատապարտյալներից մեկը, որը չունի խոհարարական կրթություն:

Խոհանոց

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի խոհանոցը բաղկացած է հետևյալ մասերից՝ եփման, սպասքի լվացման, հացի կտրման բաժիններից և պահեստներից:

Ճաշը պատրաստվում է էլեկտրական կաթսաներում: Քանի որ հիմնարկի ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի՝ օրական երկու անգամ, չորս ժամով, ապա խոհանոցում հավաքում են ջրի պաշարներ: Տաք ջրամատակարարում խոհանոցում չկա, ջուրը տաքացնում են կաթսաներում:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի խոհանոցը ստանում է հիգիենիկ պարագաներ («Մաքրուհի», «Թաժ»): Խոհանոցում գործում է օդափոխության համակարգ: Կա երեք սառնարան, որոնցից մեկն անսարք է: Սննդի նմուշները առկա են:

Այլ սարքավորումներից խոհանոցն ունի կարտոֆիլ մաքրելու սարք, որը անորակության պատճառով հաճախակի խափանվում է:

Խոհանոցն ընդհանուր առմամբ ունի հիմնանորոգման կարիք:

Սննդի որակը

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի ազատազրկվածները հիմնականում դժգոհ են հիմնարկում պատրաստվող ճաշերի որակից: Ճաշերի ցածր որակի մասին է խոսում այն փաստը, որ խոհարարներն իրենց համար առանձին ճաշ են պատրաստում և չեն օգտվում ընդհանուր սննդից:

Հացը «Նուբարաշեն» ՔԿՀ-ի համար թխվում է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամին պատկանող, ՔԿՀ-ի տարածքում գտնվող հացաթխման արտադրամասում: Այստեղ թխվող հացի որակը տարբեր է, և երբեմն հացը լինում է թթված և թաց:

Ազատազրկվածների մեծ մասը նշում էր, որ օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից:

Առաջարկություններ

75) *Հիմնանորոգել խոհանոցը:*

76) *Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:*

77) *Հիմնարկի հաստիքացուցակում նախատեսել մասնագետ խոհարարի հաստիք:*

78) *Բարձրացնել սննդի որակը:*

Պատիժներ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի պատժախցերը գտնվում են հիմնարկի առաջին մասնաշենքում՝ հիմնական մասնաշենքի առաջին՝ կիսանկուղային հարկում: Այստեղի խցերի պայմանները հատկապես ծանր են՝ հաշվի առնելով շինության հիմքի խոնավությունը և նկուղում կոյուղու վթարային վիճակում գտնվելը:

Պատժախցերի մակերեսը կազմում է 30 քմ: Այնտեղ տեղադրված են երեքական մահճակալ, որոնք ցերեկային ժամերին փակվում են:

Պատժախցերի ջեռուցման համար տեղադրված են էլեկտրական սալիկներ, որոնք ձմռան ամիսներին չեն ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան:

Բնական լուսավորությունը պատժախցերում բավարար չէ, քանի որ պատուհանները փոքր են: Բացի այդ, պատուհանների ապակիների մի մասը կոտրված է, և ազատազրկվածները ստիպված են փակել պատուհանները ծածկոցներով:

Պատժախցերի զուգարանները մեկուսացված չեն:

Ընդհանուր առմամբ պատժախցերը գտնվում են հակասանիտարական վիճակում:

Առաջարկություններ

79) *Հիմնանորոգել պատժախցերը:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

2008 թվականի ընթացքում Դիտորդների խմբի կողմից «Նուբարաշեն» ՔԿՀ-ում արձանագրվել է հատուկ միջոցների կիրառման մեկ դեպք: Դեպքի մասին կազմվել է հրատապ հաշվետվություն (տե՛ս Հավելված 2):

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

2008 թվականի ընթացքում ոստիկանությունից բերված կալանավորվածների բուժզննման մատյանում գրանցված է 101 դեպք, երբ հիմնարկ բերված կալանավորի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ այդ դեպքերի մասին անմիջապես տեղյակ է պահվում դատախազությանը:

Կարանտինային խուց

Կարանտինային խցերը գտնվում են հիմնարկի առաջին մասնաշենքում: Վերջին տարվա ընթացքում կարանտինային խցերի պայմանները որոշ չափով բարելավվել են, սակայն դեռևս զիջում են սովորական խցերին:

Խցերի բնական լուսավորությունը բավարար էր, սակայն խցերից մեկի պատուհանը չուներ ապակի և փոխարենը պոլիէթիլեն էր փակցված:

Կարանտինային խուցը ապահովված չէ ինֆորմացիայի որևէ աղբյուրով՝ հեռուստացույց, ռադիո, և ազատազրկվածները կարանտինային փուլում ամբողջովին կտրված են արտաքին աշխարհից: Սա անընդունելի է՝ հաշվի առնելով, որ այդ փուլում ազատազրկվածները գտնվում են հատկապես ծանր հոգեբանական վիճակում: Միևնույն ժամանակ, խցերում ռադիոյի առկայությունը ամրագրված է օրենսդրությամբ[19]:

Առաջարկություններ

80) *Կարանտինային խցերում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք չեն զիջի սովորական խցերի պայմաններին:*

81) *Ապահովել կարանտինային խցերում ռադիո:*

19 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 46:

Վերաբերմունք

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակազմի կողմից ազատազրկվածների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքեր Դիտորդների խումբը 2008 թվականի ընթացքում չի արձանագրել:

Անձնակազմ

«Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակազմի հաստիքները համալրված են, սակայն հիմնարկը հավելյալ 20 կրտսեր տեսուչի կարիք ունի:

Հիմնարկի սոցիալ-հոգեբանական ծառայությունը ունի մեկական հոգեբան, սոցիալական աշխատող և իրավաբան, ինչը չափազանց քիչ է՝ հաշվի առնելով, որ հիմնարկում պահվում է 800-900 ազատազրկված:

Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին:

«Նուբարաշեն» ՔԿՀ-ում աշխատակազմի համար ստեղծված չեն ամենատարրական պայմաններ: Չկա ճաշարան, ինչի պատճառով աշխատակիցները ընդմիջման սնունդը բերում են իրենց հետ և ուտում են հենց աշխատատեղում: Մասնաշենքերում աշխատատեղերը գտնվում են միջանցքներում, ուր չկա ջեռուցման որևէ հնարավորություն:

Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է՝ արդարացի աշխատավարձ համարելով 200000-250000 դրամը՝ ներկայիս 70000-75000 դրամի փոխարեն:

Առաջարկություններ

82) *Ապահովել հիմնարկը անհրաժեշտ քանակությամբ հաստիքներով, հատկապես սոցիալ-հոգեբանական ծառայության գծով:*

83) *Բարելավել աշխատակազմի աշխատանքային պայմանները:*

«Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը գտնվում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության շենքում և դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան:

Դիտորդների խմբի դեռևս 2005 թվականի հաշվետվությունում նշված էր, որ չնայած «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ն իրավական կարգավիճակով գտնվում է ԱՆ ենթակայության տակ, բայց փաստորեն գործում է որպես ԱԱԾ մեկուսարան: Զեկույցում նշված էր նաև, որ հիմնարկը չունի իր անցագրային կետը և այնտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է անցնել ԱԱԾ անցագրային կետով: Զեկույցում առաջարկություն էր արվել դադարեցնել «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ի գործունեությունը, եթե տեխնիկապես հնարավոր չէ այն առանձնացնել ԱԱԾ տարածքից: Այս առումով իրավիճակը չի փոխվել:

Հիմնարկն ունի երկու հարկ: Ազատազրկվածներին պահելու համար օգտագործվում է միայն երկրորդ հարկը, իսկ առաջին՝ կիսանկուղային հարկում կահավորված է միայն բաղնիքը, մնացած տարածքը չօգտագործվող խցեր են:

Հիմնարկի լրակազմը, ըստ արդարադատության նախարարի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» հրամանի, կազմում է 60 մարդ: Սակայն հաշվի առնելով, որ հիմնարկի տարածքի մի մասը հատկացվել է Ազգային անվտանգության ծառայությանը՝ որպես ձերբակալվածներին պահելու վայր օգտագործելու համար, ապա փաստացի ներկայումս հիմնարկի լրակազմը 53 է: Այդ թվում՝

- փակ ուղղիչ հիմնարկ - 10
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 5
- կալանավորվածներին պահելու վայր - 38

Հիմնարկում ստեղծված չեն պայմաններ կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալներ պահելու համար:

Այցելության պահին հիմնարկում պահվում էր 48 ազատազրկված, այդ թվում՝ 3 դատապարտյալ (2 ցմահ) և 45 կալանավորված:

Խմբի դիտարկումները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում պահվում են քաղաքական ենթատեքստ պարունակող քրեական մեղադրանքով կալանավորված անձինք (օրինակ՝ 2004 թ. ապրիլի, 2008 թ. մարտի իրադարձություններից հետո այստեղ էին առավելապես պահվում ընդդիմության ներկայացուցիչներ), օտարերկրացիներ, ինչպես նաև առանձին դեպքերում հասարակական հնչեղություն ստացած քրեական գործերով մեղադրյալ անձինք: Այս իմաստով իրավիճակը 2005 թվականի զեկույցի համեմատ չի փոխվել:

Առաջարկություններ

84) *Հիմնարկը տեղափոխել ԱԱԾ տարածքից կամ կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որի արդյունքում ՔԿՀ-ն մեկուսացված կլինի ԱԱԾ-ից:*

85) *ՀՀ արդարադատության նախարարի 2007 թ. փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» հրամանում փոփոխել «Երևան Կենտրոն» հիմնարկի համար նախատեսված լրակազմը և համապատասխանեցնել այն հիմնարկի ներկայիս շենքային պայմաններին:*

Խցեր

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում ներկայումս գործում է երկուսից հինգ տեղանոց 13 խուց: Այնտեղ բնակմակերեսը համապատասխանում է ընդունված չափանիշներին, հատակը փայտից է, մահճակալները՝ մեկ հարկանի: Խցերը վերջերս մասնակի վերանորոգվել են:

Բնական լուսավորությունը տարբեր խցերում տարբեր է, սակայն գրեթե բոլոր խցերում բավարար չէ: Այդ պատճառով հիմնարկում մշտապես միացված է արհեստական լուսավորությունը:

Արհեստական լուսավորությունը չի տարանջատված գիշերայինի և ցերեկայինի, և այդ պատճառով մեծ հզորության լամպը վառվում է նաև գիշերային ժամերին, ինչը խանգարում է ազատազրկվածներին քնել:

Խցերում բացակայում է օդափոխության համակարգը:

Խցերում զուգարանները բավարար չափով մեկուսացված չեն և, հաշվի առնելով օդափոխության համակարգի բացակայությունը, անհնար է դրանք լիովին մեկուսացնել: Այդուհանդերձ, հիմնարկի խցերից մեկում զուգարանի կիսապատը բարձրացվել էր և կազմում էր մոտ 2 մետր, ինչը համեմատաբար ավելի արժանապատիվ պայմաններ էր ստեղծել ազատազրկվածների համար:

Առաջարկություններ

86) *Խցերում տեղադրել գիշերային լուսավորության (փոքր հզորության) լամպեր:*

87) *Հիմնարկում սարքավորել օդափոխության համակարգ:*

88) *Մեկուսացնել խցերի զուգարանները:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար հիմնարկում գործում է երկու տեսակցության սենյակ: «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում տեսակցություններն անցնում են հսկիչի անմիջական ներկայությամբ, ինչն ազատազրկվածների կողմից ընկալվում է որպես խոչընդոտ տեսակցության բնականոն ընթացքին: Տեսուչի ներկայությունը հիմնավորվում է հարազատների կողմից արգելված իրերի փոխանցումը կանխելու անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ եղած սենյակների քանակը խիստ անբավարար է, քանի որ նույն սենյակները օգտագործվում են նաև որպես քննչական սենյակներ: Այդ պատճառով հիմնարկի ղեկավարությունը սահմանափակել է տեսակցությունների տևողությունը մեկ ժամ տևողությամբ, մինչդեռ օրենսդրությամբ[20]

20 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 15:

նախատեսված է երեք ժամ՝ կալանավորվածների և չորս ժամ՝ դատապարտյալների համար: Ըստ հիմնարկի վարչակազմի՝ ներկայիս շենքային պայմաններում հնարավոր չէ ապահովել օրենսդրության պահանջները:

Առաջարկություններ

89) *Գտնել տեսակցությունների հսկողության այնպիսի ձև, որ, ապահովելով անվտանգությունը, չխախտվի ազատազրկվածների անձնական կյանքի իրավունքը:*

90) *Տեսակցության սենյակների պակասը լրացնելու նպատակով հիմնարկի առաջին հարկի չգործող խցերից մի քանիսը վերափոխել տեսակցության սենյակների և վերացնել տեսակցությունների ժամանակի սահմանափակումը:*

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար հիմնարկում սենյակ նախատեսված չէ, և երբևէ հիմնարկը այդպիսի սենյակ չի ունեցել: Այդուամենայնիվ, արդարադատության նախարարի լրակազմերը հաստատելու մասին հրամանով հաստատված է հիմնարկի լրակազմը, ըստ որի՝ հիմարկում կարող են պահվել մինչև 10 դատապարտյալ (այցելության պահին նրանք երեքն էին): «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում դատապարտյալների կողմից երկարատև տեսակցությունից օգտվելու հնարավորության բացակայությունը խախտում է նրանց իրավունքները և ստեղծում նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք՝ այլ հիմնարկներում պահվող դատապարտյալների համեմատությամբ:

Առաջարկություններ

91) *Հիմնարկում կահավորել երկարատև տեսակցության սենյակ (հնարավոր է՝ առաջին հարկի առավել լուսավոր խցերից մեկում) կամ բացառել «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում դատապարտյալներ պահելը:*

Հեռախոսակապ

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ն վերջին քրեակատարողական հիմնարկն էր, որտեղ ազատազրկվածների համար ստեղծվեց հեռախոսակապից օգտվելու հնարավորություն: Ներկայումս, ըստ հիմնարկի պետի հաստատած ժամանակացույցի, ազատազրկվածներին հնարավորություն է ընձեռվում իրենց հաշվին օգտվելու հեռախոսից 10 օրը մեկ անգամ՝ մինչև 15 րոպե տևողությամբ: Ազատազրկվածների մեծ մասն այդ հաճախականությունը համարում էր ոչ բավարար:

Առաջարկություններ

92) *Վերանայել հեռախոսազանգերի ժամանակացույցը և հնարավորության դեպքում ավելացնել հեռախոսազանգերի հաճախականությունը:*

Նամակագրություն

Անձնական նամակագրությունը «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում, ինչպես նաև այլ հիմնարկներում, հազվադեպ է: Դա բացատրվում է հեռախոսակապի և տեսակցությունների առկայությամբ: Այդուհանդերձ, խումբը ստացավ բողոք, որ ազատազրկվածներից մեկին չի թույլատրվում նամակ ուղարկել մեկ այլ ՔԿՀ-ում գտնվող իր հարազատին: Օրենսդրությունը[21] որևիցե կերպ չի սահմանափակում ազատազրկվածների նամակագրության իրավունքը:

21 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 17:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում փոքր սենյակ է, որ պատուհանով միանում է ԱԱԾ-ի ընդունարանին, որտեղից և հարազատները փոխանցում են հանձնուքը: Պատուհանին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի և իրերի ցանկը: Պատուհանի չափսերը հնարավորություն չեն տալիս այնտեղ փակցնելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ պատուհանի կողքի պատին դրանք փակցնել չի թույլատրվում, քանի որ դա արդեն ԱԱԾ տարածքն է: Տարածքում չկան զուգարան և խմելու ջուր: Ըստ աշխատակցի խոսքի՝ հանձնուքի ընդունման կետում հերթեր գրեթե չեն գոյանում:

Հանձնուքի զննումը կարարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Դիտարկման պահին հանձնուքի ընդունման կշեռքն անսարք էր:

Ազատազրկվածները դժգոհում էին, որ որպես հանձնուք արգելվում է բերել ջրիկ ճաշ, փլավ և կաթնամթերք: Հիմնարկում հանձնուքի ընդունումը սահմանափակվում է յուրաքանչյուր անձի համար շաբաթական մեկ անգամ: Այս սահմանափակումը չի բխում օրենսդրությունից: Հանձնուքները պահպանելու համար հիմնարկը ձեռք է բերել երկու մեծ սառնարան, որոնք տեղադրված են հիմնարկի խոհանոցում: Ի տարբերություն այլ հիմնարկների՝ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում ազատազրկվածներին չի թույլատրվում խցերում սառնարան ունենալ: Այս սահմանափակումը չի բխում օրենսդրությունից և բազմաթիվ անհարմարություններ է ստեղծում թե ազատազրկվածների և թե աշխատակազմի համար:

Առաջարկություններ

93) *Տեղափոխել հանձնուքի ընդունման կետը այնպիսի տարածք, որ այն առնչություն չունենա ԱԱԾ-ի հետ:*

94) *Վերացնել հանձնուք ընդունելու հաճախականության սահմանափակումը:*

95) *Վերացնել խցերում սառնարան ունենալու արգելքը:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ:

Հիմնարկի բաղնիքը բաղկացած է երկու հանդերձարանից և երկու լոգասենյակից: Հանդերձարանում կան կախիչներ և բետոնե նստարաններ: Ընդհանուր սանիտարական վիճակը հանդերձարաններում բավարար չէ, և որոշ ազատազրկվածներ նույնպես դա նշում էին:

Լոգարաններն ունեն երկուական ցնցուղ, սալիկապատված են, ապահովված են տաք ջրով: Տաք ջրամատակարարումն ապահովվում է երկու 100 լիտրանոց ջրատաքացուցիչներով: Ինչպես ազատազրկվածները, այնպես էլ հիմնարկի ղեկավարությունը նշում էին, որ ջրատաքացուցիչներն իրենց չեն արդարացնում, քանի որ ջրի տաքացման պրոցեսը երկար է, և տաք ջրի քանակը չի բավարարում ազատազրկվածներին լոգանք ընդունելու համար:

Հաշվի առնելով, որ հիմնարկում լոգանք ընդունելու տանում են ըստ խցերի, իսկ այնտեղ կան խցեր, ուր պահվում են մինչև 5 ազատազրկված, ակնհայտ է, որ առկա ցնցուղների քանակը չի կարող բավարար համարվել:

Ազատազրկվածները նշում էին, որ շաբաթական մեկանգամյա լոգանքը բավարար չէ, և խնդրում էին ավելացնել հաճախականությունը: Խումբը գտնում է, որ թեև օրենսդրությամբ[22]

22 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 47:

նախատեսված հաճախականությունը չի խախտվում (շաբաթական առնվազն մեկ անգամ), սակայն օրենսդրությունը նաև հնարավորություն է տալիս ավելացնելու լոգանք ընդունելու հաճախականությունը: «Եվրոպական բանտային կանոնները» նույնպես խորհուրդ են տալիս սահմանել լոգանք ընդունելու հաճախականությունը առնվազն շաբաթական երկու անգամ (19.4 կետ):

Առաջարկություններ

96) *Տաք ջրամատակարարման համակարգը դարձնել ավելի հարմար և ճկուն:*

97) *Ազատազրկվածների լոգանք ընդունելու համար ավելացնել ցնցուղների քանակը:*

98) *Հնարավորության դեպքում ավելացնել լոգանք ընդունելու հաճախականությունը:*

Սպիտակեղեն, անկողնային պարագաներ

Հիմնարկը, ազատազրկվածներին ապահովում է սպիտակեղենով և անկողնային պարագաներով: Սակայն համարյա բոլոր ազատազրկվածները գերադասում են օգտվել անձնական սպիտակեղենից, որովհետև հիմնարկի սպիտակեղենը որակյալ չէ: Ազատազրկվածները բողոքում էին անկողնային պարագաների, հատկապես՝ բարձերի որակից, որոնք արդեն բավական հին էին և մաշված:

Առաջարկություններ

99) *Ապահովել հիմնարկը նոր անկողնային պարագաներով:*

Բուժսպասարկում

Բուժմաս, ընդհանուր վիճակը

Հիմնարկի բուժմասը բաղկացած է ընդամենը մեկ սենյակից և չունի հիվանդասենյակ, առանձին միջամտությունների սենյակ, ատամնաբուժական սենյակ և այլն: Այդ վիճակը բացատրվում էր հիմնարկի շենքային պայմաններով և լրացուցիչ սենյակներ հատկացնելու հնարավորության բացակայությամբ:

Առաջարկություններ

100) *Բուժմասին հատկացնել լրացուցիչ սենյակներ (հնարավոր է՝առաջին հարկի չօգտագործվող խցերից)՝ անհրաժեշտ քանակությամբ աշխատասենյակներ կահավորելու համար:*

Համալրվածություն

Հիմնարկի բուժմասն ունի երկու հաստիք՝ բժիշկ և բուժակ: Հաստիքների սակավաթվությունը թույլ չի տալիս կազմակերպել հիմնարկում գիշերային հերթապահություն և ոչ աշխատանքային ժամերին շտապ բուժօգնության անհրաժեշտության դեպքում բժշկին կամ բուժակին զանգով կանչում են հիմնարկ: Ազատազրկվածները նշում էին, որ ոչ աշխատանքային ժամերին առողջական խնդիրներ առաջանալու դեպքում հայտնում են այդ մասին միայն ծայրահեղ դեպքերում, որպեսզի չխանգարեն բուժմասի աշխատակիցների հանգիստը: Դիտորդների խումբը գտնում է, որ հերթապահության բացակայությունն անընդունելի է քրեակատարողական հիմնարկի համար:

Առաջարկություններ

101) *Ավելացնել բուժմասի հաստիքները առնվազն մինչև 4 հոգի, որպեսզի հնարավոր լինի ապահովել բուժաշխատողի շուրջօրյա գտնվելը հիմնարկում:*

Դեղորայք

Ըստ հիմնարկի բուժծառայության պետի՝ հիմնարկը լիովին ապահովված է անհրաժեշտ դեղորայքով, և ոչ մի խնդիր, այդ թվում՝ անհամաչափ մատակարարման և այդ պատճառով դեղերի օգտագործման ժամկետները անցնելու հետ կապված հիմնարկում չկա: Այդուհանդերձ այցելության պահին Դիտորդների խմբի անդամները հայտնաբերեցին 20 տուփ (200 սրվակ) անալգին դեղամիջոց, որի ժամկետը լրացել էր դեռ մեկ ամիս և 22 օր առաջ: Բժիշկը գտնում էր, որ ինքը դեղի ժամկետն անցնելուց հետո դեռ երկու ամսվա ընթացքում իրավունք ունի դրանք օգտագործել և նշեց, որ մնացած մեկ շաբաթվա ընթացքում այդ 200 սրվակը կտրվի ազատազրկվածներին:

Առաջարկություններ

102) *Բացառել հիմնարկում ժամկետանց դեղորայքի օգտագործումը:*

Բուժսարքավորումներ

Հիմնարկում բժշկական սարքավորումների ապահովվածությունը անբավարար է: Սարքավորումներից հիմնարկը ունի միայն տոնոմետր, կարդիոգրաֆ, ինչպես նաև ատամնաբուժական աթոռ, որը ֆիզիկապես և բարոյապես այնքան մաշված է, որ պիտանի չէ օգտագործման համար:

Առաջարկություններ

103) *Համալրել հիմնարկը անհրաժեշտ բուժսարքավորումներով:*

Զբաղվածություն

Հիմնարկում ազատազրկվածների զբաղվածությունը ապահովվում է միայն զբոսանքի, գրադարանից օգտվելու և սեղանի խաղերի միջոցով: Խցերում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, աուդիո- և վիդեո փլեյերներ, այլ տեխնիկա:

Զբոսանք

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում գործում է 6 զբոսահրապարակ, որոնք գտնվում են հիմնարկի տանիքում: Զբոսահրապարակների մակերեսները տարբեր են՝ 35-50 քմ: Ամեն մեկում կա նստարան՝ 3-4 նստատեղերով, որոնք վերջերս վերանորոգվել էին: Հաշվի առնելով, որ ազատազրկվածներին զբոսանքի են հանում ըստ խցերի (իսկ խցերում պահվում է մինչև 5 մարդ), ապա նստարանների այդ չափերը բավարար չեն: Անձրևից պաշտպանող ծածկերը գտնվում են զբոսահրապարակների անկյուններում և չեն ծածկում նստարանները: Ազատազրկվածների համար սպորտով զբաղվելու հնարավորություն ստեղծված չէ: Ազատազրկվածներն իրենց հետ մեծ շշերով ջուր են վերցնում զբոսահրապարակներում՝ որպես մարզագնդեր օգտագործելու համար: Նրանք նաև ցանկություն հայտնեցին, որ, հնարավորության դեպքում, զբոսահրապարակներում թենիսի սեղան տեղադրվի: Ընդ որում՝ վարչակազմի համաձայնության դեպքում այդ սեղաններն ազատազրկվածները պատրաստ են բերել սեփական միջոցների հաշվին:

Ազատազրկվածներին զբոսանքի են հանում երկու հերթափոխով՝ մեկ ժամ տևողությամբ: Զբոսանքը կազմակերպվում է առավոտյան ժամը 10:00-ի և 11:00-ի սահմաններում: Ազատազրկվածների կողմից կան տարբեր առաջարկություններ զբոսանքի կազմակերպման

կապակցությամբ: Մասնավորապես, այն ազատազրկվածները, որոնք գերադասում են զբաղվել մարմնամարզությամբ, առաջարկում են, որ զբոսանքները կազմակերպվեն միշտ նույն ժամին, առանց հերթափոխի փոփոխության, որպեսզի պահպանվի պարապմունքների ռեժիմը: Մնացած ազատազրկվածները գերադասում են, որ զբոսանքը կազմակերպվի ճաշից հետո: Բոլոր ազատազրկվածները միաձայն նշում են, որ ցանկալի կլիներ զբոսանքի տևողությունը երկարացնել և հնարավորության դեպքում կազմակերպել այն օրական 2 անգամ:

Առաջարկություններ

104) *Միջոցներ ձեռնարկել ազատազրկվածների համար սպորտով զբաղվելու հնարավորություն ստեղծելու համար:*

105) *Զբոսանքի կազմակերպման համար կիրառել ավելի ճկուն ժամանակացույց:*

Գրադարան

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում գործում է գրադարան: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներնունենընտրելուհնարավորություն:Այնուամենայնիվ,ազատազրկվածների որոշ մասը չգիտեր այդ ցուցակի գոյության մասին: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար չեն՝ տարածքը փոքր է, գրապահարանների քանակը բավարար չէ: Ուստի քիչ կարդացվող գրքերը շարված էին հատակին: Ռուսերեն գրքերի քանակն ավելի շատ է, քան հայերեն: Կա նոր գրքերի կարիք: Գրքերի ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանը ստանում է երեք անուն օրաթերթ: Թերթերը ստանում են մեկական օրինակից, սակայն աշխատակիցները նշում էին, որ դա բավարար է բոլոր 13 խցերի ազատազրկվածների համար:

Առաջարկություններ

106) *Բարելավել գրադարանի գրքերի պահման պայմանները (ավելացնել գրապահարանների քանակը) և համալրել այն հատկապես հայերեն գրականությամբ:*

Սնունդ

Խոհանոց

Խոհանոցի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է: Կան ջեռուցման և օդափոխության համակարգեր, պատին փակցված է ճաշացանկը:

Սննդի որակ

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում խոհարարները, ի տարբերություն ՔԿՀ-ների գերակշիռ մասի, քաղաքացիական ծառայողներ են: Ընդհանուր առմամբ ազատազրկվածները գոհ են սննդի որակից: Դիտարկումների ընթացքում խումբը նույնպես մշտապես գրանցել է հիմնարկում պատրաստված ճաշերի բավարար որակը: Այդուամենայնիվ, ազատազրկվածների գերակշիռ մասն օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդամթերքից:

Պատիժներ

Հիմնարկում հատուկ կահավորված պատժախուց նախատեսված չէ: Հիմնարկի ղեկավարությունը դա բացատրում էր նրանով, որ «պատժախուց տեղավորել» պատժամիջոցի կիրառման անհրաժեշտություն այս հիմնարկում չի առաջանում և չկարողացավ հիշել, թե վերջին անգամ այն երբ է կիրառվել: Հիմնարկի աշխատակիցը նշեց, որ որպես պատժախուց նախա-

տեսված է օգտագործել հիմնարկի առաջին հարկի չօգտագործվող խցերից մեկը, սակայն չկարողացավ հստակ նշել, թե կոնկրետ որ խուցը: Դիտորդների խումբը ողջունում է, որ հիմնարկում չի կիրառվում նախատեսված ամենախիստ պատժատեսակը՝ պատժախուց տեղավորելը, սակայն գտնում է, որ չի կարելի բացառել այնպիսի իրավիճակ, երբ դրա կիրառման անհրաժեշտություն առաջանա:

Առաջարկություններ

107) *Կահավորել չափանիշներին համապատասխանող պատժախուց:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր հիմնարկում վերջին տարիներին չեն գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

Վերջին մեկ տարվա ընթացքում հիմնարկի վարչակազմը կարողացավ միայն մեկ դեպք նշել, երբ հիմնարկ բերված կալանավորի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, որը եղել է ինքնավնասման արդյունք:

Կարանտինային խուց

Հիմնարկում չկա առանձին կարանտինային խուց, ինչը հակասում է օրենսդրության[23] պահանջներին:

Առաջարկություններ

108) *Կահավորել առանձին կարանտինային խուց:*

Վերաբերմունք

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ն բացառիկ հիմնարկներից է, որից Դիտորդների խումբը հիմնարկի աշխատակազմի մասին ստացել է միայն դրական արձագանքներ ազատազրկվածների կողմից:

Անձնակազմ

«Երևան Կենտրոն» ՔԿՀ-ն սակավաթիվ հիմնարկներից է, որի աշխատակազմը լիովին համալրված է: Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին: Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է՝ արդարացի աշխատավարձ համարելով 200000 դրամը՝ ներկայիս 70000-80000 դրամի փոխարեն:

23 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 29:

«Արթիկ»
քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկը գտնվում է բարձրլեռնային գոտում: Հիմնարկը 2006 թվականին վերանորոգվեց և այնտեղ համապատասխան պայմաններ ստեղծվեցին դատապարտյալներին խցային պայմաններում պահելու համար: Այդուամենայնիվ, թե՛ վերանորոգման աշխատանքների ցածր որակը, թե՛ հիմնարկի անբարենպաստ տեղակայումը (այն կառուցված է բարձրլեռնային գոտում, բարձր խոնավություն ունեցող տարածքում, որտեղ կլիմայական պայմանները շատ խիստ են) բերել են նրան, որ հիմնարկն անընդհատ ընթացիկ վերանորոգումների կարիք ունի: Մասնավորապես՝ առաջին հարկի պատերը խոնավանում են, բաղնիքների պատերը և սալիկները ճաքճքել են և թափվել, որի հետևանքով որոշ բաղնիքներ չեն գործում: «Արթիկ» ՔԿՀ-ում դատապարտյալների ուժերով կառուցվել է հոգևոր սենյակ, որտեղ կան կրոնական գրականություն և մոմ վառելու հնարավորություն: Հիմնարկի բոլոր հինգ մասնաշենքերում տեղադրված են քարտաֆոնային հեռախոսներ:

«Արթիկ» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ	- 142
- կիսափակ ուղղիչ հիմնարկ	- 15
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ	- 141
- բաց ուղղիչ հիմնարկ	- 25
- կալանավորվածներին պահելու վայր	- 50

Հիմնարկը բաղկացած է հինգ մասնաշենքերից, որոնցից 1-ը ծառայում է որպես քննչական մեկուսարան, և այնտեղ պահվում են միայն կալանավորված անձինք, 2-4-րդ մասնաշենքերը փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներ են, որտեղ պահվում են միայն դատապարտյալներ: 5-րդ մասնաշենքը կիսաբաց ուղղիչ հիմնարկ է:

Հիմնարկի վերանորոգումից հետո բոլոր հինգ մասնաշենքերում տեղադրվել են ժամանակակից պատուհաններ: Խցերը 1-4-րդ մասնաշենքերում 2-4 տեղանոց են, 5-րդ մասնաշենքում՝ մինչև 8 տեղանոց: Խցերի հատակը փայտից է, զուգարանները մեկուսացված են և սալիկապատ:

«Արթիկ» ՔԿՀ-ի վերաբացվելուց հետո հիմնարկում ստեղծվել էր բավական բարդ մթնոլորտ, որը բազմիցս արձանագրվել է Դիտորդների խմբի կողմից: 2007 թվականին խումբը հատուկ հաշվետվություն է ներկայացրել այդ իրավիճակի վերաբերյալ: Այդ մթնոլորտի արդյունքն է, որ վերաբացումից ի վեր երեք տարվա ընթացքում փոխվել է հիմնարկի չորս պետ: 2008 թվականի վերջին Դիտորդների խումբն արձանագրել է իրավիճակի բարելավում, որի հետևանքով հիմնարկում բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավվել է: Ի տարբերություն հիմնարկի նախկին վարչակազմերի գործունեության՝ ներկայիս վարչակազմից բողոքներ չեն արձանագրվել:

«Արթիկ» ՔԿՀ-ում ջուրը մատակարարվում է շուրջօրյա ռեժիմով, սակայն լուրջ խնդիր է ջրի որակի հարցը: Ջուրը հոսում է ավազախառն, որի մեջ կան թրթուրներ և այլ մանր կենդանիներ: Ջրի որակի խնդիրը սուր է ոչ միայն «Արթիկ» ՔԿՀ-ում, այլև հիմնարկին հարող ամբողջ բնակավայրում:

Թեև հիմնարկի հիմնանորոգման ընթացքում հիմնովին վերակառուցվել էր կենտրոնացված ջեռուցման համակարգը, այն մինչև 2008 թվականի նոյեմբեր ամիսը չի գործարկվել: Կենտրոնացված ջեռուցման համակարգը ամբողջությամբ սկսել է գործել 2008 թվականի նոյեմբերից: Ներկայումս հիմնարկի բոլոր հինգ մասնաշենքերը և աշխատասենյակները ջեռուցվում են կենտրոնացված համակարգի միջոցով, ինչը բերել է զգալի ֆինանսական խնայողության:

Առաջարկություններ

109) *Արդարադատության նախարարության, տեղական իշխանությունների, ջուր մատակարարող ընկերության միջև համագործակցության միջոցով լուծել ջրի որակի հարցը:*

Խցեր

«Արթիկ» ՔԿՀ-ում գոյություն ունեն երկու տիպի խցեր: Խցերը 1-4-րդ մասնաշենքերում՝ «կալանավորվածների և դատապարտյալների պահելու վայրում», 2-4 տեղանոց են, իսկ 5-րդ մասնաշենքում՝ «կիսաբաց ուղղիչ հիմնարկում», 2-ից մինչև 8 տեղանոց: 1-4-րդ մասնաշենքերի խցերը ունեն երկաթե դռներ և փակվում են դրսից, իսկ 5-րդ մասնաշենքում՝ «կիսաբաց ուղղիչ հիմնարկի» խցերի դռները փայտից են, չունեն կողպեք և դատապարտյալները ցերեկային ժամերին կարող են ազատ շրջել հիմնարկի՝ իրենց հատկացված գոտու տարածքում: Բոլոր խցերի հատակը փայտից է: Խցերում լուրջ խնդիր են բաց վարդակները, ինչը էլեկտրահարվելու վտանգի աղբյուր է: Հիմնարկը բազմիցս փոխել է դրանք, սակայն, ըստ վարչակազմի, ազատազրկվածները խնամքով չեն վերաբերվում դրանց հետ:

Առաջարկություններ

110) *Վարդակներ տեղադրել բոլոր այն խցերում, որտեղ բաց են դրանց տեղերը:*

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցեր

«Արթիկ» ՔԿՀ-ի կիսաբաց տիպի խցերի մակերեսները տարբեր են՝ 12 քմ մինչև 30 քմ, որտեղ պահվում են 2-8 դատապարտյալ: Ընդհանուր առմամբ ապահովվում է 4 քմ տարածքը յուրաքանչյուր դատապարտյալի համար:

Կիսաբաց տիպի խցերի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է, սակայն այնտեղ բացակայում է օդափոխության համակարգը: Ձմռանն անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովվում է կենտրոնացված ջեռուցման համակարգի միջոցով:

Քանի որ ջուրն անորակ է, խցերում անընդհատ ջուրը բաց են թողնում, որ հոսելով մաքրվի, ինչպես նաև դատապարտյալները տարբեր տարաներում հավաքած ջուր են պահում, որ ավազը և մանր կենդանիները նստվածք տան: Կան խցեր, որտեղ բացակայում է կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:

Խցերի բնական լուսավորությունը բավարար է:

Առաջարկություններ

111) *Բոլոր խցերում ապահովել դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:*

Կալանավորներ և դատապարտյալներ պահելու վայրի խցեր

Կալանավորներ և դատապարտյալներ պահելու վայրի խցերը նախատեսված են 2-4 ազատազրկված պահելու համար: Խցերի բնական լուսավորությունը բավարար է: Ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա խցերում տեղադրված էր երկու լամպ. մեկը՝ առաստաղին և միացվում էր երեկոյան ժամերին, երկրորդը՝ դռան վերևի մասում և ապահովում էր գիշերվա ժամերի համար ավելի թույլ լուսավորություն: Ջեռուցումն ապահովվում է հիմնարկի կաթսայատան միջոցով: Այցելության պահին ապահովված էր անհրաժեշտ ջերմաստիճանը: Կան խցեր, որտեղ բացակայում է կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:

Առաջարկություններ

112) *Բոլոր խցերում ապահովել կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար հիմնարկում գործում է մեկ տեսակցության սենյակ, մոտավորապես՝ 66 քմ: Սենյակը վերանորոգվել է 2008 թվականի ընթացքում, որտեղ տեղադրված են 4 փոքր սեղաններ, յուրաքանչյուրը՝ 4 աթոռով, 1 մեծ սեղան՝ 6 աթոռով, ինչպես նաև սենյակում կան բազմոց և երկու բազկաթոռ: Միաժամանակ կարելի է կազմակերպել 5-6 տեսակցություն, ինչը, ըստ հիմնարկի ղեկավարության, բավարարում է ընդհանուր պահանջարկը: Սենյակը չի ջեռուցվում, սակայն այնպես է տեղակայված, որ ջերմաստիճանը բավարար է տեսակցություն կազմակերպելու համար: Սենյակին կից առանձնացված սանհանգույց չկա: Անհրաժեշտության դեպքում տեսակցության մասնակիցները կարող են խնդրել տեսուչին և օգտվել երկարատև տեսակցությունների մասնաբաժնի սանհանգույցից: Սենյակում բնական լուսավորությունը թույլ է, որովհետև պատուհանները դրսի կողմից ծածկված են ոչ թափանցիկ ապակիներով: Այս պատճառով արհեստական լուսավորությունը ցերեկային ժամերին նույնպես միացված է: Հիմնարկում ստեղծված չեն համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար: Տեսակցության սենյակին կից կա խուզարկությունների սենյակ:

Առաջարկություններ

113) *Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:*

114) *Կարճատև տեսակցությունների սենյակին կից կառուցել սանհանգույց:*

Երկարատև տեսակցություններ

«Արթիկ» ՔԿՀ-ն ունի 6 երկարատև տեսակցությունների սենյակներ, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը կազմում է 16-20 քմ: Սենյակները կահավորված են աթոռներով, սեղանով, նստարանով, բազմոցով, բազկաթոռներով, մեծ և փոքր մահճակալներով: Սենյակների մեծ մասի բնական լուսավորությունը բավարար է, սակայն որոշ սենյակների պատուհանները ծածկված են չթափանցող հաստ ապակիով: Սենյակները ջեռուցվում են էլեկտրական սալիկներով: Զուգարանը, բաղնիքը և խոհանոցը ընդհանուր են: Խոհանոցում տեղադրված է սառնարան, կա թեյնիկ և սպասք: Լողասենյակը չի գործում: Սենյակներից մեկն ուներ առանձին զուգարան և բաղնիք: Սանիտարական վիճակը բավարար է: Հիմնարկում ստեղծված չեն համապատաս-

խան պայմաններ մանկահասակ երեխաների հետ երկարատև տեսակցություններ կազմակերպելու համար:

Առաջարկություններ

115) *Բոլոր սենյակներում ապահովել բավարար բնական լուսավորություն:*

116) *Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ երկարատև տեսակցություններ կազմակերպելու համար:*

117) *Վերացնել լողասենյակի անսարքությունները:*

Հեռախոսակապ

«Արթիկ» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որից շուրջօրյա, բացի շաբաթ ու կիրակի օրերից, օգտվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկի ազատազրկվածները, իսկ 1-4-րդ մասնաշենքերի կալանավորվածները և դատապարտյալներն օգտվում են հեռախոսակապից ըստ ժամանակացույցի՝ շաբաթը 2 անգամ: Լուրջ խնդիրներ, կապված հեռախոսակապից օգտվելու հետ, դիտորդների խումբը չի արձանագրել:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Արթիկ» ՔԿՀ-ում առանձնացված կառույց է, որի պատուհանից դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են անմիջապես դրսից: Հերթեր առաջանալու դեպքում հարազատները պետք է սպասեն դրսում, որտեղ չկա որևէ հարմարություն: Սենյակի պատին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի և իրերի ցանկը և կարգը:

Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Տարածքում չկան խմելու ջուր, զուգարան, որից դրսում սպասող ազատազրկվածների հարազատները կարողանան օգտվել:

Հանձնուքի ընդունման կետի աշխատակցի խոսքով՝ հերթեր գրեթե չեն գոյանում:

Առաջարկություններ

118) *Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:*

119) *Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթում կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց հեշտությամբ ծանոթանալ:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանքը

«Արթիկ» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ օրական մեկ մասնաշենք: Ըստ այդմ՝ ազատազրկվածները լոգանք են ընդունում շաբաթը մեկ անգամ:

Հիմնարկի բաղնիքները տեղակայված են մասնաշենքերի հարկերում, յուրաքանչյուր հարկում՝ մեկական բաղնիք, որոնք հիմնականում նույն չափսի են, մոտավորապես՝ 5-6 քմ: Վարչակազմի նախաձեռնությամբ բաղնիքները հերթով վերանորոգվում են: Խմբի այցելության պահին բաղնիքների մեծ մասը դեռևս վերանորոգված չէր: Չվերանորոգված բաղնիքներում ցնցուղները լողանալու համար անհարմար ձևով են կախված: Սանիտարական վիճակը չվերանորոգված բաղնիքներում անբավարար է, իսկ վերանորոգված բաղնիքներում՝ բավարար: Հանդերձարան և նստարան բաղնիքներում չկան:

Առաջարկություններ

120) *Բարելավել սանիտարական վիճակը հիմնարկի բոլոր բաղնիքներում:*

121) *Շարունակել մասնաշենքերում բաղնիքների վերանորոգումը՝ 5-րդ մասնաշենքի բաղնիքի օրինակով:*

122) *Հիմնարկի բաղնիքներում հանդերձարաններ կառուցել:*

Բուժսպասարկում

Բուժմաս, ընդհանուր վիճակ

Հիմնարկի բուժմասը գտնվում է ազատազրկվածներին պահելու 5-րդ մասնաշենքում՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում, սակայն ունի առանձնացված տարածք: Բուժմասն ունի բժիշկների աշխատասենյակ, ինչպես նաև ատամնաբուժական սենյակ, հիվանդասենյակներ, բաղնիք, զուգարան: Բուժմասում տեղադրված է 8 մահճակալ, որը բավարար չէ հիմնարկի համար: Ըստ հիմնարկի վարչակազմի՝ մոտ ժամանակներս բուժմասը վերանորոգվելու է, ինչի արդյունքում հիվանդասենյակներում տեղերի քանակը կկրկնապատկվի:

Ազատազրկվածների գնահատմամբ՝ եթե հիմնարկում հնարավոր է առաջին բուժօգնություն ստանալ, ապա հետագա՝ ավելի նեղ մասնագիտական բուժում ստանալը բավական բարդ է համապատասխան մասնագետների, սարքավորումների և դեղորայքի բացակայության պատճառով:

Առաջարկություններ

123) *Ավելացնել բուժմասի հիվանդասենյակներում տեղերի քանակը:*

Համալրվածություն

Ըստ հաստիքացուցակի՝ բուժմասում աշխատում էին մեկ բժիշկ և չորս բուժքույր, ինչպես նաև պայմանագրային բժիշկներ՝ ֆտիզիատր, ատամնաբույժ, վիրաբույժ: Բուժանձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը համապատասխանում է նրանց զբաղեցրած պաշտոններին: Պայմանագրային բժիշկները հիմնարկ են այցելում ոչ հաճախակի, սակայն անհրաժեշտության դեպքում հրավիրվում են: Եթե առաջանում է նեղ մասնագետների անհրաժեշտություն, նրանք նույնպես հրավիրվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից:

Ըստ բուժմասի աշխատակազմի՝ հիմնարկում բուժօգնությունը բավարար կազմակերպելու համար անհրաժեշտ են հոգեբույժ և սրտաբան:

Առաջարկություններ

124) *Բուժմասի անձնակազմը համալրել անհրաժեշտ բժիշկ մասնագետներով:*

Դեղորայք

Որոշ ազատազրկվածներ նշում են, որ իրենք այնպիսի դեղերի կարիք ունեն, որոնք հիմնարկը չի ստանում: Եղել են դեպքեր, երբ ազատազրկվածները դեղեր են խնդրել հարազատներից, սակայն հիմնարկի վարչակազմը չի ընդունել դրանք, քանի որ Քրեակատարողական վարչությունն արգելել է դրսից դեղերի ընդունումը:

Հիմնարկի վարչակազմը, սակայն, նշում է, որ բոլոր անհրաժեշտ դեղերն իրենք ունեն և այն դեպքերում, երբ չեն ունենում, հատուկ պահանջագիր են ներկայացնում Քրեակատարողական վարչություն:

Սարքավորումներ

Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով վերջին տարիներին որոշ չափով բարելավվել է, տեղադրվել է ժամանակակից ատամնաբուժական աթոռ:

Հիմնարկն ունի սարքավորումներով համալրման անհրաժեշտություն, և հիմնական սարքը, որի խիստ անհրաժեշտությունը նշվել է, ախտահանման սարքավորումն է, որի բացակայության պատճառով բժշկական գործիքները չեն ստերիլացվում:

Առաջարկություններ

125) *Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:*

Զբաղվածություն

«Արթիկ» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունը ապահովվում է խաղասենյակի, զբոսանքի, գրադարանից օգտվելու միջոցով, ինչպես նաև 2008 թվականին հիմնարկում ստեղծված դատապարտյալների ինքնագործ միավորման միջոցով: Խցերում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ, ռադիոընդունիչներ և այլ տեխնիկա: Դատապարտյալներից շատերը նշում են, որ ցանկություն ունեն աշխատելու, սակայն բացի տնտեսմասից, հիմնարկն այլ աշխատանքով չի կարողանում ապահովել:

Խաղասենյակ

Ազատազրկվածներին պահելու 5-րդ մասնաշենքում գործում է խաղասենյակ, որտեղ տեղադրված է թենիսի սեղան:

Զբոսանք

«Արթիկ» ՔԿՀ-ում գործում է միայն մեկ զբոսահրապարակ՝ առանձնացված մասերով, որը գտնվում է հիմնարկի առաջին մասնաշենքի քննչական մեկուսարանի բակում: Կալանավորվածներին դուրս են բերում զբոսանքի ըստ խցերի: Զբոսահրապարակի յուրաքանչյուր առանձնացված մաս ունի մեկ մետրանոց ծածկ, սակայն նստարաններ չկան: Զբոսահրապարակում սպորտով զբաղվելու հնարավորություն չկա:

Հիմնարկի 2-5-րդ մասնաշենքերը զբոսահրապարակներ չունեն: Նշված մասնաշենքերի ազատազրկվածների զբոսանքը կազմակերպվում է մասնաշենքերի բակերում, որտեղ նստարաններ և ծածկեր չկան:

Առաջարկություններ

126) *Զբոսահրապարակներն ապահովել նստարաններով և տեղումներից պաշտպանող ծածկերով:*

Գրադարան

«Արթիկ» ՔԿՀ-ում գործում է գրադարան, որը տեղակայված է 5-րդ մասնաշենքում: Գրքերի քանակը կազմում է 3400 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը կազմում է 20-30 քմ: Այն դատապարտյալների ուժերով վերանորոգվել է: Գրքերի ֆոնդը վերջին անգամ համալրվել է 2008 թվականի հուլիս ամսին, որի ժամանակ 111 կտոր գիրք են ստացել՝ 51800 դրամ ընդհանուր գումարով: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական և պատմական գրքերի կարիք կա: Գրադարանը թերթեր ստանում է, սակայն գրադարանում եղած ամենաթարմ թերթերը 20-30 օրվա հնության էին:

Առաջարկություններ

127) *Լրացնել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական և պատմական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

128) *Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:*

Սնունդ

Խոհանոց

«Արթիկ» ՔԿՀ-ի խոհանոցի սանիտարական վիճակը և տեխնիկական հագեցվածությունը այցելության պահին բավարար էին:

Ճաշը պատրաստվում էր էլեկտրական կաթսաներում, որոնք չնայած գործում էին, սակայն արդեն բավական մաշված էին: Խոհանոցում և ճաշարանում աշխատում էր 8 դատապարտյալ: Աշխատողները սպիտակ խալաթով ու գլխարկով էին: Խոհանոցի սպասքը հիմնականում հին արտադրության էր: Սառնարանում կային տրված ճաշատեսակների նմուշները:

Առաջարկություններ

129) *Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:*

130) *Թարմացնել խոհանոցի սպասքը:*

Ճաշարան

«Արթիկ» ՔԿՀ-ի ճաշարանը սպասարկում է 5-րդ մասնաշենքում պահվող ազատազրկվածներին: Ճաշարանը, ըստ էության, դահլիճ է առանձին բեմով, որտեղ նաև միջոցառումներ և հանդիպումներ են անցկացվում դատապարտյալների հետ: Ճաշարանում դրված է 10 սեղան՝ երկուական նստարաններով: Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Ճաշարանի տարածքում ճաշացանկը փակցված չէ: Ճաշարանի սպասքը հիմնականում հին էր: Խմբի այցելության պահին ճաշի ժամ էր, որի ժամանակ քիչ դատապարտյալներ էին իջել ճաշարան ճաշելու: Ըստ դատապարտյալների՝ միշտ չէ, որ բոլորն իջնում են ճաշարան ճաշելու՝ իրենց մոտ ունենալով տնից բերված հանձնուքներ:

Առաջարկություններ

131) *Ճաշացանկի օրինակը փակցնել ճաշարանում:*

132) *Թարմացնել ճաշարանի սպասքը:*

133) *Լուծել ճաշարանի ջեռուցման հարցը:*

Սննդի որակ

«Արթիկ» ՔԿՀ-ի ազատազրկվածների մի մասը ճաշի որակը համարում էր բավարար, մյուս մասը նշում էր, որ բավարար է, բայց իրենք չեն օգտվում: Ազատազրկվածների մեծ մասը նշում էր, որ օգտվում են հանձնուքների միջոցով ստացված սննդամթերքից: Խմբի այցելության օրերին հիմնարկն ստացել էր «Նոյ» բնական հյութեր, որոնք բաշխվել էին ազատազրկվածներին: Ազատազրկվածները դժգոհում էին հավելյալ սննդի որակից: Մասնավորապես՝ կարագը փչացած է եղել, ինչը հաստատվեց նաև հիմնարկի վարչակազմի կողմից: Պարզվեց, որ մեծ քանակությամբ ստացված կարագը երկար պահելու ընթացքում փչացել էր:

Առաջարկություններ

134) *Բարելավել հավելյալ սննդի պահպանման պայմանները:*

Պատիժներ

Ըստ հիմնարկի ղեկավարության՝ «պատժախուց տեղավորել» պատժամիջոցը կիրառվում է բավական հաճախ՝ ի պատասխան ազատազրկվածների կողմից կանոնակարգի խախտումներին: Հիմնականում պատժախուց է տրվում 7-15 օր ժամանակով: Այցելության պահին պատժախցում էին գտնվում չորս ազատազրկվածներ, որոնցից երեքը՝ ինքնաշեն ոգելից խմիչք պատրաստելու, իսկ մեկը՝ բջջային հեռախոս ունենալու համար:

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր հիմնարկում վերջին տարվա ընթացքում չեն գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

2008 թվականի ընթացքում ոստիկանությունից բերված կալանավորվածների բուժզննման մատյանում գրանցված է 5 դեպք, երբ հիմնարկ բերված կալանավորի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ նման դեպքերի մասին անմիջապես տեղյակ է պահվում դատախազությանը:

Վերաբերմունք

«Արթիկ» ՔԿՀ-ի աշխատակազմի վերաբերմունքի մասին մինչև 2008 թվականը Դիտորդների խումբը բազմաթիվ բողոքներ է ստացել և վատ վերաբերմունքի դեպքեր արձանագրել, սակայն խմբի վերջին այցելության պահին այս հարցում արձանագրվել է դրական տեղաշարժ: Ազատազրկվածները դա պայմանավորում էին հիմնարկում սկիզբ առած բարեփոխումներով:

Անձնակազմ

«Արթիկ» ՔԿՀ-ի աշխատակազմը հիմնականում համալրված է: Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև պարբերաբար կազմակերպվող ծառայողական պարապմունքներին, որոնք անցկացվում են տեղում: Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է և արտաժամյա կատարված աշխատանքների դիմաց չվճարվելու հարցը: Ըստ հիմնարկի աշխատակիցների՝ արդարացի աշխատավարձ է համարվում 200000-250000 դրամը:

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը եղել է կալանավորված և ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար առավել անբարենպաստ շենքային պայմաններ ունեցող հիմնարկներից մեկը, ինչի մասին բազմիցս նշվել էր խմբի նախորդ զեկույցներում: 2007 թվականին հիմնարկը տեղափոխվել է նոր շենք, որի կառուցումն սկսվել էր 2005 թվականին: Այն կառուցված է նման կառույցների համար ընդունված պահանջներին համապատասխան, և առկա են կալանավորված ու ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար միջազգային չափորոշիչներով նախատեսված հիմնական պայմաններ: Օրինակ՝ բոլոր խցերն ունեն բավարար բնական լուսավորվածություն և օդափոխություն, հատակը փայտից է, կահավորանքը համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին, սանհանգույցն առանձնացված է բնակելի տարածքից:

Հիմնարկում գործում են ազատազրկվածների 3 ինքնագործ միավորումներ, որտեղ ազատազրկվածները զբաղված են նկարելով, խաչ, թզբեհ և այլ իրեր պատրաստելով: Հիմնարկում տեղադրված են քարտաֆոնային 6 հեռախոսներ:

«Վանաձոր» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ	- 130
- կիսափակ ուղղիչ հիմնարկ	- 10
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ	- 15
- բաց ուղղիչ հիմնարկ	- 10
- կալանավորվածներին պահելու վայր	- 80

Հիմնարկի բնակելի մասն ունի մեկ մասնաշենք՝ բաղկացած չորս հարկից, որոնք ծառայում են որպես կալանավորվածներին պահելու վայր, փակ, կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկներ՝ ըստ լրակազմերի:

2008 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ հիմնարկի 245 տեղանոց լրակազմից այցելության պահին փաստացի զբաղված էին 217-ը: Լրակազմի թվի գերազանցում ըստ էության չի արձանագրվել: Հիմնարկի վերաբացումից հետո սխալ է հաշվարկվել հիմնարկի տեղերի քանակը: Չնայած ըստ լրակազմի դեռ պետք է ազատ տեղեր լինեին, հիմնարկը ծանրաբեռնված էր, որի պատճառով օգտագործվում էին կարանտինային և սանմասի խցերը:

«Վանաձոր» ՔԿՀ-ում ջուրը մատակարարվում է շուրջօրյա և բավարար որակով: Ձմռան ամիսներին հիմնարկում գործում է կաթսայատուն՝ կենտրոնացված ջեռուցման համակարգով, որը տաք օրերին ցերեկային ժամերին անջատվում է՝ անիմաստ էլեկտրաէներգիայի ծախսից խուսափելու և տնտեսելու նպատակով:

Առաջարկություններ

135) *Հստակեցնել լրակազմի թիվը՝ ըստ եղած տեղերի:*

136) *Միջոցներ ձեռնարկել գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար:*

Խցեր

«Վանաձոր» ՔԿՀ-ում բոլոր խցերը նույնանման են՝ 16 քմ ընդհանուր մակերեսով: Խցերը 4 տեղանոց են, բացի բուժմասի խցերից, որոնք նախատեսված են 2 անձի համար: Խցերի հատակը փայտից է: Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր դատապարտյալի համար ապահովված է 4 քմ տարածք:

Խցերի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է: Ձմռանն անհրաժեշտ ջերմաստիճանը ապահովվում է կենտրոնացված ջեռուցման համակարգի միջոցով: Խցերում բացակայում է կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը, սակայն խցերում կար Քաղաքացիական հասարակության ինստիտուտի հրատարակած «Կալանավորված անձանց իրավունքները» գրքույկը: Խցերի բնական լուսավորությունը բավարար է:

Առաջարկություններ

137) *Բոլոր խցերում ապահովել կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար հիմնարկում գործում է մեկ տեսակցության սենյակ, մոտավորապես՝ 60 քմ ընդհանուր մակերեսով: Սենյակում տեղադրված է 7 սեղան, յուրաքանչյուրը՝ 2 նստարանով: Հնարավոր է միաժամանակ կազմակերպել 5-7 տեսակցություն, ինչը, ըստ հիմնարկի ղեկավարության, բավարարում է ընդհանուր պահանջարկը: Սենյակը ջեռուցվում է կենտրոնական ջեռուցման համակարգով: Սենյակին կից գործում է առանձնացված սանհանգույց, որից կարող են ազատորեն օգտվել տեսակցության մասնակիցները: Սենյակի բնական լուսավորությունը բավարար է: Հիմնարկում ստեղծված չեն համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:

Առաջարկություններ

138) *Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:*

Երկարատև տեսակցություններ

«Վանաձոր» ՔԿՀ-ն ունի 2 երկարատև տեսակցությունների սենյակներ, յուրաքանչյուրը՝ 16-20 քմ մակերեսով: Սենյակները կահավորված են պահարանով, սեղանով, բազմոցով, բազկաթոռներով և մահճակալներով: Սենյակների բնական լուսավորությունը բավարար է: Սենյակների պատուհանները բացվում են, ինչ թույլ է տալիս օդափոխել սենյակները: Սենյակները ջեռուցվում են կաթսայատան կենտրոնացված համակարգի միջոցով և ապահովված են սանհանգույցներով: Չկա առանձին խոհանոց, որի պատճառով երկարատև տեսակցության մաս-

նակիցներին նախապես զգուշացվում է, որ իրենց հետ բերեն չոր սնունդ կամ այնպիսի սնունդ, որը հնարավոր լինի տաքացնել հիմնարկի խոհանոցում:

Սանիտարական վիճակը բավարար է: Հիմնարկում ստեղծված են համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ երկարատև տեսակցություն կազմակերպելու համար: Յուրաքանչյուր երկարատև տեսակցության սենյակ ունի առանձին մանկական սենյակ:

Առաջարկություններ

139) *Ստեղծել համապատասխան պարագաներով և սպասքով խոհանոց, որից կկարողանան ազատորեն օգտվել տեսակցության մասնակիցները:*

Հեռախոսակապ

«Վանաձոր» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որից ազատազրկվածները շաբաթական երկու անգամ, ըստ ժամանակացույցի, օգտվելու հնարավորություն ունեն: Լինում են դեպքեր, երբ նախաքննության մարմնի հատուկ որոշմամբ հեռախոսակապից օգտվելու արգելք է դրվում, որը գործում է մինչև դրա վերացումը: Հեռախոսակապից օգտվելու հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Վանաձոր» ՔԿՀ-ում առանձնացված սենյակ է, որի պատուհանից ազատազրկվածների հարազատները փոխանցում են հանձնուքը: Հերթեր առաջանալու դեպքում հարազատները պետք է սպասեն սենյակում, որտեղ կա սեղան երկու նստարաններով, սակայն լինում են դեպքեր, որ հերթը բազմամարդ է լինում, և նրանք ստիպված են սպասել հիմնարկի դարպասների մոտ, որտեղ սպասելու որևէ հարմարություն չկա: Սենյակի պատին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի և իրերի ցանկը և կարգը:

Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Տարածքում չկան խմելու ջուր, զուգարան, որից կկարողանային օգտվել սենյակում կամ դրսում սպասող ազատազրկվածների հարազատները: Հանձնուքի ընդունման կետի աշխատակցի խոսքով՝ հերթեր գոյանում են հիմնականում այն դեպքերում, երբ մեծ ծավալով հանձնուքի զննություն է կատարվում, և երբ մեծ թվով մարդիկ միաժամանակ հանձնուք են բերում:

Առաջարկություններ

140) *Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:*

141) *Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթ կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց հեշտությամբ ծանոթանալու:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Վանաձոր» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի, և ստացվում է այնպես, որ ամենաուշը 8 օրը մեկ անգամ ազատազրկվածները լողանալու հնարավորություն են ունենում, ինչը հակասում է օրենսդրության[24] պահանջներին:

24 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 47:

Հիմնարկի բաղնիքները տեղակայված են բնակելի մասնաշենքի հարկերում, յուրաքանչյուր հարկում՝ մեկական բաղնիք, որոնք հիմնականում նույն չափսի են, մոտավորապես՝ 5-6 քմ: Դիտորդների խմբի այցելության պահին բաղնիքների մեծ մասում ցնցուղ չկար: Բաղնիքների պատերը խոնավանում են, որի պատճառով պատերի հարդարանքը ճաքճքել և թափվել էր: Հիմնականում բաղնիքները վերանորոգման կարիք ունեն: Բաղնիքներին կից կան հանդերձարաններ, որտեղ դրված են մեկական նստարան: Բաղնիքների սանիտարական վիճակը բավարար էր:

Առաջարկություններ

142) *Ապահովել ազատազրկվածների՝ օրենսդրությամբ նախատեսված առնվազն 7 օրը մեկ անգամ լոգանքի հաճախականությունը:*

143) *Վերանորոգել հիմնարկի բոլոր բաղնիքները:*

144) *Բաղնիքներում տեղադրել ցնցուղներ:*

145) *Բաղնիքների հանդերձարանները կահավորել անհրաժեշտ գույքով:*

Բուժսպասարկում

Բուժմաս, ընդհանուր վիճակ

Հիմնարկի բուժմասը գտնվում է ազատազրկվածներին պահելու բնակելի մասնաշենքում և ունի առանձնացված տարածք: Բուժմասն ունի բժիշկների աշխատասենյակ, ինչպես նաև ատամնաբուժական սենյակ, հիվանդասենյակներ, բաղնիք, զուգարան: Ընդհանուր առմամբ՝ բուժմասի տարածքը բավարար է հիվանդներին սպասարկելու համար:

Ազատազրկվածների գնահատմամբ՝ եթե հիմնարկում հնարավոր է առաջին բուժօգնությունը, ապա հետագա՝ ավելի նեղ մասնագիտական բուժում ստանալը բավական բարդ է՝ համապատասխան մասնագետների, սարքավորումների և դեղորայքի բացակայության պատճառով:

Համալրվածություն

Ըստ հաստիքացուցակի՝ բուժմասում աշխատում էին մեկ բժիշկ և չորս բուժքույր, ինչպես նաև պայմանագրային բժիշկներ, օրինակ՝ հոգեբույժ: Հիմնարկն ունի ատամնաբույժի և թերապևտի խիստ կարիք: Բուժանձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը համապատասխանում է նրանց զբաղեցրած պաշտոններին: Պայմանագրային բժիշկները հիմնարկ են այցելում ոչ հաճախակի, սակայն անհրաժեշտության դեպքում հրավիրվում են: Եթե առաջանում է նեղ մասնագետների անհրաժեշտություն, նրանք նույնպես հրավիրվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից: Բուժմասի անձնակազմն օրական 50 բուժզննություն է անցկացնում:

Առաջարկություններ

146) Բուժմասի անձնակազմը համալրել անհրաժեշտ բժիշկ մասնագետներով:

Սարքավորումներ

Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով վերջին տարիներին որոշ չափով բարելավվել է, տեղադրվել է ժամանակակից ատամնաբուժական աթոռ:

Հիմնարկն ունի սարքավորումներով համալրման անհրաժեշտություն, և հիմնական սարքը, որի խիստ անհրաժեշտությունը նշվել է, ախտահանման սարքավորումն է, որը շատ փոքր է և չի բավարարում բուժմասի պահանջներին: Ըստ բուժմասի աշխատակիցների՝ նրանք ունեն նաև բժշկական ընդհանուր օգտագործման գործիքների կարիք:

Առաջարկություններ

147) *Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:*

Զբաղվածություն

«Վանաձոր» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունն ապահովվում է մարզադահլիճի, զբոսանքի, գրադարանից օգտվելու, ինչպես նաև հիմնարկում ստեղծված ինքնագործ խմբերի միջոցով: Խցերում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո ձայնագրող սարքեր, վիդեո- և աուդիո փլեյերներ, ռադիոընդունիչներ և այլ տեխնիկա: Դատապարտյալներից շատերը նշում են, որ ցանկություն ունեն աշխատելու, սակայն բացի տնտեսմասից, հիմնարկն այլ աշխատանքով չի կարողանում ապահովել:

Զբոսանք

«Վանաձոր» ՔԿՀ-ն ապահովված է անհրաժեշտ զբոսահրապարակներով: Ազատազրկվածներին օրական մեկ ժամով դուրս են բերում զբոսանքի: Որոշ ազատազրկվածներ բողոքում էին, որ որոշ տոնական, շաբաթ և կիրակի օրերին զբոսանքի չեն հանում՝ կապված ոչ աշխատանքային օրերի հետ: Կալանավորված անձանց դուրս են բերում զբոսանքի ըստ խցերի: Զբոսահրապարակի յուրաքանչյուր առանձնացված մաս ունի մեկական նստարան, որի վերևի մասում բացակայում են ծածկերը, և նստարանները տեղումներից կեղտոտվում և փչանում են: Զբոսահրապարակներում սպորտով զբաղվելու հնարավորություն չկա:

Առաջարկություններ

148) *Ապահովել ազատազրկվածներին զբոսանքով նաև հանգստյան օրերին:*

149) *Զբոսանքի վայրերը ապահովել ծածկերով, որոնք կծածկեն զբոսաբակերի նստարանները:*

150) *Զբոսահրապարակներում ստեղծել սպորտով զբաղվելու հնարավորություն:*

Գրադարան

«Վանաձոր» ՔԿՀ-ում գործում է գրադարան, որը տեղակայված է խոհանոցի և ճաշարանի հարակից տարածքում: Գրքերի քանակը կազմում է 799 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը կազմում է մոտ 30 քմ: Կա նոր հայերեն գրքերի կարիք: Գրքերի ֆոնդը վերջին անգամ համալրվել է 2008 թվականի մայիսին՝ մասնավոր անձանց նվիրատվություններով, որի ժամանակ 208 կտոր գիրք են ստացել: Ֆոնդը լրացվում է նաև աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական և պատմական գրքերի կարիք կա: Գրադարանը թերթեր ստանում է, սակայն թերթերի տեսականին խիստ աղքատ է գրադարանում եղած ամենաթարմ թերթը 3 օրվա հնության «Հայաստանի Հանրապետությունն» էր:

Առաջարկություններ

151) *Լրացնել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական և պատմական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

152) *Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ և բազմազան մամուլով:*

Սնունդ

Խոհանոց

«Վանաձոր» ՔԿՀ-ի խոհանոցի սանիտարական վիճակը և տեխնիկական հագեցվածությունը բավարար են: Ճաշը պատրաստվում է էլեկտրական կաթսաներում: Խոհանոցում և ճաշարանում աշխատում են տնտեսմասի դատապարտյալներ: Աշխատողները սպիտակ խալաթով և գլխարկով էին: Սառնարանում կային տրված ճաշատեսակների նմուշները: Պատին փակցված էր ճաշացանկը, որը համընկնում էր տրված ճաշատեսակներին և վերցված ճաշատեսակների նմուշներին: Խոհանոցի սպասքը, հատկապես՝ թեյնիկները, մաշված էին:

Առաջարկություններ

153) *Թարմացնել խոհանոցի սպասքը:*

Ճաշարան

«Վանաձոր» ՔԿՀ-ի ճաշարանը սպասարկում է միայն տնտեսմասի դատապարտյալներին: Ճաշարանում տեղադրված է 11 սեղան՝ երկուական նստարաններով: Ճաշարանի տարածքը ջեռուցվում է կաթսայատան կենտրոնացված համակարգի միջոցով: Ճաշարանի ներսում հաստատված ճաշացանկը փակցված չէր: Ճաշարանի սպասքը հիմնականում հին էր:

Առաջարկություններ

154) *Ճաշացանկի նմուշը փակցնել ճաշարանում:*

Սննդի որակ

«Վանաձոր» ՔԿՀ-ի ազատազրկվածների մի մասը ճաշի որակը համարում է բավարար, մյուս մասը նշում է, որ իրենք օգտվում են միայն հանձնուքների միջոցով ստացված սննդից: Խմբի այցելության օրերին հիմնարկը ստացել էր բնական հյութեր, որոնք բաշխվել էին ազատազրկվածներին:

Պատիժներ

Ըստ հիմնարկի ղեկավարության՝ «պատժախուց տեղավորել» պատժամիջոցը կիրառվում է միայն համապատասխան տույժերի պարագայում: Հիմնականում պատժախուց է տրվում 7-15 օր ժամանակով: Այցելության պահին հիմնարկի պատժախցում ազատազրկվածներ չկային:

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Ըստ հիմնարկի վարչակազմի՝ հատուկ միջոցների կիրառման մեկ դեպք է եղել վերջին մեկ տարվա ընթացքում, որը կիրառվել է դատապարտյալներից մեկի նկատմամբ անհնազանդության և զանգվածային խռովություն հրահրելը կանխելու նպատակով: Որպես հատուկ միջոց կիրառվել է ռետինե մահակ:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

2008 թվականի ընթացքում ոստիկանությունից բերված կալանավորվածների բուժզննման մատյանում գրանցված են տասնյակ դեպքեր, երբ հիմնարկ բերված կալանավորի վրա հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ նման դեպքերի մասին անմիջապես տեղյակ է պահվում դատախազությանը: Վնասվածքների առաջացման պատճառների և վնասվածքների հայտնաբերման վերաբերյալ Դիտորդների խմբի անդամնե-

ը հանդիպել են մեկ կալանավորված անձի, որը պնդել է, թե վնասվածքներն ստացել է ոստիկանությունում՝ աշխատակիցների կողմից կիրառված ծեծի արդյունքում: 2008 թվականի հուլիսից մինչև 2009 թվականի փետրվար տասը հաղորդում է ներկայացվել դատախազությանը՝ կապված ոստիկանությունից վնասվածքներով բերված կալանավորվածների հետ:

Վերաբերմունք

«Վանաձոր» ՔԿՀ-ի աշխատակազմի վերաբերմունքից բողոքներ Դիտորդների խումբը չի ստացել:

Անձնակազմ

«Վանաձոր» ՔԿՀ-ի աշխատակազմը հիմնականում համալրված է՝ 218 հաստիքներից համալրված են 199-ը: Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև պարբերաբար կազմակերպվող ծառայողական պարապմունքներին, որոնք անցկացվում են տեղում: Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է: Ըստ հիմնարկի աշխատակիցների՝ արդարացի աշխատավարձ է համարվում 200-250 հազար դրամը:

Առաջարկություններ

155) *Համալրել թափուր հաստիքները:*

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվում են իրավապահ մարմինների ազատազրկված նախկին աշխատակիցներ և օտարերկրացիների մեծ մասը: Սա ՀՀ քրեակատարողական համակարգում առաջին հիմնարկն էր, որը դեռևս 2005 թվականին վերանորոգվեց և ուր համապատասխան պայմաններ ստեղծվեցին դատապարտյալներին խցային պայմաններում պահելու համար: Այդուամենայնիվ, թե՛ վերանորոգման աշխատանքների ցածր որակը, թե՛ հիմնարկի անբարենպաստ տեղակայումը (այն կառուցված է սողանքային հողեր և բարձր խոնավություն ունեցող տարածքում) բերել են նրան, որ հիմնարկն անընդհատ ընթացիկ վերանորոգման կարիք ունի: Մասնավորապես՝ առաջին հարկի պատերը խոնավանում են, արգելագոտու պատերը ճաքճքել են, և դրանց փլուզվելու վտանգ է առաջացել:

«Վարդաշեն» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ - 5
- կալանք պատժատեսակ - 5
- կիսափակ ուղղիչ հիմնարկ - 25
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 70
- բաց ուղղիչ հիմնարկ - 15
- կալանավորվածներին պահելու վայր - 34

Հիմնարկում ազատազրկվածներին պահելու համար նախատեսված մասնաշենքը բաղկացած է երկու գոտուց, որոնք գտնվում են նույն շենքում, բայց ունեն տարբեր մուտքեր: Առաջինը կիսաբաց ուղղիչ հիմնարկ է, երկրորդը կոչվում է կալանավորվածների և դատապարտյալների պահելու վայր: Վերջինը գործում է թե՛ որպես քննչական մեկուսարան և թե՛ որպես փակ ու կիսափակ ուղղիչ հիմնարկ և կալանք պատժատեսակը կրող դատապարտյալներին պահելու վայր:

Հիմնարկի վերանորոգումից հետո այստեղ տեղադրվել են ժամանակակից պատուհաններ: Խցերը կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրում 2-4 տեղանոց են, և մինչև 8 տեղանոց՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում: Խցերի հատակը փայտից է, զուգարանները՝ մեկուսացված և սալիկապատված:

Հիմնարկում ազատազրկվածներին պահելու պայմանները մինչև 2008 թ. ընդհանուր առմամբ բավարար էին: Սակայն 2008 թ. փետրվարից նկատվում է կալանավորված անձանց թվի զգալի աճ, և դեկտեմբերի դրությամբ առկա էր նախատեսված լրակազմի գերազանցում ավելի քան 2 անգամ: Սա հիմնարկի ղեկավարությունը բացատրում էր հետընտրական ժամանակաշրջանում կալանավորումների թվի կտրուկ աճով: Մյուս կողմից՝ Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների ստեղծումից հետո պայմանական վաղաժամկետ ազատվողների թիվը պակասել է 80 տոկոսով, ինչի արդյունքում դատապարտյալների

թիվը աճելով նույնպես մոտենում է լրակազմի հաստատված թվաքանակին: Լրակազմի թվի գերազանցումը ըստ էության նշանակում է խցերի գերբնակեցում, այսինքն՝ օրինակ՝ 4 տեղանոց խցում տեղավորվում է ևս 2 մահճակալ, և այնտեղ պահվում 6 դատապարտյալ: Այս դեպքում յուրաքանչյուր ազատազրկվածին բաժին է հասնում օրենսդրությամբ[25] նախատեսված 4 քմ փոխարեն ընդամենը մոտ 2,5 քմ՝ դեռ չհաշված, որ լրացուցիչ մահճակալները զբաղեցնում են խցի ազատ մակերեսի զգալի մասը: Այս իրավիճակով պայմանավորված՝ հիմնարկի ղեկավարությունը որոշում է ընդունել պատժախցերը և կարանտինային խցերը օգտագործել որպես սովորական խցեր:

«Վարդաշեն» ՔԿՀ-ում լուրջ խնդիր է ջրամատակարարման հարցը: Հիմնարկում ջուրը մատակարարվում է օրական 2 անգամ՝ երկուական ժամով: Այդ պատճառով հիմնարկում ջրի պաշարներ են ստեղծվում: Ջրամատակարարման խնդիրը սուր է ոչ միայն «Վարդաշեն» ՔԿՀ-ում, այլև ամբողջ Նուբարաշեն թաղամասում, ուր այն տեղակայված է:

Չնայած հիմնանորոգման ընթացքում հիմնարկը հիմնովին վերակառուցվել է, այնուամենայնիվ, այստեղ չկան ջեռուցման և օդափոխության համակարգեր: Խցերը և աշխատասենյակները ջեռուցվում են էլեկտրական սարքերով: Ընդ որում, խցերում տեղադրված սարքերը բերել են ազատազրկվածների հարազատները: Դիտորդների խումբը ձմեռային այցելության ժամանակ հայտնաբերել էր խուց, որը չնայած ցածր ջերմաստիճանին չուներ ջեռուցիչ:

Առաջարկություններ

156) *Արդարադատության նախարարության, թաղապետարանի և ջուր մատակարարող ընկերության միջև համագործակցության միջոցով լուծել ջրամատակարարման հարցը:*

157) *Հիմնարկում անցկացնել ջեռուցման համակարգ, իսկ մինչ այդ պետք է նախատեսել պետական միջոցներով համապատասխան ջեռուցող սարքերի ապահովումը խցերում:*

158) *Տեղադրել օդափոխության համակարգ:*

Խցեր

«Վարդաշեն» ՔԿՀ-ում գոյություն ունեն երկու տիպի խցեր. կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի խցերը ունեն երկաթյա դռներ և փակվում են դրսից: Կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցերի դռները փայտյա են, չունեն կողպեք, և դատապարտյալները ցերեկային ժամերին ազատ կարող են շրջել հիմնարկի՝ իրենց հատկացված գոտու տարածքում:

Բոլոր խցերի հատակը փայտից է, սակայն անորակ շինարարության պատճառով տախտակների միջև ճեղքեր են առաջացել, որտեղից խցեր են անցնում միջատներ և կարիճներ:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի խցեր

«Վարդաշեն» ՔԿՀ-ի կիսաբաց տիպի խցերը տարբեր մակերեսի են՝ 12 քմ-ից մինչև 30 քմ, որտեղ պահվում է 3-8 դատապարտյալ: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր դատապարտյալի համար ապահովվում է 4 քմ տարածք, սակայն 2008 թվականի վերջի տվյալների համաձայն՝ դատապարտյալների թվի աճի պատճառով խցերում առաջանում է գերբնակեցման խնդիր:

Կիսաբաց տիպի խցերի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է, սակայն այնտեղ բացակայում է օդափոխության համակարգը: Ձմռանն անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովվում է դատապարտյալների հարազատների բերած էլեկտրական սարքերով: Քանի որ ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի, խցերում դատապարտյալները տարբեր տարողություններում ջուր են հավաքում:

25 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 73:

Խցերի բնական լուսավորությունը բավարար է:

Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրի խցեր

Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրի խցերը նախատեսված են 2-4 ազատազրկվածի համար: Սակայն վերջին տարում ազատազրկվածների թվի ավելացման պատճառով խցերում պահվում է մինչև 6 մարդ: Խմբի այցելած խցերից մեկում սանհանգույցում չէր աշխատում ծորակը, և այնտեղ պահվող կալանավորվածները ստիպված էին ջուր հավաքել տարբեր տարաներում ռետինե խողովակի միջոցով, որը միացված էր ջրատար համակարգին:

Խցերի բնական լուսավորությունը բավարար է: Ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա խցերում տեղադրված էր երկու լամպ՝ մեկը առաստաղին, որը միացվում է երեկոյան ժամերին, երկրորդը՝ դռան վերևի մասում և ապահովում է գիշերային ժամերի համար ավելի թույլ լուսավորություն:

Ջեռուցումն ապահովվում է էլեկտրական սարքերի միջոցով, որոնք բերում են ազատազրկվածների հարազատները: Խմբի այցելության պահին խցերից մեկում ջեռուցման սարք չկար, չնայած արդեն ձմեռ էր, և դրսում ջերմաստիճանը 0-ից ցածր էր:

Առաջարկություններ

159) *Համապատասխան միջոցներ ձեռնարկել խցերը միջատներից և կարիճներից զերծ պահելու համար:*

Կապն արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար հիմնարկում գործում է երեք տեսակցության սենյակ՝ 8 քմ-ից մինչև 21 քմ: Նրանցից մեկը գտնվում է կիսաբաց ուղղիչ հիմնարկի տարածքում, երկուսը՝ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի տարածքում: Վերջինները նաև օգտագործվում են որպես քննչական սենյակներ:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի կարճատև տեսակցության սենյակը նախատեսված է միաժամանակ 4 տեսակցության համար: Սենյակում կան 4 սեղան և 8 նստարան: Սենյակի բնական լուսավորությունը բավարար է: Կից գործում է սանհանգույց, որից կարող են օգտվել տեսակցությունների մասնակիցները:

Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրի կարճատև տեսակցությունների սենյակները նախատեսված են մեկական տեսակցության համար, բավական անմխիթար վիճակում են, չունեն բնական լուսավորություն: Սենյակներից մեկը չունի նույնիսկ էլեկտրական սարքերով ջեռուցման հնարավորություն: Սենյակներին կից չկա սանհանգույց:

Հիմնարկի ղեկավարության խոսքով՝ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի սենյակները չեն համապատասխանում հիմնարկի պահանջներին, ինչի համար մոտ ժամանակներս այս սենյակների փոխարեն կառուցվելու է նոր տեսակցությունների սենյակ՝ միաժամանակ 6 տեսակցության համար:

Առաջարկություններ

160) *Բարելավել կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի տարածքում գտնվող կարճատև տեսակցության սենյակների պայմանները:*

161) *Կալանավորներին և դատապարտյալներին պահելու վայրի տեսակցության սենյակներին կից կառուցել սանհանգույց:*

162) *Կառուցել առանձին քննչական սենյակներ:*

Երկարատև տեսակցություններ

«Վարդաշեն» ՔԿՀ-ն ունի 2 երկարատև տեսակցությունների սենյակներ, որոնց մակերեսը կազմում է 20 քմ: Սենյակները կահավորված են աթոռներով, սեղանով, նստարանով, մեծ և փոքր մահճակալներով: Սենյակներն ունեն բնական լուսավորություն, էլեկտրական ջեռուցում, ընդհանուր զուգարան, բաղնիք, խոհանոց, որտեղ կան սառնարան, թեյնիկ, սպասք: Սանիտարական վիճակը բավարար է:

Հեռախոսակապ

«Վարդաշեն» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որից շուրջօրյա, բացի շաբաթ ու կիրակի օրերից, օգտվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկի ազատազրկվածները, իսկ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի ազատազրկվածները օգտվում են հեռախոսակապից ըստ ժամանակացույցի՝ շաբաթը 2 անգամ: Լուրջ խնդիրներ՝ կապված հեռախոսակապից օգտվելու հետ, խումբը չի արձանագրել:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Վարդաշեն» ՔԿՀ-ում փոքր սենյակ է: Դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են՝ մուտք գործելով այդ սենյակ անմիջապես դրսից: Հերթեր առաջանալու դեպքում հարազատները պետք է սպասեն դրսում, որտեղ չկա որևէ հարմարություն: Սենյակի պատին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի ու իրերի ցուցակը և կարգը:

Հանձնուքի զննությունը կատարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Տարածքում կան խմելու ջուր, զուգարան, սակայն դրսում սպասող ազատազրկվածների հարազատների համար դրանք հասանելի չեն:

Հանձնուքի ընդունման կետի աշխատակցի խոսքով՝ հերթեր գրեթե չեն գոյանում:

Առաջարկություններ

163) *Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:*

164) *Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթում կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց ծանոթանալու:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Վարդաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը 1 անգամ: Սակայն որոշ դատապարտյալների խոսքով՝ լինում են դեպքեր, երբ իրենք լողանալու հնարավորություն են ունենում 15-30 օրը մեկ անգամ:

Հիմնարկն ունի 3 բաղնիք, որոնք տարբեր չափսերի են՝ 8-14 քմ: Սանիտարական վիճակը բավարար չէ: Հանդերձարան և նստարան կան միայն մեկում, որի սանիտարական վիճակը բավարար չէ:

Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տեղադրված են տարբեր տարողության բաքեր, որոնցում ջուրը տաքացվում է էլեկտրաէներգիայով: Երբեմն տաքացված ջուրը չի բավականացնում բոլոր ազատազրկվածների լոգանքն ապահովելու համար:

Օդափոխություն և ջեռուցում «Վարդաշեն» ՔԿՀ-ի բաղնիքներում չկան:

Առաջարկություններ

165) *Հիմնարկի բոլոր 3 բաղնիքներում բարելավել սանիտարական վիճակը:*

166) *Հիմնարկի երկու բաղնիքում կառուցել հանդերձարաններ:*

Բուժսպասարկումը

Բուժմաս. ընդհանուր վիճակ

Հիմնարկի բուժմասը գտնվում է ազատազրկվածներին պահելու մասնաշենքում, սակայն ունի առանձին մուտք: Բուժմասն ունի բժիշկների աշխատասենյակ, որը միաժամանակ հանդիսանում է միջամտությունների սենյակ, ատամնաբուժական սենյակ, հիվանդասենյակներ, բաղնիք, զուգարան: Ընդանուր առմամբ բուժմասի տարածքը փոքր է:

Քանի որ հիմնարկում պահվում են իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներ և անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխումը «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ հնարավոր չէ, բուժմասի առկա վիճակը չի կարելի բավարար համարել՝ բուժումը պատշաճ կազմակերպելու համար:

Ազատազրկվածների գնահատմամբ՝ եթե հիմնարկում հնարավոր է առաջին բուժօգնություն ստանալ, ապա հետագա՝ ավելի նեղ մասնագիտական բուժում ստանալը բավական բարդ է՝ համապատասխան մասնագետների և դեղորայքի բացակայության պատճառով:

Առաջարկություններ

167) *Գտնել բուժմասի տարածքը ընդլայնելու հնարավորություն:*

168) *Հատկացնել առանձին միջամտությունների սենյակ:*

Համալրվածություն

Ըստ հաստիքացուցակի՝ բուժմասում աշխատում են երկու բժիշկ և չորս բուժքույր: Չնայած նշվում էր, որ առկա բուժանձնակազմի թիվը բավարար է, սակայն Դիտորդների խմբի այցելության պահին հիմնարկում էր միայն բուժքույրը, իսկ բժշկի բացակայությունը բացատրվում էր նախորդ օրվա հերթապահությամբ:

Բժիշկները մասնագիտությամբ սրտաբան և անեսթեզիոլոգ էին: Կա նաև ատամնաբույժ, որն աշխատում է կես դրույքով և հրավիրվում է հիմնարկ անհրաժեշտության դեպքում: Եթե առաջանում է նեղ մասնագետների անհրաժեշտություն, նրանք հրավիրվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից:

Առաջարկություններ

169) *Ավելացնել հաստիքացուցակով նախատեսված բժիշկ մասնագետների թիվը:*

Դեղորայք

Բազմաթիվ ազատազրկվածներ դժգոհում էին դեղորայքից, քանի որ որոշակի դեղեր հիմնարկը չի ստանում, և ազատազրկվածները ստիպված են դրանք ստանալ իրենց հարազատների միջոցով:

Առաջարկություններ

170) *Բարելավել հիմնարկի ապահովվածությունը դեղորայքով:*

Սարքավորումներ

Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով բավական ցածր է: Ըստ աշխատակիցների՝ հիվանդասենյակներում պետք է արդիականացնել մահճակալները, անհրաժեշտ են նոր սարքավորումներ, մասնավորապես՝ հատուկ նշվեց սոնոգրաֆի անհրաժեշտությունը:

Առաջարկություններ

171) *Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:*

172) *Հիվանդասենյակներում տեղադրել ժամանակակից պահանջներին համապատասխանող մահճակալներ:*

Զբաղվածություն

«Վարդաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունն ապահովվում է մարզադահլիճի, զբոսանքի, գրադարանից օգտվելու միջոցով: Խցերում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ և այլ տեխնիկա: Դատապարտյալներից շատերը նշում էին, որ ցանկություն ունեն աշխատելու, սակայն, բացի տնտեսական մասից, հիմնարկն այլ աշխատանքով չի կարողանում ապահովել:

Մարզադահլիճ

Հիմնարկն ունի 300 քմ լուսավոր մարզադահլիճ, որտեղ տեղադրված են երեք թենիսի սեղան, ութ չորստեղանոց նստարան: Դահլիճին կից կա հանդերձարան և լոգարան:

Զբոսանք

«Վարդաշեն» ՔԿՀ-ում գործում է 3 զբոսահրապարակ, որոնք գտնվում են հիմնարկի բակում: Զբոսահրապարակները տարբեր մակերեսի են՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկի զբոսահրապարակը 200 քմ է, իսկ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի զբոսահրապարակները՝ 300 քմ: Երկու զբոսահրապարակներում կան ծածկի տակ գտնվող 3-4 տեղանոց նստարաններ: Սպորտով զբաղվելու հնարավորություն կա միայն կիսաբաց ուղղիչ հիմնարկի զբոսահրապարակում, որտեղ տեղադրված են մարզական սարքավորումներ: Կալանավորների և դատապարտյալների պահելու վայրի զբոսահրապարակի մարզական սարքավորումները օգտագործման համար պիտանի չեն: Քանի որ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի զբոսահրապարակները բավական մեծ են, հիմնարկում կազմակերպվում է միաժամանակ մի քանի խցերի զբոսանք նույն զբոսահրապարակում՝ ապահովելով օրենսդրությամբ[26] նախատեսված ազատազրկվածներին իրարից անջատ պահելու կանոնները: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ սա դրական է անդրադառնում ազատազրկվածների հոգեկան վիճակի վրա: Միևնույն ժամանակ խումբն արձանագրել է, որ կիսափակ ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալներն օգտվում են օրական ընդամենը մեկ ժամ զբոսանքի հնարավորությունից՝ օրենսդրությամբ[27] նախատեսված երեք ժամի փոխարեն: Փաստորեն նրանք պահվում են նախատեսվածից ավելի խիստ՝ փակ ուղղիչ հիմնարկի պայմաններում:

Առաջարկություններ

173) *Ապահովել կիսափակ ուղղիչ հիմնարկում պահվող ազատազրկվածների երեքժամյա զբոսանքը:*

26 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68:
27 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 105:

Գրադարան

«Վարդաշեն» ՔԿՀ-ում գործում է գրադարան: Գրքերի քանակը կազմում է 3025 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը 14 քմ է:

Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը մամուլ չի ստանում:

Առաջարկություններ

174) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

175) *Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:*

Սնունդ

Խոհանոց

«Վարդաշեն» ՔԿՀ-ի խոհանոցի սանիտարական վիճակը բավարար չէ: Օդափոխության համակարգի բացակայության պատճառով պատերին բորբոս է առաջացել:

Խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը ցածր մակարդակի է: Էլեկտրական կաթսաները չեն աշխատում և օգտագործվում են միայն ջուր հավաքելու համար: Ճաշը պատրաստվում է էլեկտրական սալօջախների վրա:

Հիմնարկը չունի քաղաքացիական խոհարարի հաստիք, և այդ պարտականությունները կատարում է դատապարտյալ, որը չունի հատուկ խոհարարական կրթություն:

Առաջարկություններ

176) *Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:*

177) *Խոհանոցում սարքավորել օդափոխության համակարգ:*

Սննդի որակ

«Վարդաշեն» ՔԿՀ-ի ազատազրկվածների մի մասը ճաշի որակը համարում էր բավարար, մյուս մասը՝ խիստ անբավարար: Բոլորը միահամուռ նշում էին հացի ցածր որակը, ինչում համոզվեցին նաև Դիտորդների խմբի անդամները: Ազատազրկվածների մեծ մասը նշում էր, որ օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից:

«Վարդաշեն» ՔԿՀ-ում պահվում են օտարերկրացի դատապարտյալներ, մասնավորապես՝ իրանցիներ, որոնց կրոնական համոզմունքներով արգելվում է սննդի մեջ խոզի միս օգտագործել: Այն օրերին, երբ ճաշը պատրաստվում է խոզի մսով, նրանք ստիպված հրաժարվում են ճաշից:

Առաջարկություններ

178) *Բարձրացնել սննդի որակը:*

179) *Կրոնական կամ այլ պատճառներով որոշակի սնունդ չօգտագործող դատապարտյալների համար ապահովել այնպիսի սնունդ, որից նրանք կարող են օգտվել:*

Պատիժներ

Ըստ հիմնարկի ղեկավարության՝ պատժախուց տեղավորել պատժամիջոցը կիրառվում է տարեկան 4-5 անգամ: Մնացած ժամանակ պատժախցերն օգտագործվում են որպես ընդհանուր խցեր, քանի որ հիմնարկը գերծանրաբեռնված է և լրացուցիչ տեղերի խիստ կարիք ունի: Այնուամենայնիվ, ազատ պատժախցերի բացակայությունը նշանակում է, որ ցանկացած դեպքում, երբ կիրառվում է այդ պատիժը, այն երեք խցերից մեկը, որ նախատեսված է որպես պատժախուց, պիտի ազատվի, և այնտեղ պահվող ազատազրկվածները տեղավորվեն այլ խցերում, ինչը բավական բարդություններ պիտի ստեղծի թե՛ անձնակազմի, թե՛ ազատազրկվածների համար:

Առաջարկություններ

180) *Պատժախցերից առնվազն մեկն օգտագործել միայն որպես «պատժախուց տեղափոխել» պատժին ենթարկված ազատազրկվածներին պահելու համար:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր հիմնարկում վերջին տարվա ընթացքում չեն գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

2008 թվականի ընթացքում Ձերբակալվածներին պահելու վայրից բերված կալանավորվածների բուժզննության մատյանում գրանցվել է 23 դեպք, երբ հիմնարկ բերված կալանավորի մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ նման դեպքերի մասին անմիջապես տեղյակ է պահվում դատախազությանը: Վնասվածքների առաջացման պատճառների և վնասվածքների հայտնաբերման վերաբերյալ հետագա քայլերի մասին արձանագրություններ հայտնաբերել չհաջողվեց:

Կարանտինային խուց

Հիմնարկի գերծանրաբեռնվածության պատճառով կարանտինային խցերը օգտագործվում են որպես ընդհանուր խցեր: Դա նշանակում է, որ նոր բերված կալանավորվածներն անմիջապես հայտնվում են ընդհանուր խցում, և նրանց հետ կարանտինային փուլում նախատեսված աշխատանքներ չեն տարվում:

Առաջարկություններ

181) *Հիմնարկում կարանտինային խցերն օգտագործել ըստ նշանակության:*

Վերաբերմունք

«Վարդաշեն» ՔԿՀ-ի աշխատակազմի վերաբերմունքի մասին կալանավորվածները և դատապարտյալներն արտահայտվում են դրական: Միևնույն ժամանակ 2008 թվականին ավարտվեց նախորդ տարի արձանագրված հիմնարկի պետի տեղակալի կողմից ազատազրկվածին իր աշխատասենյակում ծեծի ենթարկելու դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործի քննությունը: Ծեծի պատճառ էր հանդիսացել ազատազրկվածի կողմից Քրեակատարողական վարչության պետին բողոք ներկայացնելը:

Անձնակազմ

«Վարդաշեն» ՔԿՀ-ի աշխատակազմը համալրված է: Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին: Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է՝ արդարացի աշխատավարձ համարելով 200000-250000 դրամը:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Գորիս» ՔԿՀ-ն քրեակատարողական համակարգի ամենահին շինությունը ունեցող հիմնարկն է: «Գորիս» ՔԿՀ-ի շենքն աղյուսից է՝ կառուցված է 1812 թ.: Որպես կալանավայր գործում է 1870 թվականից:

Հիմնարկում, ըստ լրակազմի, կարող է պահվել 170 դատապարտյալ:

«Գորիս» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ - 110
- կիսափակ ուղղիչ հիմնարկ - 10
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 10
- բաց ուղղիչ հիմնարկ - 5
- կալանավորվածներին պահելու վայր - 35

Հիմնարկի խցերը տարբեր չափսերի են՝ 2-ից մինչև 12 տեղանոց: Հիմնարկում ջրամատակարարումը շուրջօրյա է, ջեռուցումը կատարվում է կաթսայատան միջոցով: Գործում են մեկական կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ: Տեսակցությունների և հեռախոսազանգերի արգելանք էր գործում 2 ազատազրկվածների հանդեպ:

«Գորիս» ՔԿՀ-ում ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Բացի ինը խցերից, մնացած խցերը վերանորոգվել են: Դիտորդների խմբի այցի ժամանակ վերանորոգվում էր երկրորդ բաղնիքը:

Քանի որ հիմնարկի շենքը շատ հին է և ընդհանուր առմամբ գտնվում է անմխիթար վիճակում, բոլոր տեսակի վերանորոգումները կարճ ժամանակ անց փչանում են: Ֆինանսական միջոցները չեն բավարարում անհրաժեշտ հիմնանորոգման աշխատանքներ կատարելու համար:

Խցեր

«Գորիս» ՔԿՀ-ի խցերի մի մասը վերանորոգված է, մյուսը՝ ոչ:

Վերանորոգված խցերը համեմատաբար բարվոք վիճակում են, հատակը փայտից է, տեղադրված են մետաղապլաստե պատուհաններ: Բնական լուսավորությունը բավարար է, զուգարանը՝ մեկուսացված: Խցերում միջինը պահվում է 6-7 ազատազրկված: Իրավունքների և պարտականությունների ցուցակը փակցված է:

Չվերանորոգված խցերում վիճակն էապես տարբերվում է: Այդպիսի խցերից մեկում, որտեղ պահվում էին կալանավորվածներ, Դիտորդների խմբի այցի պահին պահվում էր 15 մարդ այն դեպքում, երբ խցի մակերեսը 30 քմ է, այսինքն՝ խուցը կրկնակի գերբնակեցված էր՝ մեկ անձին բաժին էր հասնում 2 քմ՝ օրենսդրությամբ[28] նախատեսված 4 քմ-ի փոխարեն: Խուցը հակասանիտարական վիճակում էր: Զուգարանը մեկուսացված չէր: Իրավունքների և պարտականությունների ցուցակը չկար: Խցի բնական լուսավորությունը բավարար չէր:

28 «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 20:

Այս իրավիճակը, երբ կալանավորվածները պահվում են անհամեմատ ավելի վատ պայմաններում, քան դատապարտյալները, մշտապես գրանցվել է Դիտորդների խմբի կողմից:

Առաջարկություններ

182) *Հիմնարկի ընդհանուր վերանորոգման ընթացքում առաջնահերթ վերանորոգել խցերը:*

183) *Վերացնել կալանավորվածների խցերի գերբնակեցումը:*

Կապն արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

«Գորիս» ՔԿՀ-ում գործում է մեկ կարճատև տեսակցության սենյակ: Դա 24 քմ մակերեսով սենյակ է, որտեղ կան 1 բազմոց, 2 բազկաթոռ, անկյունային աթոռ, սեղան:

Նույն սենյակն օգտագործվում է որպես հանձնուքի ընդունման կետ, ուր կատարվում է նաև հանձնուքի զննությունը:

Սենյակը չունի բնական լուսավորություն: Սենյակը ջեռուցվում է: Ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է:

Առաջարկություններ

184) *Կարճատև տեսակցությունների սենյակի համար հատկացնել այլ տարածք՝ տարանջատելով այն հանձնուքի ընդունման կետից:*

Երկարատև տեսակցություններ

«Գորիս» ՔԿՀ-ում գործում է երկու երկարատև տեսակցության սենյակ: Երկարատև տեսակցությունների մասը բաղկացած է 2 ննջարանից, խոհանոցից և սանհանգույցից: Մաքուր օդ դուրս գալու հնարավորություն սենյակներից չկա: Սենյակների բնական լուսավորությունը բավարար չէ: Ջրամատակարարումը մշտական է: Ջեռուցումը կատարվում է հիմնարկի կաթսայատան միջոցով:

Խոհանոցում կան սառնարան, զանազան սպասք:

Երկարատև տեսակցությունների սենյակի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է:

Առաջարկություններ

185) *Բարելավել երկարատև տեսակցությունների սենյակների բնական լուսավորությունը:*

Հեռախոսակապ

«Գորիս» ՔԿՀ-ում գործում է 2 հեռախոս, որից ազատազրկվածներն օգտվում են համաձայն ժամանակացույցի՝ շաբաթը 2 անգամ: Լուրջ խնդիրներ, կապված հեռախոսակապից օգտվելու հետ, խումբը չի արձանագրել:

Հանձնուքներ

«Գորիս» ՔԿՀ-ի հանձնուքի ընդունման կետը 18 քմ մակերեսով սենյակ է: Սենյակում տեղադրված են երկուական նստարան և սեղան: Սենյակում փակցված են հանձնուքի փոխանցման կարգը, թույլատրելի և անթույլատրելի իրերի ցանկը, քարտի լրացման կարգը, կալանավորվածների և հարազատների իրավունքները:

Հանձնուքի ընդունման կետում չկա սանհանգույց:

Հանձնուքի զննությունը կատարվում է առանց տեխնիկական միջոցների օգտագործման:

Առաջարկություններ

186) *Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:*

187) *Ապահովել հիմնարկը հանձնուքի զննության սարքավորումներով:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Գորիս» ՔԿՀ-ում կա չորս բաղնիք, որոնցից մեկը վերանորոգված է, մյուսը՝ ոչ, իսկ երկուսը վերանորոգվում են: Վերանորոգված բաղնիքի և հանդերձարանի մակերեսները կազմում են չորսական քմ: Հանդերձարանում չկան նստարաններ, կախիչներն ինքնաշեն են: Սանիտարահիգիենիկ վիճակը բավարար է: Բաղնիքում կա 3 ցնցուղ:

Առաջարկություններ

188) *Ապահովել բաղնիքների հանդերձարանները նստարաններով և կախիչներով:*

Բուժսպասարկում

Բուժմաս. ընդհանուր վիճակը

«Գորիս» ՔԿՀ-ի բուժմասն ամբողջովին վերանորոգված է: Այն գտնվում է հիմնարկի առաջին հարկում և բաղկացած է բժիշկների աշխատասենյակից, որտեղ պահվում է դեղորայքը, միջամտությունների սենյակից և հիվանդասենյակից: Հիվանդասենյակն ունի 30 քմ մակերես, որտեղ տեղադրված է չորս մահճակալ: Հատակը փայտից է, բնական լուսավորությունը՝ բավարար: Հիվանդասենյակն ունի իր առանձին սանհանգույցը:

Բուժմասի ընդհանուր սանիտարահիգիենիկ վիճակը բավարար է:

Համալրվածություն

Հիմնարկի բուժմասում համալրված է չորս հաստիք՝ երկու բժիշկ և երկու բուժակ: Հիմնարկի ղեկավարության խոսքով՝ բուժմասի հիմնական խնդիրը թափուր հաստիքների առկայությունն է, որը չի հաջողվում համալրել: Բուժմասի պետի կարծիքով՝ հիմնարկը ատամնաբույժի և ակնաբույժի խիստ կարիք ունի:

Առաջարկություններ

189) *Համալրել թափուր հաստիքները:*

Սարքավորումներ

«Գորիս» ՔԿՀ-ի բուժմասի ապահովվածությունը բժշկական սարքավորումներով անբավարար է, եղած սարքավորումները հին են, բարոյապես մաշված:

Առաջարկություններ

190) *Բարելավել բուժմասի հագեցվածությունը բժշկական սարքավորումներով:*

Զբաղվածություն

Գրադարան

«Գորիս» ՔԿՀ-ի գրադարանի մակերեսը կազմում է 8 քմ: Գրքերի քանակը՝ 1309 կտոր: Վերջին տարիներին գրադարանը չի համալրվել նոր գրականությամբ: Գրքային ֆոնդը համալրվում է աշխատակիցների անձնական միջոցներով: Չնայած կա գրքերի ցուցակ, պահարաններում դրանք դասակարգված և կանոնակարգված չեն: Գրքերի պահման պայմաններն ընդհանուր առմամբ բավարար չեն:

Առաջարկություններ

191) *Համալրել գրքային ֆոնդը:*

192) *Բարելավել գրքերի պահման պայմանները:*

Զբոսանք

«Գորիս» ՔԿՀ-ում գործում է 4 զբոսահրապարակ, յուրաքանչյուրը՝ 30-35 քմ մակերեսով: Բոլոր զբոսահրապարակներում տեղադրված են նստարաններ, տեղումներից պաշտպանող ծածկեր: Սպորտով զբաղվելու հնարավորություն զբոսահրապարակներում չկա: Դատապարտյալներն օգտվում են զբոսանքի իրավունքից ամեն օր մեկական ժամով, ներառյալ՝ շաբաթ և կիրակի օրերը:

Առաջարկություններ

193) *Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ:*

Սնունդ

«Գորիս» ՔԿՀ-ն մշտապես առանձնացել է այլ ՔԿՀ-ների մեծ մասից սննդի լավ որակով: Դա առավելապես պայմանավորված է հիմնարկում քաղաքացիական խոհարար մասնագետի հաստիքների առկայությամբ:

Հարկ է նշել, որ դիտարկման ժամանակ հիմնարկի պահեստում կար թարմ մթերքի մեծ տեսականի՝ սառնարաններում պահվում էին կաթնամթերք, բնական հյութեր, պահածոներ:

Խոհանոց

«Գորիս» ՔԿՀ-ի խոհանոցի մակերեսը 30-35 քմ է: Այն բաղկացած 3 մասից՝ հացի կտրման, ճաշի եփման և բանջարեղենի մաքրման բաժիններից: Խոհանոցում կան երկու գազօջախ և երկու էլեկտրական վառարաններ: Զրամատակարարումը մշտական է, տաք ջուրը՝ ապահովված: Հիգիենիկ պարագաներով խոհանոցը ապահովված է: Կա օդափոխության համակարգ:

Ընդհանուր սանիտարական վիճակը խոհանոցում բավարար չէ՝ կա հիմնանորոգման կարիք:

Առաջարկություններ

194) *Հիմնանորոգել խոհանոցը:*

Սննդի որակ

«Գորիս» ՔԿՀ-ի ազատազրկվածները հիմնարկի սննդի որակը գնահատում են բավարար:

Պատիժներ

«Գորիս» ՔԿՀ-ն ունի երեք պատժախուց: Դրանցից յուրաքանչյուրը նախատեսված է մեկ ազատազրկված պահելու համար: Պատժախցերը վերանորոգված են, հատակը՝ փայտե, ջեռուցումը՝ բավարար: Այնուամենայնիվ Դիտորդների խումբը բազմիցս նշել է, որ հիմնարկի պատժախցերի մակերեսը (մոտ 4,5 քմ) չի համապատասխանում խցերի համար նախատեսված միջազգային նորմերին[29] (առնվազն 7 քմ) և այնտեղ չի կարելի մարդ պահել:

Առաջարկություններ

195) *Դադարեցնել ներկայիս պատժախցերի օգտագործումը:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր հիմնարկում վերջին տարվա ընթացքում չեն գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

Վերջին մեկ տարվա ընթացքում գրանցվել է մեկ դեպք, երբ մարմնական վնասվածքներով ազատազրկված է բերվել հիմնարկ: Հիմնարկի պետի խոսքով՝ մարմնական վնասվածքներն առաջացել էին ինքնավնասման հետևանքով: Դեպքը արձանագրվել է և կցվել դատապարտյալի անձնական գործին:

Կարանտինային խուց

«Գորիս» ՔԿՀ-ն ունի առանձին կարանտինային խուց, որը հիմնարկի ծանրաբեռնվածության պատճառով օգտագործվում է որպես սովորական խուց: Ի հետևանք՝ նոր բերված ազատազրկվածները չեն անցնում նախատեսված բոլոր կարանտինային միջոցառումները:

Առաջարկություններ

196) *Կարանտինային խուցն օգտագործել միայն կարանտինային փուլում գտնվող ազատազրկվածներին պահելու համար:*

Վերաբերմունքը

«Գորիս» ՔԿՀ-ի աշխատակազմի վերաբերմունքի վերաբերյալ 2008 թվականի ընթացքում Դիտորդների խումբը բողոքներ չի ստացել:

Անձնակազմ

Ըստ հաստիքացուցակի «Գորիս» ՔԿՀ-ում նախատեսված է 97 աշխատող, որոնցից 13-ը թափուր են: Այդ թվում սոցիալա-հոգեբանական բաժինը չունի բաժնի պետ: Հիմնարկը նաև կարիք ունի գլխավոր հետաքննիչի, բուժմասի գլխավոր մասնագետի, ատամնաբույժի, շտաբի պետի, օպերատիվ խմբի պետի:

Առաջարկություններ

197) *Համալրել թափուր հաստիքները:*

29 European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment of Punishment (CPT), 2nd General Report, Ref.: CPT/Inf (92) 3 [EN]

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է կալանավորված և դատապարտված կանանց և անչափահասներին պահելու համար: Անչափահասները այստեղ են ուղարկվում 14 տարեկանից սկսած և կարող են պատիժը կրել մինչև 21 տարեկան հասակը՝ անձնական դիմումի հիման վրա: Հիմնարկն ունի երեք գոտի.

- կալանավորվածներին պահելու վայր, ուր նույն շենքում, բայց տարբեր խցերում պահվում են կալանավորված կանայք և անչափահասները,
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ՝ կանանց գոտի,
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ՝ տղա անչափահասների գոտի:

Առանձին գոտի դատապարտված աղջիկ անչափահասների համար գոյություն չունի, քանի որ նրանք հազվադեպ են դատապարտվում ազատազրկման և նման դեպքերում պահվում են չափահաս կանանց հետ: Այս փաստը հակասում է օրենսդրությամբ[30] նախատեսված՝ դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու չափանիշներին (անչափահասները պետք է չափահասներից անջատ պահվեն): Սակայն ակնհայտ է, որ այն դեպքում, երբ առկա է միայն մեկ դատապարտյալ անչափահաս աղջիկ, օրենսդրության պահանջները կատարելով և նրան միայնակ պահելով՝ կստեղծվեն անմարդկային պայմաններ: Միևնույն ժամանակ միջազգային նորմերը[31] ավելի մեղմ են մոտենում այս հարցին և չեն բացառում անչափահասների համատեղ բնակեցումը չափահասների հետ:

«Աբովյան» ՔԿՀ-ն նախատեսված է 250 ազատազրկված պահելու համար, այդ թվում՝ 100 կալանավորվածի և 150 դատապարտյալի:

Վերջին տարվա ընթացքում հիմնարկում կատարվել են լուրջ վերակառուցման աշխատանքներ: Մասնավորապես՝ կառուցվել է մեկուսարանի նոր շենք, վերանորոգվել են կարճատև տեսակցության սենյակները, կառուցվել են երկարատև տեսակցության սենյակներ: Ջեռուցումը կալանավորվածներին պահելու վայրում կատարվում է կաթսայատան միջոցով, իսկ ուղղիչ հիմնարկներում տեղադրվել են գազով աշխատող վառարաններ:

Նշենք, որ թեև օրենսդրությամբ[32] նախատեսված է, որ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալները կարող են երեխային պահել իրենց մոտ, սակայն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ՝ մանկահասակ երեխաների ապահովման չափաբաժիններ (մանկական սնունդ, տակդիր, հագուստ և այլն) նախատեսված չեն:

30 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68:
31 Եվրոպական բանտային կանոններ, կետ 18.9:
32 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 82:

Այցելության ընթացքում Դիտորդների խումբը հանդիպեց նաև արտասահմանցի կալանավորվածների: Պարզվեց, որ նրանք հիմնարկ էին բերվել դեռ ամռանը և քանի որ Հայաստանում չունեին հարազատներ, ապա ձմռանը նրանց տաք հագուստով չէին ապահովել: Հիմնարկի պետը գտնում էր, որ հիմնարկը պարտավոր չէ կալանավորվածներին ապահովել հագուստով, և չգիտեր, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 20-րդ հոդվածը ուղղակիորեն նշում է հիմնարկի պարտավորությունը՝ անհրաժեշտության դեպքում ապահովել կալանավորվածներին սեզոնային հագուստով: Արդյունքում՝ կալանավորվածների ձմեռային հագուստի հարցը լուծվել էր Միջազգային Կարմիր խաչի միջոցներով:

Առաջարկություններ

198) *Կալանավորված և դատապարտված անչափահաս աղջիկներին պահելու վերաբերյալ կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:*

199) *Օրենսդրությամբ նախատեսել մանկահասակ երեխաներին անհրաժեշտ սնունդն ու պարագաները:*

200) *Բացառել կալանավորվածներին անհրաժեշտության դեպքում հագուստով չապահովելու դեպքերը:*

Խցեր և հանրակացարաններ

«Աբովյան» ՔԿՀ-ում գոյություն ունեն երկու տիպի կացարաններ. կալանավորվածներին պահելու վայրում դրանք խցեր են, կիսաբաց ուղղիչ հիմնարկներում՝ հանրակացարաններ:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի հանրակացարաններ (կանանց գոտի)

«Աբովյան» ՔԿՀ-ի կանանց համար նախատեսված կիսաբաց ուղղիչ հիմնարկում ազատազրկվածների հիմնական մասը պահվում է 200 քմ մակերես ունեցող հանրակացարանում: Դիտորդների խմբի այցելության պահին այնտեղ տեղադրված էր 89 մահճակալ, որից 6-ը՝ երկհարկանի, և պահվում էր 85 դատապարտյալ: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր դատապարտյալի համար օրենսդրությամբ[33] նախատեսված 4 քմ տարածքը չի ապահովվում: Բացի այդ, հարկի հերթապահի սենյակը գտնվում է հանրակացարանի հարևանությամբ և առանձնացված է նրանից ապակե միջնորմով: Հաշվի առնելով, որ կանանց գոտում հերթապահում են նաև տղամարդիկ, դա բավական անհարմարություններ է ստեղծում հատկապես գիշերային ժամերին:

Վերջին տարիներին հիմնարկում կահավորվել են նաև փոքր խցեր, որոնք հատկացվել են մանկահասակ երեխա ունեցող և տարեց դատապարտյալներին: Այստեղ նույնպես չի ապահովվում մեկ ազատազրկվածի համար 4 քմ տարածքը՝ 6 կին պահվում էր 18 քմ տարածքում:

Մեծ սենյակում ջեռուցումը կատարվում էր երկու գազի վառարաններով: Փոքր սենյակները ջեռուցվում են էլեկտրական սարքերով:

Կացարանների բնական լուսավորությունը բավարար է:

Առաջարկություններ

201) *Ապահովել 4 քմ տարածք՝ յուրաքանչյուր դատապարտյալի համար:*

202) *Վերակառուցել հանրակացարանները և անցնել պահման խցային տիպի:*

203) *Գիշերային հերթապահությունները կազմակերպել միայն կին աշխատակիցների ուժերով:*

33 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 73:

Կիսաբաց ուղղիչ հիմնարկի հանրակացարաններ (անչափահասների գոտի)

«Աբովյան» ՔԿՀ-ի անչափահասների համար կիսաբաց ուղղիչ հիմնարկի սենյակները երկուսն են՝ 14 քմ և 90 քմ մակերեսով: Ընդհանուր առմամբ՝ ապահովվում է յուրաքանչյուր դատապարտյալի համար 4 քմ տարածքը:

Անչափահաս դատապարտյալներն ապահովված են սանիտարահիգիենիկ պարագաներով, լոգանք են ընդունում, ըստ ժամանակացույցի, շաբաթական 1 անգամ: Հիմնարկն ապահովում է անկողնային պարագաներով, սպիտակեղենով, ներքնազգեստով, իսկ ձմռանը՝ գուլպաներով: Խցերի բնական և արհեստական լուսավորությունը բավարար է:

Առաջարկություններ

204) *Վերակառուցել հանրակացարանները և անցնել պահման խցային տիպի:*

Կալանավորվածներին պահելու վայրի խցեր

«Աբովյան» ՔԿՀ-ի կալանավորվածներին պահելու վայրի խցերը տարբեր մակերեսի են՝ 10 քմ-ից մինչև 16 քմ, որտեղ պահվում է 2-ից մինչև 4 կալանավորված: Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր կալանավորի համար ապահովվում է 4 քմ տարածքը:

Խցերի ընդհանուր վիճակը բավարար է: Իրավունքների և պարտականությունների ցուցակը փակցված է: Ձմռանն ապահովվում է անհրաժեշտ ջերմաստիճանը: Բնական լուսավորությունը բավարար է: Ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա չնայած մասնաշենքը նոր է վերանորոգվել, խցերում չեն տեղադրվել գիշերային լուսավորության լամպեր, և նույն հզորության լամպը միացված է և՛ երեկոյան, և՛ գիշերային ժամերին: Այն արգելվում է անջատել, թեպետ անջատիչները գտնվում են խցերում:

Առաջարկություններ

205) *Խցերում տեղադրել փոքր հզորության լամպեր՝ գիշերային լուսավորությունն ապահովելու համար:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար «Աբովյան» ՔԿՀ-ում նախատեսված են 3 նոր վերանորոգված սենյակներ: Դրանց մակերեսը կազմում է 12-ից մինչև 24 քմ: Տեսակցությունների ընթացքում կա անմիջական շփման հնարավորություն, սենյակների բնական լուսավորությունը բավարար է: Տեսակցությունների սենյակները կահավորված նոր սեղաններով, սակայն վերանորոգումից հետո աթոռներ դեռ չեն ստացել: Ջեռուցումը կատարվում է հիմնարկի կաթսայատան միջոցով: Նախատեսված է սանհանգույց, որից տեսակցության ընթացքում կարող են օգտվել և՛ ազատազրկվածները, և՛ նրանց հարազատները: Սանհանգույցի վիճակը լավ է, մաքուր: «Աբովյան» ՔԿՀ-ի կարճատև տեսակցությունների սենյակների ընդհանուր վիճակը լավ է, նոր վերանորոգված:

Ըստ Քրեակատարողական օրենսգրքի՝ բոլոր դատապարտյալներն ունեն ամսական մեկ կարճատև տեսակցության իրավունք[34], սակայն հաշվի առնելով անչափահասների՝ իրենց ընտանիքների հետ կապի առանձնահատուկ կարևորությունը, այդ հաճախականությունը համարում ենք ոչ բավարար:

34 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92:

Առաջարկություններ

206) *Կարճատև տեսակցության սենյակների համար հատկացնել աթոռներ:*

207) *Քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով անչափահաս դատապարտյալների կարճատև տեսակցությունների թիվը:*

Երկարատև տեսակցություններ

Մինչ 2008 թվականը «Աբովյան» ՔԿՀ-ում չեն եղել երկարատև տեսակցությունների սենյակներ: Այդ փաստը բազմիցս նշել է Դիտորդների խումբը: Ներկայումս երկարատև տեսակցությունների համար «Աբովյան» ՔԿՀ-ում նախատեսված են 4 նոր վերանորոգված, լուսավոր սենյակներ, որոնց մակերեսը կազմում է 20 քմ: Սենյակում կա նոր կահույք՝ 4 աթոռ, 1 սեղան, 1 բազմոց, 1 մահճակալ, 2 անձնական պահարան: Սենյակներն ունեն առանձին կահավորված խոհանոց, սանհանգույց՝ առանձին ցնցուղով, լվացարանով և զուգարանակոնքով:

Սենյակների ջեռուցումը կատարվում է հիմնարկի կաթսայատան միջոցով:

Տարածքի ընդհանուր սանիտարական վիճակը լավ է:

Չնայած երկարատև տեսակցությունների համար ստեղծված են գերազանց պայմաններ, այնուամենայնիվ, սենյակների կառուցումից հետո մինչև Դիտորդների խմբի այցելության պահը դեռ ոչ մի երկարատև տեսակցություն չէր գրանցվել, և դատապարտյալները չգիտեին, որ նման հնարավորություն արդեն կա:

Առաջարկություններ

208) *Կազմակերպել և ամեն կերպ խրախուսել երկարատև տեսակցությունները:*

Հեռախոսակապ

«Աբովյան» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որից կալանավորվածները կարող են օգտվել ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, մինչև 15 րոպե տևողությամբ:

Դատապարտյալների խոսակցության հաճախականությունը և տևողությունը սահմանափակված չեն, սակայն կանանց մասնաշենքում տեղադրված մեկ հեռախոսը բավարար չէ 100-ից ավելի կին դատապարտյալների համար, ինչի արդյունքում հերթեր են գոյանում:

Դատապարտյալների հեռախոսակապը գործում է ժամը 9:00-18:30-ը:

Առաջարկություններ

209) *Հիմնարկի դատապարտյալ կանանց պահելու գոտում ավելացնել հեռախոսների քանակը:*

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Աբովյան» ՔԿՀ-ում փոքր սենյակ է: Այն ունի 4 քմ մակերես, ջեռուցվում է: Սենյակում չկան սպասելու համար նստարան կամ աթոռներ: Սենյակի պատին փակցված չէ որևէ փաստաթուղթ հանձնուքի հանձնման-ընդունման կարգի մասին: Դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են այդ սենյակի պատուհանից: Դիտարկման պահին սենյակում գտնվում էր 6 մարդ:

Հանձնուքի զննումը կատարվում է առանց տեխնիկական միջոցների օգտագործման:

Տարածքում չկան խմելու ջուր, զուգարան, սակայն հիմնարկի պետի խոսքով՝ այցելուները կարող են օգտվել վարչական շենքի սանհանգույցից:

Առաջարկություններ

210) *Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:*

211) *Հանձնուքի ընդունման կետը կահավորել աթոռներով և սեղաններով:*

212) *Հանձնուքի ընդունման կետում փակցնել համապատասխան փաստաթղթեր:*

213) *Հանձնուքի զննման համար ձեռք բերել ժամանակակից տեխնիկա:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Աբովյան» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ, ինչը խիստ անբավարար է՝ հաշվի առնելով, որ հիմնարկում պահվում են նաև կանայք:

Հիմնարկն ունի 7 բաղնիք: Դրանցից հինգը գտնվում են կալանավորվածներին պահելու վայրում, մեկական՝ ուղղիչ հիմնարկներում: Լոգարանները սալիկապատ են: Դատապարտյալ կանանց մասնաշենքի լոգարանը չունի հանդերձարան:

Տաք ջրամատակարարումը մշտական է, կա կենտրոնացված ջեռուցում:

Առաջարկություններ

214) *Ավելացնել ազատազրկվածների, հատկապես՝ կանանց, լոգանք ընդունելու հաճախականությունը:*

215) *Ապահովել բոլոր բաղնիքները հանդերձարանով:*

Բուժսպասարկում

Ընդհանուր վիճակ

Հիմնարկը ունի բուժմասի առանձին շենք, որը ներկայումս ունի հիմնանորոգման կարիք և չի գործում: Դրա փոխարեն հիմնարկի կալանավորվածներին պահելու վայրում և կանանց համար նախատեսված կիսաբաց ուղղիչ հիմնարկում գործում են բուժկետեր, ուր բժիշկն անց է կացնում ընդունելություն:

Կանանց համար նախատեսված կիսաբաց ուղղիչ հիմնարկում գործում է 2 հիվանդասենյակ, իսկ մեկուսարանում որպես այդպիսին օգտագործվում է խցերից մեկը:

Առաջարկություններ

216) *Վերականգնել հիմնարկի բուժմասի շենքը:*

Համալրվածություն

Հիմնարկի բուժմասն ունի ութ հաստիք՝ երեք բժիշկ և հինգ բուժքույր: Բժիշկները մասնագիտությամբ գինեկոլոգ, ատամնաբույժ և անեսթեզիոլոգ են: Բուժմասն ունի թերապևտի առաջնահերթ անհրաժեշտություն: Ազատազրկվածները հիմնականում գոհ էին գինեկոլոգի աշխատանքից, սակայն թերապևտի բացակայությունը զգալ էր տալիս, և մնացած բժիշկներից որոշակի դժգոհություն կար:

Առաջարկություններ

217) *Համալրել բուժանձնակազմը բժիշկ թերապևտով:*

Դեղորայք

Հիմնարկը դեղորայքով ապահովվում է կենտրոնացված մատակարարման համակարգի միջոցով: Հաշվի առնելով, որ հիմնարկում պահվում են նաև կանայք, և երբեմն անհրաժեշտ է լինում բավական հազվադեպ օգտագործվող դեղորայք, գործող համակարգը բավական դժվարություններ է առաջացնում բուժմասի աշխատանքներում: Մասնավորապես՝ կանանց անհրաժեշտ են լինում որոշակի դեղեր, որոնք հնարավոր չէ դեռ մեկ տարի առաջ նախատեսել և պատվիրել:

Սարքավորումներ

Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով բավական ցածր է: Անհրաժեշտություն կա էԿԳ-սարքի, սոնոգրաֆի, լաբորատորիայի և այլն: Սարքավորումներով ապահովման հարցը հատկապես կարևոր է «Աբովյան» ՔԿՀ-ում, քանի որ այստեղ պահվող ազատազրկվածները՝ թե՛ կանայք, թե՛ անչափահասները, հաշվի առնելով օրենսդրությամբ[35] ամրագրված ազատազրկվածներին միմյանցից անջատ պահելու սկզբունքները (կանայք՝ տղամարդկանցից, անչափահասները՝ չափահասներից), չեն կարող տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և բուժումը հիմնականում ստանում են տեղում:

Առաջարկություններ

218) *Ապահովել բուժմասն անհրաժեշտ սարքավորումներով:*

Զբաղվածություն

Նախկինում «Աբովյան» ՔԿՀ-ն ուներ անասնաբուծական ֆերմա, ուր պահում էին կով, ճագար, խոզ: Ֆերման արտադրում էր մեծ քանակությամբ կաթ և միս, որոնք մատակարարվում էին նաև այլ հիմնարկներ: Բացի ազատազրկվածներին սնունդ մատակարարելուց, ֆերման կատարում էր նաև դատապարտյալների զգալի մասին աշխատանքով ապահովելու կարևոր գործառույթը: «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամին փոխանցելուց հետո ֆերման կարճ ժամանակ անց դադարեց գոյություն ունենալուց: Այժմ միայն ամռան ամիսներին դատապարտյալների որոշ մասը հիմնադրամի միջոցով ներգրավվում է գյուղատնտեսական աշխատանքների մեջ՝ հիմնարկի հարակից տարածքներում ծխախոտ աճեցնում:

«Աբովյան» ՔԿՀ-ում ազատազրկվածների ժամանցն ապահովելու համար գործում է գրադարան, տեղադրված են թենիսի սեղաններ, անչափահասների գոտում կա նաև մարզահրապարակ:

Կալանավորվածների խցերում կան ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ և այլ տեխնիկա:

Կին դատապարտյալների գոտում առանձին մեծ սենյակ է հատկացված հեռուստացույց դիտելու համար, ուր տեղադրված է ժամանակակից հեռուստացույց: Սակայն մեկ հեռուստացույցը չի կարող հաղորդումների լայն ընտրության հնարավորություն տալ դատապարտյալներին, ինչը կարող է լարվածության պատճառ հանդիսանալ:

Առաջարկություններ

219) *Դատապարտյալների գոտում ավելացնել հեռուստացույցները:*

35 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 68,

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 31:

Գրադարան

«Աբովյան» ՔԿՀ-ում գործում է 3 գրադարան:

Կանանց համար նախատեսված կիսաբաց ուղղիչ հիմնարկում տեղակայված է հիմնարկի հիմնական գրադարանը, որն ունի մոտ 1500 կտոր գիրք: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը կազմում է 9 քմ: Ռուսերեն գրքերի քանակն ավելի շատ է, քան հայերենը: Կա նոր գրքերի կարիք: Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Վերջին շրջանում գրքերի ֆոնդը համալրվել է Քրեակատարողական վարչության և Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանի կողմից: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանն ստանում է ամենօրյա մամուլ:

Փոքր գրադարաններ կան նաև կալանավորվածներին և անչափահասներին պահելու գոտիներում: Հատկապես կալանավորվածների գոտու գրադարանը չի կարողանում բավարարել պահանջարկը, և այնտեղ չկա հիմնական գրադարանի գրքերի ցանկը, ինչը հնարավորություն կտար կալանավորվածներին այնտեղից գրքեր ընտրելու:

Հիմնարկում պահվող արտասահմանցի ազատազրկվածները մատնանշում էին նաև գրադարանում անգլերեն գրքերի բացակայությունը:

Առաջարկություններ

220) *Կազմել գրադարանի գրքերի ցանկ, որից կալանավորվածները կկարողանան ընտրել իրենց նախընտրած գրքերը:*

221) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

222) *Լրացնել գրքային ֆոնդը օտար լեզվով գրականությամբ:*

Սնունդ

Խոհանոց

«Աբովյան» ՔԿՀ-ի խոհանոցի տարածքը կազմում է 8 քմ: Խոհանոցում գործում է օդափոխության համակարգ: Կա 3 լվացարան: Կաթսաները և վառարանները հին են: Դատապարտյալ կանայք օգտվում են անձնական սպասքից: Խոհանոցը կարիք ունի վերանորոգման, սալիկապատման և խոհանոցային նոր պարագաների: Քանի որ հիմնարկը գազիֆիկացված է, նպատակահարմար կլինի խոհանոցում գազօջախներ տեղադրել:

Առաջարկություններ

223) *Հիմնանորոգել խոհանոցը:*

224) *Տեղադրել համապատասխան տեխնիկա:*

Ճաշարան

«Աբովյան» ՔԿՀ-ում գործում է 2 ճաշարան՝ մեկը դատապարտյալ կանանց գոտում, մյուսը՝ դատապարտյալ անչափահասների գոտում:

Դատապարտյալ կանանց գոտում ճաշարանն ունի 12 սեղան, 6 նստարան, 55 աթոռ: Պա-

տին փակցված է ճաշացանկը: Դատապարտյալ կանայք օգտագործում են անձնական սպասք: Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում:

Անչափահաս դատապարտյալների գոտում ճաշարանն ունի 10 սեղան, 31 աթոռ, որոնք բավականին հին են: Ճաշարանը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Դիտարկման պահին հատակը սառցակալված էր, և տարածքի պատուհաններն առանց ապակու էին: Ճաշացանկը փակցված չէր:

Առաջարկություններ

225) *Թարմացնել հիմնարկի ճաշարանների տեխնիկական հագեցվածությունը:*

226) *Ջեռուցել հիմնարկի ճաշարանները:*

227) *Ճաշարաններում սարքավորել օդափոխության համակարգ:*

228) *Նոր կահույք տեղադրել ճաշարաններում:*

229) *Անչափահասների ճաշարանում փակցնել ճաշացանկը:*

Սննդի որակ

«Աբովյան» ՔԿՀ-ում ճաշի որակը բավարար չէ: Մասնավորապես՝ ազատազրկվածները նշում էին, որ ցածր է ճաշերի կալորիականությունը, և եթե չլինեն հանձնուքները, դժվար կլինի գոյատևել:

Ճաշի ժամին տրվող երկրորդ ճաշատեսակը նույնպես ջրալի է: Առաջարկվում էր նախատեսված բանջարեղենը ճաշի փոխարեն մատուցվի որպես աղցան: Ազատազրկվածների մեծ մասը նշում էր, որ օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից:

Առաջարկություններ

230) *Խիստ հսկողություն սահմանել ճաշերի որակի նկատմամբ:*

Պատիժներ

Առանձին պատժախուց հիմնարկում չկա, և անհրաժեշտության դեպքում այդ նպատակով օգտագործվում է կալանավորվածներին պահելու վայրի խցերից մեկը:

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր հիմնարկում վերջին մեկ տարվա ընթացքում չեն գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

2008 թվականի ընթացքում ձերբակալվածների բերման վայրից բերված կալանավորվածների բուժզննության ժամանակ չեն գրանցվել դեպքեր, երբ հիմնարկ բերված կալանավորվածների մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ:

Կարանտինային խուց

Հիմնարկում չկա առանձին կարանտինային խուց:

Առաջարկություններ

231) *Նախատեսել առանձին կարանտինային խուց:*

Վերաբերմունքը

«Աբովյան» ՔԿՀ-ի աշխատակազմի կողմից դատապարտյալների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքեր Դիտորդների խումբը 2008 թվականի ընթացքում չի արձանագրել:

Անձնակազմ

«Աբովյան» ՔԿՀ-ն աշխատակազմը լիովին համալրված չէ: Հիմնարկի պետը նշեց, որ կա 16 թափուր տեղ:

Աշխատակիցները պարբերաբար մասնակցում են Քրեակատարողական վարչության կազմակերպած վերապատրաստման դասընթացներին, ԱՆ կազմակերպած դասընթացներին: Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է:

Առաջարկություններ

232) *Համալրել թափուր հաստիքները:*

«Էրեբունի» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Էրեբունի» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտյալներին պահելու համար: Այն դեռևս խորհրդային տարիներից չի վերակառուցվել, և ազատազրկվածները այստեղ պահվում են հանրակացարաններում, որոնք տեղակայված են երեք մասնաշենքերում:

Հիմնարկը կառուցված է սողանքային և բարձր խոնավություն ունեցող տարածքում, որի պատճառով շինությունների մեծ մասը գտնվում է վթարային վիճակում: Մասնավորապես՝ վարչական մասնաշենքի հիմնական պատերը խոշոր ճաքեր ունեն: Չնայած հիմնարկում կատարվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, շինությունների հիմքերի խոնավության պատճառով վերանորոգումը կարճ ժամանակում փչանում է:

Քանի որ հիմնարկը հանրակացարանային տիպի է, այն հնարավորություն ունի միայն բաց և կիսաբաց ուղղիչ հիմնարկների պայմաններ ապահովել: Ըստ լրակազմի՝ հիմնարկում կարող են պահվել.

- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 371 մարդ
- բաց ուղղիչ հիմնարկ - 20 մարդ

2008 թվականի ընթացքում «Էրեբունի» ՔԿՀ-ում նկատվում էր խիստ գերբնակեցում: Մասնավորապես՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում նախատեսված 371-ի փոխարեն պահվում էր մոտ 600 մարդ:

Հիմնարկի ջրամատակարարման վիճակը շատ ծանր է: Բացի այն, որ ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի՝ օրը երկու անգամ մինչև երեք ժամ տևողությամբ, ձմռան ամիսներին ջրատար խողովակները հաճախ սառչում են, և հիմնարկն օրերով զրկվում է ջրից: Մյուս կողմից՝ ամռան ամիսներին հիմնարկի հարևանությամբ սկսում են գործել տարբեր արտադրամասեր, որոնք մեծ քանակությամբ ջուր են սպառում, որի պատճառով հիմնարկին ջուրը չի բավականացնում: Արդյունքում՝ հիմնարկը ստիպված է հաճախակի ջուր կրել ջրատար մեքենաներով:

Առաջարկություններ

233) *Հիմնովին վերակառուցել կամ տեղափոխել հիմնարկը:*

234) *Հանրակացարանները ձևափոխել ավելի փոքր մակերեսով խցերի:*

235) *Բարելավել հիմնարկի ջրամատակարարումը:*

Հանրակացարաններ

Դիտորդների խմբի այցելության պահին հիմնարկի հանրակացարանները խիստ գերբնակեցված էին: Մասնավորապես՝ երկու հանրակացարաններում (պահվում էին Եհովայի վկաներ և տնտեսական մասի դատապարտյալներ) մեկ անձի համար ապահովվում էր մոտ 2 քմ՝ օրենսդրությամբ[36] նախատեսված 4 քմ-ի փոխարեն:

36 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 73:

Ընդհանուր առմամբ հանրակացարանները հիմնանորոգման կարիք ունեն: Առաջին հարկում գտնվող կացարանների պատերը խոնավանում են:

Հիմնարկում չկա կենտրոնացված ջեռուցում, և հանրակացարանների ջեռուցման համար օգտագործվում են ազատազրկվածների հարազատների բերած էլեկտրական սալիկներ, որոնք, հաշվի առնելով կացարանների մեծ տարածքները, չեն կարող սենյակներում ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան:

Հանրակացարաններում չկան սանհանգույցներ՝ զուգարանը և լվացարանը ընդհանուր են ամբողջ հիմնարկի համար:

Առաջարկություններ

236) *Ապահովել ազատազրկվածների՝ օրենսդրությամբ նախատեսված բնակմակերեսը:*

237) *Վերափոխել կացարանները խցերի:*

238) *Ապահովել շինությունների հիմքերի ջրամեկուսացումը:*

239) *Կացարաններում առանձին սանհանգույցներ կառուցել:*

240) *Ապահովել կացարանների ջեռուցումը:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Հաշվի առնելով, որ «Էրեբունի» ՔԿՀ-ում պահվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներ, հիմնարկում արտաքին աշխարհի հետ կապը բավական ինտենսիվ է:

Կարճատև տեսակցություններ

«Էրեբունի» ՔԿՀ-ն ունի մեկ կարճատև տեսակցությունների սենյակ, որը նախատեսված է միաժամանակ վեց տեսակցության համար: Տեսակցությունների ընթացքում կա անմիջական շփման հնարավորություն: Սենյակն ունի մոտ 40 քմ մակերես: Բնական լուսավորությունը բավարար է: Սենյակը կահավորված է 6 սեղանով և 12 նստարանով: Միաժամանակ մեկ սեղանի շուրջը կարող են տեղավորվել մինչև 8 մարդ: Սենյակը ջեռուցվում էր, և Դիտորդների խմբի այցելության պահին այնտեղ ապահովված էր անհրաժեշտ ջերմաստիճան:

Կարճատև տեսակցությունների սենյակի հարևանությամբ կար ևս մեկ սենյակ, որը վերանորոգված էր և կահավորված փափուկ կահույքով: Սենյակը նախատեսված էր որպես մանկական սենյակ, սակայն, ի տարբերություն այլ հիմնարկների, այն օգտագործվում էր ոչ թե մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալների տեսակցությունների համար, այլ այնտեղ «մեկուսացնում» են երեխաներին, մինչև ազատազրկվածը մյուս հարազատների հետ տեսակցում է ընդհանուր սենյակում: Այցելության պահին մանկական սենյակը չէր ջեռուցվում:

Տեսակցությունների սենյակը չուներ առանձին սանհանգույց, տեսակցության եկածները կարող էին օգտվել տնտեսմասի դատապարտյալների համար նախատեսված նույն մասնաշենքում գտնվող սանհանգույցից, սակայն դրա տեղը իմանալու համար պետք էր հարցնել անձնակազմից:

Առաջարկություններ

241) *Առանձին սանհանգույց կառուցել տեսակցությունների սենյակի համար:*

242) *Մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալների տեսակցություններն անցկացնել մանկական սենյակում:*

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար «Էրեբունի» ՔԿՀ-ում նախատեսված է 12 սենյակ, որից ութը վերանորոգված են: Սենյակների տարբեր մակերեսի են՝ 7 քմ-ից մինչև 15 քմ: Սենյակների կահավորանքը նույնպես տարբեր է՝ բոլոր սենյակներում կան աթոռներ, սեղան, մեկ մեծ կամ երկու առանձին մահճակալ, որոշ սենյակներում՝ բազմոց, պահարան, սառնարան: Սենյակների ջեռուցումը կատարվում է էլեկտրաէներգիայով:

Երկարատև տեսակցության սենյակների բնական լուսավորությունը բավարար է:

Սենյակներին կից գործում է երկու ընդհանուր զուգարան (կանանց և տղամարդկանց համար առանձին՝): Սանհանգույցները սալիկապատված են:

Երկարատև տեսակցությունների բաժնում գործում է նաև լոգասենյակ: Այն նախատեսված է մեկ հոգու համար: Տաք ջուրը լոգարանում ապահովվում է բաքով, որի տարողությունը կարող է բավարարել 5-6 հոգու լոգանքը, ինչը բավարար չէ, քանի որ հիմնարկն ունի 12 երկարատև տեսակցության սենյակ:

Սենյակներին կից կա խոհանոց, որտեղ կան երկու ծորակ և սառնարան: Այլ պարագաներ, այդ թվում՝ ճաշ տաքացնելու համար սալօջախ, Դիտորդների խմբի այցելության պահին չկային: Վարչակազմի խոսքով՝ սալօջախն առանձին տրամադրվում է անհրաժեշտության դեպքում:

Մաքուր օդ դուրս գալու հնարավորություն «Էրեբունի» ՔԿՀ-ի երկարատև տեսակցության սենյակներում չկա, ինչը նշանակում է, որ տեսակցության եկածները երեք օր պիտի գտնվեն սենյակներում, ինչը, հաշվի առնելով, որ տեսակցության բերվում են նաև մանկահասակ երեխաներ, ցանկալի չէ:

Առաջարկություններ

243) *Վերանորոգել դեռևս չվերանորոգված երկարատև տեսակցության սենյակները:*

244) *Հնարավորինս նվազեցնել սենյակների վերանորոգման և կահավորանքի տարբերությունները:*

245) *Ավելացնել լոգարանների քանակը:*

246) *Խոհանոցն ապահովել անհրաժեշտ կահավորանքով (առաջնահերթ տեղադրել էլեկտրական սալօջախ):*

247) *Տեսակցողների համար ստեղծել մաքուր օդ դուրս գալու հնարավորություն:*

Հեռախոսակապ

«Էրեբունի» ՔԿՀ-ում տեղադրված են ավտոմատ հեռախոսներ, և գործում է հեռախոսակապ, որից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ առանց սահմանափակման: Ազատազրկվածները ընդհանուր առմամբ գոհ են հեռախոսների աշխատանքից, սակայն դժգոհություն կա հեռախոսակապի որակի հետ կապված: Ընդ որում, խնդիրը վերաբերում է ոչ միայն ավտոմատ հեռախոսներին, այլ նաև վարչակազմի հեռախոսներին:

Առաջարկություններ

248) *Միջոցներ ձեռնարկել հեռախոսակապի որակը բարելավելու ուղղությամբ:*

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Էրեբունի» ՔԿՀ-ում գտնվում է վարչական մասնաշենքի առաջին հարկում: Հանձնուքի ընդունումը և զննությունը կատարվում է մոտ 30 քմ մակերես

ունեցող սենյակում, որտեղ տեղադրված է զննության ժամանակակից սարք: Սակայն դատապարտյալների հարազատները փոխանցում են հանձնուքը միջանցքի և հանձնուքի ընդունման կետի միջև բացված պատուհանից, չեն կարող մուտք գործել այդ սենյակ և չեն կարող ներկա գտնվել հանձնուքի զննությանը, ինչը կարող է անախորժությունների պատճառ դառնալ:

Միջանցքը, ուր սպասում են հարազատները, չի ջեռուցվում: Պատին փակցված է փաստաթուղթ հանձնուքի հանձնման-ընդունման կարգի մասին, թույլատրվող (չթույլատրվող) սննդի և իրերի ցանկը:

Հանձնուքի ընդունման կետի տարածքում չկա սանհանգույց: Վարչակազմի խոսքով՝ հարազատները կարող են օգտվել վարչական մասնաշենքի սանհանգույցից, որը գտնվում է վերևի հարկում, սակայն այդ մասին իմանալու համար հարազատը պետք է դիմի աշխատակիցներից մեկին:

«Էրեբունի» ՔԿՀ-ն ունի կրպակ, որտեղ վաճառվում է հիմնականում սննդամթերք: Կրպակից կարող են օգտվել և՛ դատապարտյալները, և՛ նրանց հարազատները: Գները կրպակում համապատասխանում են երևանյան խանութների գներին:

Առաջարկություններ

249) *Կահավորել և ջեռուցել սպասասրահը:*

250) *Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:*

251) *Հանձնուքի զննությունը կատարել այն բերած հարազատի ներկայությամբ:*

Սանիտարահիգիենիկ վիճակ

Լոգանք

«Էրեբունի» ՔԿՀ-ում գործում է մեկ բաղնիք: Այն ունի հանդերձարան, ուր տեղադրված է միայն մեկ քսան տեղանոց կախիչ: Լոգասենյակը սալիկապատ է, ունի 9 ցնցուղ: Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տանիքում տեղադրված է 5 տոննա տարողությամբ բաք: Քանի որ հիմնարկն ունի ջրամատակարարման խնդիրներ, ապա դատապարտյալների լոգանքն ապահովվում է միայն հավաքված ջրով: Այդ դեպքում հնարավոր է աշխատեցնել լոգարանի 9 ցնցուղներից միայն երեքը և մեկ օրվա ընթացքում ապահովել միայն 50 դատապարտյալի լոգանք: Սա նշանակում է, որ գերբնակեցման դեպքում հիմնարկի լոգարանը չի կարող ապահովել դատապարտյալների՝ օրենսդրությամբ[37] նախատեսված շաբաթական լոգանքը: Ամենօրյա աշխատանքի դեպքում լոգարանը կարող է սպասարկել 350 դատապարտյալի, այնինչ այցելության պահին հիմնարկում պահվում էր մոտ 600 ազատազրկված: Միևնույն ժամամակ, հաշվի առնելով, որ լոգանքի հստակ ժամանակացույց չի գործում, վտանգ կա, որ որոշ դատապարտյալներ կարող են ընդհանրապես զրկվել լոգանք ընդունելու հնարավորությունից:

Հիմնարկի լոգարանին կից գործում են համապատասխան սարքավորումներով ապահովված լվացքատուն, չորանոց, վարսավիրանոց:

Առաջարկություններ

252) *Ապահովել հիմնարկի բոլոր դատապարտյալների համար առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանք:*

37 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 47:

Բուժսպասարկում

Բուժմաս. ընդհանուր վիճակը

«Էրեբունի» ՔԿՀ-ի բուժմասը գտնվում է ազատազրկվածներին պահելու գոտու տարածքում՝ առանձին մասնաշենքում: Այն բաղկացած է 10 հիվանդասենյակից, ատամնաբուժական և միջամտությունների սենյակներից: Վերջինը նաև բժիշկների աշխատասենյակն է: Բուժմասը գտնվում էր ընթացիկ վերանորոգման մեջ:

Առաջարկություններ

253) *Բուժմասում ապահովել առանձին միջամտությունների սենյակ:*

Համալրվածություն

Բուժմասում աշխատում են 8 մասնագետ՝ բաժնի պետը, սրտաբան, մաշկավեներոլոգ, ատամնաբույժ և 4 բուժակ: Հիմնարկում թափուր է թերապևտի հաստիքը:

Առաջարկություններ

254) *Համալրել թերապևտի հաստիքը:*

Սարքավորումներ

Վերջին տարվա ընթացքում հիմնարկը ստացել է նոր ժամանակակից ատամնաբուժական աթոռ: Այդուամենայնիվ, հիմնարկի ընդհանուր համալրվածությունը բուժսարքավորումներով անբավարար է: Որպես առաջնահերթ անհրաժեշտություն նշվեց նոր ԷԿԳ սարքը, քանի որ առկա սարքն արդեն բարոյապես և ֆիզիկապես մաշված է:

Առաջարկություններ

255) *Ապահովել հիմնարկն անհրաժեշտ բուժսարքավորումներով (առաջնահերթ տրամադրել ԷԿԳ սարք):*

Զբաղվածություն

«Էրեբունի» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունը հիմնականում ապահովվում է տնտեսական մասի աշխատանքներում ներգրավելու միջոցով: Ամռան ամիսներին գործում է նաև պեմզաբլոկների արտադրամաս, որն աշխատանքով ապահովում է հինգ դատապարտյալի: Բացի այդ, որոշ դատապարտյալներ ներգրավվում են հիմնարկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներում:

Հիմնարկում դատապարտյալներն ունեն սպորտով զբաղվելու հնարավորություն՝ խաղում են ֆուտբոլ և սեղանի թենիս: Գործում է գրադարան, հանրակացարաններում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ և այլ տեխնիկա:

Գրադարան

«Էրեբունի» ՔԿՀ-ի գրադարանի տարածքը կազմում է 20 քմ, ուր պահվում է 3750 կտոր գիրք: Գրքերի հիմնական մասը պահպանվել է դեռևս խորհրդային տարիներից, ինչի արդյունքում մեծ է այն ժամանակաշրջանին բնորոշ կոմունիստական գաղափարախոսություն քարոզող գրականության բաժինը, որը ներկայումս ընթերցողին չի հետաքրքրում:

Ազատազրկվածները գիրք կարող են ընտրել տեղում՝ այցելելով գրադարան: Գրադարանը չունի առանձին ընթերցասրահ: Չի բավարարում գրքերի պահպանման համար գրապահարանների քանակը: Գրադարանի կանոնավոր համալրման մեխանիզմ չկա, այն լրացվում է առանձին մարդկանցից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը ստանում է մամուլ շաբաթը մեկ անգամ:

Առաջարկություններ

256) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

257) *Գրադարանում ավելացնել գրապահարանների քանակը:*

Սնունդ

Ճաշարան

«Էրեբունի» ՔԿՀ-ում գործում է ճաշարան, որը միաժամանակ կարող է սպասարկել մինչև 180 դատապարտյալի, ինչը նշանակում է, որ ճաշարանը պետք է սպասարկի բոլոր դատապարտյալներին 4 հերթափոխով:

Ճաշարանի մակերեսը մոտ 100 քմ է, տեղադրված են 18 սեղան և 36 նստարան: Սեղանները և նստարանները հին են:

Դիտարկման պահին ճաշացանկը փակցված չէր:

Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Ճաշարանում ստեղծված չէ ուտելուց առաջ լվացվելու հնարավորություն:

Ընդհանուր առմամբ՝ ճաշարանը հիմնանորոգման կարիք ունի:

Առաջարկություններ

258) *Հիմնանորոգել ճաշարանը:*

259) *Ճաշարանում տեղադրել նոր սեղան-աթոռ:*

260) *Կազմակերպել ջեռուցում:*

261) *Սարքավորել օդափոխության համակարգով:*

262) *Տեղադրել լվացարաններ:*

Խոհանոց

«Էրեբունի» ՔԿՀ-ի խոհանոցը բաղկացած է հացի կտրման, ճաշերի եփման, սպասքի լվացման և բանջարեղենի մաքրման բաժիններից, պահեստից, սառնարանային մասից: Խոհանոցում դժվար է անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովել՝ այն ունի հիմնանորոգման կարիք: Ճաշ պատրաստելու համար հիմնարկում օգտագործվում են էլեկտրական կաթսաներ և սալօջախներ: Տեխնիկական միջոցներից հիմնարկը ունի նաև խորհրդային արտադրության կարտոֆիլամաքրիչ սարք, որը սակայն հաճախակի փչանում է:

Քանի որ հիմնարկի ջրամատակարարումը մշտական չէ, խոհանոցում ստեղծվում են ջրի

պաշարներ: Տաք ջրամատակարարում ապահովելու համար տեղադրված են բաքեր:

Առաջարկություններ

263) *Հիմնանորոգել խոհանոցը:*

264) *Ապահովել խոհանոցը նոր տեխնիկայով:*

Սննդի որակ

«Էրեբունի» ՔԿՀ-ի ազատազրկվածները հիմնականում դժգոհում են տրվող հացի որակից՝ նշելով, որ այն լինում է թաց: Նաև նշվում էր, որ վերջերս ճաշերում օգտագործվում է մսի պահածո, որն իր որակով զիջում է թարմ մսին:

Ազատազրկվածների մեծ մասն օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից:

Առաջարկություններ

265) *Բարձրացնել սննդի որակը:*

Պատիժներ

Հիմնարկում գործում է 8 պատժախուց: Ըստ հիմնարկի պետի՝ պատժախուց տեղավորելու հիմնական պատճառը ալկոհոլ օգտագործելն է: «Էրեբունի» ՔԿՀ-ում ազատազրկվածներին պատժախցով պատժի կիրառումը համեմատաբար բարձր տոկոս է կազմում: Հիմնարկի ղեկավարությունը դա բացատրում է պետի՝ խախտումների նկատմամբ խիստ վերաբերմունքով:

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Ըստ հիմնարկի պետի՝ հիմնարկում տարեկան գրանցվում է հատուկ միջոցների կիրառման 1-2 դեպք:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Բուժզննություն

Քանի որ հիմնարկում պահվում են միայն դատապարտյալներ, նոր ազատազրկվածներն այստեղ են բերվում այլ ՔԿՀ-ներից, այդ իսկ պատճառով թարմ վնասվածքներ ազատազրկվածների մոտ գրեթե չեն հայտնաբերվում: Հիմնարկի պետը հավաստիացրեց, որ վնասվածքների առկայության դեպքում ազատազրկվածը չի ընդունվի հիմնարկ: Այցելության պահին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից հիմնարկ էին բերվել դատապարտյալներ, որոնցից մեկը տառապում էր հազվագյուտ՝ փղախտ հիվանդությամբ (հիվանդի ոտքերն այտուցվում են, այդ պատճառով նա կարող է շարժվել միայն հենակների օգնությամբ): Բժշկի միջնորդությամբ և հիմնարկի պետի որոշմամբ՝ այդ դատապարտյալը հետ ուղարկվեց «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

Վերաբերմունք

«Էրեբունի» ՔԿՀ-ի աշխատակազմի կողմից վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ Դիտորդների խումբը դատապարտյալների կողմից բողոքներ չի ստացել:

Անձնակազմ

Հիմնարկը, ըստ հաստիքացուցակի, ունի 191 աշխատող, որից 2008 թ. վերջին թափուր

էին ինը: Այդ թվի մեջ ներառված է նաև արտաքին պահպանություն իրականացնող աշխատակազմը: Աշխատակազմի մեծ մասը բնակվում է շրջաններում՝ Կոշ, Թալին, և նրանք ամեն օր այնտեղից գալիս են աշխատանքի: Չնայած հաստիքները գրեթե համալրված են, սակայն հատկապես արտաքին պահպանություն իրականացնող աշխատակազմի հաստիքները չեն բավարարում: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ ամեն հերթափոխ պետք է ունենա երեք օղակ (պահակակետում ծառայություն իրականացնող, արթուն, հանգստացող), սակայն, ըստ հաստիքացուցակի, դրանք ներկայումս երկուսն են:

Ինչպես և բոլոր հիմնարկներում, աշխատակազմի հիմնական խնդիրը համարվում էր ցածր աշխատավարձը:

Առաջարկություն

266) *Ավելացնել հիմնարկի աշխատակազմի հաստիքները:*

«Սևան»
քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Սևան» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտյալներին պահելու համար: Այն դեռևս խորհրդային տարիներից չի վերակառուցվել, և ազատազրկվածները այստեղ պահվում են հանրակացարաններում, որոնք տեղակայված են չորս երկհարկանի մասնաշենքերում:

Քանի որ հիմնարկը հանրակացարանային տիպի է, այն հնարավորություն ունի միայն բաց և կիսաբաց ուղղիչ հիմնարկների պայմաններ ապահովելու: Սակայն, ըստ լրակազմի, հիմնարկում կարող են պահվել.

- փակ ուղղիչ հիմնարկ - 50 մարդ
- կիսափակ ուղղիչ հիմնարկ - 450 մարդ
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 33 մարդ
- բաց ուղղիչ հիմնարկ - 15 մարդ

Հիմնարկը մշտապես ունեցել է ջրամատակարարման խնդիր: Վերջին տարվա ընթացքում հիմնարկի ուժերով մոտ 500 մ ջրագիծ է անցկացվել, ինչի արդյունքում իրավիճակը որոշ չափով շտկվել է: Ներկայումս հիմնարկը ջրամատակարարմամբ ապահովված է օրական 4-6 ժամով: Այդ ընթացքում ջուրը կուտակվում է համապատասխան տարողություններում, որտեղից մղվում է անհրաժեշտ ուղղությամբ:

Հիմնարկը չունի առանձին կաթսայատուն, և ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերի միջոցով, ինչը բավարար չէ անհրաժեշտ ջերմաստիճան ապահովելու համար:

Հիմնարկն ունի մեկ ընդհանուր զուգարան, որը գտնվում է անմխիթար հակասանիտարական վիճակում: Այն չի ջեռուցվում, ինչի արդյունքում ձմռան ամիսներին հաճախակի սառչում է կոյուղին:

Առաջարկություններ

267) *Հիմնովին վերակառուցել կամ փակել հիմնարկը:*

268) *Վերանորոգել զուգարանը:*

Հանրակացարաններ

«Սևան» ՔԿՀ-ում ազատազրկվածները պահվում են չորս մասնաշենքում գտնվող հանրակացարաններում: Այնտեղ դատապարտյալները պահվում են մեծ սենյակներում՝ յուրաքանչյուրում մի քանի տասնյակ մարդ, ինչը չի համապատասխանում Քրեակատարողական օրենսգրքի[38] պահանջներին:

38 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 105:

Հիմնարկում չկա կենտրոնացված ջեռուցում, և հանրակացարանների ջեռուցման համար օգտագործվում են ազատազրկվածների հարազատների բերած էլեկտրական սարքեր, որոնք, հաշվի առնելով կացարանների մեծ մակերեսը և այն, որ հիմնարկը տեղակայված է խիստ բնակլիմայական պայմաններ ունեցող տեղանքում, չեն կարող ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան:

Հանրակացարաններում չկան սանհանգույցներ՝ զուգարանը և լվացարանը ընդհանուր են ամբողջ հիմնարկի համար:

Առաջարկություններ

269) *Վերափոխել կացարանները խցերի:*

270) *Ապահովել առանձին սանհանգույցներ կացարաններում:*

271) *Ապահովել կացարանների ջեռուցումը:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

«Սևան» ՔԿՀ-ն ունի մեկ կարճատև տեսակցությունների սենյակ: Սենյակն ունի մոտ 25 քմ մակերես, այնտեղ տեղադրված են երկու սեղան, հինգ աթոռ և նստարաններ: Միաժամանակ հնարավոր է անցկացնել 2-3 տեսակցություն:

Տեսակցությունների ընթացքում կա անմիջական շփման հնարավորություն: Բնական լուսավորությունը բավարար չէ՝ սենյակը ունի մեկ փոքր պատուհան, որը չի ապահովում անհրաժեշտ լուսավորություն: Այդ պատճառով սենյակում մշտապես միացված է էլեկտրական լուսավորությունը:

Սենյակի ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերով:

Հիմնարկը չունի մանկահասակ երեխաների հետ տեսակցելու առանձին սենյակ, որը հնարավորություն կտար երեխաների հետ տեսակցությունները կազմակերպել՝ հեռու պահելով նրանց բանտի մթնոլորտից:

Տեսակցությունների սենյակը չունի սանհանգույց, որից անհրաժեշտության դեպքում կարող են օգտվել տեսակցության մասնակիցները:

Առաջարկություններ

272) *Կառուցել տեսակցությունների մասնակիցներին հասանելի սանհանգույց:*

273) *Կառուցել և կահավորել առանձին սենյակ մանկահասակ երեխաների հետ տեսակցություն կազմակերպելու համար:*

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար «Սևան» ՔԿՀ-ում նախատեսված է 8 սենյակ: Սենյակների մակերեսը կազմում է 15-20 քմ, բոլոր սենյակներն ունեն վերանորոգման և կահավորման կարիք: Սենյակներն իրենց կահավորանքով տարբերվում են միմյանցից: Սենյակներում կան սեղան, բազմոց, մահճակալ, պահարան, որոշ սենյակներում՝ հեռուստացույց, DVD: Եղած գույքը հին է: Երկարատև տեսակցության սենյակների բնական լուսավորությունը բավարար է: Ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերով: Սենյակներում չկա առանձին սանհանգույց: Սենյակներին կից գործում են երկու ընդհանուր զուգարան (կանանց և տղամարդկանց համար առանձին) և բաղնիք, որտեղ տեղադրված է 700 լիտր տարողությամբ բաք:

Ընդհանուր է նաև խոհանոցը, որտեղ տեղադրված են 2 սառնարան և էլեկտրական սալօջախ: Խոհանոցն ունի ջրի ծորակ, սակայն քանի որ ջրամատակարարումը մշտական չէ, այնտեղ ստեղծվում են նաև ջրի պաշարներ: Խոհանոցն ընդհանուր առմամբ հակասանիտարական վիճակում է:

Մաքուր օդ դուրս գալու հնարավորություն «Սևան» ՔԿՀ-ի երկարատև տեսակցության սենյակներում չկա, ինչը նշանակում է, որ տեսակցության եկածները երեք օր պետք է գտնվեն սենյակներում:

Առաջարկություններ

274) *Վերանորոգել երկարատև տեսակցության սենյակները:*

275) *Վերանորոգել խոհանոցը՝ ապահովելով այն անհրաժեշտ սպասքով և կահավորանքով:*

276) *Ստեղծել տեսակցողների համար մաքուր օդ դուրս գալու հնարավորություն:*

Հեռախոսակապ

«Սևան» ՔԿՀ-ում տեղադրված են ավտոմատ հեռախոսներ, և գործում է հեռախոսակապ, որից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ առանց սահմանափակման: Հեռախոսների աշխատանքից դժգոհություններ չկան: Հեռախոսային քարտերը դատապարտյալները կարող են գնել հիմնարկի կրպակից:

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Սևան» ՔԿՀ-ում գտնվում է վարչական մասնաշենքի առաջին հարկում: Հանձնուքի ընդունումը և զննությունը կատարվում են մոտ 10 քմ մակերես ունեցող սենյակում: Հիմնարկը ստացել է հանձնուքի զննության ժամանակակից սարք, սակայն 2008 թվականի վերջի դրությամբ այն դեռևս միացված չէր: Դատապարտյալների հարազատները փոխանցում են հանձնուքը պատուհանից: Միջանցքը, որտեղ սպասում են հարազատները, չի ջեռուցվում: Պատերին հանձնուքի ընդունման կարգը պարզաբանող որևէ փաստաթուղթ փակցված չէ:

Առաջարկություններ

277) *Կահավորել և ջեռուցել սպասասրահը:*

278) *Հանձնուքի ընդունման կետում փակցնել անհրաժեշտ փաստաթղթեր:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Սևան» ՔԿՀ-ում գործում է մեկ բաղնիք: Այն ունի հանդերձարան, ուր տեղադրված են կախիչներ: Լոգասենյակը սալիկապատ է, ունի 12 ցնցուղ: Տաք ջրամատակարարում ապահովելու համար տանիքում տեղադրված է 5 տոննա տարողությամբ բաք: Բաղնիքն աշխատում է ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ լոգանքի հստակ ժամանակացույց չի գործում, վտանգ կա, որ որոշ դատապարտյալներ կարող են ընդհանրապես զրկվել լոգանք ընդունելու հնարավորությունից:

Հիմնարկի լոգարանին կից գործում են համապատասխան սարքավորումներով ապահովված լվացքատուն, չորանոց, վարսավիրանոց, կոշկակարի և դերձակի արհեստանոցներ:

Առաջարկություններ

279) *Վերանորոգել և կահավորել հանդերձարանը:*

280) *Սահմանել ազատազրկվածների լոգանք ընդունելու հստակ ժամանակացույց:*

Բուժսպասարկումը

Բուժմաս. ընդհանուր վիճակը

«Սևան» ՔԿՀ-ի բուժմասը գտնվում է ազատազրկվածներին պահելու գոտու տարածքում, առանձին մասնաշենքում: Այն ունի 8 հիվանդասենյակ և միջամտությունների սենյակ: Հիվանդասենյակները կոսմետիկ վերանորոգվել են: Այնուամենայնիվ հիվանդասենյակների հատակը բետոնից է, ինչն անընդունելի է հատկապես հիվանդասենյակների համար: Ջեռուցումը հիվանդասենյակներում կատարվում է էլեկտրական սարքերով, որոնք չեն ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան:

Առաջարկություններ

281) *Հիմնանորոգել բուժմասը:*

Բուժանձնակազմ

«Սևան» ՔԿՀ-ի բուժանձնակազմը համալրված է մասնակի: Նախատեսված 10 հաստիքից համալրված են վեցը: Հիմնարկն ունի 3 բժշկի (այդ թվում՝ ատամնաբույժի) և մեկ բուժակի թափուր տեղ:

Առաջարկություններ

282) *Համալրել բուժմասի աշխատակազմը:*

Սարքավորումներ

«Սևան» ՔԿՀ-ի բուժմասի ապահովվածությունը բուժսարքավորումներով չափազանց ցածր է: Անհրաժեշտություն կա ինչպես ԷԿԳ սարքի, ատամնաբուժական աթոռի, այնպես էլ տարրական բժշկական գործիքների:

Առաջարկություններ

283) *Ապահովել հիմնարկն անհրաժեշտ բուժսարքավորումներով:*

Զբաղվածություն

«Սևան» ՔԿՀ-ում ազատազրկվածների զբաղվածությունը հիմնականում ապահովվում է տնտեսական մասի աշխատանքներին ներգրավվելու միջոցով: Հիմնարկում դատապարտյալներն ունեն սպորտով զբաղվելու հնարավորություն՝ խաղում են ֆուտբոլ, սեղանի թենիս: Գործում է գրադարան, հանրակացարաններում կան նաև ազատազրկվածների հարազատների բերած հեռուստացույցներ, վիդեո- և աուդիո փլեյերներ և այլ տեխնիկա:

Գրադարան

«Սևան» ՔԿՀ-ի գրադարանի տարածքը կազմում է 20 քմ, ուր պահվում է 2200 կտոր գիրք: Գրքերի հիմնական մասը պահպանվել է դեռևս խորհրդային տարիներից, ինչի արդյունքում մեծ է այն ժամանակաշրջանին բնորոշ կոմունիստական գաղափարախոսություն քարոզող

գրականության բաժինը, որը ներկայումս ընթերցողին չի հետաքրքրում:

Ազատազրկվածները գիրք կարող են ընտրել տեղում՝ այցելելով գրադարան: Գրադարանը չունի առանձին ընթերցասրահ: Չի բավարարում գրքերի պահպանման համար գրապահարանների քանակը: Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չկա, այն լրացվում է առանձին մարդկանցից և բարեգործական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը ստանում է մամուլ:

Առաջարկություններ

284) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությունով:*

285) *Գրադարանում ավելացնել գրապահարանների քանակը:*

Սնունդ

Ճաշարան

«Սևան» ՔԿՀ-ում գործում է ճաշարան, որը միաժամանակ կարող է սպասարկել մինչև 300 դատապարտյալի, ինչը նշանակում է, որ ճաշարանը պետք է սպասարկի բոլոր դատապարտյալներին երկու հերթափոխով:

Ճաշարանի մակերեսը մոտ 200 քմ է, տեղադրված են 20 սեղան և 40 նստարան: Սեղանները և նստարանները հին են:

Ճաշացանկը փակցված է:

Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Ճաշարանի սանիտարական վիճակը բավարար չէ:

Ընդհանուր առմամբ՝ ճաշարանը հիմնանորոգման կարիք ունի:

Առաջարկություններ

286) *Հիմնանորոգել ճաշարանը:*

287) *Ճաշարանում տեղադրել նոր սեղան, աթոռներ:*

288) *Կազմակերպել ջեռուցում:*

289) *Սարքավորել օդափոխության համակարգ:*

Խոհանոցը

«Սևան» ՔԿՀ-ի խոհանոցը վերջերս է վերանորոգվել: Այն բաղկացած է հացի կտրման, ճաշերի եփման, սպասքի լվացման և բանջարեղենի մաքրման բաժիններից, պահեստից, սառնարանային մասից: Ճաշի պատրաստման համար օգտագործվում են էլեկտրական կաթսաներ և սալօջախներ: Տեխնիկական միջոցներից հիմնարկն ունի նաև խորհրդային արտադրության կարտոֆիլամաքրիչ սարք:

Քանի որ հիմնարկի ջրամատակարարումը մշտական չէ, ստիպված խոհանոցում հավաքում են ջրի պաշար: Տաք ջրամատակարարում ապահովելու համար տեղադրված են բաքեր:

Խոհանոցում չկա օդափոխության համակարգ:

Առաջարկություններ

290) *Խոհանոցում տեղադրել օդափոխության համակարգ:*

Սննդի որակ

«Սևան» ՔԿՀ-ի ազատազրկվածների կարծիքով՝ սննդի որակը վերջին շրջանում որոշ չափով բարելավվել է, սակայն դեռևս հեռու է բավարար լինելուց: Ազատազրկվածների մեծ մասն օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդամթերքից:

Առաջարկություններ

291) *Բարձրացնել սննդի որակը:*

Պատիժներ

«Սևան» ՔԿՀ-ում գործում է 7 պատժախուց: Դիտարկման պահին պատժախցերում գտնվում էր 8 դատապարտյալ: Ըստ հիմնարկի պետի՝ պատժախուց տեղավորելու պատճառը ներքին կանոնակարգի խախտումն է, հիմնականում՝ ալկոհոլ օգտագործելը, բջջային հեռախոս ունենալը:

Դիտարկված պատժախցի մակերեսը կազմում է 18 քմ: Խցում գտնվում էր 2 դատապարտյալ, մահճակալների քանակը՝ 3: Պատժախցի հատակը փայտից է: Պատին փակցված է իրավունքների և պարտականությունների ցուցակը: Ջեռուցումը կատարվում է էլեկտրական սալիկի միջոցով, որը չի ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան:

Պատժախցի բնական լուսավորությունը բավարար չէ: Այն ապահովող 2 պատուհաններից մեկի ապակին կոտրված էր ու ծածկված շորով:

Ամենօրյա զբոսանքից պատժախցում պահվող դատապարտյալները չեն օգտվում:

Առաջարկություններ

292) *Ապահովել պատժախցերի բավարար ջեռուցում:*

293) *Ապահովել պատժախցերում բավարար բնական լուսավորություն:*

294) *Ապահովել պատժախցերում պահվող դատապարտյալների ամենօրյա զբոսանքը:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Ըստ հիմնարկի պետի՝ հիմնարկում վերջին մեկ տարվա ընթացքում հատուկ միջոցների կիրառման դեպք չի գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Հիմնարկում պահվում են միայն դատապարտյալներ, և նոր ազատազրկվածները հիմնարկ են բերվում միայն այլ քրեակատարողական հիմնարկներից: Այդ իսկ պատճառով հիմնարկում չեն գրանցվում դեպքեր, երբ նոր բերված ազատազրկվածների մոտ հայտնաբերվեն մարմնական վնասվածքներ:

Կարանտինային խուց

Կարանտինային խուցը կիսակառույց է, այդ իսկ պատճառով նոր բերված դատապարտյալների հետ չեն անցկացվում կարանտինային միջոցառումներ, և նրանք անմիջապես հայտնվում են ընդհանուր հանրակացարանում:

Առաջարկություններ

295) *Կառուցել կարանտինային խցեր:*

Վերաբերմունք

«Սևան» ՔԿՀ-ի անձնակազմի կողմից վատ վերաբերմունքի դեպքեր Դիտորդների խումբը 2008 թվականի ընթացքում չի արձանագրել:

Անձնակազմ

«Սևան» ՔԿՀ-ի հաստիքները գրեթե համալրված են: Սակայն հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների թիվը չի բավարարում աշխատանքների կազմակերպման համար: Մասնավորապես՝ պահպանությունը իրականացնող աշխատակիցներից մեկի արձակուրդ գնալն առաջացնում է խնդիրներ աշխատանքների կազմակերպման հարցում: Արդյունքում՝ պահպանությունը կազմակերպվում է երկու հերթափոխով և ոչ թե երեք, ինչպես նախատեսված է: Սա մի կողմից բերում է աշխատակիցների ծանրաբեռնվածության ավելացմանը, մյուս կողմից՝ արտակարգ իրավիճակների դեպքում անհնար կլինի կազմակերպել անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

Ինչպես և բոլոր հիմնարկներում, աշխատակազմի հիմնական խնդիրը համարվում է ցածր աշխատավարձը:

Առաջարկություններ

296) *Ավելացնել հիմնարկի հաստիքները:*

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Կոշ» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտյալներին պահելու համար: Այն դեռևս խորհրդային տարիներից չի վերակառուցվել, և ազատազրկվածներն այստեղ պահվում են հանրակացարաններում, որոնք տեղակայված են երեք եռահարկ մասնաշենքերում:

Հիմնարկում, ըստ լրակազմի, կարող է պահվել 640 մարդ: Քանի որ հիմնարկը հանրակացարանային տիպի է, հնարավորություն ունի միայն բաց և կիսաբաց ուղղիչ հիմնարկների պայմաններ ապահովելու: Սակայն, ըստ լրակազմի, հիմնարկում կարող են պահվել.

- կիսափակ ուղղիչ հիմնարկ 570 մարդ
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ 45 մարդ
- բաց ուղղիչ հիմնարկ 25 մարդ

Հիմնարկի ջրամատակարարումը մշտական չէ, ջուրը շաբաթական 2 անգամ մղվում է ջրահավաքման ավազան, դրանով ապահովվում է ջրի խնդիրը:

Գազամատակարարում հիմնարկը չունի, այդ իսկ պատճառով չկա նաև կենտրոնացված ջեռուցման համակարգ: Ներկայումս «Կոշ» ՔԿՀ-ի ջեռուցումը իրականացվում է էլեկտրական սալիկներով:

Հանրակացարաններ

«Կոշ» ՔԿՀ-ի դատապարտյալները պահվում են երեք մասնաշենքում տեղավորված հանրակացարաններում՝ 2 մեծ և 1 փոքր: Դրանք եռահարկ շինություններ են: Դատապարտյալները պահվում են տարբեր չափսերի սենյակներում, յուրաքանչյուրում՝ 10-60 մարդ, ինչը չի համապատասխանում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի[39] պահանջներին:

Հանրակացարաններին կից՝ 125 քմ մակերեսով առանձին մասնաշենքում գտնվում են նոր վերանորոգված 36 տեղանոց զուգարանները և լվացարանների սենյակը:

Բոլոր հանրակացարանների առաջին հարկում կա կահավորված նախասրահ, որտեղ տեղադրված են հեռուստացույց, բազմոց, բազկաթոռներ: Սենյակները նախատեսված են հանգստի համար:

Հանրակացարանների ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է: Հանրակացարանների ջեռուցումը կատարվում է էլեկտրական սալիկներով, որոնք չեն կարող ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան: Հանրակացարանների բնական և արհեստական լուսավորությունը բավարար է:

Առաջարկություններ

297) *Հիմնովին վերակառուցել հիմնարկը՝ ապահովելով օրենսդրությամբ նախատեսված ազատազրկվածների պահման խցային տիպ:*

39 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 105:

298) *Բարելավել հիմնարկի ջեռուցումը:*

Կապ արտաքին աշխարհի հետ

Տեսակցությունների սենյակները «Կոշ» ՔԿՀ-ում վերանորոգվել են 2008 թվականի ընթացքում և գտնվում են լավ վիճակում:

Կարճատև տեսակցություններ

Կարճատև տեսակցությունների համար «Կոշ» ՔԿՀ-ում գործում է մեկ սենյակ: Սենյակը լուսավոր է, ունի մոտ 35 քմ մակերես: Կահավորված է նոր բազկաթոռներով, սեղաններով: Սանհանգույցը գտնվում է սենյակի հարակից տարածքում և հասանելի է տեսակցության մասնակիցների համար: Տեսակցությունների ընթացքում ազատազրկվածների և նրանց հարազատների միջև կա անմիջական շփման հնարավորություն:

Սենյակը ջեռուցվում է էլեկտրական սալիկներով:

Երկարատև տեսակցություններ

Երկարատև տեսակցությունների համար «Կոշ» ՔԿՀ-ում գործում է 12 վերանորոգված սենյակ: Տարածքում կան նաև մեկ բազմոցով կահավորված հանգստի սենյակ և մեկ խաղասենյակ երեխաների համար: Երկարատև տեսակցությունների սենյակների միջին մակերեսը 18 քմ է: Սենյակները լուսավոր են, ջեռուցվում են էլեկտրական սալիկներով: Կահավորանքը լավ է՝ սենյակներում տեղադրված է նոր կահույք՝ մահճակալ, սեղան, աթոռներ: Սենյակների հատակը փայտից է: Սանհանգույցը և խոհանոցը բոլոր 12 սենյակների համար ընդհանուր են: Կա առանձին զուգարան կանանց համար: Խոհանոցում կան սառնարան, համապատասխան գույք, լվացարան, սպասք:

Հեռախոսակապ

«Կոշ» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որը գտնվում է առանձին մասնաշենքում: Այնտեղ տեղադրված են 2 ավտոմատ հեռախոս, որից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ ժամը 19:00-23:00-ը, 15-20 րոպե տևողությամբ: Ցերեկային ժամերին ազատազրկվածները չունեն հեռախոսից օգտվելու հնարավորություն: Հեռախոսների աշխատանքից դժգոհություն չկար:

Առաջարկություններ

299) *Վերացնել հեռախոսից օգտվելու ժամերի սահմանափակումը:*

Հանձնուքներ

Հանձնուքի ընդունման կետը «Կոշ» ՔԿՀ-ում 18 քմ մակերեսով սենյակ է: Սենյակում կան 2 սեղան, 2 նստարան: Դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են այդ սենյակից: Հերթեր գրեթե չեն առաջանում, միայն տոն օրերին: Սենյակի պատին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդամթերքի ու իրերի ցանկը և կարգը:

Հանձնուքի զննումը կատարվում է ժամանակակից «Ռապիսքան» սարքով:

Խմելու ջուրը, զուգարանը գտնվում են վարչական շենքում:

Առաջարկություններ

300) *Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Կոշ» ՔԿՀ-ը ունի մեկ բաղնիք: Ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ: Հիմնարկի բաղնիքի ընդհանուր մակերեսը 85 քմ է, որից 25 քմ տարածքը հատկացված է հանդերձարանին, իսկ 60 քմ-ն՝ լողասենյակին: Հանդերձարանում կան նստարաններ և կախիչներ: Լողասենյակն ունի 17 լողախցիկ, որտեղ գործում է 8 ցնցուղ: Տաք ջրամատակարարումն ապահովվում է 9 տոննա տարողությամբ բաքով, որը տաքացվում է էլեկտրաէներգիայով: Բաղնիքի տարածքում չկա զուգարան: Բաղնիքում կա առանձին լվացարանների սենյակ՝ 5 լվացարանով:

«Կոշ» ՔԿՀ-ի բաղնիքի մասնաշենքը հիմնանորոգման կարիք ունի:

Առաջարկություններ

301) *Հիմնանորոգել բաղնիքի մասնաշենքը:*

302) *Բաղնիքին կից կառուցել զուգարան:*

Բուժսպասարկումը

Բուժմաս. ընդհանուր վիճակը

«Կոշ» ՔԿՀ-ի բուժմասը գտնվում է առանձին մասնաշենքում և ունի մոտ 80 քմ տարածք: Բուժմասը բաղկացած է հիվանդների ընդունման սենյակից, միջամտությունների սենյակից, սանհանգույցից, փոքր գրադարանից, յոթ հիվանդասենյակներից, որոնք վերջին շրջանում վերանորոգվել են:

Մեկ օրվա ընթացքում բժշկական զննություն անցնում է 20 ազատազրկված:

Բուժմասի պետի խոսքով՝ 2008 թվականի ընթացքում գրանցվել է 17 ինքնավնասման դեպք, որոնք ստացել են լիարժեք բուժօգնություն: Բուժմասի մասնաշենքն ունի հիմնանորոգման կարիք:

Առաջարկություններ

303) *Հիմնանորոգել բուժմասի մասնաշենքը:*

Համալրվածություն

«Կոշ» ՔԿՀ-ում աշխատում են երկու սպա բժիշկ, մեկ քաղաքացիական բժիշկ և մեկ բուժակ: Անձնակազմի չհամալրվածության պատճառով հիմնարկում չի կազմակերպվում գիշերային հերթապահություն: Բուժանձնակազմն ունի 3 բուժակի և 1 բժիշկ մասնագետի կարիք:

Առաջարկություններ

304) *Համալրել բուժմասը համապատասխան մասնագետներով:*

Սարքավորումներ

Վերջին տարվա ընթացքում «Կոշ» ՔԿՀ-ն ստացել է նոր ժամանակակից ատամնաբուժական աթոռ: Այդուամենայնիվ, հիմնարկի ընդհանուր հագեցվածությունը բուժսարքավորումներով բավարար չէ: Բուժմասի պետի պնդմամբ՝ բուժմասը ֆիզիոթերապևտիկ սարքավորումների կարիք ունի:

Առաջարկություններ

305) *Համալրել բուժմասը անհրաժեշտ բժշկական սարքավորումներով:*

Զբաղվածությունը

Դատապարտյալներին աշխատանքով ապահովման խնդիրը «Կոշ» ՔԿՀ-ում լուծված է միայն տնտեսական մասի դատապարտյալների համար: Այլ աշխատանքով զբաղվելու հնարավորություն հիմնարկում չկա:

Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու համար առանձին մասնաշենքում կահավորված է հանգստի սենյակ, որտեղ դատապարտյալները զբաղվում են սեղանի խաղերով (շախմատ, շաշկի, նարդի):

Գրադարան

«Կոշ» ՔԿՀ-ում գործում է գրադարան: Գրքերի քանակը կազմում է 4700 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը կազմում է 50 քմ: Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, այն լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանից օգտվում է մոտ 220 մարդ: Գրադարանը մամուլ չի ստանում:

Առաջարկություններ

306) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրքերով:*

307) *Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:*

Սնունդ

Ճաշարան

«Կոշ» ՔԿՀ-ի ճաշարանը գտնվում է առանձին մասնաշենքում, որի մակերեսը 100 քմ է: Ճաշարանում կան 22 սեղան, 44 նստարան: Ճաշարանի բնական լուսավորությունը բավարար է: Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում, բացակայում է օդափոխության համակարգը:

Ճաշատեսակների ցանկը փակցված է: Դատապարտյալներն օգտվում են անձնական սպասքից:

Առաջարկություններ

308) *Հիմնանորոգել ճաշարանը:*

Խոհանոց

«Կոշ» ՔԿՀ-ի խոհանոցի մակերեսը մոտ 60 քմ է: Այն վերջին շրջանում մասնակի վերանորոգվել է: Խոհանոցը բաղկացած է հացի կտրման, եփման, սպասքի լվացման և բանջարեղենի մաքրման բաժիններից, պահեստից, սառնարանային մասից: Ճաշի պատրաստման համար հիմնարկում օգտագործվում են էլեկտրական կաթսաներ և սալօջախներ:

Օդափոխության համակարգի բացակայության պատճառով խոհանոցի առաստաղը խոնավանում է, որից ծեփը թափվում է:

Ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի՝ օրական 2 անգամ 4 ժամով:

Ջուրը տաքացնում են կաթսաներում:

Առաջարկություններ

309) *Խոհանոցում ապահովել օդափոխության համակարգ:*

Սննդամթերքի որակ

«Կոշ» ՔԿՀ-ի ազատազրկվածները սննդամթերքի որակը համարում էին բավարար, սակայն նրանց մեծ մասն օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդամթերքից: Հացի որակը ազատազրկվածները գնահատում են անբավարար:

Առաջարկություններ

310) *Բարելավել հացի որակը:*

Պատիժներ

«Կոշ» ՔԿՀ-ի պատժախցերը գտնվում են առանձին մասնաշենքում: Պատժախցերը չորսն են: Կից կառուցված է մոտ 45 քմ տարածքով զբոսահրապարակ: Զբոսահրապարակում տեղադրված է 2 երկաթե նստարան:

Պատժախցերը միատիպ են՝ 18 քմ մակերեսով: Պատժախցում կային 5 մահճակալ, մեկ սեղան, բոլորը՝ մետաղյա: Զուգարանը բավարար մեկուսացված չէ: Բնական լուսավորությունը պատժախցերում բավարար չէ, ինչի պատճառով արհեստական լուսավորությունը մշտապես միացված է: Ջեռուցումն ապահովվում է էլեկտրական սալիկներով: Իրավունքների և պարտականությունների ցուցակը փակցված է:

Ազատազրկվածներն օգտվում են ամենօրյա զբոսանքի իրավունքից:

Առաջարկություններ

311) *Ապահովել խցերում բավարար բնական լուսավորություն:*

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Ըստ հիմնարկի ղեկավարության՝ վերջին մեկ տարվա ընթացքում «Կոշ» ՔԿՀ-ում գրանցվել է հատուկ միջոցների կիրառման երեք դեպք՝ աշխատակցի օրինական պահանջներին չենթարկվելու պատճառով:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Հիմնարկում պահվում են միայն դատապարտյալներ, և նոր ազատազրկվածները հիմնարկ են բերվում միայն այլ քրեակատարողական հիմնարկներից: Այդ իսկ պատճառով, հիմնարկի պետի խոսքով, իրենց մոտ չեն գրանցվում դեպքեր, երբ նոր բերված ազատազրկվածների մոտ հայտնաբերվեն մարմնական վնասվածքներ:

Կարանտինային խուց

«Կոշ» ՔԿՀ-ն չունի կարանտինային խուց, այդ պատճառով նոր բերված դատապարտյալների հետ չեն անցկացվում կարանտինային միջոցառումներ, և նրանք միանգամից հայտնվում են ընդհանուր հանրակացարանում:

Առաջարկություններ

312) *Կառուցել կարանտինային խցեր:*

Վերաբերմունք

«Կոշ» ՔԿՀ-ի անձնակազմի կողմից վատ վերաբերմունքի դեպքեր Դիտորդների խումբը 2008 թվականի ընթացքում չի արձանագրել:

Անձնակազմ

«Կոշ» ՔԿՀ-ն աշխատակազմի լրացման կարիք ունի: Այցելության պահին հիմնարկում աշխատում էր 173 մարդ՝ հաստիքացուցակով նախատեսված 186 աշխատողի փոխարեն:

«Կոշ» ՔԿՀ-ն ունի 3 օպերատիվ աշխատակցի, 1 հետաքննիչի, 3 բուժակի, 1 բժշկի, 1 առաջատար մասնագետի, 1 քաղպաշտպանության աշխատակցի և 4 անվտանգության բաժնի աշխատակիցների կարիք:

Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է:

Առաջարկություններ

313) *Համալրել թափուր հաստիքները:*

«Մեղրի» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Մեղրի» քրեակատարողական հիմնարկը քրեակատարողական համակարգում միակ հիմնարկն է, որտեղ դատապարտյալները պահվում են միայն բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում: Հիմնարկը տեղակայված է ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր գյուղից 7 կիլոմետր հեռավորության վրա սահմանամերձ գոտում:

Ազատազրկվածների հանրակացարանը տեղակայված է մոտ 60 քմ ընդհանուր մակերես ունեցող նախկին երկաթգծի կայարանի շենքում, որը բաժանված է երկու մասի: Մի մասը ծառայում է դատապարտյալների համար որպես ընդհանուր ննջարան, իսկ մյուս հատվածը հարմարեցված է որպես պահեստային, խոհանոցային և ճաշարանային մաս: Որոշ դատապարտյալներ բնակվում են Նռնաձոր գյուղում գտնվող հիմնարկին պատկանող պահեստում: Հիմնարկի վարչական շենքը նույնպես գտնվում է Նռնաձոր գյուղում: Շինությունները չեն գտնվում արդարադատության նախարարության հաշվեկշռում, ինչի պատճառով նախարարության կողմից հնարավոր չէ այստեղ որևէ վերանորոգման աշխատանքներ կատարել:

Հիմնարկի զուգարանը դրսում է՝ հանրակացարանից 10 մ հեռավորության վրա: Այն կիսախարխուլ վիճակում է և ամբողջովին կեղտով լցված: Զուգարանի անմիջապես դիմաց դրված է 800 լիտր ծավալով ջրի տարողություն, որն էլ դատապարտյալների միակ ջրի աղբյուրն է: Այդ ջուրն օգտագործվում է և՛ խմելու, և՛ կենցաղային նպատակներով: Ջուրը բերվում է 7 օրը մեկ անգամ: Հիմնարկում բացակայում են լողանալու, լվացքի, անգամ լվացվելու տարրական հարմարություններ, ինչի պատճառով դատապարտյալների լոգանքը կազմակերպվում է հիմնարկի պետի Նռնաձոր գյուղում գտնվող սեփական տան բաղնիքում:

Հակասանիտարական անմխիթար վիճակում է նաև խոհանոցը: Լրակազմով նախատեսված 50 հոգու համար կա ընդամենը մեկ հին սառնարան, չկան սննդամթերքի պահեստավորման հարմարություններ: Դատապարտյալները դժգոհում են կրծողների առատությունից, իսկ տարվա տաք եղանակներին՝ թունավոր սողուններից և միջատներից:

Հիմնարկում, ըստ լրակազմի, կարող են պահվել մինչև 50 մարդ: Հաշվի առնելով, որ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալները մեկ տարվա մեջ կարող են վեց ամիս արձակուրդ ունենալ, հիմնարկը պետք է ունենա առնվազն 25 դատապարտյալի պահելու հնարավորություն: Փաստացի Դիտորդների խմբի այցելության պահին հիմնարկում գրանցված էր 38 դատապարտյալ, որից կայարանի շենքում բնակվում էր 9 դատապարտյալ, ևս 3-ը պահվում էին Նռնաձոր գյուղում: Մնացածը 26-ն արձակուրդում էին: Այդ պահին հիմնարկում ազատ մահճակալներ չկային:

Դատապարտյալները ունեն «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի հետ աշխատանքային պայմանագրեր: Մարտ – նոյեմբեր ամիսներին դատապարտյալները ներգրավվում են գյուղատնտեսական աշխատանքներում:

Հիմնարկում չկա բուժկետ, սակայն հիմնարկն ունի բուժակ, որը Նռնաձոր գյուղի բուժկետի աշխատողն է և բնակվում է գյուղում:

Ննջասենյակում տեղադրված մահճակալները շատ հին են և գտնվում են մաշված, խարխուլ վիճակում: Ննջասենյակը տաքացվում է փայտի վառարանով:

Համաձայն ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 103-րդ հոդվածի՝ բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է ցերեկային ժամերին տեղաշարժվել ուղղիչ հիմնարկի տարածքում, սակայն հիմնարկը չունի հստակ որոշված տարածք, և դատապարտյալների ներքին տեղաշարժը սահմանափակված է հիմնարկի պետի որոշմամբ՝ կայարանի շենքում բնակվող դատապարտյալներն իրավունք չունեն առանց հիմնարկի պետի թույլտվության գյուղ գնալ և սննդամթերք գնել: Միևնույն ժամանակ ուղղիչ հիմնարկի վարչակազմը գտնվում է այդ գյուղում և կապը նրա հետ հնարավոր է միայն դատապարտյալների անձնական բջջային հեռախոսների միջոցով:

Առաջարկություններ

314) *Տեղափոխել հիմնարկի շինությունները արդարադատության նախարարության հաշվեկշիռ:*

315) *Վերանորոգել հանրակացարանը:*

316) *Հանրակացարանին կից կառուցել վարչական մասնաշենք:*

317) *Կառուցել նոր զուգարան և բաղնիք:*

318) *Ապահովել հիմնարկի մշտական ջրամատակարարումը:*

«Հրազդան» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Հրազդան» ՔԿՀ-ն գործում է 2008 թվականի հունիսից: Այն փակ խցային տիպի է և նախատեսված է կալանք պատժատեսակ կրող դատապարտյալներին պահելու համար: Հիմնարկը լավ վերանորոգված և կահավորված է:

Հիմնարկի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- փակ ուղղիչ հիմնարկ (կալանք պատժատեսակ կրող դատապարտյալների համար) - 200 մարդ
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ (տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվածների համար) - 15 մարդ

Հիմնարկն ունի սեփական կաթսայատուն, որի միջոցով կատարվում են հիմնարկի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը: Այս առումով խնդիր է հիմնարկի ջրամատակարարումը, որը, ինչպես և ամբողջ Հրազդան քաղաքում, կատարվում է ըստ ժամանակացույցի՝ օրը 2-3 ժամ, ինչի պատճառով հիմնարկը պատրաստվում է տեղադրել մեծ տարողություններ՝ ջուր հավաքելու համար:

«Հրազդան» ՔԿՀ-ն գտնվում է Հրազդան քաղաքի տարածքում, բնակելի շենքերի հարևանությամբ, և հիմնարկի խցերը շրջակա շենքերի պատուհաններից ամբողջությամբ տեսանելի են, ինչը, հաշվի առնելով, որ խցերի պատուհանները վարագույր չունեն, կարող է անհարմարությունների պատճառ հանդիսանալ:

Հիմնարկի հիմնական խնդիրը դատարանների կողմից կալանք պատժատեսակը խիստ հազվադեպ կիրառելն է, ինչի արդյունքում 2008 թ. վեց ամսվա ընթացքում հիմնարկում պահվել է 19 մարդ, իսկ դեկտեմբերին՝ ընդամենը մեկը: Այլ ՔԿՀ-ների գերբնակեցման պայմաններում «Հրազդան» ՔԿՀ-ում այսպիսի վիճակագրությունն առաջացնում է հիմնարկի լրակազմի փոփոխության և հիմնարկում փակ ու կիսափակ ուղղիչ հիմնարկներ ստեղծելու և այնտեղ համապատասխան դատապարտյալներ պահելու անհրաժեշտություն:

Առաջարկություններ

319) *Փոխել հիմնարկի լրակազմը:*

Խցեր

«Հրազդան» ՔԿՀ-ն ունի 77 երեք տեղանոց խուց: Բոլոր խցերը միատեսակ են՝ մոտ 20 քմ մակերեսով, փայտե հատակով, մետաղապլաստե պատուհաններով: Սանհանգույցներն առանձնացված են և սալիկապատված:

Խցերն ունեն բավարար կահավորանք՝ տեղադրված են նոր, մեծ փայտե պահարաններ, սեղան, աթոռ: Մահճակալները նույնպես փայտյա են:

Խցերի ջեռուցումը կատարվում է հիմնարկի կաթսայատան միջոցով: Այցելության պահին ջերմաստիճանը խցերում համապատասխանում էր ընդունված նորմերին:

Խցերի բնական լուսավորությունը բավարար է: Ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա դրա համար խցի առաստաղից կախված է մեկ լամպ, որի անջատիչը գտնվում է խցի ներսում, սակայն լույսը գիշերային ժամերին չի թույլատրվում անջատել: Նույն հզորության լամպը և՛ երեկոյան, և՛ գիշերային ժամերին օգտագործելը ստեղծում է անհարմարություն, քանի որ բարձր հզորություն օգտագործելը խանգարում է գիշերային քունը, իսկ ցածր հզորության դեպքում երեկոյան ժամերին խցերը բավարար լուսավորված չեն: Խնդիրը լուծված է որոշ հիմնարկներում (օրինակ՝ «Վարդաշեն» ՔԿՀ), որոնցում, բացի առաստաղի հզոր լամպից, խցի դռան վերևի մասում տեղադրվել է նաև գիշերային լուսավորության թույլ հզորության լամպ:

Խցերի պատին փակցված է իրավունքների և պարտականությունների ցուցակը:

Քանի որ հիմնարկում դատապարտյալների թիվը փոքր է, ապա նրանց պահում են մեկուսի: Հաշվի առնելով, որ կալանք պատժատեսակը նախատեսում է մեկուսացում նաև արտաքին աշխարհից, ստացվում է, որ ազատազրկվածներն իրենց ամբողջ ժամկետը կրելու ընթացքում չունեն որևէ մեկի հետ զրուցելու հնարավորություն, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ նրանց հոգեկան վիճակի վրա:

Առաջարկություններ

320) *Ազատազրկվածներին խցերում հնարավորինս չպահել մեկուսի:*

321) *Խցերում տեղադրել գիշերային լուսավորության լամպեր:*

Կապ արտաքին աշխարհի հետ

«Հրազդան» ՔԿՀ-ն նախատեսված է կալանք պատժատեսակ կրող դատապարտյալներին պահելու համար, որոնք, ըստ օրենսդրության[40], պահվում են խիստ մեկուսացման պայմաններում, բացի բացառիկ դեպքերից չունեն տեսակցությունների, հեռախոսազանգերի և նամակագրության իրավունք: Դատապարտյալները չեն կարող հանձնուք ստանալ, բացի առաջին անհրաժեշտության իրերից:

Ազատազրկվածների համար արտաքին աշխարհի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու միակ աղբյուրը լրատվամիջոցներն են: Սակայն չնայած օրենսդրության[41] պահանջներին՝ հիմնարկի խցերը ապահովված չեն ռադիոընդունիչներով: Դատապարտյալները կարող են ունենալ իրենց մոտ հեռուստացույց, չնայած պարզ չէ, թե ինչպես պետք է այդ հեռուստացույցը փոխանցվի, եթե հանձնուքներն արգելված են: Հիմնարկի գրադարանը ստանում է մամուլ, որը տրամադրվում է ազատազրկվածներին:

2008 թվականի ընթացքում տեսակցությունների կազմակերպման անհրաժեշտություն չի առաջացել, սակայն հետագայում, երբ հիմնարկում կհամալրվի տնտեսական մասը, որտեղ կարող են աշխատել մինչև 15 դատապարտյալ և որոնք պետք է պահվեն կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում, կառաջանա երկարատև և կարճատև տեսակցության սենյակների անհրաժեշտություն:

Առաջարկություններ

40 Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 56.2:

41 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ, կետ 46:

322) *Ապահովել հիմնարկում ռադիոցանց:*

Տեսակցություններ

«Հրազդան» ՔԿՀ-ում տեսակցությունների համար նախատեսված է 7 սենյակ, որոնք գտնվում են հիմնարկի առաջին հարկում՝ վարչական մասի և խոհանոցի միջև: Քանի որ հիմնարկում 2008 թվականի ընթացքում տեսակցության իրավունք ունեցող դատապարտյալներ չեն պահվել, այդ սենյակները, որպես տեսակցության սենյակ, երբեք չեն օգտագործվել, չկար երկարատև և կարճատև տեսակցության սենյակների բաժանում: Տեսակցությունների սենյակների մոտակայքում չկար սանհանգույց: Երկարատև տեսակցությունների համար նաև բացակայում էին լոգարանը և խոհանոցը: Հիմնարկի ղեկավարությունը նշեց, որ այդ նպատակով նրանք պատրաստվում են երկու սենյակ վերակառուցել՝ դարձնելով մեկը խոհանոց, մյուսը՝ սանհանգույց:

Ընդհանուր առմամբ սենյակները բարվոք վիճակում էին՝ վերանորոգված, փայտե հատակով: Սենյակներն ունեին բավարար ջեռուցում:

Առաջարկություններ

323) *Ապահովել սենյակները համապատասխան կահավորանքով:*

324) *Ապահովել տեսակցության սենյակները սանհանգույցով և խոհանոցով:*

Հեռախոսակապ

«Հրազդան» ՔԿՀ-ում տեղադրված է 6 ավտոմատ հեռախոս՝ յուրաքանչյուր հարկում երկուական, որոնցից կալանք պատժատեսակ կրող դատապարտյալները կարող են օգտվել հիմնարկի պետի թույլտվությամբ՝ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Նամակագրություն

«Հրազդան» ՔԿՀ-ում պահվող կալանք պատժատեսակ կրող դատապարտյալները նամակագրության իրավունք չունեն:

Հանձնուքներ

«Հրազդան» ՔԿՀ-ում չկա հանձնուքի ընդունման կետ: Հիմնարկի ղեկավարության խոսքով՝ 2008 թվականի ընթացքում դրա անհրաժեշտություն չի առաջացել, քանի որ այդ ընթացքում հիմնարկում պահվել են միայն կալանք պատժատեսակ կրող դատապարտյալներ, որոնց հանձնուք ստանալը սահմանափակված է միայն առաջին անհրաժեշտության իրերով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ հիմնարկի տնտեսական մասը կարող է համալրվել դատապարտյալներով, որոնք կունենան հանձնուք ստանալու իրավունք, հիմնարկի ղեկավարությունը նախատեսում է կառուցել հանձնուքի ընդունման կետ:

Առաջարկություններ

325) *Կառուցել և համապատասխան սարքավորել հանձնուքի ընդունման կետ:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

«Հրազդան» ՔԿՀ-ում գործում է 6 բաղնիք: Դրանք բոլորը միատեսակ են՝ մոտ 12 քմ մակերեսով, երկուական ցնցուղ, սալիկապատված են, ջեռուցվում են: Լոգարաններին կից կան զուգարաններ: Լոգարաններն ունեն հանդերձարաններ, որոնք կահավորված չեն՝ չկան

նստարան, կախիչ:

Ազատազրկվածները լոգանք են ընդունում շաբաթը 1 անգամ: Տաք ջրամատակարարումը կատարվում է հիմնարկի կաթսայատան միջոցով: Հիմնարկն ունի լոգանքի հաճախականությունն ավելացնելու հնարավորություն և կարող է ապահովել միջազգային նորմերով նախատեսված շաբաթական առնվազն երկուանգամյա լոգանք:

Առաջարկություններ

326) *Կահավորել հանդերձարանները:*

327) *Ավելացնել լոգանքների հաճախականությունը:*

Սպիտակեղեն, անկողնային պարագաներ

«Հրազդան» ՔԿՀ-ն բոլոր ազատազրկվածներին ապահովում է որակյալ սպիտակեղենով և անկողնային պարագաներով: Ըստ խմբի դիտարկումների՝ հիմնարկում սպիտակեղենը տրամադրվում է բավարար քանակությամբ և լավ որակի է:

Սանիտարահիգիենիկ պարագաներ

Հիմնարկն ապահովում է ազատազրկվածներին սանիտարահիգիենիկ պարագաներով՝ ըստ հաստատված չափաբաժինների: Որոշ պարագաների չափաբաժինները չեն կարող բավականացնել (օրինակ՝ մեկ զուգարանի թուղթը մեկ ամսվա համար): Այլ ՔԿՀ-ներում այդ պակասը լրացվում է ազատազրկվածների հարազատների բերած հանձնուքների միջոցով: Հաշվի առնելով, որ «Հրազդան» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալները չունեն հանձնուք ստանալու իրավունք, տրվող սանիտարահիգիենիկ պարագաների պակասը կարող է խնդիրներ առաջացնել:

Բուժսպասարկում

Բուժմաս. ընդհանուր վիճակը

«Հրազդան» ՔԿՀ-ի բուժմասը ունի 9 հիվանդասենյակ: Դրանցից յուրաքանչյուրն ունի 20 քմ մակերես և նախատեսված է երկու դատապարտյալ պահելու համար: Հիվանդասենյակներն ունեն բավարար կահավորանք, լուսավորություն և ջեռուցում:

2008 թվականի ընթացքում ազատազրկվածին բուժմասում տեղավորելու դեպք չի արձանագրվել:

Առաջարկություններ

328) *Հագեցնել հիմնարկի բուժմասը համապատասխան սարքավորումներով:*

Բուժանձնակազմ

Հիմնարկի բուժանձնակազմը համալրված է մասնակի՝ աշխատում է չորս բուժակ: Բժիշկների հաստիքները համալրված չեն: Այս իրավիճակը դեռևս խնդիրներ չի առաջացրել, քանի որ հիմնարկում պահվող դատապարտյալները լուրջ առողջական խնդիրներ չեն ունեցել: Դիտորդների խումբը գտնում է, որ ՔԿՀ-ում բժշկի բացակայությունն անընդունելի է:

Առաջարկություններ

329) *Համալրել բժիշկների հաստիքները:*

Սարքավորումներ

Հիմնարկը 2008 թվականի վերջի դրությամբ դեռևս բուժսարքավորումներ չէր ստացել:

Առաջարկություններ

330) *Հատկացնել հիմնարկին անհրաժեշտ բուժսարքավորումներ:*

Դեղորայք

Հիմնարկը ապահովված է միայն սահմանափակ քանակությամբ առաջին անհրաժեշտության դեղորայքով:

Առաջարկություններ

331) *Բարելավել հիմնարկի ապահովվածությունը դեղորայքով:*

Զբաղվածություն

Զբոսանք

«Հրազդան» ՔԿՀ-ում գործում է 10 նույնատիպ զբոսահրապարակ, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը 15 քմ է: Ամենօրյա զբոսանքի տևողությունը կազմում է 1 ժամ: Զբոսահրապարակներում չկան նստարաններ և անձրևից պաշտպանող ծածկ: Ստեղծված չեն մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ:

Առաջարկություններ

332) *Զբոսահրապարակներում տեղադրել նստարաններ և տեղումներից պաշտպանող ծածկեր:*

333) *Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ:*

Գրադարան

«Հրազդան» ՔԿՀ-ում գործում է գրադարան: Գրքերի քանակը կազմում է 215 կտոր: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Գրքերի պահման պայմանները բավարար են: Գրադարանի տարածքը կազմում է մոտ 20 քմ: Կա նոր գրքերի կարիք: Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում: Գրադարանն ստանում է ամենօրյա թերթեր և պարբերաբար ամսագրեր: Գրադարանում կա գրանցամատյան:

Առաջարկություններ

334) *Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:*

Սնունդ

Խոհանոց

«Հրազդան» ՔԿՀ-ի խոհանոցը գտնվում է հիմնարկի շենքի առաջին հարկում: Այն ապահովված է օդափոխության և հակահրդեհային համակարգերով, ունի բաղնիք աշխատողների համար:

Խոհանոցի տեխնիկական ապահովվածությունը և սանիտարահիգիենիկ վիճակը լավ են: Քանի որ հիմնարկի ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի, խոհանոցում

հավաքվում են ջրի պաշարներ:

Հիմնարկի խոհարարները քրեակատարողական ծառայողներ են:

Ճաշարան

Հիմնարկում ազատազրկվածները ճաշ են ընդունում իրենց խցերում: Սակայն «Հրազդան» ՔԿՀ-ն այն հազվագյուտ հիմնարկներից է, որտեղ գործում է ճաշարան աշխատակիցների համար:

Սննդի որակ

Սննդի որակը թե՛ խմբի դիտարկմամբ և թե՛ ազատազրկվածների կարծիքով կարելի է գնահատել լավ:

Պատիժներ

«Հրազդան» ՔԿՀ-ում 2008 թվականի ընթացքում ազատազրկվածներին պատիժ տալու դեպքեր չեն գրանցվել:

Հիմնարկը չունի առանձին պատժախուց, և դրա անհրաժեշտության դեպքում որպես այդպիսին կօգտագործվի խցերից մեկը:

Հատուկ միջոցների կիրառման դեպքեր

Ըստ հիմնարկի պետի՝ ՔԿՀ-ում 2008 թվականի ընթացքում հատուկ միջոցների կիրառման դեպք չի գրանցվել:

Նոր ազատազրկվածների ընդունումը հիմնարկ

Ըստ հիմնարկի պետի՝ 2008 թվականի ընթացքում ՔԿՀ բերված ազատազրկվածների մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Վերաբերմունք

«Հրազդան» ՔԿՀ-ի աշխատակազմի վերաբերմունքի վերաբերյալ ազատազրկվածները դժգոհություն չեն հայտնել:

Անձնակազմ

«Հրազդան» ՔԿՀ-ում ստեղծված են քրեակատարողական համակարգում աշխատակազմի համար լավագույն աշխատանքային պայմանները: Հիմնարկի աշխատասենյակները գտնվում են բարվոք վիճակում, գործում է ճաշարան աշխատակիցների համար:

«Հրազդան» ՔԿՀ-ի անձնակազմի 151 հաստիքից համալրված է 141-ը:

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ

Ընդհանուր տեղեկություններ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն գտնվում է Երևան քաղաքում: Այն միակ մասնագիտացված բուժհաստատությունն է քրեակատարողական համակարգում: Այստեղ ազատազրկվածները տեղափոխվում են՝ նրանց բուժումը ՔԿՀ-ների բուժմասերի պայմաններում կազմակերպելու անհնարինության դեպքում: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ ազատազրկվածին տեղափոխել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, կամ վերջինիս հնարավորությունները թույլ չեն տալիս կազմակերպել ազատազրկվածի բուժումը, օրենսդրությամբ նախատեսվում է նաև ազատազրկվածին տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի համար հաստատված է հետևյալ լրակազմը.

- բուժական ուղղիչ հիմնարկ - 424 մարդ
- փակ ուղղիչ հիմնարկ - 6 մարդ
- կիսաբաց ուղղիչ հիմնարկ - 14 մարդ
- բաց ուղղիչ հիմնարկ - 10 մարդ
- կալանավորվածներին պահելու վայր - 6 մարդ

Ըստ օրենսդրության[42]՝ բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պահվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում, բացառությամբ բուժական ուղղիչ հիմնարկի համար նախատեսված առանձնահատկությունների:

Հիմնարկը չունի ջեռուցման համակարգ: Հիվանդասենյակների ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերով: Ջեռուցման այս եղանակը չի կարող բավարար լինել, քանի որ ջերմաստիճանի մեծ տարբերություն է առաջանում հիվանդասենյակների և միջանցքների միջև, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ազատազրկվածների առողջական վիճակի վրա:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ունի 3 լոկալ գոտի: Յուրաքանչյուր գոտում տեղավորված է մի քանի բաժանմունք:

Առաջին գոտի	Երկրորդ գոտի	Երրորդ գոտի
Վիրաբուժական	Ինֆեկցիոն	Թոքախտաբանական
Ատամնաբուժական	Հոգեբուժական	Նարկոլոգիական
Ախտորոշման և ֆիզիոթերապևտիկ	Թերապևտիկ	Ռենտգենաբանական
		Կլինիկակենսաբանական լաբորատոր

42 Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 107:

Դեղագործական բաժանմունքը գտնվում է հիմնարկի տարածքում, սակայն լոկալ գոտիներից դուրս:

Առաջարկություններ

335) *Ապահովել հիմնարկը ջեռուցման համակարգով:*

Վիրաբուժական բաժանմունք

Բաժանմունքը գտնվում է 1828 թվականին կառուցված եռահարկ մասնաշենքում: Շենքը բարոյապես և ֆիզիկապես մաշված վիճակում է:

Վիրաբուժական բաժանմունքը ապահովում է ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում կալանավորված և դատապարտված անձանց ավելի բարձր որակի մասնագիտացված բուժօգնություն: Բաժանմունքի բժիշկ-մասնագետները կատարում են պարբերական այցեր այլ ՔԿՀ-ներ՝ վիրաբուժական միջամտությունների կարիք ունեցող ազատազրկվածներին զննելու և համապատասխան բուժումը կազմակերպելու համար:

Անհրաժեշտության դեպքում բաժանմունքին օգնում են նաև քաղաքացիական բուժհաստատություններում աշխատող բժիշկ-խորհրդատուներ:

Խիստ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան սարքավորումների անհրաժեշտության և հետվիրահատական բարդ ընթացքը վերահսկելու համար հիվանդները տեղափոխվում են համապատասխան նեղ մասնագիտական բաժանմունքներ ունեցող քաղաքացիական հիվանդանոցներ:

Բաժանմունքում բուժվող հիվանդները գտնվում են բուժանձնակազմի մշտական հսկողության տակ, կատարվում են ամենօրյա համայցեր:

Բաժանմունքի առաջին հարկում գտնվում են բժիշկների աշխատասենյակը և միջամտությունների սենյակը, երկրորդ հարկում՝ վիրահատարանը և հետվիրահատական սենյակը: Երկու հարկում էլ կան հիվանդասենյակներ: Դիտարկման պահին բաժանմունքի երկրորդ հարկի առաջին հիվանդասենյակում գտնվում էր 6 հիվանդ: Հիվանդասենյակի մակերեսը 24 քմ է, տեղադրված է 6 մահճակալ: Սենյակի լուսավորությունը բնական էր:

Առաջարկություններ

336) *Վերակառուցել բաժանմունքի մասնաշենքը:*

Ատամնաբուժական բաժանմունք

Բաժանմունքը գտնվում է նույն գոտում, ինչ վիրաբուժական բաժանմունքը, և 2008 թվականին տեղափոխվել է նոր վերանորոգված մասնաշենք: Այն ապահովված է ժամանակակից սարքավորումներով, սակայն չունի ատամնաբուժական ռենտգեն սարք:

Ատամնաբուժական բաժանմունքը կատարում է.

- վիրաբուժական միջամտություն,
- թերապևտիկ միջամտություններ, բերանի խոռոչի սանացիա,
- օրթոպեդիկ միջամտություններ:

Բաժանմունքում կատարվում են նաև դիմածնոտային վիրաբուժական միջամտություններ:

Ըստ բաժանմունքի պետի՝ բաժանմունքն ապահովված է անհրաժեշտ դեղամիջոցներով:

Առաջարկություն

337) *Բաժանմունքին հատկացնել ատամնաբուժական ռենտգեն սարք:*

Ֆիզիոթերապիայի և ֆունկցիոնալ ախտորոշման բաժանմունք

Բաժանմունքում կատարվում են սոնոգրաֆիկ հետազոտություններ և ԷՍԳ (էլեկտրասրտագրություն): Քանի որ ՔԿՀ-ներում չկան սոնոգրաֆիկ սարքավորումներ, ինչպես նաև համապատասխան մասնագետներ, անհրաժեշտության դեպքում բաժանմունքի մասնագետն այցելում է հիմնարկներ և տեղում կատարում հետազոտություններ:

Ինֆեկցիոն բաժանմունք

Բաժանմունքում բուժվում են հետևյալ հիվանդություններ ունեցող ազատազրկվածները.

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ,
- հեպատիտ,
- էնտերոկոլիտ, քրոնիկական կոլիտ
- մաշկային և վեներական:

Այստեղ են քրեակատարողական համակարգում պահվում բոլոր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ ազատազրկվածները, որոնք կազմում են բաժանմունքի հիվանդների գերակշիռ մասը: Նրանց կլինիկալաբորատոր հետազոտությունները կատարվում են ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի մասնագետների հետ համատեղ:

ՁԻԱՀ-ով հիվանդները անհրաժեշտության դեպքում ստանում են հակառետրովիրուսային բուժում և «Արմենիկում» դեղամիջոցը՝ ներարկային եղանակով:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի բոլոր բաժանմունքների ռիսկային խմբի հիվանդ դատապարտյալների արյունը ՄԻԱՎ-ի հայտնաբերման նպատակով ուղարկվում է շճաբանական քննության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն:

Բաժանմունքում պարբերաբար կատարվում է բժշկասոցիալական փորձաքննություն (ԲՍՓՀ)՝ հիվանդների աշխատունակության կարգը որոշելու նպատակով:

Թերապևտիկ բաժանմունք

Բաժանմունքը գտնվում է առանձին մասնաշենքում, որը վերջին տարիներին չի վերանորոգվել: Այստեղ աշխատում են չորս բժիշկ և մեկ բուժքույր: Բաժանմունքի անձնակազմը համալրված չէ, ակնաբույժի, նյարդաբանի, ավագ քրոջ և բուժակների կարիք կա:

Բաժանմունքը բաղկացած է բժիշկների աշխատասենյակից, միջամտությունների սենյակից և հիվանդասենյակներից:

Հիվանդների գերակշիռ մասը տառապում է սրտանոթային և շնչառական համակարգի հիվանդություններից: Բաժանմունքը կարիք ունի ժամանակակից բժշկական սարքավորումների, հատկապես՝ ԷՍԳ-ի:

Բաժանմունք ընդունվում են նաև անհապաղ միջամտության կարիք ունեցող հիվանդներ: Նման դեպքերի համար անհրաժեշտ է համապատասխան սարքավորումներով ապահովված վերակենդանացման բաժանմունք, որը հիմնարկը չունի:

Ըստ բաժանմունքի պետի՝ հիմնարկը բավարար ապահովված է դեղամիջոցներով:

Առաջարկություններ

338) *Վերանորոգել բաժանմունքի մասնաշենքը:*

339) *Համալրել բուժանձնակազմը:*

340) *Ապահովել բաժանմունքն անհրաժեշտ սարքավորումներով (առաջնահերթ՝ ԷՍԳ սարքով):*

341) *Ստեղծել վերակենդանացման բաժանմունք:*

Թոքախտաբանական բաժանմունք

Բաժանմունքը գտնվում է նոր կառուցված մասնաշենքում: Մասնաշենքի կառուցմանը աջակցել է Միջազգային Կարմիր խաչ կազմակերպությունը: Բաժանմունքի հիվանդները մեկուսացված են մյուս բաժանմունքների հիվանդներից: Նրանք ունեն առանձին զբոսաբակ: Տուբերկուլոզային բաժանմունքում տեղադրված է նաև առանձին ավտոմատ հեռախոս՝ միայն այդ բաժանմունքի հիվանդների համար:

Բաժանմունքի բուժանձնակազմը զբաղվում է տուբերկուլոզի հայտնաբերմամբ և բուժմամբ քրեակատարողական համակարգի բոլոր հիմնարկներում:

Հիվանդների հայտնաբերումը կատարվում է երկու եղանակով.

- պասիվ հայտնաբերում, երբ դիմում է հիվանդը,
- ակտիվ հայտնաբերում, երբ տարվա ընթացքում երկու անգամ կատարվում է սքրինինգ թվային շարժական ֆլյուրոգրաֆով, և կասկածելի դեպքերում վերցվում են խորխի նմուշներ:

Տուբերկուլոզով հիվանդները տեղափոխվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և այնտեղ ստանում համապատասխան բուժում:

2008 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ բաժանմունքում գտնվում էր 45 հիվանդ դատապարտյալ: Տարվա ընթացքում ընդունվել է 72 դատապարտյալ, 55-ի մոտ հաստատվել է տուբերկուլոզ, որից 28-ը ԹԿԲ+ դեպքեր են (վարակիչ հիվանդներ), 13-ը՝ դեղորայքակայուն ձևերը (սովորական դեղորայքով բուժումը անարդյունավետ է), իսկ մնացածը՝ ԹԿԲ բացասական դեպքեր (հիվանդ են տուբերկուլոզով, սակայն վարակիչ չեն):

Հայտնաբերված ԹԿԲ+ դեպքերը շտապ կերպով տեղափոխվում են «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ: Բացի այդ, 2008 թ. սեպտեմբեր ամսից «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության հետ համատեղ սկսվել է DOTS plus ծրագիրը, որում ընդգրկվել են դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդ 12 դատապարտյալ:

Բաժանմունքում պարբերաբար կատարվում է բժշկասոցիալական փորձաքննություն (ԲՍՓՀ)՝ հիվանդների աշխատունակության կարգը որոշելու նպատակով:

Բաժանմունքում հակատուբերկուլոզային պայքարը կատարվում է Տուբերկուլոզի ազգային ծրագրի (ՏԱԾ) հետ համատեղ՝ համաձայն չափորոշիչի: Ստեղծվել են նաև ընդհանուր տեղեկատվական-վերլուծական տվյալներ՝ ըստ EP16 info ծրագրի:

Նարկոլոգիական բաժանմունք

Բաժանմունքը գտնվում է նույն շենքում, ինչ թոքախտաբանական բաժանմունքը, սակայն նարկոլոգիական բաժանմունքի համար կառուցվում է առանձին մասնաշենք:

Բաժանմունքում բուժվում են ալկոհոլամոլությամբ և թմրամոլությամբ տառապող հիվանդներ: Հիմնականում այդ հիվանդները ուղարկվում են բուժման՝ համաձայն դատարանի կողմից ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի 97 հոդվածով նախատեսված հարկադիր բուժման որոշման:

ՀՀ կառավարության 26.05.2006 թ. N 825-Ն որոշման[43] 110 կետի համաձայն՝ «Այն կալանավորված անձինք կամ դատապարտյալները, ում մոտ չի ավարտվել ալկոհոլամոլությունից և թմրամոլությունից հարկադիր բուժումը, ինչպես նաև այն անձինք, ովքեր գտնվում են դիսպանսերային հսկողության տակ, հիմնարկ չեն ուղարկվում մինչև բուժման ավարտը դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին որոշման ընդունումը կամ դիսպանսերային հսկողության մարումը»: Այս կետը բացառում է փուլային բուժման մեթոդի կիրառումը, որը ներկայումս համարվում է միջազգային առաջա-

43 Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ:

դեմ փորձ: Ըստ փուլային բուժման մեթոդի՝ հիվանդն առաջին փուլում ստացիոնար պայմաններում դեղորայքային բուժում ստանալուց հետո որոշ ժամանակ պետք է գտնվի հսկողության տակ: Դրանից հետո, կախված ստացված արդյունքներից, վերջին փուլում ստացիոնար պայմաններում հիվանդի հետ իրականացվում են վերականգնողական աշխատանքներ: Այս մեթոդի կիրառումը կարող է պահանջել ամիսների (որոշ դեպքերում՝ տարիների) աշխատանք, որի ամբողջ տևողության ընթացքում ազատազրկվածին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պահելը անիմաստ է և անհնարին՝ հաշվի առնելով բաժանմունքում տեղերի քանակը:

Առաջարկություն

342) *Վերանայել ՀՀ կառավարության 26.05.2006 թ. 825-Ն որոշման 110 կետը:*

Կլինիկակենսաբանական լաբորատոր բաժանմունք

Կլինիկակենսաբանական լաբորատոր բաժանմունքը սպասարկում է հիմնարկի վեց կլինիկական բաժանմունքները: Բաժանմունքում կատարվում են հետևյալ լաբորատոր զննությունները.

- մեզի ընդհանուր զննություն,
- արյան ընդհանուր զննություն,
- արյան կենսաքիմիական զննություն,
- կոպրոլոգիա,
- քսուքի զննություն,
- շճաբանություն,
- իմունաբանական զննություն:

Դեղագործական բաժանմունք

Բաժանմունքն ստանում է պետբյուջեի միջոցներով քրեակատարողական համակարգի համար գնված ամբողջ դեղորայքը, բուժգործիքները, լաբորատոր պարագաները և այլ բուժպարագաներ: Հետագայում այստեղից այդ ամենը բաշխվում է ըստ քրեակատարողական հիմնարկների:

Դեղագործական բաժանմունքի միջոցով է կատարվում նաև օգնության կարգով ստացված դեղորայքի բաշխումը:

Կապ արտաքին աշխարհի հետ

Կարճատև տեսակցություններ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ունի 2 կարճատև տեսակցության սենյակ, որոնց քանակը, ըստ հիմնարկի պետի, բավարար չէ ազատազրկվածների տեսակցությունները օրենսդրությամբ նախատեսված ծավալներով տրամադրելու համար:

Սենյակների մակերեսը կազմում է 15-20 քմ: Դրանք կահավորված են բազմոցներով, բազկաթոռներով, սեղաններով և աթոռներով:

Կարճատև տեսակցության սենյակներում բնական և արհեստական լուսավորությունը բավարար է:

Սենյակները ջեռուցվում են էլեկտրական սարքերով: Սանիտարահիգիենիկ վիճակը բավարար է:

Առաջարկություններ

343) *Ավելացնել կարճատև տեսակցության սենյակների քանակը:*

Երկարատև տեսակցություններ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ունի 4 երկարատև տեսակցության սենյակ: Դրանք բավարար կահավորված են: Սենյակներն ունեն առանձին սանհանգույց, խոհանոցային մաս:

Բոլոր սենյակների սանիտարահիգիենիկ վիճակը բավարար է:

Սենյակները ջեռուցվում են էլեկտրական սարքերով:

Հեռախոսակապ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում գործում է 4 քարտային հեռախոսակապի հանգույց: Յուրաքանչյուր լոկալ գոտում տեղադրված է մեկական հեռախոս, լրացուցիչ մեկ հեռախոս էլ տեղադրված է առանձին տուբերկուլոզային բաժանմունքում, քանի որ այդ բաժանմունքի հիվանդները առանձնացված են իրենց գոտու մյուս հիվանդներից: Հեռախոսազանգերի հետ կապված բողոքներ չկան:

Հանձնուքներ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հանձնուքի ընդունման կետը մի սենյակ է, որտեղ տեղադրված է 2 նստարան: Սենյակի չափսերը փոքր են, և միաժամանակ մի քանի հարազատի այցելության դեպքում նրանց մի մասը ստիպված սպասում է դրսում:

Տարածքում չկան խմելու ջուր և սանհանգույց:

Հանձնուքի զննությունը կատարվում է ժամանակակից սարքով:

Առաջարկություններ

344) *Հանձնուքի ընդունման կետի համար հատկացնել ավելի մեծ սենյակ:*

345) *Ապահովել հանձնուքի ընդունման կետը սանհանգույցով:*

Սանիտարահիգիենիկ վիճակը

Լոգանք

Հիմնարկում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ: Բաղնիքը գտնվում է բակում: Լոգարանն ունի հանդերձարան, որը բավարար կահավորված չէ՝ կան 2 փոքրիկ կախիչ և մի քանի աթոռներ: Հանդերձարանի սանիտարական վիճակը բավարար չէ:

Հանդերձարանը և լոգարանը չեն ջեռուցվում:

Հիմնարկի լվացքատունն ապահովված է անհրաժեշտ սարքերով և լվացամիջոցներով: Ինֆեկցիոն բաժանմունքի համար առանձնացված է հատուկ լվացքի մեքենա:

Առաջարկություններ

346) *Հիմնանորոգել հանդերձարանը:*

347) *Ապահովել հանդերձարանում անհրաժեշտ քանակությամբ գույք:*

348) *Ապահովել հանդերձարանի և լոգարանի ջեռուցումը:*

Զբաղվածությունը

Հավելված 1.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-007
30.01.2009թ.

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Գ.Դանիելյանին

Ընթացիկ հաշվետվություն

2008 թվականին զգալի գերբնակեցում էր նկատվում որոշ ՔԿՀ-ներում: Նույն իրավիճակը պահպանվում է 2009 թվականին: Մասնավորապես՝ «Էրեբունի» ՔԿՀ-ում լրակազմով նախատեսված 391-ի փոխարեն հունվարի 22-ին՝ հասարակական դիտորդների խմբի այցելության պահին, պահվում էր 593 ազատազրկված, այսինքն՝ առկա է ավելի քան 150% բնակեցում: Արդյունքում՝ որոշ հանրակացարաններում մեկ անձին բաժին էր հասնում օրենքով նախատեսված 4 քմ փոխարեն մոտ 2 քմ: Ավելի ծանր է վիճակը «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, ուր չնայած գերբնակեցման տոկոսն ավելի ցածր է (հունվարի 30-ի տվյալներով՝ հիմնարկում պահվում էր 962 ազատազրկված՝ լրակազմով հաստատված 840-ի փոխարեն), հիմնարկի փակ խցային տիպի լինելու պատճառով, 8 հոգու համար նախատեսված խցերում պահվում է մինչև 13 ազատազրկված և, ըստ խմբի դիտարկումների, խցերի մեծ մասում մեկից երեք մարդ չունեն անհատական քնելատեղ և գիշերները քնում են հերթափոխով:

Միևնույն ժամանակ, ըստ ՀՀ ԱՆ պաշտոնական տվյալների, այլ ՔԿՀ-ներում բազմաթիվ ազատ տեղեր կան, մասնավորապես՝ 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ՝

- «Արթիկ» ՔԿՀ - 96 տեղ
- «Վանաձոր» ՔԿՀ - 36 տեղ
- «Սևան» ՔԿՀ - 87 տեղ
- «Կոշ» ՔԿՀ - 87 տեղ

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am

Այսպիսով, խումբը նշում է, որ ազատազրկվածներին ըստ հիմնարկների տեղաբաշխման մեխանիզմը մտահոգություն է առաջացնում և խումբը

Առաջարկում է՝

- Վերացնել գերբնակեցումը «Նուբարաշեն» և «Էրեբունի» ՔԿՀ-ներում.
- Համապատասխան փոփոխություններ կատարել ազատազրկվածներին ըստ հիմնարկների տեղաբաշխման մեխանիզմում՝ բացառելով անհավասար տեղաբաշխման պատճառով հիմնարկների գերբնակեցումը։

ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am

Հավելված 1.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 4837
«17» 02 2009թ.

0078 Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 380-389
էլ. փոստ info@moj.am

ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ
պարոն Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» և 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 211-Ն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն հրամանում լրացում կատարելու մասին» հրամաններով քրեակատարողական հիմնարկների ընդհանուր լրակազմը նախատեսված է 4396 կալանավորված և դատապարտված անձանց պահելու համար:

2009 թվականի փետրվարի 2-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվում են ընդհանուր թվով 4023 անձ:

Ըստ քրեակատարողական հիմնարկների, դրանցում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակի պատկերը հետևյալն է

Քրեակատարո»ական հիմնարկ	Լրակազմը	02.02.2009թ. դրությամբ պահվող անձանց թիվը
«Գորիս»	170	163 (- 7)
«Արթիկ»	373	279 (- 94)
«Սևան»	548	466 (- 82)

«Կոշ»	640	545 (- 95)
«Էրեբունի»	391	580 (+ 189)
«Աբովյան»	250	231 (- 19)
«Նուբարաշեն»	840	966 (+ 126)
«Վարդաշեն»	154	200 (+ 46)
«Վանաձոր»	245	215 (- 30)
«Դատապարտյալների հիվանդանոց»	460	284 (- 176)
«Երևան-Կենտրոն»	60	49 (- 11)
«Մեղրի»	50	38 (- 12)
«Հրազդան»	215	7 (- 208)

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից նախատեսված լրակազմից ավել անձինք են պահվում «Էրեբունի», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում: Այդ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի ավելացումը ունի օբեկտիվ պատճառներ:

1. Համեմատած 2008 թվականի հունվարի 1-ի հետ 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը աճել է 426-ով, իսկ տարբեր պատճառներով նախնական կալանքից և պատիժը կրելուց ազատվածների թիվը 287-ով:
2. Ելնելով «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց առանձնահատկություններից՝ նրանց տեղաբաշխումը այլ քրեակատարողական հիմնարկներ հնարավոր չէ:
3. «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկը միակն է, որը ամբողջությամբ նախատեսված է կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պատիժը կրող դատապարտյալների համար: Բացի «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկից, նույն պայմաններում պատիժը կրող դատապարտյալների համար նախատեսված է 142 տեղ նաև «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում: Սակայն, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում կիսաբաց պայմաններում պատիժը կրող դատապարտյալների թվաքանակը լրացված է և, նկատի ունենալով այդ քրեակատարողական հիմնարկի խցիկային կառուցվածքը, լրացուցիչ տեղերի ավելացումը այստեղ գրեթե անհնարին է: «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում, հաշվի առնելով դրա հանրակացարանային կառուցվածքը, լրացուցիչ տեղերի ավելացումը ավելի մեղմ ազդեցություն է գործում այնտեղ պահվող անձանց բնակելի տարածքներով ապահովված լինելու վրա:
4. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում այսօրվա դրությամբ պահվում են տեղաբաշխված և տարբեր քրեակատարողական հիմնարկներ տեղափոխման սպասող 131 դատապարտյալներ, սակային ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից դատապարտյալների տեղափոխումները պատշաճ կերպով չեն իրականացվում: Բացի դա 20 անձի վերաբերյալ օրենքով նախատեսված ժամկետների խախտումով դատարանների կողմից չեն ուղարկվել դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելու կարգադրությունները: Այսպիսով, նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, կարելի է եզրակացնել, որ տեղափոխումների պատշաճ և

ժամանակին կազմակերպման և դատարանների կողմից անհարգի ձգձգումների բացակայության դեպքերում, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը զերծ կմնա դատապարտյալների գերբնակեցումից:

Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված 2.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ГРУППА ОБЩЕСТВЕННЫХ НАБЛЮДАТЕЛЕЙ
Общественный Контроль в Уголовно-Исправительных Учреждениях и Органах Министерства Юстиции РА

PUBLIC MONITORING GROUP
Public Control at Criminal Executive Institutions Ministry of Justice RA

Երևան
25.12.2008 թ.

ՀՀ արդարադատություն նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին և 24-ին Հասարակական դիտորդների խմբի անդամներ Ա.Դանիելյանը, Ա.Սաքունցը, Է.Մարուքյանը, Ա.Իշխանյանը, Լ.Հարությունյանը, Մ.Բաղդասարյանը, Մ.Արամյանը այցելել են «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներ: Այցելության ընթացքում պարզվել է, որ ս.թ. դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի կողմից իրականացվել է միջոցառում՝ խուզարկություն: Ուսումնասիրելով իրավիճակը՝ պարզվել է, որ խուզարկության ընթացքում տարբեր խցերում գրանցվել են միջադեպեր, որոնց գերակշիռ մասը, դատապարտյալների պնդմամբ, կապված է եղել իրենց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ՝ ապտակներ, վիրավորանքներ, քաշքշուկ, մասնավորապես՝ 6-րդ մասնաշենքում խուզարկության ժամանակ, այն խցում, ուր պահվում է Գրիգոր Ոսկերչյանը, խուզարկության ավարտից հետո, ըստ Գ.Ոսկերչյանի, խուզարկություն իրականացնողներից մեկը նրան հարցրել է, թե ի՞նչ մեղադրանքով է նա կալանավորված: Լսելով, որ նա դատվում է ՀՀ քր. օրենսգրքի 300 հոդվածով և կալանավորած է մարտի 1-ի դեպքերով, ապտակել և հարվածել է ոտքին:

Հիմնական միջադեպը տեղի է ունեցել 3-րդ մասնաշենքի 36 խցում, ուր պահվում էր 13 դատապարտյալ: Ըստ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների՝ խուզարկության ընթացքում տեղի է ունեցել ընդհարում, որի արդյունքում վնասվածք է ստացել Քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի ղեկավար Զորիկ Արզումանյանը: Դրանից հետո խցի բոլոր դատապարտյալների նկատմամբ տևական ժամանակ կիրառվել է բռնություն: Արդյունքում, ըստ մեր դիտարկումների, մարմնական տարբեր վնասվածքներ են ստացել խցի բոլոր դատապարտյալները: Խմբի անդամների կողմից արձանագրվել

են քթի կոտրվածքի դեպքեր, սալջարդեր, կապտուկներ մարմնի տարբեր մասերում՝ դեմքին, գլխին, մեջքին, ոտքերին, ձեռքերին, բռնության ենթարկվածները դժվարությամբ էին տեղաշարժվում։

Նշված դիտարկումները թույլ են տալիս խմբին եզրակացնել, որ տեղի է ունեցել ուժի կիրառման համաչափության կոպիտ խախտում, պաշտոնեական դիրքի չարաշահում։ Հաշվի առնելով գործողության տևականությունը և մասսայականությունը՝ գտնում ենք, որ կատարվածը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, որը կրել է պատժիչ բնույթ։

ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում և մարմիններում
Հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ Ա.Դանիելյան

Հավելված 2.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

N Հ-6049

«27» «12» 2008թ.

ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և
մարմիններում հասարակական
վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբին

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2008թ. դեկտեմբերի 25-ի հրատապ հաշվետվությունը նախարարի հանձնարարությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազին համապատասխան ընթացք տալու համար:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. դեկտեմբերի 24-ի թիվ 225-Ա հրամանով դեպքի կապակցությամբ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նշանակվել և անցկացվում է ծառայողական քննություն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ Ժ/Պ

Լ. Սիմոնյան

Հավելված 2.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-001
14.01.2009 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
պարոն Ա. Հովսեփյանին

Հարգելի պարոն դատախազ,

2008 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հրատապ հաշվետվություն էր ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարին 2008 թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ: ԱՆ աշխատակազմի վերահսկողության վարչության պետի պատասխանում նշվում էր, որ մեր հրատապ հաշվետվությունը նախարարի հանձնարարությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազին՝ համապատասխան ընթացք տալու համար: Խնդրում ենք հայտնել մեզ՝ հարուցվե՞լ է արդյոք քրեական գործ հաշվետվությունում նշված փաստերի առիթով:

Կից ուղարկում եմ խմբի հրատապ հաշվետվությունը և ԱՆ պատասխանը:

Հարգանքով՝

ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում և մարմիններում
Հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str.43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am

Հավելված 2.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-002
14.01.2009թ.

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Գ.Դանիելյանին

Հարգելի պարոն նախարար,

2008 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հրատապ հաշվետվություն էր ներկայացրել Ձեզ՝ 2008 թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում N 36 խցի թվով 13 դատապարտյալների, ինչպես նաև նույն հիմնարկի 6-րդ մասնաշենքում պահվող Գ.Ոսկերչյանի հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ: ԱՆ աշխատակազմի վերահսկողության վարչության պետի պատասխանում նշվում էր, որ ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. դեկտեմբերի 24–ի թիվ 225–Ա հրամանով դեպքի կապակցությամբ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նշանակվել և անցկացվում է ծառայողական քննություն:

Խնդրում ենք հայտնել մեզ ծառայողական քննության արդյունքների մասին:

Հարգանքով՝

ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11 փ, 43 շ. Aygestan 11th str., 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: (+37410) 55 96 34 e-mail: pmg.armenia@hra.am

Հավելված 2.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 3-259
«21» 01 2009թ.

0078 Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 380-389
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Գ. Ոսկերչյանի հետ տեղի ունեցած միջադեպի մասին հաղորդման առնչությամբ անցկացված ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել է, որ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության արագ արձագանքման բաժնի գլխավոր մասնագետ, արդարադատության կապիտան Արթուր Սասունիկի Եղիազարյանը, 2008թ. դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ աշխատակիցների հետ խուզարկություն իրականացնելու ընթացքում ցուցաբերել է սպային ոչ վայել վարքագիծ, դրանով իսկ խախտելով կարգապահական կանոնակարգը, որի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարի 2009թ. հունվարի 9-ի թիվ 2-Ա հրամանով վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ հայտարարվել է խիստ նկատողություն:

Հարգանքով՝

Գ. Դանիելյան

Հավելված 2.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

№ 17/6-15

«21» 01 2009 թ.

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և
մարմիններում հասարակական վերա-
հսկողություն իրականացնող, հասարակական
դիտորդների խմբի նախագահ
պարոն Ա.Դանիելյանին

Ձեր 14.01.2009թ. թիվ 09-001 գրությանը հայտնվում է, որ հասարակական դիտորդների խմբի «հրատապ հաշվետվությունը» ստացվել և ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունում:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձ Գրիգոր Ոսկերչյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքները պարզելու նպատակով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողական վարչության կողմից կատարվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի սպա, արդարադատության մայոր Արթուր Եղիազարյանի կողմից թույլ է տրվել իր պարտականությունների ոչ պատշաճ կատարում և Արդարադատության նախարարի 09.01.2009թ. հրամանով վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: 19.01.2009թ. ծառայողական քննության վերաբերյալ նյութերն ուղարկվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հատուկ քննչական ծառայություն:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում կատարված խուզարկության ժամանակ արագ արձագանքման խմբի պետ՝ արդարադատության գնդապետ Զորիկ Արզումանյանին դատապարտյալների կողմից ծեծի ենթարկելու վերաբերյալ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ոստիկանության Էրեբունու քննչական բաժին, որտեղ 03.01.2009թ. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12100409 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Թիվ 36 խցի բոլոր դատապարտյալների նկատմամբ նշանակվել են դատաբժկական փորձաքննություններ:

Հասարակական դիտորդների խմբի «հրատապ հաշվետվությունը» «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում կատարված բռնությունների վերաբերյալ, դատախազության կողմից ուղարկվել է ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում քննվող թիվ 12100409 քրեական գործին կցելու և նախաքննությամբ ընթացքը որոշելու համար:

Արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների
կիրառման օրինականության նկատմամբ հսկո-
ղություն իրականացնող վարչության պետի տեղակալ Վ.Ավետիսյան

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության Նախ-ն

Հավելված 2.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078, ք. Երևան, Հալաբյան փող. 41ա

N⁰ Ա 376

«29» 01 2009թ.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան

Ձեր 25.12.2008թ. հրատապ հաշվետվության կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 3-րդ մասնաշենքի 36 խցում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ իրականացվում է քրեական հետապնդում, որի կապակցությամբ մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ նախաքննություն իրականացնող մարմնից կամ ՀՀ գլխավոր դատախազությունից:

Հարգանքով՝

Վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար ***Լ. Սիմոնյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացվում են ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2008 թ. գործունեության հաշվետվությամբ բարձրացված խնդիրների վերաբերյալ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ արդարադատության նախարարության «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ	
1. Հիմնարկը չունի իր անցագրային կետը և այնտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է անցնել ԱԱԾ անցագրային կետով:	1. Կապված է հիմնարկի տեղակայման հետ: Հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:
2. Բնական լուսավորությունը տարբեր խցերում տարբեր է, սակայն գրեթե բոլոր խցերում բավարար չէ: Այդ պատճառով հիմնարկում մշտապես միացված է արհեստական լուսավորությունը: Արհեստական լուսավորությունը չի տարանջատված գիշերայինի և ցերեկայինի, և այդ պատճառով մեծ հզորության լամպը վառվում է նաև գիշերային ժամերին, ինչը խանգարում է ազատազրկվածներին քնել:	2. Հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 3-րդ կետում:
3. Խցերում բացակայում է օդափոխության համակարգը:	3, 4. Խնդրի կարգավորման առնչությամբ հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ առաջին կետում:
4. Խցերում զուգարանները բավարար չափով մեկուսացված չեն և, հաշվի առնելով օդափոխության համակարգի բացակայությունը, անհնար է դրանք լիովին մեկուսացնել:	
5. Կարճատև տեսակցությունների համար հիմնարկում գործում է երկու տեսակցության սենյակ: «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում տեսակցություններն անցնում են հսկիչի անմիջական ներկայությամբ, ինչն ազատազրկվածների կողմից ընկալվում է որպես խոչընդոտ տեսակցության բնականոն ընթացքին: Տեսուչի ներկայությունը հիմնավորվում է հարազատների կողմից արգելված իրերի փոխանցումը կանխելու անհրաժեշտությամբ: Միևնույն ժամանակ եղած սենյակների քանակը խիստ անբավարար է, քանի որ նույն սենյակները օգտագործվում են նաև որպես քննչական սենյակներ: Այդ պատճառով հիմնարկի ղեկավարությունը սահմանափակել է տեսակցությունների տևողությունը մեկ ժամ տևողությամբ, մինչդեռ օրենսդրությամբ նախատեսված է երեք ժամ: Երկարատև տեսակցությունների համար հիմնարկում սենյակ նախատեսված չէ, և երբևէ հիմնարկը այդպիսի սենյակ չի ունեցել: Այդուամենայնիվ, արդարադատության նախարարի լրակազմերը հաստատելու մասին հրամանով հաստատված է հիմնարկի լրակազմը, ըստ որի՝ հիմարկում կարող են պահվել մինչև 10 դատապարտյալ:	5. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ - կառավարության 03.08.2006 թ. 1543-Ն որոշման 143 կետի համաձայն՝ մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և դատապարտյալների համար նախատեսված երկարատև տեսակցությունների: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի համաձայն՝ կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածա-

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	յին լրատվության միջոցների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ *մինչև երեք ժամ տևողությամբ:* Շենքային պայմաններից ելնելով՝ առայժմ հնարավոր չէ ստեղծել երկարատև տեսակցության սենյակներ:
6. Ներկայումս ազատազրկվածներին հնարավորություն է ընձեռվում իրենց հաշվին օգտվելու հեռախոսից 10 օրը մեկ անգամ՝ մինչև 15 րոպե տևողությամբ: Ազատազրկվածների մեծ մասն այդ հաճախականությունը համարում էր ոչ բավարար:	6. Հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 9-րդ կետում:
7. Խումբը ստացավ բողոք, որ ազատազրկվածներից մեկին չի թույլատրվում նամակ ուղարկել մեկ այլ ՔԿՀ-ում գտնվող իր հարազատին:	7. Նման բովանդակությամբ բողոք չի ստացվել, ստացվելու դեպքում կքննարկվի:
8. Հանձնուքի ընդունման կետը «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում փոքր սենյակ է, որը պատուհանով միանում է ԱԱԾ-ի ընդունարանին, որտեղից և հարազատները փոխանցում են հանձնուքը: Պատուհանին փակցված են հանձնուքի փոխանցման ժամերը, թույլատրվող (չթույլատրվող) սննդի և իրերի ցանկը: Պատուհանի չափսերը հնարավորություն չեն տալիս այնտեղ փակցնելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ պատուհանի կողքի պատին դրանք փակցնել չի թույլատրվում, քանի որ դա արդեն ԱԱԾ տարածքն է: Տարածքում չկան զուգարան և խմելու ջուր: Դիտարկման պահին հանձնուքի ընդունման կշեռքն անսարք էր: Ազատազրկվածները դժգոհում էին, որ որպես հանձնուք արգելվում է բերել ջրիկ ճաշ, փլավ և կաթնամթերք: Հիմնարկում հանձնուքի ընդունումը սահմանափակվում է յուրաքանչյուր անձի համար շաբաթական մեկ անգամ: Այս սահմանափակումը չի բխում օրենսդրությունից: Հանձնուքները պահպանելու համար հիմնարկը ձեռք է բերել երկու մեծ սառնարան, որոնք տեղադրված են հիմնարկի խոհանոցում:	8. Հանձնուքներ ընդունող սենյակների պայմանները կապված են շենքային հնարավորությունների հետ: Անսարք կշեռքը փոխվել է նորով: Կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ ունենալու, հանձնուքով, ծանրոցով և փաթեթով ստանալու կամ ձեռք բերելու արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկի 5-րդ կետով արգելվում է ապակյա կամ մետաղյա տարաներ, ինչպես նաև այդ տարաներով հեղուկներ կամ սննդամթերք, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանավորված անձը ամսվա ընթացքում կարող է ստանալ մինչև 70 կիլոգրամ հանձնուք, որը կարող է ստանալ միանվագ կամ մաս-մաս:
9. Ի տարբերություն այլ հիմնարկների՝ «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում ազատազրկվածներին չի թույլատրվում խցերում սառնարան ունենալ: Այս սահմանափակումը չի բխում օրենսդրությունից և բազմաթիվ անհարմարություններ է ստեղծում թե ազատազրկվածների և թե աշխատակազմի համար:	9. Հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 12-րդ կետում:
10. Հիմնարկի բաղնիքը բաղկացած է երկու հանդերձարանից և երկու լոգասենյակից: Ընդհանուր սանիտարական վիճակը հանդերձարաններում բավարար չէ, և որոշ ազատազրկվածներ նույնպես դա նշում էին:	10. Համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է բարելավել լոգասենյակների և հանդերձարանների սանիտարական վիճակը:
11. Ազատազրկվածները բողոքում էին անկողնային պարագաների, հատկապես՝ բարձերի որակից, որոնք արդեն բավական հին էին և մաշված:	11. Հիմնավոր մեկնաբանությունները տես առաջարկությունների վերաբերյալ 16-րդ կետում:
12. Հիմնարկի բուժմասը բաղկացած է ընդամենը մեկ սենյակից և չունի հիվանդասենյակ, առանձին միջամտությունների սենյակ, ատամնաբուժական սենյակ և այլն: Այդ վիճակը բացատրվում էր հիմնարկի շենքային պայմաններով և լրացուցիչ սենյակներ հատկացնելու հնարավորության բացակայությամբ:	12. Նշված բուժօգնությունը և բժշկական ծառայությունները մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում են ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մարմինների և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հնարավորությունները:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
13. Հիմնարկի բուժմասն ունի երկու հաստիք՝ բժիշկ և բուժակ: Հաստիքների սակավաթվությունը թույլ չի տալիս կազմակերպել հիմնարկում գիշերային հերթապահություն և ոչ աշխատանքային ժամերին շտապ բուժօգնության անհրաժեշտության դեպքում բժշկին կամ բուժակին զանգով կանչում են հիմնարկ: Ազատազրկվածները նշում էին, որ ոչ աշխատանքային ժամերին առողջական խնդիրներ առաջանալու դեպքում հայտնում են այդ մասին միայն ծայրահեղ դեպքերում, որպեսզի չխանգարեն բուժմասի աշխատակիցների հանգիստը: Դիտորդների խումբը գտնում է, որ հերթապահության բացակայությունն անընդունելի է քրեակատարողական հիմնարկի համար: Դիտորդների խմբի անդամները հայտնաբերեցին 20 տուփ (200 սրվակ) անալգին դեղամիջոց, որի ժամկետը լրացել էր դեռ մեկ ամիս և 22 օր առաջ: Բժիշկը գտնում էր, որ ինքը դեղի ժամկետն անցնելուց հետո դեռ երկու ամսվա ընթացքում իրավունք ունի դրանք օգտագործել և նշեց, որ մնացած մեկ շաբաթվա ընթացքում այդ 200 սրվակը կտրվի ազատազրկվածներին:	13. Կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ ՀՀ արդարադատության նախարարության «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ի հաստիքների, այդ թվում՝ նաև բուժանձնակազմի ավելացման նպատակահարմարության վերաբերյալ:
14. Հիմնարկում բժշկական սարքավորումների ապահովվածությունը անբավարար է: Սարքավորումներից հիմնարկը ունի միայն տոնոմետր, սրտագիր, ինչպես նաև ատամնաբուժական աթոռ, որը ֆիզիկապես և բարոյապես այնքան մաշված է, որ պիտանի չէ օգտագործման համար:	14. Հիմնավոր մեկնաբանությունները տես առաջարկությունների վերաբերյալ 19-րդ կետում:
15. «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում գործում է 6 զբոսահրապարակ, որոնք գտնվում են հիմնարկի տանիքում: Ամեն մեկում կա նստարան՝ 3-4 նստատեղերով, որոնք վերջերս վերանորոգվել էին: Հաշվի առնելով, որ ազատազրկվածներին զբոսանքի են հանում ըստ խցերի (իսկ խցերում պահվում է մինչև 5 մարդ), ապա նստարանների այդ չափսերը բավարար չեն: Անձրևից պաշտպանող ծածկերը գտնվում են զբոսահրապարակների անկյուններում և չեն ծածկում նստարանները: Ազատազրկվածների համար սպորտով զբաղվելու հնարավորություն ստեղծված չէ: Ազատազրկվածներն իրենց հետ մեծ շշերով ջուր են վերցնում զբոսահրապարակներում՝ որպես մարզագնդեր օգտագործելու համար: Նրանք նաև ցանկություն հայտնեցին, որ, հնարավորության դեպքում, զբոսահրապարակներում թենիսի սեղան տեղադրվի: Ընդ որում՝ վարչակազմի համաձայնության դեպքում այդ սեղաններն ազատազրկվածները պատրաստ են բերել սեփական միջոցների հաշվին:	15. Հիմնավոր մեկնաբանությունները տես առաջարկությունների վերաբերյալ 21-րդ և 22-րդ կետերում:
16. Ազատազրկվածներին զբոսանքի են հանում երկու հերթափոխով՝ մեկ ժամ տևողությամբ: Զբոսանքը կազմակերպվում է առավոտյան ժամը 10:00-ի և 11:00-ի սահմաններում: Ազատազրկվածների կողմից կան տարբեր առաջարկություններ զբոսանքի կազմակերպման կապակցությամբ: Մասնավորապես, այն ազատազրկվածները, որոնք գերադասում են զբաղվել մարմնամարզությամբ, առաջարկում են, որ զբոսանքները կազմակերպվեն միշտ նույն ժամին, առանց հերթափոխի փոփոխության, որպեսզի պահպանվի պարապմունքների ռեժիմը: Մնացած ազատազրկվածները գերադասում են, որ զբոսանքը կազմակերպվի ճաշից հետո: Բոլոր ազատազրկվածները միաձայն նշում են, որ ցանկալի կլիներ զբոսանքի տևողությունը երկարացնել և հնարավորության դեպքում կազմակերպել այն օրական 2 անգամ:	16. Զբոսանքները կազմակերպվում են հիմնարկի պետի կողմից սահմանված ժամանակացույցով և օրվա կարգացուցակին համապատասխան՝ հաշվի առնելով նաև հիմնարկի անվտանգության ապահովման խնդիրները:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
17. «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում գործում է գրադարան: Բոլոր գրքերը ցուցակագրված են, և ազատազրկվածներն ունեն ընտրելու հնարավորություն: Այնուամենայնիվ, ազատազրկվածների որոշ մասը չգիտեր այդ ցուցակի գոյության մասին: Խմբի դիտարկումների համաձայն՝ գրքերի պահման պայմանները բավարար չեն՝ տարածքը փոքր է, գրապահարանների քանակը բավարար չէ: Ուստի քիչ կարդացվող գրքերը շարված էին հատակին: Ռուսերեն գրքերի քանակն ավելի շատ է, քան հայերեն: Կա նոր գրքերի կարիք: Գրքերի ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանը ստանում է երեք անուն օրաթերթ: Թերթերը ստանում են մեկական օրինակից, սակայն աշխատակիցները նշում էին, որ դա բավարար է բոլոր 13 խցերի ազատազրկվածների համար:	17. Հիմնավոր մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 22 կետը:
18. Հիմնարկում չկա առանձին կարանտինային խուց, ինչը հակասում է օրենսդրության պահանջներին:	18. Տրվել է համապատասխան հանձնարարական հիմնարկի առկա խցերից մեկը որպես կարանտինային խուց առանձնացնելու վերաբերյալ:
19. Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է՝ արդարացի աշխատավարձ համարելով 200000 դրամը՝ ներկայիս 70000-80000 դրամի փոխարեն:	19. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Հիմնարկը տեղափոխել ԱԱՕ տարածքից կամ կատարել այնպիսի շինարարական աշխատանքներ, որի արդյունքում ՔԿՀ-ն մեկուսացված կլինի ԱԱՕ-ից:	1. ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակմանը, որով կամրագրվի հիմնովին նոր քրեակատարողական հիմնարկների կառուցումը կամ վերանորոգումն առաջիկա 10-15 տարիների ընթացքում: Դրանով կլուծվի նաև ուղղիչ հիմնարկների տեսակների՝ օրենսդրությամբ սահմանված պայմանների ապահովումը: Առկա ֆինանսական միջոցները նպատակահարմար է օգտագործել մեկ քրեակատարողական հիմնարկում բոլոր խնդիրները վերջնականապես լուծելու համար: Ներկայումս կառուցվում է նոր՝ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը, որը համապատասխանելու է եվրոպական չափանիշներին: Ներկայացված առաջարկությունը կքննարկվի վերոհիշյալ ծրագրի մշակման ընթացքում:
2. ՀՀ արդարադատության նախարարի 2007 թ. փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» հրամանում փոփոխել «Երևան Կենտրոն» հիմնարկի հա	2. Լրակազմով նախատեսված է կիսաբաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների պահում, որպեսզի հետագայում հնարավոր լինի նրանց տեխնիկատնտեսական աշխատանքներում ընդգրկել: Ներկայումս կիսաբաց ուղղիչ հիմնարկի

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
մար նախատեսված լրակազմը և համապատասխանեցնել այն հիմնարկի ներկայիս շենքային պայմաններին:	դատապարտյալներ չեն պահվում:
3. Խցերում տեղադրել գիշերային լուսավորության (փոքր հզորության) լամպեր:	3. Լուսավորությունը տարանջատված չէ միայն երեք խցերում: Տրվել է համապատասխան հանձնարարական նշված երեք խցերի լուսավորության տարանջատման հարցը սեղմ ժամկետներում կարգավորելու համար:
4. Հիմնարկում սարքավորել օդափոխության համակարգ:	4. Ներկայիս շենքային պայմաններից ելնելով առայժմ հնարավոր չէ: Դրանց հնարավոր կլինի անդրադառնալ ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
5. Մեկուսացնել խցերի զուգարանները:	5. Տես նախորդ կետի մեկնաբանությունը:
6. Գտնել տեսակցությունների հսկողության այնպիսի ձև, որ, ապահովելով անվտանգությունը, չխախտվի ազատազրկվածների անձնական կյանքի իրավունքը:	6. ՀՀ կառավարության 03.08.2006 թ. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 143 կետի համաձայն՝ մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ:
7. Տեսակցության սենյակների պակասը լրացնելու նպատակով հիմնարկի առաջին հարկի չգործող խցերից մի քանիսը վերափոխել տեսակցության սենյակների և վերացնել տեսակցությունների ժամանակի սահմանափակումը:	7, 8. Հիմնարկի նկուղային հարկում առկա չգործող խցերում տեսակցության սենյակներ կահավորելը և տեսակցություններ կազմակերպելը տեխնիկապես հնարավոր չէ և նպատակահարմար չէ:
8. Հիմնարկում կահավորել երկարատև տեսակցության սենյակ (հնարավոր է՝ առաջին հարկի առավել լուսավոր խցերից մեկում) կամ բացառել «Երևան Կենտրոն» ՔԿՀ-ում դատապարտյալներ պահելը:	
9. Վերանայել հեռախոսազանգերի ժամանակացույցը և հնարավորության դեպքում ավելացնել հեռախոսազանգերի հաճախականությունը:	9. Ներքին կանոնակարգի 182-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով: Հեռախոսակապից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 15 րոպեն: Նույն կանոնակարգի 183 կետի համաձայն՝ ազատազրկվածի հիմնավոր պատճառաբանության դեպքում հեռախոսազանգի տևողությունը կարող է երկարացվել ևս 10 րոպեով:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
10.Տեղափոխել հանձնուքի ընդունման կետը այնպիսի տարածք, որ այն առնչություն չունենա ԱԱԾ-ի հետ:	10. Շենքային պայմաններից ելնելով՝ առայժմ հնարավոր չէ (տես առաջարկությունների 1-ին կետի մեկնաբանությունները):
11.Վերացնել հանձնուք ընդունելու հաճախականության սահմանափակումը:	11. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կալանավորված անձը ամսվա ընթացքում կարող է ստանալ մինչև 70 կիլոգրամ հանձնուք, որը կարող է ստանալ միանվագ կամ մաս-մաս: Ուսումնասիրություններով օրենսդրության պահանջի խախտումներ չեն հայտնաբերվել:
12.Վերացնել խցերում սառնարան ունենալու արգելքը:	12. Օրենսդրությամբ նման սահմանափակում նախատեսված չէ, սակայն չկա նաև պարտավորություն՝ խցերը սառնարաններով ապահովելու վերաբերյալ: Կալանավորվածի կամ դատապարտյալի կողմից նման ցանկություն հայտնելու և ապրանքի ձեռքբերման ու շահագործման համար նախատեսվող ծախսերի կատարման պարտավորվածությունը ստանձնելուց հետո վերջիններս կարող են իրենց խցերում ունենալ հեռուստացույց, ռադիոընդունիչ, մագնիտոֆոն և փոքր չափսերի սառնարան:
13.Տաք ջրամատակարարման համակարգը դարձնել ավելի հարմար և ճկուն:	13. Ավելացվել է էլեկտրական ջրատաքացուցիչների քանակը:
14.Ազատազրկվածների լոգանք ընդունելու համար ավելացնել ցնցուղների քանակը:	14. Ցնցուղները տեղադրված են լողասենյակների տարածքներին համապատասխան:
15.Հնարավորության դեպքում ավելացնել լոգանք ընդունելու հաճախականությունը:	15. Տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված չափով, հնարավորության դեպքում կավելացվի:
16.Ապահովել հիմնարկը նոր անկողնային պարագաներով:	16. Տրամադրվում է ՀՀ կառավարության 10.04.2003թ. թիվ 413-Ն որոշմանը համապատասխան: Ուսումնասիրություններով նշված որոշման պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:
17.Բուժմասին հատկացնել լրացուցիչ սենյակներ (հնարավոր է՝առաջին հարկի չօգտագործվող խցերից)՝ անհրաժեշտ քանակությամբ աշխատասենյակներ կահավորելու համար:	17. Նկուղային հարկում առկա չգործող խցերի օգտագործումը որպես բուժմասի լրացուցիչ սենյակներ անթույլատրելի է: Դրանց հնարավոր կլինի անդրադառնալ ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
18.Բացառել հիմնարկում ժամկետանց դեղորայքի օգտագործումը:	18. Հանձնարարվել է բացառել է ժամկետանց դեղերի օգտագործումը:
19.Համալրել հիմնարկը անհրաժեշտ բուժսարքավորումներով:	19.Քրեակատարողական ծառայությունը, այդ թվում նաև՝ «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը անհրաժեշտ գույքով և բժշկական սարքավորումներով կապահովվեն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
20.Միջոցներ ձեռնարկել ազատազրկվածների համար սպորտով զբաղվելու հնարավորություն ստեղծելու համար:	20.Ներկա շենքային պայմաններով հնարավոր չէ: Դրանց հնարավոր կլինի անդրադառնալ ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
21.Զբոսանքի կազմակերպման համար կիրառել ավելի ճկուն ժամանակացույց:	21. Ներքին կանոնակարգի 61-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձի և փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալի զբոսանքի ժամերը սահմանվում են օրվա կարգացուցակով՝ ըստ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցի:
22.Բարելավել գրադարանի գրքերի պահման պայմանները (ավելացնել գրապահարանների քանակը) և համալրել այն հատկապես հայերեն գրականությամբ:	22. Ներքին կանոնակարգի 118-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձինք և դատապարտյալներն իրավունք ունեն օգտվելու կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի աշխատողի միջոցով՝ իրենց հաշվին կամ բաժանորդագրության ձևով ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից, որի համար կալանավորված անձը կամ դատապարտյալը դիմում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետին: Բաժանորդագրության ձևակերպումը կատարում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը: Բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հաշվից: Միևնույն ժամանակ գրադարանի համալրման համար օգտագործվում են հնարավոր մի շարք այլ միջոցներ:
23.Կահավորել չափանիշներին համապատասխանող պատժախուց:	23. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց տվյալ հիմնարկում կիրառվում է խիստ հազվադեպ: Այդ պատճառով, անհրաժեշտության դեպքում հիմնարկն ի վիճակի է կազմակերպել պատժախցին ներկայացվող պայմանները բավարարող խուց: Ներկայումս նպատակահարմար չէ նման խցի կահավորումը՝ նկատի ունենալով հիմնարկի գերբեռնվածությունը:
24.Կահավորել առանձին կարանտինային խուց:	24. Տրվել է համապատասխան հանձնարարական՝ հիմնարկի առկա խցերից մեկը որպես կարանտինային խուց առանձնացնելու վերաբերյալ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

1. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կարող է պահվել 840 մարդ: Փաստացի ամբողջ 2008 թվականի ընթացքում հիմնարկում նկատվել է գերբնակեցում: Արդյունքում՝ խցերի մեծ մասում ազատազրկվածների թիվը զգալիորեն գերազանցում էր նախատեսվածը և նույնիսկ լրացուցիչ մահճակալների տեղադրման պայմաններում շատ ազատազրկվածներ չունեին անհատական քնելատեղեր և քնում էին հերթափոխով:	1. Մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:
2. Հիմնարկի հիմնական խնդիրներից է կոյուղին, որը հաճախակի վնասվում է՝ ստեղծելով անտանելի վիճակ հատկապես առաջին մասնաշենքում: Կոյուղու խնդրի լուծման տարբերակ հիմնարկի ղեկավարությունը տարիներ շարունակ չի կարողանում գտնել՝ կապելով դա հիմնարկի սխալ նախագծման հետ:	2. Ընդունելի է, նշված խնդրի կարգավորման համար կատարվում են նախագծանախահաշվարկային աշխատանքներ և համապատասխան ֆինանսավորման դեպքում կոյուղին կենթարկվի հիմնանորոգման:
3. Ջրամատակարարումը հիմնարկում սահմանափակ է՝ ըստ ժամանակացույցի առավոտյան և երեկոյան 2-3 ժամով: Այդ պատճառով ազատազրկվածները ստիպված են մշտապես ջրի պաշար ունենալ:	3. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:
4. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բոլոր խցերը (բացի ցմահ դատապարտյալների խցերից) 8 տեղանի են: Չնայած խցերում ապահովվում է մեկ ազատազրկվածի համար նախատեսված 4 քմ տարածքը, սակայն մեկ խցում այդքան ազատազրկված պահելը հակասում է Քրեակատարողական օրենսգրքի հոդված 17-ի պահանջներին, որով նախատեսվում է, որ փակ ուղղիչ հիմնարկի խցերում պետք է պահվեն մինչև 4 դատապարտյալ: Բացի այդ, գերբնակեցման պատճառով խցերում տեղադրվել են լրացուցիչ 2-4 մահճակալներ և այնտեղ, ըստ Դիտորդների խմբի դիտարկումների, պահվում են մինչև 13, իսկ այլ տեղեկություններով՝18 ազատազրկված:	4. Մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:
5. Խցերի մի մասի բնական լուսավորությունը բավարար չէ, պատուհանները փոքր են և չեն ապահովում անհրաժեշտ լուսավորություն: Արհեստական լուսավորությունն ապահովվում է խցի մեջտեղում առաստաղից կախված մեկ լամպով, որը միացված է թե՛ երեկոյան, թե՛ գիշերային ժամերին, քանի որ չկա առանձին գիշերային լուսավորության լամպ: Գիշերային լուսավորության լամպի բացակայությունը ստիպում է գիշերվա ժամերին միացված պահել երեկոյան լուսավորության ավելի հզոր լամպը, ինչը խանգարում է ազատազրկվածներին քնել:	5. Նշված խնդիրը առկա է ոչ բոլոր խցերում: Պատասխանատու ծառայություններին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում լուծել լուսավորության տարանջատման հարցը:
6. Խցերում չի գործում օդափոխության համակարգը, ինչի արդյունքում մաքուր օդի ներթափանցումը խցեր սահմանափակ է:	6. Ընդունելի է, որ բավարար չէ օդափոխության համակարգը, սակայն դա կապված է շենքային պայմանների հետ: Խցերի օդափոխության համար կարող են օգտագործվել պատուհանները:
7. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գործում է 2 կարճատև տեսակցության սենյակ, որոնցից մեկը նախատեսված է միաժամանակ 7 տեսակցության համար: Սա քրեակատարողական համակարգում միակ տեսակցության սենյակն է, որտեղ տեսակցությունները տեղի են ունենում առանց ազատազրկվածի և նրա հարազատների միջև ան-	7. Օրենսդրությամբ արգելված չէ նման պայմանների ստեղծումը: Տվյալ դեպքում հաշվի են առնվել անվտանգության ապահովման խնդիրները:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
միջական շփման հնարավորության՝ նրանք բաժանված են ապակե միջնորմով, խոսում են միմյանց հետ հեռախոսով: Տեսակցության այս պայմանները ստեղծում են խտրական պայմաններ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալների նկատմամբ: Այս պայմանների ստեղծումը նաև անհասկանալի է՝ հաշվի առնելով, որ օրենսդրությամբ չի նախատեսվում տեսակցության սենյակների այսպիսի սարքավորման պահանջ:	
8. Լոգարաններում չկա օդափոխության համակարգ. այն ապահովվում է պատուհաններով: Հիմնարկի լոգարաններում ապահովված չէ նաև ջեռուցումը:	8. Մեկնաբանությունը տես առաջարկությունների վերաբերյալ 9-րդ և 10-րդ կետերում:
9. Լոգանքի կազմակերպումը հիմնարկում չունի կանոնավոր բնույթ, և ազատազրկվածները լոգանք են ընդունում հիմնականում խցերի սանհանգույցներում, թեև այնտեղ չկան համապատասխան պայմաններ:	9. Հիմնավոր չէ, ուսումնասիրություններով պարզվել է, որ լոգանքը տրամադրվում է սահմանված կարգով՝ առնվազն շաբաթը մեկ անգամ:
10. Համալրել հիմնարկի բուժմասը անհրաժեշտ մասնագետներով:	10. Բուժմասը համալրված է հաստիքային ցուցակով նախատեսված մասնագետներով:
11. Զբոսահրապարակներում ստեղծված չեն սպորտով զբաղվելու, մարզվելու հնարավորություններ:	11. Զբոսահրապարակների չափերի փոքր լինելու պատճառով կալանավորվածները մարմնամարզությամբ զբաղվում են հնարավորության սահմաններում:
12. Գրադարանում կա նոր գրքերի կարիք: Գրքերի ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում: Գրադարանը մամուլ չի ստանում:	12. Մեկնաբանությունը՝ տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 22-րդ կետում:
13. Սնունդը «Նուբարաշեն» ՔԿՀ-ում մշտապես եղել է ազատազրկվածների դժգոհության առարկա: Դա կապված է եղել թե սննդամթերքի, հատկապես յուղի որակի, թե ճաշերի պատրաստման հետ: Կարևոր խնդիրներից է այս հարցում խոհարարների մասնագիտական պատրաստվածությունը: «Նուբարաշեն» ՔԿՀ-ն չունի քաղաքացիական մասնագետ խոհարարի հաստիք (ինչպես «Երևան Կենտրոն» կամ «Գորիս» ՔԿՀ-ներում է): Արդյունքում՝ խոհարար է նշանակվում տնտեսմասի դատապարտյալներից մեկը, որը չունի խոհարարական կրթություն:	13. Բոլոր քրեակատարողական հիմնարկները ստանում են նույն որակի սննդամթերք: Քաղաքացիական մասնագետ խոհարարի հաստիք ունենալը ընդունելի է: Ձեռնարկվում են համապատասխան միջոցներ տվյալ հարցի լուծման կապակցությամբ:
14. Խոհանոցն ընդհանուր առմամբ ունի հիմնանորոգման կարիք:	14. Ընդունելի է, վերանորոգման աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել համապատասխան ֆինանսավորման դեպքում:
15. Հացը «Նուբարաշեն» ՔԿՀ-ի համար թխվում է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամին պատկանող՝ ՔԿՀ-ի տարածքում գտնվող հացաթխման արտադրամասում: Այստեղ թխվող հացի որակը տարբեր է, և երբեմն հացը լինում է թթված և թաց: Ազատազրկվածների մեծ մասը նշում էր, որ օգտվում է հանձնուքների միջոցով ստացված սննդից:	15. Ձեռնարկված միջոցների շնորհիվ հացի որակը լավացել է, աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվում են:
16. Կարանտինային խուցը ապահովված չէ ինֆորմացիայի որևէ աղբյուրով՝ հեռուստացույց, ռադիո, և ազատազրկվածները կարանտինային փուլում ամբողջովին կտրված են արտաքին աշխարհից:	16. Պատասխանատու ծառայություններին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում կարանտինային խցերում տեղադրել ռադիոընդունիչներ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
17. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում աշխատակազմի համար ստեղծված չեն ամենատարրական պայմաններ: Չկա ճաշարան, ինչի պատճառով աշխատակիցները ընդմիջման սնունդը բերում են իրենց հետ և ուտում են հենց աշխատատեղում: Մասնաշենքերում աշխատատեղերը գտնվում են միջանցքներում, ուր չկա ջեռուցման որևէ հնարավորություն:	17. Մասամբ ընդունելի է, նշված խնդիրը պայմանավորված է շենքային պայմաններով: Քննարկվում են աշխատակազմի համար ճաշարան ստեղծելու հնարավորությունները, իսկ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կլուծվի նաև ջեռուցման հարցը:
18. Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է՝ արդարացի աշխատավարձ համարելով 200000-250000 դրամը՝ ներկայիս 70000-75000 դրամի փոխարեն:	18. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Միջոցներ ձեռնարկել հիմնարկի գերբնակեցումը վերացնելու համար, իսկ մինչ այդ տեղադրել լրացուցիչ մահճակալներ՝ բոլոր ազատազրկվածներին անհատական քնելատեղերով ապահովելու նպատակով:	1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, այդ թվում նաև՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի գերբնակեցման համար պատճառ է հանդիսացել հետևյալը. համեմատած 2008 թ. հունվարի 1-ի հետ՝ 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը ավելացել է 426-ով, իսկ տարբեր պատճառներով նախնական կալանքից և պատիժը կրելուց ազատվածների թիվը նվազել է 287-ով: ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց թվի ավելացման համար պատճառ է հանդիսացել նաև դատապարտյալների փոխադրումները ժամանակավորապես ոչ պատշաճ կատարելը անցումային փուլում (ոստիկանության զորքերի տվյալ գործառույթը փոխանցվել է քրեակատարողական ծառայությանը) և դատարանների կողմից դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելու կարգադրություններն անհարկի ուշացնելը: Գերբնակեցման հետ կապված խնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն տրամադրվել է արդարադատության նախարարի 17.02.2009 թ. գրությամբ: Ազատազրկվածները անհատական քնելատեղերով ապահովված են:
2. Հետագա վերանորոգումների ընթացքում նախատեսել խցերում փայտե հատակ:	2. Ընդունելի է, ֆինանսական միջոցների առկայության դեպքում վերանորոգման աշխատանքներ նախատեսելու ժամանակ կքննարկվի:
3. Ապահովել խցերում գիշերային լուսավորության լամպեր:	3. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում լուծել լուսավորության տարանջատման հարցը:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
4. Վերափոխել կարճատև տեսակցության սենյակը՝ ապահովելով այնտեղ տեսակցողների միջև անմիջական շփման հնարավորություն:	4. Հիմնավոր չէ (տես մեկնաբանությունների 7 կետը):
5. Ապահովել կարճատև տեսակցության սենյակների ջեռուցումը:	5. Ջեռուցվում են էլեկտրական սալիկներով:
6. Ավելացնել երկարատև տեսակցությունների սենյակների քանակը:	6. Կապված է շենքային պայմանների հետ, հանձնարարվել է քննարկել երկարատև տեսակցության սենյակների քանակի ավելացման հնարավորությունը:
7. Միջոցներ ձեռնարկել հեռախոսակապից օգտվելու հաճախականությունն ավելացնելու համար:	7. Հեռախոսային խոսակցությունները տրամադրվում են հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցով, օրենսդրության պահանջների խախտումներ չկան:
8. Ապահովել ազատազրկվածների լոգանքը հիմնարկի բաղնիքների պայմաններում՝ օրենսդրությամբ նախատեսված հաճախականությամբ:	8. Լոգանքը տրամադրվում է Ներքին կանոնակարգի 47-րդ կետի համաձայն՝ առնվազն շաբաթը մեկ անգամ, առնվազն 15 րոպե: Օրենսդրության պահանջների խախտումներ չկան:
9. Ապահովել լոգարանները օդափոխության համակարգով:	9. Հանձնարարվել է տեղադրել էլեկտրական օդափոխիչներ:
10. Ապահովել լոգարանների ջեռուցումը:	10. Շենքը տաքացվում է էլեկտրական սալիկներով, ինչը հնարավոր չէ իրականացնել լոգարաններում, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի լուծել լոգարանների ջեռուցման հարցը:
11. Ֆլյուրոգրաֆիկ սարքի աշխատանքն ապահովելու համար տեղադրել հոսանքի կարգավորիչ:	11. Ֆլյուրոգրաֆիկ սարքը գործում է, միջոցներ են ձեռնարկվել հոսանքի նոր կարգավորիչ ձեռք բերելու համար:
12.Հիմնարկին հատկացնել նոր ռենտգենոգրաֆիկ սարք:	12. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
13.Հիմնարկին հատկացնել ատամնաբուժական ռենտգեն սարք:	13. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
14. Ապահովել օրենսդրությամբ նախատեսված ամենօրյա զբոսանք:	14. Միջոցներ են ձեռնարկվում առավելագույնս ապահովելու ուղղությամբ:
15. Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն:	15. Զբոսահրապարակների չափսերի փոքր լինելու պատճառով կալանավորվածները հնարավորության սահմաններում զբաղվում են մարմնամարզությամբ:
16.Համալրել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	16, 17. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 22-րդ կետում:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
17.Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:	
18.Հիմնանորոգել խոհանոցը:	18. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կվերանորոգվի:
19.Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:	19. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կկատարվի:
20.Հիմնարկի հաստիքացուցակում նախատեսել մասնագետ խոհարարի հաստիք:	20. Ներկայումս քննարկման փուլում է գտնվում քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը, որոնց ընդունումից հետո կվերանայվեն քրեակատարողական ծառայության հաստիքների տեղաբաշխումը:
21.Բարձրացնել սննդի որակը:	21. Սննդի որակը համապատասխանում է սահմանված չափանիշներին:
22.Հիմնանորոգել պատժախցերը:	22. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կկատարվի:
23.Կարանտինային խցերում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք չեն զիջի սովորական խցերի պայմաններին:	23. Ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ կարանտինային խցերի պայմանները բարելավելու ուղղությամբ:
24.Ապահովել կարանտինային խցերում ռադիո:	24. Պատասխանատու ծառայություններին հանձնարարվել է կարճ ժամանակահատվածում լուծել կարանտինային խցերի ռադիոֆիկացումը:
25.Ապահովել հիմնարկը անհրաժեշտ քանակությամբ հաստիքներով, հատկապես սոցիալ-հոգեբանական ծառայության գծով:	25. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 20-րդ կետում:
26.Բարելավել աշխատակազմի աշխատանքային պայմանները:	26. Դրանք հնարավոր կլինի բարելավել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ

1.«Արթիկ» ՔԿՀ-ում ջուրը մատակարարվում է շուրջօրյա ռեժիմով, սակայն լուրջ խնդիր է ջրի որակի հարցը: Ջուրը հոսում է ավազախառն, որի մեջ կան թրթուրներ և այլ մանր կենդանիներ: Ջրի որակի խնդիրը սուր է ոչ միայն «Արթիկ» ՔԿՀ-ում, այլև հիմնարկին հարող ամբողջ բնակավայրում:	1. Մեկնաբանությունը տես «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում:
2.Կան խցեր, որտեղ բացակայում է կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:	2. Թերությունը վերացված է:
3.«Արթիկ» ՔԿՀ-ն ունի 6 երկարատև տեսակցությունների սենյակներ, որոնցից յուրաքանչյուրի մակերեսը կազմում է 16-20 քմ: Լողասենյակը չի գործում:	3. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարված է հնարավորինս կարճ ժամանակահատվածում լուծել լողասենյակի անսարքությունը:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
4.Հանձնուքի ընդունման կետը «Արթիկ» ՔԿՀ-ում առանձնացված կառույց է, որի պատուհանից դատապարտյալների հարազատները հանձնուքը փոխանցում են անմիջապես դրսից: Հերթեր առաջանալու դեպքում հարազատները պետք է սպասեն դրսում, որտեղ չկա որևէ հարմարություն: Տարածքում չկան խմելու ջուր, զուգարան, որից դրսում սպասող ազատազրկվածների հարազատները կարողանան օգտվել:	4. Համապատասխան հնարավորության և ֆինանսավորման դեպքում հարցը լուծում կստանա:
5.Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Ճաշարանի տարածքում ճաշացանկը փակցված չէ: Ազատազրկվածները դժգոհում էին հավելյալ սննդի որակից: Մասնավորապես՝ կարագը փչացած է եղել, ինչը հաստատվեց նաև հիմնարկի վարչակազմի կողմից: Պարզվեց, որ մեծ քանակությամբ ստացված կարագը երկար պահելու ընթացքում փչացել էր:	5. Ճաշարանի տարածքը ջեռուցվում է էլեկտրական սալիկներով: Կարագի փչացած լինելու փաստը եզակի է, և ընդհանրացումը հիմնավոր չէ: Որևէ իրավական ակտով սահմանված չէ ճաշացանկի փակցված լինելու պահանջը, չնայած դրան՝ հանձնարարվել է այն փակցնել խոհանոցում:
6.Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է և արտաժամյա կատարված աշխատանքների դիմաց չվճարվելու հարցը: Ըստ հիմնարկի աշխատակիցների՝ արդարացի աշխատավարձ է համարվում 200000-250000 դրամը:	6. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Արդարադատության նախարարության, տեղական իշխանությունների, ջուր մատակարարող ընկերության միջև համագործակցության միջոցով լուծել ջրի որակի հարցը:	1. «Արթիկ» քրեակատարողական հիմնարկին սնուցող ջրագծի հիմնանորոգման հարցը 03.05.2008 թ. ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:
2. Վարդակներ տեղադրել բոլոր այն խցերում, որտեղ բաց են դրանց տեղերը:	2. Մշտապես կատարվում է:
3. Բոլոր խցերում ապահովել կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:	3. Կատարված է:
4. Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:	4. Ֆինանսական հնարավորության առկայության դեպքում կկահավորվեն:
5. Կարճատև տեսակցությունների սենյակին կից կառուցել սանհանգույց:	5. Հնարավորությունները քննարկվում են:
6. Բոլոր սենյակներում ապահովել բավարար բնական լուսավորություն:	6. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարված է հնարավորինս կարճ ժամանակահատվածում լուծել տեսակցությունների սենյակների բնական լուսավորության հարցը:
7. Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ երկարատև տեսակցություններ կազմակերպելու համար:	7. Հանձնարարվել է կատարել համապատասխան ուսումնասիրություններ այն կազմակերպելու համար:
8. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:	8. Համապատասխան ֆինանսավորման դեպքում կկառուցվի:
9. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթում կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց հեշտությամբ ծանոթանալ:	9. Հանձնարարված է իրականացնել:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
10.Բարելավել սանիտարական վիճակը հիմնարկի բոլոր բաղնիքներում:	10.11. 12. Լողասենյակները ծրագրված հերթականությամբ վերանորոգվում են:
11.Շարունակել մասնաշենքերում բաղնիքների վերանորոգումը՝ 5-րդ մասնաշենքի բաղնիքի օրինակով:	
12.Հիմնարկի բաղնիքներում հանդերձարաններ կառուցել:	
13.Ավելացնել բուժմասի հիվանդասենյակներում տեղերի քանակը:	13. Ավելացվել է:
14.Բուժմասի անձնակազմը համալրել անհրաժեշտ բժիշկ մասնագետներով:	14. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 20-րդ կետում:
15.Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:	15. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
16.Զբոսահրապարակներն ապահովել նստարաններով և տեղումներից պաշտպանող ծածկերով:	16. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարված է հնարավորինս կարճ ժամանակահատվածում զբոսահրապարակներն ապահովել նստարաններով և տեղումներից պաշտպանող ծածկերով:
17.Լրացնել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական և պատմական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	17, 18. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
18.Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:	
19.Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:	19.Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 19-րդ կետում:
20.Թարմացնել խոհանոցի սպասքը:	20, 22. Օրենսդրությամբ սահմանված ժամկետներին համապատասխան թարմացվում են:
21.Ճաշացանկի օրինակը փակցնել ճաշարանում:	21. Ճաշացուցակները ճաշարանի տարածքում փակցնելը օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն վարչակազմերի նախաձեռնությամբ ճաշացուցակները փակցվում են խոհանոցներում:
22.Թարմացնել ճաշարանի սպասքը:	
23.Լուծել ճաշարանի ջեռուցման հարցը:	23. Տաքացվում է էլեկտրական սալիկներով:
24.Բարելավել հավելյալ սննդի պահպանման պայմանները:	24. Հանձնարարված է բարելավել սննդամթերքի պահման պայմանները և բացառել պահվող սննդի փչացումը:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ	
1. Հիմնարկի վերաբացումից հետո սխալ է հաշվարկվել հիմնարկի տեղերի քանակը: Չնայած ըստ լրակազմի դեռ պետք է ազատ տեղեր լինեին, հիմնարկը ծանրաբեռնված էր, որի պատճառով օգտագործվում էին կարանտինային և սանմասի խցերը:	1. Մեկնաբանությունները տես «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում:
2. Խցերում բացակայում է կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը, սակայն խցերում կային Քաղաքացիական հասարակության ինստիտուտի հրատարակած «Կալանավորված անձանց իրավունքները» գրքույկը:	2. Ուսումնասիրություններով չեն հիմնավորվել:
3. Հիմնարկում ստեղծված չեն համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:	3. Նման պայմաններ ստեղծված են:
4. Երկարատև տեսակցությունների սենյակում չկա առանձին խոհանոց, որի պատճառով երկարատև տեսակցության մասնակիցներին նախապես զգուշացվում է, որ իրենց հետ բերեն չոր կամ այնպիսի սնունդ, որը հնարավոր լինի տաքացնել հիմնարկի խոհանոցում:	4. Ընդունելի է, հանձնարարված է սեղմ ժամկետներում կարգավորել խոհանոցի խնդիրը:
5. Հանձնուքի ընդունման կետի տարածքում չկան խմելու ջուր, զուգարան, որից կկարողանային օգտվել սենյակում կամ դրսում սպասող ազատազրկվածների հարազատները:	5. Հանձնարարվել է քննարկել և հնարավորության դեպքում լուծել խնդիրը:
6. «Վանաձոր» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի, և ստացվում է այնպես, որ ամենաուշը 8 օրը մեկ անգամ ազատազրկվածները լողանալու հնարավորություն են ունենում, ինչը հակասում է օրենսդրության պահանջներին: Դիտորդների խմբի այցելության պահին բաղնիքների մեծ մասում ցնցուղ չկար: Բաղնիքների պատերը խոնավանում են, որի պատճառով պատերի հարդարանքը ճաքճքել և թափվել էր: Հիմնականում բաղնիքները վերանորոգման կարիք ունեն:	6. Նշված թերությունների մեծ մասը վերացված են, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պայմաններում կկատարվեն լոգարանների հիմնանորոգման աշխատանքներ:
7. Ազատազրկվածների գնահատմամբ՝ եթե հիմնարկում հնարավոր է առաջին բուժօգնությունը, ապա հետագա՝ ավելի նեղ մասնագիտական բուժում ստանալը բավական բարդ է՝ համապատասխան մասնագետների, սարքավորումների և դեղորայքի բացակայության պատճառով:	7. Օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում են ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մարմինների և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հնարավորությունները: Դեղորայքի հետ կապված խնդիրներ չկան: Սարքավորումների հետ կապված՝ տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ - կետում:
8. Հիմնարկն ունի սարքավորումներով համալրման անհրաժեշտություն, և հիմնական սարքը, որի խիստ անհրաժեշտությունը նշվել է, ախտահանման սարքավորումն է, որը շատ փոքր է և չի բավարարում բուժմասի պահանջները: Ըստ բուժմասի աշխատակիցների՝ նրանք ունեն նաև բժշկական ընդհանուր օգտագործման գործիքների կարիք:	8. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ - կետում:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. Հիմնարկի գրադարանում կա նոր հայերեն գրքերի կարիք: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական և պատմական գրքերի կարիք կա: Գրադարանը թերթեր ստանում է, սակայն թերթերի տեսականին խիստ աղքատ է, գրադարանում եղած ամենաթարմ թերթը 3 օրվա հնության «Հայաստանի Հանրապետությունն» էր:	9. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
10. Ճաշարանի ներսում հաստատված ճաշացանկը փակցված չէր: Ճաշարանի սպասքը հիմնականում հին էր:	10. Ճաշացուցակները ճաշարանի տարածքում փակցնելը օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն վարչակազմերի նախաձեռնությամբ ճաշացուցակները փակցվում են խոհանոցներում:
11. Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է: Ըստ հիմնարկի աշխատակիցների՝ արդարացի աշխատավարձ է համարվում 200-250 հազար դրամը:	11. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ ապահովել:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Հստակեցնել լրակազմի թիվը՝ ըստ եղած տեղերի:	1. «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տեղերի քանակը սխալ չի հաշվարկվել: Ծանրաբեռնվածությունը առաջացել է տեխնիկատնտեսական աշխատանքներում ներգրավված և բաց տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների՝ լրակազմով սահմանվածից քիչ լինելու հետևանքով:
2. Միջոցներ ձեռնարկել գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար:	2. Առայժմ նման խնդիր չկա:
3. Բոլոր խցերում ապահովել կալանավորված և դատապարտված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:	3. Բոլոր խցերում ապահովված են:
4. Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:	4. Նման պայմաններ ստեղծված են:
5. Ստեղծել համապատասխան պարագաներով և սպասքով խոհանոց, որից կկարողանան ազատորեն օգտվել տեսակցության մասնակիցները:	5. Ընդունելի է, հանձնարարված է սեղմ ժամկետներում կարգավորել խոհանոցի խնդիրը:
6. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:	6. Հանձնարարվել է հնարավորության դեպքում կառուցել:
7. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթ կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց հեշտությամբ ծանոթանալու:	7. Կատարված է:
8. Ապահովել ազատազրկվածների՝ օրենսդրությամբ նախատեսված առնվազն 7 օրը մեկ անգամ լոգանքի հաճախականությունը:	8. Լոգանքը տրամադրվում է Ներքին կանոնակարգի 47-րդ կետի համաձայն՝ առնվազն շաբաթը մեկ անգամ, առնվազն 15 րոպե: Օրենսդրության պահանջների խախտումներ չկան:
9. Վերանորոգել հիմնարկի բոլոր բաղնիքները:	9, 11. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կվե-

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	րանորոգվեն և կապահովվեն անհրաժեշտ գույքով:
10.Բաղնիքներում տեղադրել ցնցուղներ:	10.Ցնցուղները տեղադրված են:
11.Բաղնիքների հանդերձարանները կահավորել անհրաժեշտ գույքով:	
12.Բուժմասի անձնակազմը համալրել անհրաժեշտ բժիշկ մասնագետներով:	12. Հաստիքային ցուցակը վերանայվելու դեպքում կքննարկվեն հնարավորությունները:
13.Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:	13. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 19-րդ կետում:
14.Ապահովել ազատազրկվածներին զբոսանքով նաև հանգստյան օրերին:	14. Ներկայումս քննարկման փուլում է գտնվում քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը, որոնց ընդունումից հետո կվերանայվեն քրեակատարողական ծառայության հաստիքների տեղաբաշխումը, որի հետևանքով էլ հիմնարկը կունենա անհրաժեշտ հաստիքային միավորներ տվյալ խնդրի լուծման համար:
15.Զբոսանքի վայրերը ապահովել ծածկերով, որոնք կծածկեն զբոսաբակերի նստարանները:	15. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է ապահովել:
16.Զբոսահրապարակներում ստեղծել սպորտով զբաղվելու հնարավորություն:	16. Հիմնարկում գործում է կահավորված մարզադահլիճ:
17.Լրացնել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական և պատմական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	17, 18. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
18.Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ և բազմազան մամուլով:	
19.Թարմացնել խոհանոցի սպասքը:	19. Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում թարմացվում է:
20.Ճաշացանկի նմուշը փակցնել ճաշարանում:	20. Ճաշացուցակները ճաշարանի տարածքում փակցնելը օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն վարչակազմերի նախաձեռնությամբ ճաշացուցակները փակցվում են խոհանոցում:
21.Համալրել թափուր հաստիքները:	21. Թափուր հաստիքների համալրման գործընթացը կրում է մշտական բնույթ:

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ

1. «Վարդաշեն» ՔԿՀ-ում լուրջ խնդիր է ջրամատակարարման հարցը: Հիմնարկում ջուրը մատակարարվում է օրական 2 անգամ՝ երկուական ժամով: Այդ պատճառով հիմնարկում ջրի պաշարներ են ստեղծվում:	1. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2. Բոլոր խցերի հատակը փայտից է, սակայն անորակ շինարարության պատճառով տախտակների միջև ճեղքեր են առաջացել, որտեղից խցեր են անցնում միջատներ և կարիճներ:	2. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է կատարել հատակի վերանորոգում:
3. Կիսաբաց տիպի խցերի ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է, սակայն այնտեղ բացակայում է օդափոխության համակարգը:	3. Կացարանի դռան և պատուհանների միջոցով կարելի է կատարել լիարժեք օդափոխություն:
4. Կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի կարճատև տեսակցությունների սենյակները նախատեսված են մեկական տեսակցության համար, բավական անմխիթար վիճակում են, չունեն բնական լուսավորություն: Սենյակներից մեկը չունի նույնիսկ էլեկտրական սարքերով ջեռուցման հնարավորություն: Սենյակներին կից չկա սանհանգույց: Հիմնարկի ղեկավարության խոսքով՝ կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի սենյակները չեն համապատասխանում հիմնարկի պահանջներին, ինչի համար մոտ ժամանակներս այս սենյակների փոխարեն կառուցվելու է նոր տեսակցությունների սենյակ՝ միաժամանակ 6 տեսակցության համար:	4. Տեսակցության նոր սենյակների կառուցման աշխատանքները ավարտման փուլում են:
5. Բաղնիքների սանիտարական վիճակը բավարար չէ: Հանդերձարան և նստարան կան միայն մեկում, որի սանիտարական վիճակը բավարար չէ:	5. Բաղնիքները կվերանորոգվեն համապատասխան ֆինանսավորման դեպքում:
6. Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տեղադրված են տարբեր տարողության բաքեր, որոնցում ջուրը տաքացվում է էլեկտրաէներգիայով: Երբեմն տաքացված ջուրը չի բավականացնում բոլոր ազատազրկվածների լոգանքն ապահովելու համար:	6. Տաք ջրամատակարարում ապահովող ջրի տարաների քանակն ավելացվել է:
7. Օդափոխություն և ջեռուցում «Վարդաշեն» ՔԿՀ-ի բաղնիքներում չկան:	7. Հանձնարարվել է տեղադրել էլեկտրական օդափոխիչներ, ֆինանսական միջոցների առկայության դեպքում կլուծվի նաև ջեռուցման խնդիրը:
8. Ընդհանուր առմամբ բուժմասի տարածքը փոքր է: Քանի որ հիմնարկում պահվում են իրավապահ մարմինների նախկին աշխատակիցներ և անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխումը «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ հնարավոր չէ, բուժմասի առկա վիճակը չի կարելի բավարար համարել՝ բուժումը պատշաճ կազմակերպելու համար: Ազատազրկվածների գնահատմամբ՝ եթե հիմնարկում հնարավոր է առաջին բուժօգնություն ստանալ, ապա հետագա՝ ավելի նեղ մասնագիտական բուժում ստանալը բավական բարդ է՝ համապատասխան մասնագետների և դեղորայքի բացակայության պատճառով:	8. Օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում են ՀՀ առողջապահության նախարարության բուժհիմնարկների և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հնարավորությունները:
9. Բազմաթիվ ազատազրկվածներ դժգոհում էին դեղորայքից, քանի որ որոշակի դեղեր հիմնարկը չի ստանում, և ազատազրկվածները ստիպված են դրանք ստանալ իրենց հարազատների միջոցով:	9. Քրեակատարողական հիմնարկները ապահովվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված ցանկացած դեղորայքով:
10. Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով բավական ցածր է: Ըստ աշխատակիցների՝ հիվանդասենյակներում պետք է արդիականացնել մահճակալները, անհրաժեշտ են նոր սարքավորումներ, մասնավորապես՝ հատուկ նշվեց սոնոգրաֆի անհրաժեշտությունը:	10. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11. Կալանավորվածների և դատապարտյալների պահելու վայրի զբոսահրապարակի մարզական սարքավորումները օգտագործման համար պիտանի չեն:	11. Հիմնարկն ապահովված է մարզադահլիճով, հնարավորության դեպքում ձեռք կբերվի նաև անհրաժեշտ մարզական գույք:
12. Կիսափակ ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալներն օգտվում են օրական ընդամենը մեկ ժամ զբոսանքի հնարավորությունից՝ օրենսդրությամբ նախատեսված երեք ժամի փոխարեն:	12. Մեկնաբանությունը տես «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների18-րդ կետում:
13. Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը մամուլ չի ստանում:	13. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
14. «Վարդաշեն» ՔԿՀ-ի խոհանոցի սանիտարական վիճակը բավարար չէ: Օդափոխության համակարգի բացակայության պատճառով պատերին բորբոս է առաջացել: Խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը ցածր մակարդակի է: Էլեկտրական կաթսաները չեն աշխատում և օգտագործվում են միայն ջուր հավաքելու համար: Հիմնարկը չունի քաղաքացիական խոհարարի հաստիք, և այդ պարտականությունները կատարում է դատապարտյալ, որը չունի հատուկ խոհարարական կրթություն:	14. Խոհանոցը բավարար վիճակի բերելու համար անհրաժեշտ է համապատասխան ֆինանսավորում: Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 19-րդ և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 20-րդ կետերում:
15. Հիմնարկի գերծանրաբեռնվածության պատճառով կարանտինային խցերը օգտագործվում են որպես ընդհանուր խցեր: Դա նշանակում է, որ նոր բերված կալանավորվածներն անմիջապես հայտնվում են ընդհանուր խցում, և նրանց հետ կարանտինային փուլում նախատեսված աշխատանքներ չեն տարվում:	15. Անհրաժեշտությունից ելնելով՝ որպես կարանտինային խուց օգտագործվում է կալանավորված անձանց պահելու խցերից մեկը: Նոր բերված ազատազրկվածների հետ կարանտինային փուլի աշխատանքները կատարվում են ամբողջ ծավալով:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Արդարադատության նախարարության, թաղապետարանի և ջուր մատակարարող ընկերության միջև համագործակցության միջոցով լուծել ջրամատակարարման հարցը:	1. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:
2. Հիմնարկում անցկացնել ջեռուցման համակարգ, իսկ մինչ այդ պետք է նախատեսել պետական միջոցներով համապատասխան ջեռուցող սարքերի ապահովումը խցերում:	2, 3, 8, 10. Հնարավոր կլինի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3. Տեղադրել օդափոխության համակարգ:	
4. Համապատասխան միջոցներ ձեռնարկել խցերը միջատներից և կարիճներից զերծ պահելու համար:	4. Հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ:
5. Բարելավել կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի տարածքում գտնվող կարճատև տեսակցության սենյակների պայմանները:	5. Նոր սենյակների կառուցումը ավարտման փուլում է:
6. Կալանավորվածներին և դատապարտյալներին պահելու վայրի տեսակցության սենյակներին կից կառուցել սանհանգույց:	6.Նոր կառուցված տեսակցության սենյակներին կից կառուցվել է նաև սանհանգույց:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. Կառուցել առանձին քննչական սենյակներ:	7. Նոր տեսակցության սենյակների կառուցմամբ կլուծվի նաև քննչական սենյակների հարցը:
8. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:	2, 3, 8, 10. Հնարավոր կլինի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
9. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել այնպիսի տեղում, որ հերթում կանգնած ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց ծանոթանալու:	9. Հիմնավոր չէ, անհրաժեշտ փաստաթղթերը փակցված են տեսանելի վայրում:
10. Հիմնարկի բոլոր 3 բաղնիքներում բարելավել սանիտարական վիճակը:	2, 3, 8, 10. Հնարավոր կլինի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
11. Հիմնարկի երկու բաղնիքում կառուցել հանդերձարաններ:	11. Կկատարվի բաղնիքների վերանորոգմանը զուգահեռ:
12. Գտնել բուժմասի տարածքը ընդլայնելու հնարավորություն:	12. Սահմանված լրակազմի պայմաններում բուժմասի տարածքը բավարար է:
13.Հատկացնել առանձին միջամտությունների սենյակ:	13. Ներկայիս պայմաններում հնարավոր չէ:
14. Ավելացնել հաստիքացուցակով նախատեսված բժիշկ մասնագետների թիվը:	14. Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 20-րդ կետում:
15. Բարելավել հիմնարկի ապահովվածությունը դեղորայքով:	15. Քրեակատարողական հիմնարկներն ապահովվում են ՀՀ-ում գրանցված ցանկացած դեղորայքով:
16. Բարելավել բուժմասի հագեցվածությունը սարքավորումներով:	16, 17, 21. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
17. Հիվանդասենյակներում տեղադրել ժամանակակից պահանջներին համապատասխանող մահճակալներ:	16, 17, 21. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
18. Ապահովել կիսափակ ուղղիչ հիմնարկում պահվող ազատազրկվածների երեքժամյա զբոսանքը:	18. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 78 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: Նույն օրենսգրքի 105 հոդվածի համաձայն կիսափակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել *առնվազն երեք ժամ տևողությամբ:* Օրենսդրության տվյալ պահանջները պահպանվում են:
19. Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	19, 20. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
20. Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:	վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
21. Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:	16, 17, 21. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
22.Խոհանոցում սարքավորել օդափոխության համակարգ:	22. Հանձնարարվել է տեղադրել էլեկտրական օդափոխիչ:
23.Բարձրացնել սննդի որակը:	23. Սննդի որակը համապատասխանում է ընդունելի չափանիշներին, միաժամանակ հանձնարարվել է հիմնարկների պետերին տվյալ հարցում լինել հետևողական:
24.Կրոնական կամ այլ պատճառներով որոշակի սնունդ չօգտագործող դատապարտյալների համար ապահովել այնպիսի սնունդ, որից նրանք կարող են օգտվել:	24. Հանձնարարվել է հնարավորության սահմաններում ապահովել:
25.Պատժախցերից առնվազն մեկն օգտագործել միայն որպես «պատժախուց տեղափոխել» պատժին ենթարկված ազատազրկվածներին պահելու համար:	25. Հիմնարկում առկա պատժախցերը օգտագործվում են օրենսդրությանը համապատասխան և տվյալ հարցում ուսումնասիրությունների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկ

1. Քանի որ հիմնարկի շենքը շատ հին է և ընդհանուր առմամբ գտնվում է անմխիթար վիճակում, բոլոր տեսակի վերանորոգումները կարճ ժամանակ անց փչանում են: Ֆինանսական միջոցները չեն բավարարում անհրաժեշտ հիմնանորոգման աշխատանքներ կատարելու համար:	1. Գորիսի տարածքում քրեակատարողական հիմնարկի նոր շենք կառուցելու հարցը 26.02.2009 թ. ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:
2. Չվերանորոգված խցերում վիճակն էապես տարբերվում է: Այդպիսի խցերից մեկում, որտեղ պահվում էին կալանավորվածներ, Դիտորդների խմբի այցի պահին պահվում էր 15 մարդ այն դեպքում, երբ խցի մակերեսը 30 քմ է, այսինքն՝ խուցը կրկնակի գերբնակեցված էր՝ մեկ անձին բաժին էր հասնում 2 քմ՝ նախատեսված 4 քմ-ի փոխարեն: Խուցը հակասանիտարական վիճակում էր: Զուգարանը մեկուսացված չէր: Իրավունքների և պարտականությունների ցուցակը չկար: Խցի բնական լուսավորությունը բավարար չէր: Այս իրավիճակը, երբ կալանավորվածները պահվում են անհամեմատ ավելի վատ պայմաններում, քան դատապարտյալները, մշտապես գրանցվել է Դիտորդների խմբի կողմից:	
3. Երկարատև տեսակցության սենյակների բնական լուսավորությունը բավարար չէ:	
4. Հանձնուքի ընդունման կետում չկա սանհանգույց:	
5. Հանձնուքի զննությունը կատարվում է առանց տեխնիկական միջոցների օգտագործման:	
6. Բաղնիքների հանդերձարանում չկան նստարաններ, կախիչներն ինքնաշեն են:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. Բուժմասի պետի կարծիքով՝ հիմնարկը ատամնաբույժի և ակնաբույժի խիստ կարիք ունի:	
8. «Գորիս» ՔԿՀ-ի բուժմասի ապահովվածությունը բժշկական սարքավորումներով անբավարար է, եղած սարքավորումները հին են, բարոյապես մաշված:	
9. Վերջին տարիներին գրադարանը չի համալրվել նոր գրականությամբ: Գրքային ֆոնդը համալրվում է աշխատակիցների անձնական միջոցներով: Չնայած կա գրքերի ցուցակ, պահարաններում դրանք դասակարգված և կանոնակարգված չեն: Գրքերի պահման պայմաններն ընդհանուր առմամբ բավարար չեն:	
10. Սպորտով զբաղվելու հնարավորություն զբոսահրապարակներում չկա:	
11. Ընդհանուր սանիտարական վիճակը խոհանոցում բավարար չէ՝ կա հիմնանորոգման կարիք:	
12. Դիտորդների խումբը բազմիցս նշել է, որ հիմնարկի պատժախցերի մակերեսը (մոտ 4,5 քմ) չի համապատասխանում խցերի համար նախատեսված միջազգային նորմերին (առնվազն 7 քմ) և այնտեղ չի կարելի մարդ պահել:	
13. «Գորիս» ՔԿՀ-ն ունի առանձին կարանտինային խուց, որը հիմնարկի ծանրաբեռնվածության պատճառով օգտագործվում է որպես սովորական խուց: Ի հետևանք՝ նոր բերված ազատազրկվածները չեն անցնում նախատեսված բոլոր կարանտինային միջոցառումները:	
Առաջարկություններ 1. Հիմնարկի ընդհանուր վերանորոգման ընթացքում առաջնահերթ վերանորոգել խցերը: 2. Վերացնել կալանավորվածների խցերի գերբնակեցումը: 3. Կարճատև տեսակցությունների սենյակի համար հատկացնել այլ տարածք՝ տարանջատելով այն հանձնուքի ընդունման կետից: 4. Բարելավել երկարատև տեսակցությունների սենյակների բնական լուսավորությունը: 5. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց: 6. Ապահովել հիմնարկը հանձնուքի զննության սարքավորումներով: 7. Ապահովել բաղնիքների հանդերձարանները նստարաններով և կախիչներով: 8. Համալրել թափուր հաստիքները: 9. Բարելավել բուժմասի հագեցվածությունը բժշկական սարքավորումներով: 10.Համալրել գրքային ֆոնդը: 11.Բարելավել գրքերի պահման պայմանները: 12.Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ: 13.Հիմնանորոգել խոհանոցը:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
14.Դադարեցնել ներկայիս պատժախցերի օգտագործումը: 15.Կարանտինային խուցն օգտագործել միայն կարանտինային փուլում գտնվող ազատազրկվածներին պահելու համար: 16.Համալրել թափուր հաստիքները:	

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

1. Թեև օրենսդրությամբ նախատեսված է, որ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալները կարող են երեխային պահել իրենց մոտ, սակայն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափափաժինները, հանդերձանքի չափափաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ՝ մանկահասակ երեխաների ապահովման չափաբաժիններ (մանկական սնունդ, տակդիր, հագուստ և այլն) նախատեսված չեն:	1. Ընդունելի է, առաջարկություն կներկայացվի ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» թիվ 413-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու համար:
2. «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց համար նախատեսված կիսաբաց ուղղիչ հիմնարկում ազատազրկվածների հիմնական մասը պահվում է 200 քմ մակերես ունեցող հանրակացարանում: Դիտորդների խմբի այցելության պահին այնտեղ տեղադրված էր մահճակալ, որից 6-ը՝ երկհարկանի, և պահվում էր 85 դատապարտյալ: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր դատապարտյալի համար օրենսդրությամբ նախատեսված 4 քմ տարածքը չի ապահովվում: Բացի այդ, հարկի հերթապահի սենյակը գտնվում է հանրակացարանի հարևանությամբ և առանձնացված է նրանից ապակե միջնորմով: Հաշվի առնելով, որ կանանց գոտում հերթապահում են նաև տղամարդիկ, դա բավական անհարմարություններ է ստեղծում հատկապես գիշերային ժամերին:	2. Հաշվարկը միայն հանրակացարանի մակերեսով կատարելը սխալ է, քանի որ դա միայն դատապարտյալների քնելատեղին է, իսկ վերջիններս օգտվում են հիմնարկի այլ տարածքներից, որոնց հաշվարկի մեջ ներառման դեպքում այն կկազմի ավելի, քան օրենսդրության պահանջն է: Ինչ վերաբերում է հերթապահության անհարմարություններին, ապա այդպիսիք բացակայում են, քանի որ նշված պահակակետում գիշերային ժամերին հերթապահության են նշանակվում միայն կին աշխատողներ:
3. Վերջին տարիներին հիմնարկում կահավորվել են նաև փոքր խցեր, որոնք հատկացվել են մանկահասակ երեխա ունեցող և տարեց դատապարտյալներին: Այստեղ նույնպես չի ապահովվում մեկ ազատազրկվածի համար 4 քմ տարածքը՝ 6 կին պահվում էր 18 քմ տարածքում:	3. Տես նախորդ կետի մեկնաբանությունները:
4. Ինչ վերաբերում է արհեստական լուսավորությանը, ապա չնայած մասնաշենքը նոր է վերանորոգվել, խցերում չեն տեղադրվել գիշերային լուսավորության լամպեր, և նույն հզորության լամպը միացված է և՛ երեկոյան, և՛ գիշերային ժամերին: Այն արգելվում է անջատել, թեպետ անջատիչները գտնվում են խցերում:	4. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է կարգավորել լուսավորության տարանջատման հարցը:
5. Ըստ Քրեակատարողական օրենսգրքի՝ բոլոր դատապարտյալներն ունեն ամսական մեկ կարճատև տեսակցության իրավունք, սակայն հաշվի առնելով անչափահասների՝ իրենց ընտանիքների հետ կապի առանձնահատուկ կարևորությունը, այդ հաճախականությունը համարում ենք ոչ բավարար:	5. Քրեակատարողական օրենսգրքի 92 հոդվածի 2-րդ մասով նախատեսված է ոչ թե մեկ, *այլ առնվազն մեկ* տեսակցություն: Գործնականում տեսակցությունները տրվում են միայն մեկ անգամ, եթե տվյալ դատապարտյալն ունի կար-

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
	գապահական տույժ, իսկ մյուս դեպքերում՝ հիմնականում չի սահմանափակվում:
6. Դատապարտյալների խոսակցության հաճախականությունը և տևողությունը սահմանափակված չեն, սակայն կանանց մասնաշենքում տեղադրված մեկ հեռախոսը բավարար չէ 100-ից ավելի կին դատապարտյալների համար, ինչի արդյունքում հերթեր են գոյանում:	6. Մեկնաբանությունները տես «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 9-րդ կետում:
7. Հանձնուքի ընդունման կետը «Աբովյան» ՔԿՀ-ում փոքր սենյակ է: Այն ունի 4 քմ մակերես: Սենյակում չկան սպասելու համար նստարան կամ աթոռներ:	7. Շենքային պայմաններից ելնելով՝ հանձնուքի ընդունման կետը չի կարող ապահովվել նշված կահավորանքով:
8.Հանձնուքի զննումը կատարվում է առանց տեխնիկական միջոցների օգտագործման:	8, 10. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
9. «Աբովյան» ՔԿՀ-ում ազատազրկվածները լոգանք են ընդունում ըստ ժամանակացույցի՝ շաբաթը մեկ անգամ, ինչը խիստ անբավարար է՝ հաշվի առնելով, որ հիմնարկում պահվում են նաև կանայք:	9. Լոգանքը տրամադրվում է օրենքի պահանջներին համապատասխան՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Օրենքով՝ նույնիսկ պոզիտիվ դիսկրիմինացիոն նորմի սահմանումը ընդունելի չէ:
10. Հիմնարկի ապահովվածությունը սարքավորումներով բավական ցածր է: Անհրաժեշտություն կա ԷՍԳ-սարքի, սոնոգրաֆի, լաբորատորիայի և այլն: Սարքավորումներով ապահովման հարցը հատկապես կարևոր է «Աբովյան» ՔԿՀ-ում, քանի որ այստեղ պահվող ազատազրկվածները՝ թե՛ կանայք, թե՛ անչափահասները, հաշվի առնելով օրենսդրությամբ ամրագրված ազատազրկվածներին միմյանցից անջատ պահելու սկզբունքները (կանայք՝ տղամարդկանցից, անչափահասները՝ չափահասներից), չեն կարող տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և բուժումը հիմնականում ստանում են տեղում:	10. Օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործվում են ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մարմինների բուժհաստատությունները, որի արդյունքում կանանց և անչափահասների բուժսպասարկման առումով խնդիրներ չեն ծագում:
11. Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, ֆոնդը լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ:	11. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
12. Անչափահաս դատապարտյալների գոտում ճաշարանն ունի 10 սեղան, 31 աթոռ, որոնք բավականին հին են: Ճաշարանը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Դիտարկման պահին հատակը սառցակալված էր, և տարածքի պատուհաններն առանց ապակու էին: Ճաշացանկը փակցված չէր:	12. Ձմռան ամիսներին ճաշարանը չի օգտագործվում, քանի որ առայժմ հնարավոր չէ ապահովել ջեռուցումը: Դրա փոխարեն օգտագործվում է հանրակացարանում այդ նպատակով առանձնացված համապատասխան վայրում: Իսկ վերանորոգման աշխատանքները հնարավոր կլինեն իրականացնել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
13. «Աբովյան» ՔԿՀ-ում ճաշի որակը բավարար չէ: Մասնավորապես՝ ազատազրկվածները նշում էին, որ ցածր է ճաշերի կալորիականությունը, և եթե չլինեն հանձնուքները, դժվար կլինի գոյատևել:	13. Սննդի որակը և քանակը (կալորիականությունը) համապատասխանում են սահմանված չափաբաժիններին:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
14. Հիմնարկում չկա առանձին կարանտինային խուց:	14. Կարանտինային խցերն առկա են և տեղակայված են կալանավորված անձանց պահելու համար նախատեսված նոր մասնաշենքում:
15. Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է:	15. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Կալանավորված և դատապարտված անչափահաս աղջիկներին պահելու վերաբերյալ կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:	1. Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն բացարձակապես չկա, քանի որ դրանք հստակ սահմանված են: Այլ խնդիր է իգական սեռի անչափահաս դատապարտյալներին կամ կալանավորվածներին պահելու հարցը, որը ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք նշել, որ դրանց հնարավոր դեպքերը կկրեն բացառիկ բնույթ: Իսկ այդպիսիք առաջանալու ժամանակ հիմնարկը հնարավորություն ունի պահպանել օրենքով սահմանված տարանջատման համապատասխան սկզբունքը:
2. Օրենսդրությամբ նախատեսել մանկահասակ երեխաներին անհրաժեշտ սնունդն ու պարագաները:	2. Առաջարկություն կներկայացվի ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» թիվ 413-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու համար:
3. Բացառել կալանավորվածներին անհրաժեշտության դեպքում հագուստով չապահովելու դեպքերը:	3. Ուսումնասիրություններով կալանավորվածներին հագուստով չապահովելու դեպքեր չեն հայտնաբերվել:
4. Ապահովել 4 քմ տարածք՝ յուրաքանչյուր դատապարտյալի համար:	4, 5. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում: Բացի այդ, տվյալ քրեակատարողական հիմնարկում կալանավորվածներին և դատապարտյալներին տրամադրված է ավելին, քան օրենսդրության՝ 4 քմ-ի պահանջն է:
5. Վերակառուցել հանրակացարանները և անցնել պահման խցային տիպի:	
6. Գիշերային հերթապահությունները կազմակերպել միայն կին աշխատակիցների ուժերով:	6. Գիշերային ժամերին հերթապահության են նշանակվում միայն կին աշխատողներ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. Խցերում տեղադրել փոքր հզորության լամպեր՝ գիշերային լուսավորությունն ապահովելու համար:	7. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է կարգավորել լուսավորության տարանջատման հարցը:
8. Քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով անչափահաս դատապարտյալների կարճատև տեսակցությունների թիվը:	8. Հիմնավոր չէ, քանի որ քրեակատարողական օրենսգրքով նախատեսվում է ամսական *առնվազն մեկ* կարճատև տեսակցություն:
9. Հիմնարկի դատապարտյալ կանանց պահելու գոտում ավելացնել հեռախոսների քանակը:	9, 18. Ներքին կանոնակարգի 182 կետի համաձայն (Կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրվում է համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով: Հեռախոսակապից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 15 րոպեն) ՝ հիմնարկի պետին հանձնարարվել է կազմել հեռախոսակապից օգտվելու ժամանակացույց, որը գործողության մեջ դնելուց հետո հերթեր չեն գոյանա:
10.Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:	10. Անհրաժեշտություն չկա, քանի որ կարող են օգտվել մոտակայքում գտնվող վարչական շենքի սանհանգույցից:
11.Հանձնուքի ընդունման կետը կահավորել աթոռներով և սեղաններով:	11. Շենքային՝ տարածքային պայմաններից ելնելով՝ հնարավոր չէ:
12.Հանձնուքի ընդունման կետում փակցնել համապատասխան փաստաթղթեր:	12. Համապատասխան փաստաթղթեր փակցված են տեսանելի վայրում:
13.Հանձնուքի զննման համար ձեռք բերել ժամանակակից տեխնիկա:	13, 17. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
14.Ավելացնել ազատազրկվածների, հատկապես՝ կանանց, լոգանք ընդունելու հաճախականությունը:	14. Լոգանքը տրամադրվում է օրենքի պահանջներին համապատասխան՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Օրենքով՝ նույնիսկ պոզիտիվ դիսկրիմինացիոն նորմի սահմանումը ընդունելի չէ: Չնայած դրան, հանձնարարվել է ուսումնասիրել նման հնարավորության տրամադրման հարցը:
15.Ապահովել բոլոր բաղնիքները հանդերձարանով:	15. Դրանք հնարավոր կլինի ապահովել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
16.Վերականգնել հիմնարկի բուժմասի շենքը:	16. Դա հնարավոր կլինի ապահովել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
17.Ապահովել բուժմասն անհրաժեշտ սարքավորումներով:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
18. Դատապարտյալների գոտում ավելացնել հեռուստացույցները:	
19. Կազմել գրադարանի գրքերի ցանկ, որից կալանավորվածները կկարողանան ընտրել իրենց նախընտրած գրքերը: Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ: Լրացնել գրքային ֆոնդը օտար լեզվով գրականությամբ:	19. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
20.Հիմնանորոգել խոհանոցը, տեղադրել համապատասխան տեխնիկա: Թարմացնել հիմնարկի ճաշարանների տեխնիկական հագեցվածությունը: Ջեռուցել հիմնարկի ճաշարանները: Ճաշարաններում սարքավորել օդափոխության համակարգ: Նոր կահույք տեղադրել ճաշարաններում:	20. Դրանք հնարավոր կլինի ապահովել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
21.Անչափահասների ճաշարանում փակցնել ճաշացանկը:	21. Մեկնաբանությունները տես «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 20-րդ կետում:
22. Խիստ հսկողություն սահմանել ճաշերի որակի նկատմամբ:	22. Սննդի որակը գտնվում է ամենօրյա հսկողության տակ:
23. Նախատեսել առանձին կարանտինային խուց:	23. Կարանտինային խցերն առկա են և տեղակայված են կալանավորված անձանց պահելու համար նախատեսված նոր մասնաշենքում:
24. Համալրել թափուր հաստիքները:	24. Մեկնաբանությունները տես «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների12-րդ կետում:

ՀՀ արդարադատության նախարարության «էրեբունի» քրեակատարողական հիմնարկ

1. 2008 թվականի ընթացքում «էրեբունի» ՔԿՀ-ում նկատվում էր խիստ գերբնակեցում: Մասնավորապես՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում նախատեսված 371-ի փոխարեն պահվում էր մոտ 600 մարդ:	1. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում:
2. Հիմնարկի ջրամատակարարման վիճակը շատ ծանր է: Բացի այն, որ ջրամատակարարումը կատարվում է ըստ ժամանակացույցի՝ օրը երկու անգամ մինչև երեք ժամ տևողությամբ, ձմռան ամիսներին ջրագծերը հաճախ սառչում են, և հիմնարկն օրերով զրկվում է ջրից: Մյուս կողմից՝ ամռան ամիսներին հիմնարկի հարևանությամբ սկսում են գործել տարբեր արտադրամասեր, որոնք մեծ քանակությամբ ջուր են սպառում, որի պատճառով հիմնարկին ջուրը չի բավականացնում: Արդյունքում՝ հիմնարկը ստիպված է հաճախակի ջուր կրել ջրատար մեքենաներով:	2. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:
3. Ընդհանուր առմամբ հանրակացարանները հիմնանորոգման կարիք ունեն: Առաջին հարկում գտնվող կացարանների պատերը խոնավանում են:	3, 4, 5 և 6. Կատարվում են մասնակի վերանորոգման աշխատանքներ, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կիրակացվի վերանորոգում: Հարցն ամբող-

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
4. Հանրակացարաններում չկան սանհանգույցներ՝ զուգարանը և լվացարանը ընդհանուր են ամբողջ հիմնարկի համար:	ջական կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
5. Կարճատև տեսակցությունների սենյակը չուներ առանձին սանհանգույց, տեսակցության եկածները կարող էին օգտվել տնտեսմասի դատապարտյալների համար նախատեսված նույն մասնաշենքում գտնվող սանհանգույցից, սակայն դրա տեղը իմանալու համար պետք էր հարցնել անձնակազմից:	
6. Մաքուր օդ դուրս գալու հնարավորություն «Էրեբունի» ՔԿՀ-ի երկարատև տեսակցության սենյակներում չկա, ինչը նշանակում է, որ տեսակցության եկածները երեք օր պիտի գտնվեն սենյակներում, ինչը, հաշվի առնելով, որ տեսակցության բերվում են նաև մանկահասակ երեխաներ, ցանկալի չէ:	
7. Հանձնուքի ընդունման կետի տարածքում չկա սանհանգույց: Վարչակազմի խոսքով՝ հարազատները կարող են օգտվել վարչական մասնաշենքի սանհանգույցից, որը գտնվում է վերևի հարկում, սակայն այդ մասին իմանալու համար հարազատը պետք է դիմի աշխատակիցներից մեկին:	7. Կարող են օգտվել վարչական մասնաշենքի սանհանգույցից: Հարցն ամբողջական կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
8. «Էրեբունի» ՔԿՀ-ում գործում է մեկ բաղնիք: Այն ունի հանդերձարան, ուր տեղադրված է միայն մեկ քսան տեղանոց կախիչ: Լոգասենյակը սալիկապատ է, ունի 9 ցնցուղ: Տաք ջրամատակարարումն ապահովելու համար տանիքում տեղադրված է 5 տոննա տարողությամբ բաք: Քանի որ հիմնարկն ունի ջրամատակարարման խնդիրներ, ապա դատապարտյալների լոգանքն ապահովվում է միայն հավաքված ջրով: Այդ դեպքում հնարավոր է աշխատեցնել լոգարանի 9 ցնցուղներից միայն երեքը և մեկ օրվա ընթացքում ապահովել միայն 50 դատապարտյալի լոգանք: Սա նշանակում է, որ գերբնակեցման դեպքում հիմնարկի լոգարանը չի կարող ապահովել դատապարտյալների՝ օրենսդրությամբ նախատեսված շաբաթական լոգանքը: Ամենօրյա աշխատանքի դեպքում լոգարանը կարող է սպասարկել 350 դատապարտյալի, այնինչ այցելության պահին հիմնարկում պահվում էր մոտ 600 ազատազրկված: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ լոգանքի հստակ ժամանակացույց չի գործում, վտանգ կա, որ որոշ դատապարտյալներ կարող են ընդհանրապես զրկվել լոգանք ընդունելու հնարավորությունից:	8. Կատարված ենթադրյալ հաշվարկները հիմնավոր չեն: Գործում է հաստատված համապատասխան ժամանակացույց, որի համաձայն էլ դատապարտյալներին տրամադրվում է լոգանք՝ օրենսդրությամբ սահմանված նվազագույն քանակով:
9. Հիմնարկի ընդհանուր համալրվածությունը բուժսարքավորումներով անբավարար է: Որպես առաջնահերթ անհրաժեշտություն նշվեց նոր էՍԳ սարքը, քանի որ առկա սարքն արդեն բարոյապես և ֆիզիկապես մաշված է:	9. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
10. Գրադարանը չունի առանձին ընթերցասրահ: Չի բավարարում գրքերի պահպանման համար գրապահարանների քանակը: Գրադարանի կանոնավոր համալրման մեխանիզմ չկա, այն լրացվում է առանձին մարդկանցից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը ստանում է մամուլ շաբաթը մեկ անգամ:	10. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11. Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Ճաշարանում ստեղծված չէ սնվելուց առաջ լվացվելու հնարավորություն: Ընդհանուր առմամբ՝ ճաշարանը հիմնանորոգման կարիք ունի:	11. Ճաշարանի վերանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:
12. «Էրեբունի» ՔԿՀ-ի ազատազրկվածները հիմնականում դժգոհում են տրվող հացի որակից՝ նշելով, որ այն լինում է թաց:	12. Ձեռնարկված միջոցների շնորհիվ հացի որակը բարելավվել է:
13. Չնայած հաստիքները գրեթե համալրված են, սակայն հատկապես արտաքին պահպանություն իրականացնող աշխատակազմի հաստիքները չեն բավարարում: Ըստ հիմնարկի ղեկավարության՝ ամեն հերթափոխ պետք է ունենա երեք օղակ (պահակակետում ծառայություն իրականացնող, արթուն, հանգստացող), սակայն, ըստ հաստիքացուցակի, դրանք ներկայումս երկուսն են:	13. Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 20-րդ կետում:
14. Ինչպես և բոլոր հիմնարկներում, աշխատակազմի հիմնական խնդիրը համարվում էր ցածր աշխատավարձը:	14. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Հիմնովին վերակառուցել կամ տեղափոխել հիմնարկը:	1, 2, 4, 5, 6, 7, 8, 11, 13, 14, 15, 18, 19, 20, 21, 22 և 25. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 1-ին, 8-րդ և 20-րդ կետերում:
2. Հանրակացարանները ձևափոխել ավելի փոքր մակերեսով խցերի:	
3. Բարելավել հիմնարկի ջրամատակարարումը:	3. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:
4. Ապահովել ազատազրկվածների՝ օրենսդրությամբ նախատեսված բնակմակերեսը:	
5. Վերափոխել կացարանները խցերի:	
6. Ապահովել շինությունների հիմքերի ջրամեկուսացումը:	
7. Կացարաններում առանձին սանհանգույցներ կառուցել:	
8. Ապահովել կացարանների ջեռուցումը:	
9. Առանձին սանհանգույց կառուցել տեսակցությունների սենյակի համար:	9. Տեսակցությունների սենյակին կից առկա է գործող սանհանգույց:
10. Մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալների տեսակցություններն անցկացնել մանկական սենյակում:	10. Հնարավորինս պայմաններ ստեղծվում են: Հարցը կքննարկվի նաև ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
11. Ավելացնել լոգարանների քանակը:	
12. Խոհանոցն ապահովել անհրաժեշտ կահավորանքով (առաջնահերթ տեղադրել էլեկտրական սալօջախ):	12. Տրվել է համապատասխան հանձնարարական հարցի ուսումնասիրման և հնարավոր լուծման կապակցությամբ:
13. Տեսակցողների համար ստեղծել մաքուր օդ դուրս գալու հնարավորություն:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
14. Կահավորել և ջեռուցել սպասասրահը:	
15. Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:	
16.Հանձնուքի զննությունը կատարել այն բերած հարազատի ներկայությամբ:	16. Հանձնուքի զննությունը կատարվում է այն բերած անձի ներկայությամբ:
17. Ապահովել հիմնարկի բոլոր դատապարտյալների համար առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանք:	17. Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվում է դատապարտյալների առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանքը:
18. Բուժմասում ապահովել առանձին միջամտությունների սենյակ:	
19. Համալրել թերապևտի հաստիքը:	
20. Ապահովել հիմնարկն անհրաժեշտ բուժսարքավորումներով (առաջնահերթ տրամադրել էՍԳ սարք):	
21. Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	
22. Գրադարանում ավելացնել գրապահարանների քանակը:	
23. Հիմնանորոգել ճաշարանը: Ճաշարանում տեղադրել նոր սեղան-աթոռ: Կազմակերպել ջեռուցում: Սարքավորել օդափոխության համակարգով: Տեղադրել լվացարաններ: Հիմնանորոգել խոհանոցը: Ապահովել խոհանոցը նոր տեխնիկայով:	23. Ճաշարանի վերանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:
24. Բարձրացնել սննդի որակը:	24. Սննդի որակը համապատասխանում է սահմանված չափանիշներին և գտնվում է ամենօրյա հսկողության տակ:
25. Ավելացնել հիմնարկի աշխատակազմի հաստիքները:	

ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկ

1. Հիմնարկն ունի մեկ ընդհանուր զուգարան, որը գտնվում է անմխիթար հակասանիտարական վիճակում: Այն չի ջեռուցվում, ինչի արդյունքում ձմռան ամիսներին հաճախակի սառչում է կոյուղին:	1, 2, 3, 4. Հիմնարկի տարածքում առկա է 3 զուգարան, ինչպես նաև բուժմասին հատկացված մասնաշենքն ունի առանձին սանհանգույց: Իսկ հիմնանորոգման աշխատանքների իրականացումը կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
2. «Սևան» ՔԿՀ-ում ազատազրկվածները պահվում են չորս մասնաշենքում գտնվող հանրակացարաններում: Այնտեղ դատապարտյալները պահվում են մեծ սենյակներում՝ յուրաքանչյուրում մի քանի տասնյակ մարդ, ինչը չի համապատասխանում Քրեակատարողական օրենսգրքի պահանջներին:	
3. Հիմնարկում չկա կենտրոնացված ջեռուցում, և հանրակացարանների ջեռուցման համար օգտագործվում են ազատազրկվածների հարազատների բերած էլեկտրական սարքեր, որոնք, հաշվի առնելով կացարանների մեծ մակերեսը և այն, որ հիմնարկը տեղակայված է խիստ	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
բնակլիմայական պայմաններ ունեցող տեղանքում, չեն կարող ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան:	
4. Մաքուր օդ դուրս գալու հնարավորություն «Սևան» ՔԿՀ-ի երկարատև տեսակցության սենյակներում չկա, ինչը նշանակում է, որ տեսակցության եկածները երեք օր պետք է գտնվեն սենյակներում:	
5. Հիմնարկը ստացել է հանձնուքի զննության ժամանակակից սարք, սակայն 2008 թվականի վերջի դրությամբ այն դեռևս միացված չէր:	5. Հանձնուքի զննության համապատասխան սարքն առկա է և օգտագործվում է:
6. Դատապարտյալների հարազատները փոխանցում են հանձնուքը պատուհանից: Միջանցքը, որտեղ սպասում են հարազատները, չի ջեռուցվում: Պատերին հանձնուքի ընդունման կարգը պարզաբանող որևէ փաստաթուղթ փակցված չէ:	6. Հանձնուքի ընդունման սենյակում կատարվում են վերանորոգման աշխատանքներ, անհրաժեշտ փաստաթղթերը փակցված են տեսանելի վայրում:
7. Հիվանդասենյակների հատակը բետոնից է, ինչն անընդունելի է հատկապես հիվանդասենյակների համար: Ջեռուցումը հիվանդասենյակներում կատարվում է էլեկտրական սարքերով, որոնք չեն ապահովում անհրաժեշտ ջերմաստիճան:	7. Հիվանդասենյակների մեծ մասի հատակը փայտյա է, միայն երկու սենյակում է այն բացակայում: Համապատասխան ֆինանսավորման դեպքում նախատեսվում է վերանորոգել բուժմասը:
8. «Սևան» ՔԿՀ-ի բուժմասի ապահովվածությունը բուժսարքավորումներով չափազանց ցածր է: Անհրաժեշտություն կա ինչպես էՍԳ սարքի, ատամնաբուժական աթոռի, այնպես էլ տարրական բժշկական գործիքների:	8. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների19-րդ կետում:
9. Գրադարանի գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չկա, այն լրացվում է առանձին մարդկանցից և բարեգործական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա:	9. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
10. Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում: Չկա օդափոխության համակարգ: Ճաշարանի սանիտարական վիճակը բավարար չէ: Ընդհանուր առմամբ՝ ճաշարանը հիմնանորոգման կարիք ունի:	10. Ճաշարանը և խոհանոցը վերանորոգված են: Ջեռուցման և օդափոխության հարցերը կքննարկվեն ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
11. Պատժախցի բնական լուսավորությունը բավարար չէ: Այն ապահովող 2 պատուհաններից մեկի ապակին կոտրված էր ու ծածկված շորով:	11. Պատժախցի բնական լուսավորությունը բավարար է, պատժախցում պատուհանի կոտրված ապակիներ ներկայումս չկան:
12. Ամենօրյա զբոսանքից պատժախցում պահվող դատապարտյալները չեն օգտվում:	12. Զբոսանքը տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով, ուսումնասիրությամբ օրենսդրության պահանջի խախտումներ չեն հայտնաբերվել:
13. Կարանտինային խուցը կիսակառույց է, այդ իսկ պատճառով նոր բերված դատապարտյալների հետ չեն անցկացվում կարանտինային միջոցառումներ, և նրանք անմիջապես հայտնվում են ընդհանուր հանրակացարանում:	13. Համապատասխան ֆինանսավորման դեպքում կավարտվեն շինարարական աշխատանքները:
14. Ինչպես և բոլոր հիմնարկներում, աշխատակազմի հիմնական խնդիրը համարվում է ցածր աշխատավարձը:	14. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Հիմնովին վերակառուցել կամ փակել հիմնարկը:	1. Հիմնանորոգման աշխատանքների իրականացումը կամ փակման հարցը կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
2. Վերանորոգել զուգարանը:	2, 3, 4, 5, 6, 8, 10, 13, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 29, 30. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 1-ին, 8-րդ և 20-րդ կետերում:
3. Վերափոխել կացարանները խցերի:	
4. Ապահովել առանձին սանհանգույցներ կացարաններում:	
5. Ապահովել կացարանների ջեռուցումը:	
6. Կառուցել տեսակցությունների մասնակիցներին հասանելի սանհանգույց:	
7. Կառուցել և կահավորել առանձին սենյակ մանկահասակ երեխաների հետ տեսակցություն կազմակերպելու համար:	7. Նախատեսվում է հնարավորինս ստեղծել նման պայմաններ:
8. Վերանորոգել երկարատև տեսակցության սենյակները:	
9. Վերանորոգել խոհանոցը՝ ապահովելով այն անհրաժեշտ սպասքով և կահավորանքով:	9. Ճաշարանը և խոհանոցը վերանորոգված են:
10.Ստեղծել տեսակցողների համար մաքուր օդ դուրս գալու հնարավորություն:	
11.Կահավորել և ջեռուցել սպասասրահը:	11, 12. Հանձնուքի ընդունման սենյակում կատարվում են վերանորոգման աշխատանքներ, անհրաժեշտ փաստաթղթերը փակցված են տեսանելի վայրում:
12.Հանձնուքի ընդունման կետում փակցնել անհրաժեշտ փաստաթղթեր:	
13.Վերանորոգել և կահավորել հանդերձարանը:	
14.Սահմանել ազատազրկվածների լոգանք ընդունելու հստակ ժամանակացույց:	14. Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվում է դատապարտյալների առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանքը:
15.Հիմնանորոգել բուժմասը:	
16.Համալրել բուժմասի աշխատակազմը:	
17.Ապահովել հիմնարկն անհրաժեշտ բուժսարքավորումներով:	
18.Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	
19.Գրադարանում ավելացնել գրապահարանների քանակը:	
20.Հիմնանորոգել ճաշարանը:	20. Ճաշարանը և խոհանոցը վերանորոգված են:
21.Ճաշարանում տեղադրել նոր սեղան-աթոռներ:	
22.Կազմակերպել ջեռուցում:	
23.Սարքավորել օդափոխության համակարգ:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
24.Խոհանոցում տեղադրել օդափոխության համակարգ:	24. Տեղադրված է էլեկտրական օդափոխիչ:
25.Բարձրացնել սննդի որակը:	25. Սննդի որակը համապատասխանում է ընդունելի չափանիշներին և գտնվում է ամենօրյա հսկողության տակ:
26.Ապահովել պատժախցերի բավարար ջեռուցում:	26. Պատժախցերում բավարար ջերմաստիճանն ապահովվում է:
27.Ապահովել պատժախցերում բավարար բնական լուսավորություն:	27. Պատժախցերում բնական լուսավորությունը բավարար է:
28.Ապահովել պատժախցերում պահվող դատապարտյալների ամենօրյա զբոսանքը:	28. Պահպանվում է Ներքին կանոնակարգի պահանջը:
29.Կառուցել կարանտինային խցեր:	
30.Ավելացնել հիմնարկի հաստիքները:	

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկ

1. Դատապարտյալները պահվում են տարբեր չափսերի սենյակներում, յուրաքանչյուրում՝ 10-60 մարդ, ինչը չի համապատասխանում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի պահանջներին:	1. Մեկնաբանությունները տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում:
2. «Կոշ» ՔԿՀ-ում գործում է հեռախոսակապ, որը գտնվում է առանձին մասնաշենքում: Այնտեղ տեղադրված են 2 ավտոմատ հեռախոս, որից դատապարտյալները կարող են օգտվել ամեն օր՝ ժամը 19:00-23:00-ը, 15-20 րոպե տևողությամբ: Ցերեկային ժամերին ազատազրկվածները չունեն հեռախոսից օգտվելու հնարավորություն:	2. Մեկնաբանությունները տես «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 9-րդ կետում:
3. Բուժմասի մասնաշենքն ունի հիմնանորոգման կարիք: Հիմնարկի ընդհանուր հագեցվածությունը բուժսարքավորումներով բավարար չէ: Բուժմասի պետի պնդմամբ՝ բուժմասը ֆիզիոթերապևտիկ սարքավորումների կարիք ունի:	3. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 19-րդ կետում:
4. Գրքային ֆոնդի համալրման մեխանիզմ չի գործում, այն լրացվում է աշխատակիցների անձնական գրադարաններից բերված գրքերով և կրոնական կազմակերպություններից ստացված գրականությամբ: Գրադարանավարի խոսքով՝ գեղարվեստական գրքերի կարիք կա: Գրադարանը մամուլ չի ստանում:	4. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 22-րդ կետում:
5. Ճաշարանի տարածքը չի ջեռուցվում, բացակայում է օդափոխության համակարգը: Օդափոխության համակարգի բացակայության պատճառով խոհանոցի առաստաղը խոնավանում է, որից ծեփը թափվում է:	5. Ճաշարանի վերանորոգման աշխատանքները շարունակվում են:
6. Հացի որակը ազատազրկվածները գնահատում են անբավարար:	6. Ձեռնարկված միջոցների շնորհիվ հացի որակը բարելավվել է:
7. Բնական լուսավորությունը պատժախցերում բավարար չէ, ինչի պատճառով արհեստական լուսավորությունը մշտապես միացված է:	7. Հանձնարարվել է հնարավորության սահմաններում լուծել լուսավորության հարցը:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. «Կոշ» ՔԿՀ-ն չունի կարանտինային խուց, այդ պատճառով նոր բերված դատապարտյալների հետ չեն անցկացվում կարանտինային միջոցառումներ, և նրանք միանգամից հայտնվում են ընդհանուր հանրակացարանում:	8. Միջոցներ են ձեռնարկվում կարանտինային մասնաշենքի շինարարությունը ավարտին հասցնելու համար:
9. Հիմնական խնդիրը, որ նշեց հիմնարկի ղեկավարությունը, աշխատակիցների ցածր աշխատավարձն է:	9. Ընդունելի է, սակայն ներկայիս տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէ:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Հիմնովին վերակառուցել հիմնարկը՝ ապահովելով օրենսդրությամբ նախատեսված ազատազրկվածների պահման խցային տիպ:	1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 13, 14, 15. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի 1-ին, 8-րդ, 20-րդ և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 9-րդ կետերում: Բացի այդ, հիմնարկի հիմնանորոգման հարցը կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
2. Բարելավել հիմնարկի ջեռուցումը:	
3. Վերացնել հեռախոսից օգտվելու ժամերի սահմանափակումը:	
4. Հիմնանորոգել բաղնիքի մասնաշենքը:	
5. Բաղնիքին կից կառուցել զուգարան:	
6. Հիմնանորոգել բուժմասի մասնաշենքը:	
7. Համալրել բուժմասը համապատասխան մասնագետներով:	
8. Համալրել բուժմասը անհրաժեշտ բժշկական սարքավորումներով:	
9. Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրքերով:	
10.Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:	
11.Հիմնանորոգել ճաշարանը: Խոհանոցում ապահովել օդափոխության համակարգ:	11. Ճաշարանը և խոհանոցը ներկայումս վերանորոգվում են:
12.Բարելավել հացի որակը:	12. Ձեռնարկված միջոցների շնորհիվ հացի որակը բարելավվել է:
13.Ապահովել խցերում բավարար բնական լուսավորություն:	
14.Կառուցել կարանտինային խցեր:	
15.Համալրել թափուր հաստիքները:	

ՀՀ արդարադատության նախարարության «Մեղրի» քրեակատարողական հիմնարկ

1. Շինությունները չեն գտնվում արդարադատության նախարարության հաշվեկշռում, ինչի պատճառով նախարարության կողմից հնարավոր չէ այստեղ որևէ վերանորոգման աշխատանքներ կատարել:	1, 2, 3, 4, 5, 6, 7. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին և 19-րդ կետերում: «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի անշարժ գույքի հետ կապված հարցերը կքննարկվեն ծառայության
2. Հիմնարկի զուգարանը դրսում է՝ հանրակացարանից 10 մ հեռավորության վրա: Այն կիսախարխուլ վիճակում է և ամբողջովին կեղտով լցված: Զուգարանի անմիջապես դիմաց դրված է 800 լիտր ծավալով ջրի տարողություն,	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
որն էլ դատապարտյալների միակ ջրի աղբյուրն է: Այդ ջուրն օգտագործվում է և՛ խմելու, և՛ կենցաղային նպատակներով: Ջուրը բերվում է 7 օրը մեկ անգամ: Հիմնարկում բացակայում են լողանալու, լվացքի, անգամ լվացվելու տարրական հարմարություններ, ինչի պատճառով դատապարտյալների լոգանքը կազմակերպվում է հիմնարկի պետի Նռնաձոր գյուղում գտնվող սեփական տան բաղնիքում:	ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
3. Հակասանիտարական անմխիթար վիճակում է նաև խոհանոցը: Լրակազմով նախատեսված 50 հոգու համար կա ընդամենը մեկ հին սառնարան, չկան սննդամթերքի պահեստավորման հարմարություններ: Դատապարտյալները դժգոհում են կրծողների առատությունից, իսկ տարվա տաք եղանակներին՝ թունավոր սողուններից և միջատներից:	3. Խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը բերվել է բավարար վիճակի:
4. Հիմնարկում չկա բուժկետ, սակայն հիմնարկն ունի բուժակ, որը Նռնաձոր գյուղի բուժկետի աշխատողն է և բնակվում է գյուղում:	
5. Ննջասենյակում տեղադրված մահճակալները շատ հին են և գտնվում են մաշված, խարխուլ վիճակում: Ննջասենյակը տաքացվում է փայտի վառարանով:	
6. Համաձայն ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 103-րդ հոդվածի՝ բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է ցերեկային ժամերին տեղաշարժվել ուղղիչ հիմնարկի տարածքում, սակայն հիմնարկը չունի հստակ որոշված տարածք, և դատապարտյալների ներքին տեղաշարժը սահմանափակված է հիմնարկի պետի որոշմամբ՝ կայարանի շենքում բնակվող դատապարտյալներն իրավունք չունեն առանց հիմնարկի պետի թույլտվության գյուղ գնալ և սննդամթերք գնել:	6. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պահպանվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 103 հոդվածի պահանջները, համաձայն որի բաց տեսակի ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում, և ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս: Նռնաձոր գյուղը չի կարող համարվել քրեակատարողական հիմնարկի տարածք, ուստի ցերեկային ժամերին գյուղ գնալու համար դատապարտյալները պարտավոր են ստանալ հիմնարկի պետի թույլտվությունը:
7. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը գտնվում է այդ գյուղում, և կապը նրա հետ հնարավոր է միայն դատապարտյալների անձնական բջջային հեռախոսների միջոցով:	
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Տեղափոխել հիմնարկի շինությունները արդարադատության նախարարության հաշվեկշիռ:	1, 2, 3, 4, 5. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին և 19-րդ կետերում: «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի անշարժ գույքի և ջրամատակարարման հետ կապված հարցերը կքննարկվեն ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում:
2. Վերանորոգել հանրակացարանը:	
3. Հանրակացարանին կից կառուցել վարչական մասնաշենք:	
4. Կառուցել նոր զուգարան և բաղնիք:	
5. Ապահովել հիմնարկի մշտական ջրամատակարարումը:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ	
1. Հիմնարկի հիմնական խնդիրը դատարանների կողմից կալանք պատժատեսակը խիստ հազվադեպ կիրառելն է, ինչի արդյունքում 2008 թ. վեց ամսվա ընթացքում հիմնարկում պահվել է 19 մարդ, իսկ դեկտեմբերին՝ ընդամենը մեկը: Այլ ՔԿՀ-ների գերբնակեցման պայմաններում «Հրազդան» ՔԿՀ-ում այսպիսի վիճակագրությունն առաջացնում է հիմնարկի լրակազմի փոփոխության և հիմնարկում փակ ու կիսափակ ուղղիչ հիմնարկներ ստեղծելու և այնտեղ համապատասխան դատապարտյալներ պահելու անհրաժեշտություն:	1. Մեկնաբանությունը տես «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 1-ին կետում:
2. Արհեստական լուսավորության համար խցի առաստաղից կախված է մեկ լամպ, որի անջատիչը գտնվում է խցի ներսում, սակայն լույսը գիշերային ժամերին չի թույլատրվում անջատել: Նույն հզորության լամպը և՛ երեկոյան, և՛ գիշերային ժամերին օգտագործելը ստեղծում է անհարմարություն, քանի որ բարձր հզորություն օգտագործելը խանգարում է գիշերային քունը, իսկ ցածր հզորության դեպքում երեկոյան ժամերին խցերը բավարար լուսավորված չեն: Խնդիրը լուծված է որոշ հիմնարկներում (օրինակ՝ «Վարդաշեն» ՔԿՀ), որոնցում, բացի առաստաղի հզոր լամպից, խցի դռան վերևի մասում տեղադրվել է նաև գիշերային լուսավորության թույլ հզորության լամպ:	2. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարված է տարանջատել խցերի լուսավորությունը:
3. Քանի որ հիմնարկում դատապարտյալների թիվը փոքր է, ապա նրանց պահում են մեկուսի: Հաշվի առնելով, որ կալանք պատժատեսակը նախատեսում է մեկուսացում նաև արտաքին աշխարհից, ստացվում է, որ ազատազրկվածներն իրենց ամբողջ ժամկետը կրելու ընթացքում չունեն որևէ մեկի հետ զրուցելու հնարավորություն, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ նրանց հոգեկան վիճակի վրա:	3. ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. մայիսի 27-ի թիվ 50-Ն հրամանով կատարած փոփոխության արդյունքում այս հարցը լուծվել է:
4. Ազատազրկվածների համար արտաքին աշխարհի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու միակ աղբյուրը լրատվամիջոցներն են: Սակայն չնայած օրենսդրության պահանջներին՝ հիմնարկի խցերը ապահովված չեն ռադիոընդունիչներով:	4. Պատասխանատու ստորաբաժանումներին հանձնարարվել է ռադիոֆիկացնել խցերը:
5. Դատապարտյալները կարող են ունենալ իրենց մոտ հեռուստացույց, չնայած պարզ չէ, թե ինչպես պետք է այդ հեռուստացույցը փոխանցվի, եթե հանձնուքներն արգելված են:	5. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 12-րդ կետում:
6. 2008 թվականի ընթացքում տեսակցությունների կազմակերպման անհրաժեշտություն չի առաջացել, սակայն հետագայում, երբ հիմնարկում կհամալրվի տնտեսական մասը, որտեղ կարող են աշխատել մինչև 15 դատապարտյալ և որոնք պետք է պահվեն կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում, կառաջանա երկարատև և կարճատև տեսակցության սենյակների անհրաժեշտություն:	6. Կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակների առկայությունը նախատեսվել է, և կատարվում են նախագծահաշվարկային աշխատանքներ:
7. Լոգարաններն ունեն հանդերձարաններ, որոնք կահավորված չեն՝ չկան նստարան, կախիչ:	7. Հանձնարարվել է կահավորել լոգարանների հանդերձարանները:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. Հիմնարկն ապահովում է ազատազրկվածներին սանիտարահիգիենիկ պարագաներով՝ ըստ հաստատված չափաբաժինների: Որոշ պարագաների չափաբաժինները չեն կարող բավականացնել (օրինակ՝ մեկ զուգարանի թուղթը մեկ ամսվա համար): Այլ ՔԿՀ-ներում այդ պակասը լրացվում է ազատազրկվածների հարազատների բերած հանձնուքների միջոցով: Հաշվի առնելով, որ «Հրազդան» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալները չունեն հանձնուք ստանալու իրավունք, տրվող սանիտարահիգիենիկ պարագաների պակասը կարող է խնդիրներ առաջացնել:	8. Անձնական հիգիենայի պարագաների չափաբաժինները սահմանված են ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշմամբ:
9. Հիմնարկի բուժանձնակազմը համալրված է մասնակի՝ աշխատում է չորս բուժակ: Բժիշկների հաստիքները համալրված չեն: Այս իրավիճակը դեռևս խնդիրներ չի առաջացրել, քանի որ հիմնարկում պահվող դատապարտյալները լուրջ առողջական խնդիրներ չեն ունեցել: Դիտորդների խումբը գտնում է, որ ՔԿՀ-ում բժշկի բացակայությունն անընդունելի է:	9. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 20-րդ և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 21-րդ կետերում:
10. Հիմնարկը ապահովված է միայն սահմանափակ քանակությամբ առաջին անհրաժեշտության դեղորայքով:	10. ՔԿՀ-ները ապահովվում են դեղորայքով իրենց կողմից ներկայացված հայտերի հիման վրա:
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Փոխել հիմնարկի լրակազմը:	1. ՀՀ արդարադատության նախարարի 27.05.2008 թ. թիվ 50-Ն հրամանով «Հրազդան» ՔԿՀ-ում սահմանվել է հետևյալ լրակազմը. փակ ուղղիչ հիմնարկ -150 մարդ, կալանքի դատապարտված անձինք - 50 մարդ, կիսաբաց ուղղիչ հիմնարկ -15 մարդ:
2. Ազատազրկվածներին խցերում հնարավորինս չպահել մեկուսի:	2. Լրակազմի փոփոխությունից հետո կատարվում է:
3. Խցերում տեղադրել գիշերային լուսավորության լամպեր:	3. Հանձնարարվել է լուծել լուսավորության տարանջատման խնդիրը:
4. Ապահովել հիմնարկում ռադիոցանց:	4. Հանձնարարվել է ռադիոֆիկացնել խցերը:
5. Ապահովել սենյակները համապատասխան կահավորանքով:	5, 6, 7, 8, 10, 11, 13, 14, 15. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 21-րդ կետերում:
6. Ապահովել տեսակցության սենյակները սանհանգույցով և խոհանոցով:	
7. Կառուցել և համապատասխան սարքավորել հանձնուքի ընդունման կետ:	
8. Կահավորել հանդերձարանները:	
9. Ավելացնել լոգանքների հաճախականությունը:	9. Օրենսդրությամբ սահմանված առնվազն շաբաթը մեկանգամյա դատապարտյալների լոգանքը ապահովվում է: Հնարավորության դեպքում հաճախականությունը կավելացվի:
10.Հագեցնել հիմնարկի բուժմասը համապատասխան սարքավորումներով:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11.Համալրել բժիշկների հաստիքները:	
12. Բարելավել հիմնարկի ապահովվածությունը դեղորայքով:	12. Քրեակատարողական հիմնարկներն ապահովվում են ՀՀ-ում գրանցված ցանկացած դեղորայքով, դրանք տրամադրվում են հայտերի հիման վրա:
13. Զբոսահրապարակներում տեղադրել նստարաններ և տեղումներից պաշտպանող ծածկեր:	
14. Զբոսահրապարակներում ստեղծել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ:	
15. Լրացնել գրքային ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:	

ՀՀ արդարադատության նախարարության
«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ

1. Հիմնարկը չունի ջեռուցման համակարգ: Հիվանդասենյակների ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերով: Ջեռուցման այս եղանակը չի կարող բավարար լինել, քանի որ ջերմաստիճանի մեծ տարբերություն է առաջանում հիվանդասենյակների և միջանցքների միջև, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ազատազրկվածների առողջական վիճակի վրա:	1, 2, 3, 4, 5, 6, 7, 8. Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 20-րդ և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 21-րդ կետերում: Միաժամանակ, հանձնարարվել է լրացուցիչ ուսումնասիրել միջանցքների ջեռուցման հարցը:
2. Ատամնաբուժական բաժանմունքն ապահովված է ժամանակակից սարքավորումներով, սակայն չունի ատամնաբուժական ռենտգեն սարք:	
3. Թերապևտիկ բաժանմունքի մասնաշենքը վերջին տարիներին չի վերանորոգվել: Այստեղ աշխատում են չորս բժիշկ և մեկ բուժքույր: Բաժանմունքի անձնակազմը համալրված չէ, ակնաբույժի, նյարդաբանի, ավագ քրոջ և բուժակների կարիք կա:	
4. Բաժանմունքը կարիք ունի ժամանակակից բժշկական սարքավորումների, հատկապես՝ ԷՍԳ-ի:	
5. Բաժանմունք ընդունվում են նաև անհապաղ միջամտության կարիք ունեցող հիվանդներ: Նման դեպքերի համար անհրաժեշտ է համապատասխան սարքավորումներով ապահովված վերակենդանացման բաժանմունք, որը հիմնարկը չունի:	
6.«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ունի 2 կարճատև տեսակցության սենյակ, որոնց քանակը, ըստ հիմնարկի պետի, բավարար չէ ազատազրկվածների տեսակցությունները օրենսդրությամբ նախատեսված ծավալներով տրամադրելու համար:	
7.Գրադարանի բնական և արհեստական լուսավորությունը բավարար չէ: Գրքերի քանակը կազմում է 1140 կտոր, դրանք շատ հին են և մաշված: Վերջին տարիներին գրադարանը ոչ մի նոր գրքով չի համալրվել: Գրքերի մեծ մասը խորհրդային տարիներին տպագրված և արդիականությունը կորցրած գրքեր են: Գրադարանում հոգևոր գրականություն չկա:Գրադարանը չունի ընթերցասրահ:	
8.«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պետի խոսքով՝ հիմնարկի անձնակազմը համալրված չէ: Թափուր է աշխատատեղերի մոտ 10%-ը:	

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Առաջարկություններ	**Առաջարկությունների վերաբերյալ**
1. Ապահովել հիմնարկը ջեռուցման համակարգով:	1, 2, 3, 4, 6, 7, 8, 9, 10, 11, 12, Մեկնաբանությունը տես «Երևան Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 19-րդ, 22-րդ, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 20-րդ և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ մեկնաբանությունների 21-րդ կետերում:
2. Վերակառուցել վիրաբուժական բաժանմունքի մասնաշենքը:	
3. Բաժանմունքին հատկացնել ատամնաբուժական ռենտգեն սարք:	
4. Վերանորոգել թերապևտիկ բաժանմունքի մասնաշենքը, համալրել բուժանձնակազմը: Ապահովել բաժանմունքն անհրաժեշտ սարքավորումներով (առաջնահերթ՝ ԷՍԳ սարքով): Ստեղծել վերակենդանացման բաժանմունք:	
5. Վերանայել ՀՀ կառավարության 26.05.2006 թ. 825-Ն որոշման 110 կետը:	5. Հանձնարարվել է որոշման նշված կետը վերանայել և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան իրավական ակտի նախագիծ:
6. Ավելացնել կարճատև տեսակցության սենյակների քանակը:	
7. Հանձնուքի ընդունման կետի համար հատկացնել ավելի մեծ սենյակ:	
8. Ապահովել հանձնուքի ընդունման կետը սանհանգույցով:	
9. Ապահովել հանդերձարանի և լոգարանի ջեռուցումը:	
10.Հիմնանորոգել հանդերձարանը: Ապահովել հանդերձարանում անհրաժեշտ քանակությամբ գույք:	
11.Գրադարանին տրամադրել նոր տարածք: Գրադարանին հատկացնել ընթերցասրահ: Համալրել գրադարանը նոր գրքերով: Համալրել թափուր հաստիքները:	

Դիտորդների խմբի հաշվետվության՝ առանձին քրեակատողական հիմնարկների վերաբերյալ տրված մեկնաբանությունների շարքում արդեն իսկ մեկնաբանվել են հաշվետվության «Ընդհանուր պայմաններ» մասում առաջ քաշված մի շարք հարցեր: Այդ պատճառով ստորև տրված են մեկնաբանություններ այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն մեկնաբանվել առանձին քրեակատարողական հիմնարկներին վերաբերող մասում:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳԵՐԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Աշխատանքներ տանել դատարանների հետ՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ուղղությամբ: 2. Աշխատանքներ տանել դատարանների հետ՝ կալանք պատժատեսակի ավելի հաճախ կիրառման ուղղությամբ: 3. Վերանայել վաղաժամկետ ազատման անկախ հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը:	1, 2. Դատարանները անկախ են և իրենց գործունեության մեջ առաջնորդվում են միայն օրենքով: Քրեակատարողական ծառայության խնդիրը դատարանների որոշումների և օրինական ուժի մեջ մտած դատավճիռների կատարումն է: 3. Ներկայումս տվյալ հարցը գտնվում է ուսումնասիրության փուլում:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Հատուկ միջոցների կիրառման դեպքում գրանցումներ կատարել համապատասխան մատյաններում: 2. Հատուկ միջոցների կիրառումից հետո բժշկական անձնակազմի կողմից արձանագրել ստացված բոլոր վնասվածքները: 3. Բացառել վարչակազմի կողմից բողոք ներկայացնող ազատազրկվածների նկատմամբ ճնշումները: 4. Բարձրացնել դատախազական վերահսկողության արդյունավետությունը վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ: 5. ՔԿ վարչության արագ արձագանքման խմբին չներգրավել խցերում անցկացվող խուզարկություններում:	1. Կատարվում է: 2. Կատարվում է: 3. Բացառված է: ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի օրինակը տեղի է ունեցել 2007 թվականին, որի կապակցությամբ տվյալ ծառայողը ենթարկվել է քրեական պատասխանատվության: 4. Կատարվում է օրենքով սահմանված կարգով: 5. Հարցը կարգավորված է օրենքով: Հատուկ նշանակության ստորաբաժանումը՝ ըստ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի աջակցում է Ներքին կանոնակարգի պահպանմանն ուղղված գործառույթների իրականացմանը:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՍՆՆԴԻ ՄԱՍԻՆ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Բարձրացնել հացի որակը: 2. Ապահովել սննդի բազմազանությունը: 3. Նախատեսել դիետիկ սնունդ:	1, 2. Ձեռնարկվում են շարունակական միջոցներ հացի որակը և սննդի բազմազանությունը ապահովելու ուղղությամբ: 3.Համաձայն ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի N 413-Ն որոշման հավելված 1-ի հիման վրա հիվանդ դատապարտված և կալանավորված անձանց տրվում է հավելյալ սննդի չափաբաժիններ: Դիետիկ սննդի կազմակերպումն իրականացվում է սննդի նշված չափաբաժինների (այդ թվում՝ հավելյալ սննդի) սահմաններում, որի արդյունավետության բարձրացման նպատակով տրվել են համապատասխան ցուցումներ: Բացի այդ, կատարվում են համապատասխան իրավական աշխատանքներ՝ հարցը օրենսդրությամբ կարգավորելու ուղղությամբ:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Ապահովել ազատազրկվածներին նոր անկողնային պարագաներով: 2. Վերանայել ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ հաստատված պարագաների չափաբաժինները: 3. Բարելավել տրամադրվող սանիտարահիգիենիկ պարագաների որակը:	1, 2, 3.Անկողնային և հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները նախատեսված են ՀՀ կառավարության 2003 թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշմամբ: Նշված որոշման վերանայման հարցն ուղղակիորեն կապված է լրացուցիչ ֆինանսական միջոցների տրամադրման հետ: Այդ իսկ պատճառով այն դեռևս քննարկել հնարավոր չէ:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Հիմնարկների համար հաստատել այնպիսի հաստիքացուցակ, որի համալրման արդյունքում հնարավոր կլինի լիարժեք կազմակերպել բուժմասի աշխատանքները: 2. Հաստիքացուցակում հաստիքները նշել ըստ կոնկրետ բժշկական մասնագիտությունների: 3. Կազմակերպել բժիշկների պարբերական վերապատրաստում և մասնագիտական որակավորում: 4. Մշակել բուժծառայությունը առողջապահության համակարգ տեղափոխելու գործողությունների պլան:	1, 2. Քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ բժշկական մասնագետներով համալրման գործընթացը շարունակվում է: 3. Բժիշկները պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են անցնում ՀՀ առողջապահության նախարարության բժիշկների կատարելագործման ազգային ինստիտուտում, ինչպես նաև գործուղումների միջոցով ուսումնասիրվում է արտերկրի փորձը: 4. Քննարկվում է նպատակահարմարությունը և լուծման հնարավոր տարբերակները:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Սահմանել դեղորայքի մատակարարման ավելի ճկուն համակարգ, որը հնարավորություն կտար ազատազրկվածներին լիարժեք ապահովելու անհրաժեշտ դեղորայքով: 2. Սահմանել ժամկետանց դեղորայքի օգտագործումը բացառող հստակ ընթացակարգեր: 3. Սահմանել ժամկետանց դեղորայքի ոչնչացման հստակ ընթացակարգեր: 4. Բարելավել հիմնարկների ապահովվածությունը բուժսարքավորումներով: 5. Պարզեցնել հիվանդ ազատազրկվածներին քաղաքացիական բուժհաստատություն տեղափոխելու և նրա բուժումը կազմակերպելու գործընթացը:	1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դեղորայքի ձեռքբերման պարբերականությունն իրականացվում է մրցույթի պայմանագրի հիման վրա: ՔԿ հիմնարկների բժշկական ստորաբաժանումների դեղորայքի բաշխումն իրականացվում է քրեակատարողական ծառայության դեղերի և բժշկական պարագաների բաշխիչ կենտրոնի միջոցով: 2. Ժամկետանց դեղորայքի օգտագործումը բացառվել է: 3. ՀՀ-ում ժամկետանց դեղորայքի ոչնչացման մեխանիզմի սահմանումը ՀՀ արդարադատության նախարարության լիազորությունների մեջ չի մտնում:

	4. Ֆինանսական միջոցների առկայությանը համապատասխան ՔԿՀ-ները աստիճանաբար համալրվում են անհրաժեշտ բուժսարքավորումներով: Միջոցներ են ձեռնարկվում նաև արտաբյուջետային միջոցների ներգրավմամբ դրա իրականացումը: 5. Հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ: Բացի այդ, ՀՀ առողջապահության նախարարության շատ առաջատար մասնագետներ ներգրավված են քրեակատարողական ծառայության բժշկական ոլորտում:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Վերանայել և համապատասխանեցնել Քրեակատարողական օրենսգրքին՝ ներքին կանոնակարգով հաստատված արգելված իրերի ցանկը:	1. Հանձնարարվել է հարցը լրացուցիչ ուսումնասիրել:

ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Պահպանել աշխատավարձերի բարձրացման միտումը: 2. Ապահովել աշխատակիցների համար բարվոք պայմաններ աշխատատեղերում: 3. Հիմնարկներում կառուցել ճաշարաններ աշխատակիցների համար: 4. Ապահովել աշխատակիցներին համապատասխան տեխնիկական միջոցներով: 5. Լուծել արտաժամյա աշխատանքի վճարման հարցը: 6. Աշխատակիցների տեղափոխման համար հիմնարկներին հատկացնել տրանսպորտային միջոցներ:	1, 2, 4. Առաջարկություններն ընդունելի են, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ նշված խնդիրները լուծելու համար: 3. Քրեակատարողական հիմնարկներում աշխատակազմի համար ճաշարան ստեղծելու հնարավորությունները քննարկվում են: 5. ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Քրեակատարողական ծառայողի արտաժամյա ծառայության համար վճարվող հավելավճարների չափը, հաշվարկման և վճարման կարգը հաստատելու մասին» թիվ 2303-Ն որոշմամբ սահմանված կարգով քրեակատարողական ծառայողներին արտաժամյա ծառայության համար վճարվում է հավելավճար: 6. Մի շարք քրեակատարողական հիմնարկներ, կապված նրանց տեղակայման հետ, ունեն այդ նպատակով օգտագործվող փոխադրամիջոցներ:

Դիտորդների խմբի նշած փաստերը մի շարք դեպքերում չեն համապատասխանում իրականությանը, քանի որ դրանց մի մասը մասնագիտորեն և խորությամբ ուսումնասիրված չէ, որի պատճառով էլ տարաձայնություններ են առաջանում: Դիտորդական առաքելությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է հայտնաբերված թերությունների ու խախտումների մասին տեղում կազմել արձանագրություններ՝ դրանց մասնակից դարձնելով քրեակատարողական հիմնարկի համապատասխան ծառայողներին: Դրանով կբացառվեն հետագա տարաձայնությունները: